



NATIONAL ACADEMY OF SCIENCES OF REPUBLIC OF  
ARMENIA  
INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN

## **JAUKYAN READINGS**

Collection of scientific papers

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ  
АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА

## **ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ**

Сборник научных статей

Ереван 2019  
Yerevan 2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՋԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Գիտական հոդվածների ժողովածու

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2019

ՀՏԴ 81  
ԳՄԴ 81  
Ջ 229

Ժողովածուն հրատարակության է երաշխավորել  
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի  
գիտական խորհուրդը

Խմբագրական խորհուրդ՝

Վ.Լ. Կատվայան (նախագահ)	Ա.Ե. Սարգսյան
Ռ.Մ. Թոխմախյան	Ա.Ա. Աբրահամյան
Վ.Գ. Համբարձումյան	Ն.Գ. Հովհաննիսյան
Լ.Շ. Հովհաննիսյան	Գ.Մ. Մխիթարյան
Լ.Ս. Հովսեփյան	Ն.Ս. Սիմոնյան

Ջահուկյանական ընթերցումներ: Գիտական հոդված-  
Ջ 229 ների ժողովածու. – Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրա-  
տարակչություն, 2019, 224 էջ:

ՀՏԴ 81  
ԳՄԴ 81

ISBN 978-5-8080-1395-7

© ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2019

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2019

## Ամիրխանյան Անժելա

(ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ)

### ԱՐՋ ԱՐՄԱՏՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԲՈՒՍԱՆՈՒՆԵՐ

Հայերենում կենդանիներին առնչվող բուսանունները մեծ տարածում ունեն և արտացոլում են ժողովրդի աշխարհընկալումը, լեզվամտածողությունը, ծեսերն ու հավատալիքները, տնտեսական զբաղմունքները և այլն: Մույն հողվածով կանդրադառնանք *արջ* արմատով կազմված բուսանուններին:

Նշանավոր լեզվաբաններ Ա. Մեյեի, Հ. Հյուբշմանի, Հ. Աճառյանի պատմահամեմատական հետազոտությունները ցույց են տվել, որ հայերեն *արջ* արմատն ունի բնիկ հնդեվրոպական ծագում, քանի որ դրա գուգահեռ ձևերը հայտնի են հնդկական, իրանական և եվրոպական լեզուներում: Հայերենում վկայված է նաև *արջն* «սև» արմատը, որի ծագումը հստակ չէ. այս արմատին վերագրվել է ինչպես կովկասյան (Հ. Աճառյան), այնպես էլ իրանական (Գ. Ջահուկյան) ծագում:<sup>1</sup> Նոր հայկազյան բառարանն *արջն* «սև» արմատի ծագումն ուղղակիորեն կապում է արջ կենդանու հետ («որպես հասարակ գույն արջոց»):<sup>2</sup>

*Արջ* բառի «սև, մուր, մուգ» իմաստները տեսնում ենք նաև *արջնաթույր* և *արջնագույն*՝ մթնագույն, սև, *արջնաբոլոր*՝ մթ-

---

<sup>1</sup> Հ. Աճառեան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 1, Ե., 1926, էջ 334-335: Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 95:

<sup>2</sup> Գ. Ալետիքեան, Խ. Միլումիլեան, Մ. Ալգերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ. Ա-Կ, Վենետիկ, 1836, էջ 374:

ին, *արջնագրավ*՝ սև ագրավ, *արջասպ*՝ մուգ, սև նյութ,<sup>3</sup> *արջնագեեստ*՝ սևազգեստ, *արջնանալ*՝ սևանալ<sup>4</sup> և այլ բառերում:

Արջ(ն) արմատով կազմված բուսանունների քննությունը ցույց է տալիս, որ դրանց մի մասն ունի «սև» իմաստը, իսկ մյուս մասն առնչվում է համանուն կենդանուն:

**Բույսեր, որոնց անվանման մեջ արջ բառն ունի «սև» իմաստը.** Այս բույսերի նկարագրությունը, գործածության համար կարևոր կամ աչքի ընկնող օրգանները, օրինակ՝ սև պտուղները, արմատը և այլն, ցույց են տալիս, որ դրանց անվան մեջ *արջ* բառը սև գույն է նշանակում: Հիշյալ հանգամանքը հաստատվում է նաև այդ բույսերի նույնանուններով, որոնց շարքում գոյություն ունեն նաև *սև* արմատով կազմված անուններ: Օրինակ, արջնդեղը, որի «սև» իմաստը տեսնում ենք նաև լատիներենում և ռուսերենում (*Nigella L.*, Чернушка), բարբառներում կոչվում է նաև սև գնդիկ, սևուկ հնտիկ, սև սոնիճ, սև չաման և այլն:<sup>5</sup> Այս անունները պայմանավորված են բույսի սև հունդերով, որոնք հնագույն ժամանակներից օգտագործվել են սննդի, ժողովրդական բժշկության մեջ և ծիսական տարաբրնույթ արարողություններում:<sup>6</sup>

---

<sup>3</sup> **Հ. Աճառեան**, նշվ. աշխ., էջ 335:

<sup>4</sup> *Նոր բարզիրք հայկազեան լեզուի*, հ. Ա-Կ, էջ 375:

<sup>5</sup> **Յ.Արթինեան**, *Աստուածաշունչի տունկերը. Ուսումնասիրուած մեր նախնեաց թարգմանութեան վրայ*, Կ. Պոլիս, 1913, էջ 68: **Մ. Մուրատեան**, *Սասնոյ բուսակը*, Բազմավեպ, Վենետիկ-Ս. Ղազար, 1937, թիվ 2-5, էջ 90: **Ռ. Ղազարյան**, *Գրարարի բառարան*, Ե., 2000, էջ 221:

<sup>6</sup> **Կ.Գաբրիէան**, *Հայ բուսաշխարհ*, Երուսաղեմ, 1968, էջ 213: *Նոր բարզիրք հայկազեան լեզուի*, էջ 375: **Ս. Վարդանյան**, *Դեղագիտությունը հին Հայաստանում*, ՊԲՀ, N 2, Ե., 1979, էջ 188: **Գ. Հակոբյան**, *Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը*, Ե., 1974, էջ 266: **Ե. Լալայեան**, *Վասպուրական. հավատք*, ԱՀ, XXVI գիրք, 15-րդ տարի, Թիֆլիս, 1916, էջ 203: **Վ. Թեմուրճյան**,

Սև խաղողի սորտերից հայտնի են արջի (առջի) խաղող և արջենի անվանումները:<sup>7</sup> Սև մատուրը կոչվում է նաև արջամատուր:<sup>8</sup> Սև պտուղների համար թանթրվենին կոչվում է նաև արջի խնդեղնի (արջախնդեղնի):<sup>9</sup> Սև են նաև արջիգյուլուլի կոչվող բույսի պտուղները և արջտակի արմատը:<sup>10</sup> Արջու շապն ունի մուգ մոխրագույն ծաղիկ:<sup>11</sup>

**Անուններ, որտեղ արջ բառը վայրի բույս լինելու ցուցիչ է և առնչվում է համանուն կենդանուն.**

*ա) Մշակաբույսի անունով և արջ բառով կազմված բուսանուններ.*

*1.1 Մշակաբույսերի վայրի տարատեսակներ.*

Մշակաբույսերի վայրի տարատեսակների անունները հաճախ կազմվում են որևէ կենդանու, մասնավորապես արջի անունով: Օրինակ, վայրի խաղողը, վայրի տանձը և խնձորը մի շարք բարբառներում կոչվում են արջու խաղող,<sup>12</sup> արջատանձ

---

*Գամիրքի հայերը*, ՀԱԲ, հ. 1, Ե., 1970, էջ 194: **Մ. Դանիելեան**, *Խիանի հայ ժողովրդին սովորություններն ու նախապաշարմունք*, Բիւրակն, Կ. Պոլիս, 1898, ԺԶ տարի, թիւ 22, էջ 427:

<sup>7</sup> **Թեղիկ**, *Որթն ու իր բերքը*, Ամէնուն տարեցոյցը, 20-րդ տարի, Վենետիկ, Ս. Ղազար, 1926, էջ 69:

<sup>8</sup> **Ա. Ամիրխանյան**, *Դաշտային ազգագրական նյութեր* (այսուհետև՝ ԴԱՆ), Լեոնապատ, Քարաձոր, 2009: Գուգարք, 2012: Չկալով, 2013: Մեղրուտ, 2014:

<sup>9</sup> **Մ. Բարխատարեանց**, *Արցախ*, Բագու, 1895, էջ 14: **Ստ. Մալխասեանց**, *Հայերէն բացատրական բառարան*, հ. 1, Ե., 1944, էջ 280:

<sup>10</sup> **Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., էջ 64: **Բ. Հ. Մանուէլ վարդապետ Քաջունի**, *Բարզիրք արուեստից եւ գեղեցիկ դպրութեան*, հ. 2, 1892, էջ 615: **Հ. Հովսեփյան**, *Ղարաղաղի հայերը*, հ. 1, Ե., 2009, էջ 24:

<sup>11</sup> **Յ. Ճանիկեան**, *Հնութիւնք Ակնայ*, Թիֆլիս, 1895, էջ 333: **Կ. Գաբիկեան**, նշվ. աշխ., էջ 23:

<sup>12</sup> *Նոր բարզիրք հայկազեան լեզուի*, էջ 374:

(ըրչըտանձ)<sup>13</sup> և արջուխնձոր:<sup>14</sup> Արջ բառն այստեղ ցույց է տալիս այդ մրգերի վայրի լինելը:

*1.2 Մշակաբույսերին նմանեցված վայրի բույսերի անուններ.*

Կազմվում են *արջ* բառով, որը բույսի վայրի լինելու ցուցիչն է, և նմանեցված մշակաբույսի անունով: Օրինակ, դանձիլը սոխազգի է, ունի սխտորի համ և հոտ, ուստի կոչվում է նաև արջասխտոր (արջախստոր),<sup>15</sup> այսինքն՝ վայրի սխտոր: Ճշնարոտը (քահանայատակ, խաչափայտ) անչափ գեղեցիկ ծաղիկ ունենալու համար կոչվում է նաև արջու վարդ (կամ կակաջ),<sup>16</sup> որը նշանակում է վայրի վարդ:

Հատկապես ուշագրավ են խաղող և արջ բառերով կազմված բուսանունները:

Խաղողը հայոց մեջ ամենատարածված և ամենահին մշակաբույսերից է, որին նմանեցնելով (պտուղը, որթը, մագլցելու հատկությունը), մի շարք ուտելի և թունավոր վայրի բույսեր ստացել են արջի խաղող անվանումը:<sup>17</sup> Դրանց թվում է նաև հաղարջենին,<sup>18</sup> որ բարբառներում ոչ միայն կոչվել է նկարագրական անվամբ՝ *արջի խաղող*, այլև դրա հիման վրա և *հա-*

---

<sup>13</sup> **Ա. Սարգսյան**, *Ղարաբաղի բարբառի բառարան*, Ե., 2013, էջ 180:

<sup>14</sup> *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ., 1, Ե., 2001, էջ 135:

<sup>15</sup> **Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., էջ 61: **Ա. Թորոսյան**, *Հայաստանի դեղաբույսերը*, Ե., 1983, էջ 184:

<sup>16</sup> **Կ. Գաբրիկեան**, նշվ. աշխ., էջ 21, 246:

<sup>17</sup> **Ղ. Ալիշան**, *Հայրուսակ կամ հայկական բուսաբանություն*, Վենետիկ-Ս. Ղազար, 1895, էջ 63: **Թեոդիկ**, նշվ. աշխ., էջ 83: **Կ. Գաբրիկեան**, նշվ. աշխ., էջ 36, 39, 175: **Ռ. Ղազարյան**, **Հ. Ավետիսյան**, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009, էջ 93:

<sup>18</sup> **Գ. Ջահուկյանը** հաղարջ բառի ծագումն անհայտ է համարում (**Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 440):



դարձ բառի նմանահունչ լինելու պատճառով ենթարկվել է ժողովրդական ստուգաբանության՝ բացատրվելով որպես խաղող (*հաղ-*) արջի (*-արջ*):

Ժողովրդական ստուգաբանությամբ այս հատապտուղը կոչվում է հաղարջ, այսինքն՝ արջի խաղող, քանի որ արջերը շատ են ուտում:<sup>19</sup> Հարկ է նշել, որ հաղարջենին վայրի բույս է, որի մշակությամբ սկսեցին զբաղվել 1960-ական թթ. հետո:<sup>20</sup> Հետևաբար հաղարջ բառը կարող է նշանակել նաև վայրի խաղող:

Խաղողին նմանեցված վայրի բույսերի *արջի խաղող* անվանումը ցույց է տալիս, որ այն ընդհանրական իմաստ ունի և ձևավորվել է որպես կայուն կապակցություն:

բ) *Վայրի բույսերի անուններով և արջ արմատով կազմված անուններ.*

Ուտեստի համակարգում ընդգրկված վայրի բույսերի որոշ տարատեսակներ կիրառության համար պիտանի չեն: Դրանց մի մասը, ինչպես նաև թունավոր կամ տհաճություն պատճառող մի շարք բույսեր հիմնականում ստանում են վտանգավոր համարվող կենդանիների անուններ: Օրինակ, նվիկի տեսակներից մեկը՝ արջի նվիկը, սննդի մեջ չեն գործածում:<sup>21</sup> Արջու լեղպենտեկը բոխու ոչ ուտելի տեսակներից է:<sup>22</sup> Վայրի տիլենու տեսակներից է արջատիլենին, որի կարծր կեղևով պտուղները չեն հավաքում:<sup>23</sup>

---

<sup>19</sup> Մ. Ամատունի, *Հայոց բառ ու բան*, Վաղարշապատ, 1912, էջ 383:

<sup>20</sup> Ա. Ամիրխանյան, *ՂԱՆ*, Լոռի, Տավուշ, 2009-2015:

<sup>21</sup> Կ. Գաբիկեան, էջ 22:

<sup>22</sup> Կ. Գաբիկեան, էջ 21, 73:

<sup>23</sup> Ա. Ամիրխանյան, *ՂԱՆ*, Իջևան, Գանձաքար, 2016:

Արջու ընկույզը (փուշ խնձոր), որի պտուղը խոշոր լինելու համար նմանեցվել է ընկույզի, թունավոր է, թմրեցուցիչ ու գարշահոտ:<sup>24</sup> Արջտակը (արջու քրման, թաղթ) նույնպես թունավոր է:<sup>25</sup>

Սննդի մեջ չկիրառվող սնկերի անունները ևս առնչվում են վայրի կենդանիներին, ինչպես օրինակ արջասունկը: Երբեմն այդպես են կոչվում ոչ ուտելի բոլոր տեսակի սնկերը:<sup>26</sup>

զ) *Արջի բնույթին և կերպարանքին առնչվող բույսեր.*

Արջին վերագրվում են խոշոր, կոպիտ, տզեղ և այլ հատկանիշներ, որոնք ևս արտացոլվել են մի շարք բուսանուններում: Օրինակ, արջտակ անունը պայմանավորված է խոշոր արմատով:<sup>27</sup> Արջու աչք կոչվող բույսն ունի խոշոր և աչքի նման ծաղիկ:<sup>28</sup> Խոշոր հատիկներով մոշը կոչվում է ըրչամօշ:<sup>29</sup> Ընկույզի բավականին խոշոր տեսակը կոչվում է արջակակալ:<sup>30</sup>

դ) *Արջի մարմնի մասերին նմանեցված բույսեր.*

Մի շարք բույսերի անուններ կազմվել են արջի մարմնի որևէ մասին, հիմնականում թաթերին ու ականջներին, նմանեցնելով: Դրանցից են արջու ականջը,<sup>31</sup> ինչպես նաև ականթը,

---

<sup>24</sup> Կ. Գաբրիկեան, էջ 20: Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 62:

<sup>25</sup> Կ. Գաբրիկեան, էջ 23:

<sup>26</sup> Ա. Ամիրխանյան, *ԴԱՆ*, Լոռի, 2010-2014:

<sup>27</sup> Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 64:

<sup>28</sup> Ղ. Ալիշան, էջ 62:

<sup>29</sup> Ա. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 180:

<sup>30</sup> Ա. Ամիրխանյան, *ԴԱՆ*, Շնող, 2018:

<sup>31</sup> Հ. Աճառեան, *Հայերէն գաւառական բառարան*, հ. Թ, Էմինեան ազգագրական ժողովածու, Թիֆլիս, 1913, էջ 154:

որն ավելի շատ հայտնի է արջի թաթ (արջաթանթուլ, արչու թանթուլ, ըրչըթանթուլ) անունով:<sup>32</sup>

ե) *Արջ-բույս ուղղակի առնչությամբ պայմանավորված անուններ.*

Այն բույսերն են, որոնք արջն ուտում է, կամ ազդեցություն ունեն վերջինիս վրա: Օրինակ, դանձիլի արջասխտոր անվանումը բացատրվում է նաև այն հանգամանքով, որ ձմռան քնից արթնացած արջերն այն շատ են ուտում: Հատկանշական է, որ դանձիլի լատիներեն անվանումը կազմված է «կծու» և «արջ» բառերից (*Allium ursinum* L.), իսկ ռուսերենում կոչվում է նաև «лук медвежий»:

Ըստ հավատալիքի՝ արջու խոտը քուն մտնելուց առաջ արջը տանում է իր որջը և հոտոտելու շնորհիվ դիմանում սովածությանը:<sup>33</sup>

**Արջ բառով կազմված բուսանուններ, որոնք մի քանի բացատրություն ունեն.** *Արջ* բառի բազմիմաստության հետևանքով որոշ անուններ ժողովրդական ստուգաբանությամբ ստացել են մի քանի բացատրություն: Օրինակ, արջտակը կարող է մեկնաբանվել ինչպես սև, այնպես էլ վայրի, ոչ ուտելի արմատ: Խոշոր տերևների ու ծաղիկների համար արջու վարդը կարող է ընկալվել նաև որպես խոշոր վարդ:

Ուշագրավ է արջամատուր (ըրչըմըհատուր) անվանումը, որը վերագրվում է ինչպես սև, այնպես էլ խոշոր և ընտիր մա-

---

<sup>32</sup> Մ. Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 14: Ա. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 77:

<sup>33</sup> Կ. Գաբիկեան, նշվ. աշխ., էջ 21:

սուրին:<sup>34</sup> Որոշ բնակավայրերում այդպես է կոչվում շատ կո-  
րիզ, կոշտ ու բարակ պտղամիս ունեցող մասուրը:<sup>35</sup>

Արջատիլենու թուփը սովորականից բարձր (խոշոր) լի-  
նելու համար կոչվում է տիլենի ծառանման:<sup>36</sup> Հետևաբար հնա-  
րավոր է, որ անվանումն առնչվում է այդ հատկությանը:

Ժամանակի ընթացքում *արջ* արմատի «սև» իմաստի մթ-  
ագնման հետևանքով տեղի է ունեցել բառիմաստի նեղացում:  
*Արջ* բառն աստիճանաբար նույնացվել է միայն համանուն կեն-  
դանու հետ՝ առաջացնելով որոշ բույսերի անունների նոր մեկ-  
նաբանություններ: Ուշագրավ է Մ. Գոշի առակներից մեկը, որ-  
տեղ արջը փորացավի համար իր անունով բույս՝ արջնդեղ է  
ուտում, համոզված լինելով, որ կբուժվի, սակայն ոչ մի ար-  
դյունքի չի հասնում:<sup>37</sup>

Ըստ ժողովրդական հավատալիքների, կենդանիները  
բույսերով իրենց կարող են բուժել:<sup>38</sup> Վիրավոր արջի համար  
Բարսեղ Կեսարացին գրում է. «Ձի արջ յորժամ վերս առնու յան-  
ձին, ինքն զանձն բժշկել գիտե հնարիս բնածին բարոյիք գոր  
եզիտ իւրովի յիւր օգնականութիւնէ: Երթայ իլէ զարմատ մի՝  
որ անուանեալ կոչի փղոմոս»:<sup>39</sup>

---

<sup>34</sup> Վ. Պետոյան, *Մասնա ազգագրություն*, Ե., 1965, էջ 444: Ա. Սարգսյան, նշվ.  
աշխ., էջ 180: Ա. Ամիրխանյան, *ԴԱՆ*, Գուգարք, 2012:

<sup>35</sup> Ա. Ամիրխանյան, *ԴԱՆ*, Դսեղ, 2011:

<sup>36</sup> Ռ. Ղազարյան, *Բուսանունների հայերեն-լատիներեն-ռուսերեն-անգլերեն-  
ֆրանսերեն-գերմաներեն բառարան*, Ե., 1981, էջ 93:

<sup>37</sup> Առակք Մխիթարայ Գոշի, ԽԵ, Վենետիկ, Ս. Ղազար, 1842, էջ 48-49:

<sup>38</sup> Թեղիկ, նշվ. աշխ., էջ 83: Ա. Պետրոսյան, *Արջի պաշտամունքը հայ ժողո-  
վրդական հավատալիքներում*, Բանբեր Երևանի համալսարանի, 3 (87), Ե.,  
1995, էջ 166: Ա. Ամիրխանյան, *ԴԱՆ*, Լոռի, 2014:

<sup>39</sup> Սրբոյ Բարդի եպիսկոպոսի Կապադովկացոյ ճառք վասն Վեցօրեայ ար-  
արչութեանն, Վենետիկ, 1830, էջ 185:

Փղոմոսը ժողովրդական բժշկության մեջ մեծ կիրառություն ունեցող խոնդատն է, որի տեսակներից է սև խոնդատը (սևագույն փղոմոս, *Verbascum nigrum* L., Коровяк черный):<sup>40</sup> Հնարավոր է, որ այստեղ «սև» բաղադրիչն աղերսվում է արջ կենդանուն, քանի որ բույսն ունի 1,5 մ հասնող բարձրություն, խոշոր ծաղիկներ ու տերևներ, ինչպես նաև ծածկված է խավոտ թավիկներով: Համարվում է տգեղ բույս. «Տեսքը տգեղ է եւ անշնորհ, բայց ծաղիկներն են գեղեցիկ, վանեցիք կըսեն իբրև առած. «Ի՛նչ խոնդատ, ի՛նչ իւր ծաղիկ»:<sup>41</sup>

Ինչպես նշեցինք, խոշոր և անճոռնի լինելը համեմատվում է արջի հետ, որն էլ թերևս հանգեցրել է այն հավատալիքին, իբր վիրավոր արջը բուժվում է իրեն նման բույսով՝ փղոմոսով, որը հիշատակվում է նաև արջախոտ կամ արջականջ անուններով:<sup>42</sup> Ի դեպ, ռուսերենում այս բույսի մի շարք տեսակներ նույնպես խոշոր լինելու պատճառով առնչվում են արջին: Մասնավորապես դրանց տերևները նմանեցվել են արջի ականջներին (*Verbascum nigrum* L., Коровяк черный, медвежье ухо, *Verbascum thapsiforme* Schrad, Коровяк тапсовидный, медвежье ухо, медвежьи ушки, *Verbascum thapsus* L., Коровяк медвежье ухо, медвежьи ушки):<sup>43</sup>

---

<sup>40</sup> **А. Ролловъ**, *Дикорастущія растенія Кавказа, ихъ распространіе, свойства и примъненіе*, Тифлис, 1908 г., с. 532. **Ստ. Մալխասեանց**, նշվ. աշխ., հ. 4, Ե., 1944, էջ 502:

<sup>41</sup> **Յ. Արթինեան**, *Տունկերը եւ անոնց հայերէն անունները*, Փարիզ, 1906, էջ 44:

<sup>42</sup> **Ա. Սուրբապյան**, *Հայոց լեզվի հումանիշների բացատրական բառարան*, Ե., 2009, էջ 120:

<sup>43</sup> **В. Колосова**, „Медвежьи“, *растения в восточнославянских языках*, с. 1, [https://www.researchgate.net/publication/274392098\\_Medvezi\\_rastenia\\_v\\_vostocnoslavanski\\_h\\_azykah](https://www.researchgate.net/publication/274392098_Medvezi_rastenia_v_vostocnoslavanski_h_azykah).

Այսպիսով, վերլուծելով *արջ* բառով բաղադրված բուսանունները, կարող ենք եզրակացնել, որ դրանք արտացոլում են այդ բառի գրեթե բոլոր իմաստները՝ սև գույնը և համանուն կենդանուն վերագրվող հատկությունները:

Այս բուսանունների հետ են կապված նաև որոշ հավատալիքներ, որոնք հիմնականում նմանակման վերապրուկային դրսևորումներ են:

Anzhela Amirkhanyan - Nominations of plants with root *arch*/bear. - This article analyzes the plant nominations (phytonyms), derived from the names of animals (zoonyms), in particular, from the zoonym Bear/Arch (Arm). In Armenian, the word *arch* has two meanings - bear and black. Accordingly, it is in these meanings that they are preserved in phytonyms. These meanings also determine their classification.

Анжела Амирханян - Названия растений с корнем *арч*/ медведь.-В данной статье анализируются номинации растений (фитонимы), образованные от зоонима медведь/*арч* (арм.). В армянском языке слово *арч* имеет два значения - медведь и черный. Соответственно, именно в этих значениях они и сохранились в фитонимах. Эти значения определяют также их классификацию. Со временем значение черный (*арч*) было забыто, в результате чего в объяснении целого ряда названий растений с корнем *арч* возникла путаница. Значения названий растений стали связываться только с его зооморфным «медвежьим» значением.

**Բառնասյան Ջենմա**  
(ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

**Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ՍՈՒՏԱՄԱՆԸ» ՀԵՔԻԱԹԻ  
ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՏԱՐԲԵՐ ԲԱՐԲԱՆՆԵՐՈՎ  
(լեզվամտածողության առանձնահատկություններ)**

Ըստ հատուկ ծրագիր-հարցարանի<sup>1</sup> ժամանակին գրանցված և ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնում պահվող 500 խոսվածքային միավորները բավարար քանակությամբ տեղեկություններ են ապահովում բազմաբնույթ քննություն կատարելու համար: Բարբառային տարբեր խոսվածքների հավաքչական աշխատանքներն իրականացնելիս բարբառախոսին հանձնարարվում է թարգմանել նաև Հովհ. Թումանյանի «Սուտասանը» հեքիաթը՝ որպես կատարված աշխատանքի յուրօրինակ ամփոփում:

Խորապես ճանաչելով հարագատ ժողովրդի կյանքն ու կենցաղը, դարերի հոլովությամբ ձևավորված արժեքային համակարգը, հոգեբանությունը՝ Թումանյանն իր այս կարճ, սրամիտ առարկություններով խոսքուգրույցի վրա կառուցված հեքիաթում ներկայացրել է ժողովրդի խոսքին հատուկ լեզվառճական հնարքներ, և դրանք շատ դեպքերում անթարգմանելի են՝ հատկաբանության (իդիոմ) արժեքով: Ուստի և այդ հեքիաթը հայերենի որևէ բարբառով ներկայացնելիս (թարգմանելիս) ի հայտ են գալիս այդ տարածքի խոսվածքներում գործառող հետաքրքիր բառանվանումներ, բառիմաստային հետաքրքիր զուգաձևություններ: Մեր ձեռքի տակ եղած հարյուրա-

---

<sup>1</sup>Տե՛ս *Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր*, Ե., 1977:

վոր խոսվածքային միավորներից ընտրողաբար ներկայացնում ենք տարբեր բարբառների մի փունջ՝ մատնանշելով բառանվանողական և բառիմաստային և այդ թվում՝ լեզվամտածողության տարբերություններով պայմանավորված մի շարք իրողություններ:

Մեր ներկայացրած նյութերում թարգմանվող հեքիաթի վերնագիրը բազմապիսի բառանվանումներով է ներկայանում՝ **սուղիսուանը** (Կարնո բարբ.), **սուղրսան** (Մշո, Սասունի բարբ.), **սուտասիզը** կամ **սուտա՛սին** (Ղարաբաղ), **սողզուրց՞ողը** (Քեսաբ), **սութասանը** կամ **խափլանը** (Արարատյան բարբ. խոսվածքներ), **խափողէ** (Համշեն), իսկ Գեղարքունիքի մարզի Վահան գյուղում գործառող Գանձակի միջբարբառով՝ **խըփըլկանը**: Որոշ գրանցումներում այդ հասկացության համար առկա է բառիմաստը նկարագրորեն ներկայացնող բառաձև կամ բառակապակցություն, ինչպես, ասենք, Համշենի բարբառի Խոփայի խոսվածքում գործառող **շիդագ չասողէ** (ճիշտ չասողը) բառակապակցությունը:

Բանահյուսական ամենասիրված ժանրին՝ հեքիաթին, բնորոշ է կատարվող գործողություններին ժամանակային անորոշություն հաղորդող բանաձևեր գործածելը: Այդպիսին է **լինում է, չի լինում** արտահայտությունը՝ որպես մուտքի խոսք: Ըստ մեր ձեռքի տակ եղած նյութերի՝ գերակշռում են սահմանական եղանակի անկատար ներկայով թարգմանությունները: Այսպես՝ **Կէդնի, չէդնի թակաւօր մէ** (Մուշի Կոպ, Հացիկ գ.), **զըլլի, չի ըլլի** (Համշեն), **էդնըմ է, չի էդնըմ** (Շիրակի Ագատան գ.), **հըլնըմա, չիլնըմ** (Էջմիածին) և այլն: Լայնորեն գործառում է նաև վաղակատար ներկա ժամանակաձևը, ինչպես՝ **գիցէյէ, չէ գիցէյէ** (Հաջըն): Բերենք օրինակ Սիրիայի Քեսաբ քաղաքի խոսվածքով. **էդ՞օզի թըկըվ՞օր մի** :



Այս հեքիաթում առկա՝ *թագավորն սայրած կենա* դիմելաձևը տարբեր բարբառներում տարբեր դրսևորումներով է ներկայանում՝ ըստ հեքիաթի գրառումների: Նկատելի է, որ բարբառախոսները, չգտնելով իրենց մայրենի խոսվածքում նմանատիպ դիմելաձև, պարզապես կաղապարել են այդ կայուն բառակապակցությունը՝ հարմարեցնելով այս հեքիաթում առկա դիմելաձևին: Ասենք, Արցախի Հարությունագումեր, Հաթերք գյուղերի խոսվածքներում գրանցվել է՝ *թաքավէրը ա՛յրած կենա* համապատասխանությունը: Նկատելի է, որ հեքիաթը թարգմանելիս բարբառախոսներն ուղղակի ներկայացրել են իրենց խոսվածքներում գործածական բարեմադթանքներ, ինչպես՝ *Թըղըվու՛ր, աբրի՛ ղըքու արիվ* (Մասունի Մպաղանք գ.): *Հ՛երգան հ՛արեվ էղնիս, թակավո՛ր* (Շիրակի մարզի Մարմաշեն գ.): Իսկ, ասենք, Ազատան գյուղի խոսվածքում *կանանձ հ՛արեվ* բառակապակցության իմաստը արևշատության մաղթանքն է, և այդ բանաձևն էլ թարգմանվել է հետևյալ կերպ՝ *Կանանձ հ՛արեվ էղնիս, թակավոր*: Նմանօրինակ բարեմաղթանք կարելի է համարել Մշո Քրդագոմ գյուղի խոսվածքում առկա՝ *արեվ կանձընալ* հարադրությունը՝ որպես երկարակեցության բարեմաղթանք: Այսպես՝ *Քու արե՛վ կանձընա, թակավոր*:

Մի շարք խոսվածքների գրանցումներում առկա է *սաղ էղնէլ* հարադրությունը (թուրքերենից փոխառյալ *սաղ* բաղադրիչով): Օրինակ, ասենք, Մշո Խասգեղ և Հացիկ գյուղերի խոսվածքներով գրանցվել է՝ *Սախ էղնի մըր թակավոր, յէս շուղ գ՛իկէնք, բըլէ հ՛անկըծա*:

Բարբառային խոսվածքների հավաքչական աշխատանքներ իրականացնելիս հաճախ ենք նկատել, որ այս հեքիաթը մայրենի խոսվածքով թարգմանելիս բարբառախոսները դժվարությամբ են համարժեք բառանվանում գտնում *ներողություն*

հասկացության համար: Հնարավոր է, որ հեքիաթը թարգմանելիս բարբառախոսները պատումին հարազատ մնալու ցանկությամբ են ներկայացրել *նէրօղուտէն, թակալօ՛ր* կամ *նէրօ՛ղ էղի, թակալօ՛ր* և նմանատիպ ձևերը: Գանձակի միջբարբառով գրանցվել է *մէղա, թաքավըէր* արտահայտությունը: Քեսաբի բարբառը գրանցելիս մեզ զարմանալի թվաց մեկ բառաշեշտով արտասանվող *ա՛վզէնիս* բառաձևը: Վերջինս թուրքերենից փոխառյալ *աֆ* բառաձևով և հայերեն *էնէլ* (անել) բայով հայաբանության արժեք ստացած *նէրող էղիր* արտահայտությունն է: Այն առկա է նաև արևմտյան իմբակցության բարբառների մի շարք խոսվածքներում, ինչպես, ասենք, Հաջը-նի բարբառում՝ *աֆ գէնիս*, Սասունի Սպաղանք, Փշուտ գյուղերի խոսվածքներում՝ *Աֆ էնը, թըկըվըր...*

Ինչպես հայտնի է, հայերենի բարբառներում բառային փոխառությունների հիմնականում դիմում են իմաստային նրբերանգներ կամ ուղղակի պակասող բառն արտահայտելու համար: Մեր ձեռքի տակ եղած նյութերում *թաքավոր* հասկացությունը օրինաչափ հնչյունափոխության ենթարկված համարժեք բառաձևերով է հանդես գալիս թարգմանություններում, օրինակ, ասենք, Համշենի մի շարք գյուղերի խոսվածքներում: Բայց մեզ հանդիպել է նաև այլկարգի մեկնաբանություն: Ասենք, Թուրքիայի Արդվիլն նահանգի Խոփայի խոսվածքը (Համշենի բարբ.) ներկայացնելիս ազգագրագետ Ս.Վարդանյանը նշում է, որ *թաքավոր* հասկացությունը բացակայում է կրոնափոխամշենահայերի խոսվածքում, և այդ իմաստով գործառում է թուրքերենից փոխառյալ *փաղիշահ* բառանվանումը<sup>2</sup>:

---

<sup>2</sup>Տե՛ս Չայն համշենական, 2012, հունվար-փետրվար, էջ 7:

Այս փոքրածավալ հեքիաթի՝ տարբեր բարբառներով թարգմանությունները համեմատելիս լեզվամտածողության տարբերություններով պայմանավորված բազմապիսի իրողությունների կարելի է առնչվել: Ներկայացնենք *առավոտ* հասկացության իմաստով հայերենի բարբառներում գործառող բառանվանումները՝ հենվելով խնդրո առարկա հեքիաթի թարգմանության ժամանակ վկայված բառաձևերի բազմազանության վրա: Դերձակի հետ երկխոսելիս թագավորի խոսքում առկա է *առավոտ* օրապահը՝ մակբայական կիրառությամբ, ինչպես՝ *էս առավոտ մի քիչ անձրև թափվեց*: Հայերենի բարբառներում ժամանականիշ բառերի քննությանը նվիրված մենագրության մեջ<sup>3</sup> մենք անդրադարձել ենք *առավոտ* հասկացության բառանվանումներին՝ ընդգծելով, որ այդ հասկացությունն ընդգրկում է օրվա բավական ընդարձակ մի ժամանակահատված՝ գիշերավարտից մինչև կեսօր, ինչով էլ կարելի է բացատրել բառանվանումների առատությունը (նայած թե առավոտ օրապահի ո՛ր հատվածն է մատնանշվում): Ժամանակի չափման միավոր ընտրելիս մարդիկ հենվել են բնության մեջ պարբերաբար կրկնվող երևույթների վրա: Հայերենի բարբառներում *առավոտ* հասկացության բառային դրսևորումների համեմատությունից կարելի է ենթադրել, որ անվան հիմքում ընկած է այդ օրապահին բնորոշ որևէ հատկանիշ: Ասենք, մի դեպքում մատնանշվում է դեռ մութ, գրեթե գիշեր լինելը, ինչպես՝ *քրքրեհանա* կամ *քրքրեհանը*: Բերենք օրինակ Արցախի Պողոսագոմեր գյուղի խոսվածքով .

---

<sup>3</sup>Տե՛ս **Չ. Բառնապյան**, *Ժամանականիշ բառերը հայերենի բարբառներում*, Ե., 2009, էջ 16:

-Հա՛, չիսվ ըս ըրայ,- ասում ա թաքավէրը,- ամնա չիսվ չիր կրրկատայ. էս **քրշրհանէս** պատառ թօռ վէր տառայ:

Մի այլ դեպքում ընդգծվում է արդեն լույս լինելու հանգամանքը, ասենք, Մշո, Տիգրանակերտի, Վանի, Խոյի բար-բառներում գործառող **խըլըսուն** բառաձևում՝ *խէտ+լուսուն* (լույսի հետ) բառիմաստով: Օրինակ՝ **Խըլըսուն** *փըշումը անձրէվ թայսվ* (Խութի Փիջունք գ. խոսվածքով):

Այդ օրապահին բնորոշ ժամանակային անորոշությունն արտացոլված է Մշո բարբառում լայնորեն գործառող **լուսու դիման** բառակապակցության մեջ՝ *վաղ առավոտ* նրբիմաստով: Օրինակ՝ **Լուսու դիման** *փըշումէ անձրէվ էգայ:*

Արևելյան խմբակցության բարբառների տարբեր խոսվածքներում *վաղ առավոտ* հասկացության իմաստով առկա են **լուսադեմին, լիսվէլիս** կամ, ասենք, *դեռես լույսը չբացված* նրբիմաստով կիրառվող **քրշերհանա, առավօղ քրշերօլ** բառադադրությունները:

Ծագումնաբանական մի առանձին խումբ էլ կազմում են **այգ** արմատից առաջացած բառանվանումները: Ակնհայտորեն այդ արմատից են սերում Համշենի բարբառի տարբեր խոսվածքներում գործառող **ակըն** (առավոտ) **և ակըվնա** (առավոտյան) բառաձևերը: Հետաքրքիր է այս երկու ձևերի կիրառությունը միևնույն նախադասության մեջ՝ հավանաբար, վաղ առավոտ լինելու հանգամանքը շեշտելու համար: Այսպես՝ **Աս ակըն ակըվնա ալի վըրայիգ արսավ** (Համշենի բարբ. Օրդուի խոսվածք):

Իրանի Փերիա գավառի խոսվածքներում վկայված է **էք-վան** ժամանականիշը՝ նույն **այգ** արմատից սերող:

**Առավոտ** օրապահի անորոշությունը հաղթահարելու և ավելի ստույգ ժամանակահատված ցույց տալու, ասենք, վաղ

առավոտ լինելու հանգամանքն ընդգծելու նպատակով են կիրառվում *հ' առավօղ կանուխ* (Կարնո բարբ.), *հ' առդու կանուխ* (Մշո Խասգեղ գ.), *առդր զրննուխ* (Սասունի Սպաղանք գ.) և նմանատիպ կայուն բառակապակցությունները:

Իրանական լեզուներից փոխառյալ *սաբահ* արմատով *սաբախտան* ժամանականիշ մակբայը, ունենալով *վաղ առավոտյան* նրբիմաստը, լայնորեն գործառում է հատկապես արևմուտյան խմբակցության բարբառներում: Բերենք մի օրինակ Կարսի Փաղրվան գյուղի խոսվածքով՝ *Սաբախտան* (կամ՝ *սաբախտրվան*) *քիճըմ թօն էգավ*:

Քեսաբի բարբառում նույն՝ *վաղ առավոտյան* նրբիմաստն ունի *սախտան ուխտ<sup>ու</sup>օլ* կայուն բառակապակցությունը:

*Առավոտ* հասկացության բառանվանումների այսպիսի առատությունն ու բազմազանությունը ժողովրդի պատկերավոր լեզվամտածողության վկայությունն է:

Հեքիաթները պատմաճանաչողական նշանակություն ունեն և իրենց մեջ պահպանում են ժողովրդի հոգեբանության, դարավոր կենսափորձի մասին վկայող խտացված բանաձևեր, ինքնատիպ բանադարձումներ: Ժողովրդական դիպուկ ու պատկերավոր մտածողությամբ, լեզվառճային հարստությամբ, բանաձևային արժեք ունեցող կայուն բառակապակցություններով ու դարձվածքներով հարուստ այս հեքիաթը տեղեկատու անձանց միջոցով այս կամ այն բարբառով թարգմանելիս ի հայտ են գալիս բառապաշարային ընդգծված տարբերություններ՝ տվյալ տարածքի բնակչության բնակավայրին բնորոշ կլիմայական պայմանների, կենդանական ու բուսական աշխարհի բազմազանության, զբաղմունքի առանձնահատկությունների մասին վկայող: Նշենք նաև, որ բնիկհայերենյան արմատական

ձևերի կողքին լայնորեն գործառուս են նաև փոխառյալ ձևերը՝ որպես շրջակա օտար լեզվական ազդեցությունների հետևանք:

Իսկ փոխառությունների, ինչպես գիտենք, դիմում են տվյալ հասկացության նրբիմաստներն արտահայտելու համար: Ժողովրդական հեքիաթներից հետաքրքիր տեղեկություններ կարելի է քաղել ժողովրդի զբաղմունքի և արհեստների մասին: Այս հեքիաթի հերոսները տարբեր խավերի մարդիկ են՝ **թագավոր, դերձակ, հովիվ, գյուղացի:**

**Դերձակ** հասկացության՝ այս հեքիաթի թարգմանություններում վկայված բառանվանումների առիթով հարկ ենք համարում նշել, որ նկատելի է որոշակի օրինաչափություն. Արևելյան խմբակցության բարբառներում գործառուս են **դերցակ, դերցիկ**, իսկ Արևմտյան խմբակցության բարբառներում՝ **դարզիկ, դարզի, թարզի** բառաձևերը: Բերենք օրինակներ. *Նէքսէվ ա գ'ալի մի դ'էրցիկ* (Աշտարակի խոսվ.): *Մալիս ա մի տէրզիկ* (Ճամբարակի Վահան գյուղի խոսվ.): *Գ'իկա թարզի մէ* (Աշո Կոպ գյուղի խոսվ.):

Քեսաբի բարբառի Կարադուրանի խոսվածքով գրանցված **թերզիկ** բառանվանման կողքին գործառուս է տվյալ հասկացությունը նկարագրորեն արտահայտող բառակապակցություն (բայական հարադրություն), ինչպես՝ *Հայ ուկու շ<sup>ա</sup>օր գար<sup>ա</sup>օղ մը, հայ էսի...*

Արմատական բառարանում Հ.Աճառյանը **դերձակ** և **դերձիկ** բառերի **դերձ** արմատը համարում է բնիկհայերենյան և **դարզի** և **դարզիկ** բառաձևերը ներկայացնելիս կասկածելի է համարում Հյուբշմանի տեսակետը, թե դրանք անվերապա-հորեն պահլավական փոխառություն պետք է համարել<sup>4</sup>:

---

<sup>4</sup>Տե՛ս Հ.Աճառյան, հ.1,Ե.,1971,էջ 656:

Ակադ. Գ. Ջահուկյանը *դերձակ* բառը հայերենի իրանական փոխառությունների *հագուստ* հասկացությանն առնչվող շերտում է ներկայացնում՝ *դերձ* արմատով և *-ակ* ածանցով<sup>5</sup>: Միջին հայերենի բառարանում այդ բառը վկայված է *-իկ* ածանցով՝ *դերցիկ*<sup>6</sup>:

Բառանվանողական տարբերություններ է դրսևորում նաև *հովիվ* հասկացությունը, որի դիմաց գրանցված են *հովիվ* և փոխառյալ *չօբան* բառանվանումները: Շատ դեպքերում երկու բառանվանումներն էլ գործառում են միևնույն խոսվածքում՝ օրինաչափ հնչյունափոխությամբ: Այսպես՝ *հովիվ* (Մուշ, Ալաշկերտ, Համշեն), *հուվել* (Քեսաբ), *խուվիվ* (Վան), *խուվել* (Ոգմ) նայլն:

Հեքիաթի թարգմանություններում բազմազանություն են հանդես բերում *անձրև*, *երկինք*, *կայծակ*, *աստղ*, *պարտք*, *ցյունացի* և հեքիաթում առկա այլ հասկացությունների բառանվանումները, որոնք վկայում են լեզվամտածողության տարբերությունների մասին: Դրանց կանդրադառնանք այլ առիթով:

Բնականաբար, նմանատիպ քննությունը լեզվաբանական հետաքրքրությունից բացի ունի նաև մշակութային արժեք և կարող է օգտակար լինել նաև այլ գիտակարգերի համար:

Barnasyan Jemma - Records of the fairy tale of H. Tumanyan “The Liar” in different dialects of Armenian (research on the peculiarities of language thinking). - While realizing the collecting works of dialects of Armenian, as a kind of generalization of the provided work, is given a task to translate Hovhannes Tumanyan's fairy tale “The Liar” in the

<sup>5</sup>Տե՛ս Գ.Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 568:

<sup>6</sup>Տե՛ս Ռ.Ղազարյան, Մ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, հ.1, Ե., 1987, էջ 174:

recorded dialect. From the hundreds of conversational units that were once recorded and in stock, let us selectively take to examination a bunch of different dialects - to represent a number of realities conditioned by differences in language thinking. Naturally, a similar research besides linguistic significance also has a cultural value and may be useful also for other scientific disciplines.

Барнасян Джемма - Записи сказки Ов. Туманяна “Лжец” на разных диалектах армянского (исследование особенностей языкового мышления). - При осуществлении собирательных работ диалектов армянского, как своеобразное обобщение проделанной работы, дается задание перевести сказку Ованнеса Туманяна “Лжец” на данном записываемом говоре. Из сотен разговорных единиц, записанных когда-то имеющих и под рукой, возьмем выборочно на рассмотрение букет разных диалектов – для представления ряда реалий, обусловленных разницей языкового мышления. Естественно, подобное исследование кроме лингвистического значения имеет также культурную ценность и может быть полезно также для других научных дисциплин.



Դիլբարյան Նարինե (ԵՊՀ)

narine.dilbaryan@ysu.am

**«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՐԱՏՔ ԽԻԿԱՐԱՅ ԻՄԱՍՏՆՈՅ»  
ԵՐԿԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ**

Խիկար Իմաստունի «Պատմություն և խրատք Խիկարայ Իմաստնոյ» երկը մեզ ավանդվել է վաղնջական ժամանակներից: Բանասիրական ուսումնասիրությունները բացահայտում են այս ստեղծագործության ուղղակի կապը ասորաբաբելական Ախիկարի պատմության հետ, որի ակունքներում աշխարհի հնագույն էպոսներից մեկն է՝ շումերաբաբելական «Գիլգամեշ արքան»: «Պատմություն և խրատք Խիկարայ Իմաստնոյ» գործն իր հնամենի ծագմամբ, բովանդակությամբ, ոճական յուրահատկություններով անմիջաբար կապված է նաև Աստվածաշնչի հետ. Հին Կտակարանում Խիկարը Տովբիտի եղբորորդին էր՝ Աքիաբարոսը: Հայոց ճառարնտիրներից մեկում, քննական բնագրերը կազմող Ա. Մարտիրոսյանի պնդմամբ, Խիկարն արդեն հայ էր՝ *Խոկայր* անվամբ, «զի իւրով իմաստութեամբ հանապազ խոկմամբ ամենացուն տայր իւրատս եւ առակօք կրթէր»<sup>1</sup>: Երկի հայերեն թարգմանության ժամանակը պարզ չէ, մեզ հասած ամենահին ձեռագիրը թվագրված է 1321՝ գրիչը Մխիթար Անեցին է: Եթե բոլոր պատումները դիտարկենք որպես մեկ ամբողջություն, ապա կարող ենք նշել, որ պատմության գլխավոր հերոսը Ասորեստանի Սենեքերիմ արքայի դպիր Խիկար Իմաստունն է, ով արքայի սիրելիներից էր: Խիկարը զա-

---

<sup>1</sup> Պատմություն և խրատք Խիկարայ Իմաստնոյ, Ե., 1969, Գիրք Ա, էջ 8:

վակ չուներ, նա որդեգրում է իր քեռորդուն՝ Նաթանին, մեծացնում նրան գորովանքով ու սիրով, կրթում բազմաթիվ խրատներով: Սակայն Նաթանը, ի հակառակ խրատների, դառնում է նենգամիտ և դավադիր, թակարդ է լարում Խիկարի դեմ, Սենեքերիմ արքան որոշում է սպանել Խիկարին, բայց Խիկարը փրկվում է, իսկ ավելի ուշ բացահայտվում է Նաթանի դավադրությունը: Գիրքը եզրափակվում է արդար պատժի անխուսափելիությունը խորհրդանշող խրատներով: Հակոբ Տաշյանը, անդրադառնալով պահպանված հայերեն բնագրերին, նշում էր, որ դրանք հիմքեր չեն տալիս երկի թարգմանության ժամանակի և միջավայրի մասին հստակ եզրակացություններ կատարելու համար. «Ներկայ հայ բնագիրը խճողուած է ռամկաբանութիւններով, որոնք չեն միաբանիր թարգմանութեան ընտիր եւ հին լեզուին հետ»<sup>2</sup>: Աներկբա է, որ երկի լեզուն հետդասական բարբառային կամ ժողովրդախոսակցական գրաբարն է:

Մեր ուսումնասիրության մեջ քննել ենք Խիկար Իմաստունին վերագրվող խրատագրքի գրաբարյան դարձվածքները, դրանք համեմատել ենք ՆՀԲ-ում և Ռ. Ղազարյանի «Գրաբարի դարձվածաբանական բառարանում» առկա դարձվածքների հետ, բացահայտել ենք մեր դուրս գրած 140 դարձվածային միավորների իմաստային և կառուցվածքային յուրահատկությունները: Խիկար Իմաստունին վերաբերող խրատագրքում առանձնացրել ենք 10 իմաստային դաշտի պատկանող գերադասանդամով դարձվածքներ: Իմաստային այս դաշտերին պատկանող բառերից դարձվածքներ կերտելու օրինաչափությունները բնորոշում են լեզվակիր հանրության աշխարհընկալման

---

<sup>2</sup> **Հ. Տաշեան**, *Մատենագիտական մանր ուսումնասիրությունք*, մասն երկրորդ, Է-Ժ, Վիեննա, 1901, էջ 140:

առաջնահերթությունները, որոնք ժամանակի ընթացքում ակներն փոփոխվում են: Դիտարկելով «Պատմութիւն եւ խրատք Խիկարայ Իմաստնոյ» երկում վկայված գրաբարյան դարձվածքները՝ կարող ենք արձանագրել, որ այստեղ ակնհայտորեն գերակայում են շարժում և տեղափոխություն, վիճակ, դրություն, ապա՝ մարմնամասեր ցույց տվող բառերից կազմված դարձվածքները: Այնուհետ, ըստ հաճախականության, կրոն, հավատալիք, պաշտամունք և միտք-մտածողություն ներկայացնող իմաստային դաշտերից կազմված միավորներ են: Մեկական օրինակով վկայված են զենքի ու ռազմական գործի, ուսուցիչի և ըմպելիքի, պետության-պետական կառավարման իմաստային դաշտերին պատկանող հասկացություններից ծագած դարձվածքներ:

Խիկար Իմաստունի երկը դաստիարակչական, խրատական բնույթ է կրում, ուստի առաջնային է համարվում անձի կրթությունը, բազմակողմ զարգացումը, առաջընթացի ապահովումը: Բերենք բնորոշ օրինակներ. *յագեցուցանել ուսմամբ* (76) - կրթել, *ուղեղ դատել* (86)- կշռադատել, *յուսումն տալ* (171)- կրթության տալ, *ամօթով լինել* (273) ամօթահար լինել, *զարթուցանել չարիս* (276) -չարիքը բորբոքել, *զգործս վճարել* (76) - հատուցել, *ի վնասու կորնչիլ* (82)- փորձանքի ենթարկվել, *բարեկեցուցանել զմիտս* (89)-միտքը զարգացնել, *զբարութիւնս ջամբել* (171)- բարություն սերմանել և այլն: Խրատական դարձվածքների բովանդակային դաշտում գերակայում է ճշմարտախոսության, ազնվության պատգամը, ստախոսությունից, չարախոսությունից, գողությունից հեռու մնալու հրամայականը՝ *պահել զբերան ի ստութենէ* (86)-բերանը չաղտոտել ստով, *պահել զլեզու ի չարախոսութենէ* (144)- չարախոսությունից զերծ մնալ, *պահել զլեզու ի շատախոսութենէ* (147)-շատախոսու-

թյունից հեռու մնալ, *պահել զձեռն ի գողութենէ* (144) – ձեռքը գողության չսովորեցնել:

Յուրօրինակ են **որոգայթ** գերադաս անդամով դարձվածքները՝ *որոգայթ խորհել* (82)-որոգայթ լարել, *որոգայթ մահու* (284)- մահվան ծուղակ, *որոգայթ ածել* (285) - որոգայթ, թակարդ լարել, *որոգայթ նեղութիւն* (282) խոր թակարդ: *Որոգայթ* բառը փաստացի դառնում է մարդկային կյանքի ու հարաբերությունների խորհրդանիշ: Որոգայթները բազմաթիվ ու բազմաբնույթ փորձություններն են, որոնց մարդը ենթարկվում է իր ողջ երկրային կյանքի ընթացքում, այն դավերն ու խարդավանքները, որ նյութվում են մարդկային հարաբերությունների խառնարանում: Խիկարի խրատագիրքն ամրագրում է այն փաստը, որ ամենասանսպասելի, անողորմ ու ողբերգական որոգայթները միշտ լարվում են սիրելի ու վստահելի համարված անձանց կողմից: Չուտ քրիստոնեական պաշտամունքի իմաստային դաշտի դարձվածքները մեր բնագրում մեծաթիվ են, պատճառը, ըստ ամենայնի, երկի ստեղծման վաղնջական ժամանակն է՝ *անեծք առնել* (82) - անիծվել, *երկիր պագանել* (136) - պաշտել, *զոհել զոհս* (137)- զոհաբերություն անել, *դնել ծունր* (137) – ծընրադրել, *աստուծոյ պաշտպանութենէ թուլանալ* (289)- աստծո հովանուց զրկվել: Մակայն բնութագրական մի փաստ նշենք՝ *Աստված* բառը դարձվածքներում միայն եզակի թվով է վկայվում, հոգնակի ձևը դարձվածքում վկայված է միայն մեկ դեպքում, այն էլ ժխտականաձև, իբրև հականիշը Աստուծո՝ *ձայն չաստուծոցն* (81)-աստանաների, դևեր ձայնը: Այսինքն՝ միաստվածության գաղափարը դարձվածքներում արդեն իսկ ամրակայված է:

Մարմնամասերի անուններից բաղադրված դարձվածքները մեր քննած բնագրում հույժ պատկերավոր են՝ *աչս արձա-*

*կել* (97)-դեսուդեն նայել, *աչք գայթակդեցուցանել* (284)-գայթակդեցնել, *համբառնալ գաչս* (78)-վեր նայել, *ցածուցանել գաչս* (78)-ցած նայել, *նայել ընդ ահամբ* (78)-ակնդետ նայել, *տեսանել յաչս* (277) ակննատես լինել, *արհամարհել յաչս* (277)-խորը քամահրել, *պահել յաչս յարատ հայելոյ* (86)-աչքը արատներից շեղել, *նեղ սրտի* (101)-նեղսիրտ, *առատ սրտի* (101)- առատաձեռն, *սիրտ առնուլ* (151)- հանդգնել, *մխիթարել զսիրտ* (274) - սփոփել, *բարկացուցանել զսիրտ* (276)-գայրացնել, *նեղել զսիրտը* (288)-նեղսրտել, *ի տանէ սիրտն առողջ լինել* (152)- թիկունքում ամուր լինել, *տանել զահ ի սրտայ* (273) - քաջալերել, *այր լեզուային* (273)- լեզվանի, շատախոս մարդ, *կակդացուցանել զլեզու* (89)-խոսքը մեղմացնել, *ի լեզուէ երկընչի* (271)- խոսքից վախենալ, *զլուխն խելագարել* (149)- զլուխը կորցնել, *ի զլուխ դառնալ* (122)-ավարտվել, ամբողջանալ, *զմարդոյն երեսին ջուրն տանել* (152) - վախեցնել, *տանել զամօթյ երեսաց* (275) - անամոթ, ցինիկ դարձնել, *ունկն դրնել* (144) -ունկնդրել, *դնել ծունր* (137)-ծնրադրել, *ընդ թիկունս լսեցուցանել* (168)- հետևից լսել տալ, *հեղուլ զարիւն* (283)- արյուն թափել, *առ ոտն հարկանել* (285) – ոտնատակ տալ և այլն:

Մարմնամասերի անվանումներից բաղադրված դարձվածքների համապատկերում առանձնացնենք մի քանի դարձվածքային խորհրդանիշեր. **սիրտ** բաղադրիչով դարձվածները հիմնականում արտահայտում են բարեգթության և մաքրության գաղափարները: Սիրտը դիտվում է իբրև հավերժական բարու և անադարտության կայուն խորհրդանիշ: **Սիրտը** զգայական, հուզական կենտրոնն է մարդու հոգևոր դաշտի, իսկ **աչքը** կենտրոնն է իմացության, արտաքին երևացող աշխարհի: **Աչք** բաղադրիչով դարձվածքներում արտահայտվում են շրջահայաց, ուշադիր լինելու, աշխարհիկ վայելքներով ու գայ-

թակղություններով չտարվելու, աչալուրջ լինելու գաղափարները: **Լեզուն** արդեն յուրօրինակ կամուրջ է **աչքի** և **սրտի** միջև. աչքը տեսնում է, սիրտը՝ զգում, իսկ լեզուն միավորում է այս երկուսի գործառույթներն ու ստեղծում հաղորդակցություն: **Լեզու** բաղադրիչով կազմված դարձվածքներում գերադաս բառը երկիմաստ է՝ լեզուն կամ կործանում է, կամ փրկում, ուստի առաջնային է լեզվին տիրապետելու, տեղին գործածելու, չարախոսությունից զերծ մնալու գաղափարը:

Միտք, մտածողություն արտահայտող բառերից հիմնական դարձվածաստեղծ միավորը հենց *միտք*-ն է՝ տարբեր հոլովածներով *զմտաւ ածել* (75)- մտածել, *բարեկեցուցանել զմիտս* (89)- միտքը զարգացնել, *ի միտ կալնել* (273) - մտածել, *կարծել ի միտս* (276)- մտածել և այլն: Ինչպես նշեցինք, ռազմական գործին, օրենքներին ու կենդանիներին վերաբերող դաշտերի միավորները մեր քննած երկում սակավադեպ են դարձվածքներում հանդիպում, բերենք մի քանի յուրատիպ կառույցների օրինակներ՝ *մարտուց ելանել* (82)- հաշտության ձգտել, *ձգել նետ յերկինս* (169)- մեծ-մեծ խոսել, *դատաստան ուտել* (81)- պատժվել, *խառնեալ շուն* (288) – ստորին ծագման մարդ:

Խրատագրքում տեղ գտած հոմանիշ և հականիշ դարձվածքները, ճիշտ է, մեծ թիվ չեն կազմում, սակայն ոճական մեծ դեր ունեն:

*Դարձվածքների հոմանշային շարքեր*՝ որոգայթ ածել- որոգայթ խորհել, դնել ծունր -երկիր պագանել, իջուցանել արտասուս- ջերմացուցանել կոծ, չարիք ածել- զարթուցանել չարիս - չար առնել զչարն, զլուխն ինելագարել- կորուսանել զխելութափել ի մտաց-յիմաստութենէ թափիլ, յուսումն տալ-յագեցուցանել ուսմամբ, ածել ի բարկութիւն -բարկացուցանել զսիրտ, ի գատ գնալ -լուծանել զկապն, ծաղր կացուցանել -ծաղր առնել -

ընդ վայր ծիծաղել, թօթափել ի զգաստութենէ-ի զգաստութենէ թափուր գտանիլ, մերժել զերկիւղն- տանել զահ ի սրտաց, նեղել զսիրտս- ի սրտի ներս առնուլ:

*Պարձվածքների հականշային շարքեր*՝ առատ սրտի-նեղ սրտի, համբառնալ զաչս- ցածուցանել զաչս, չարիք ածել- զբարիս առնել, զբարութիւնս ջամբել- չարութեան խորհուրդ առնել և այլն: Այս դարձվածքներում ևս գերիշխող է բարություն գործելու, չարից հեռու մնալուն հավերժական ձգտումը:

Եթէ ամփոփ անդրադառնանք Խիկարին վերագրվող խրատագրքի գրաբար բնագրի դարձվածքների կառուցվածքային նկարագրին, ապա պետք է նշենք, որ եռանդամ, քառանդամ և ավելի բաղադրիչներով դարձվածքները հիմնականում ձևավորվում են գրաբարյան նախդիրների շնորհիվ: Մեր համոզմամբ, նախդիրները դարձվածքների ինքնուրույն, լիարժեք բաղադրիչներ են, որոնք և՛ իմաստատարբերակիչ դեր ունեն, և՛ ձևակազմիչ: Նշենք, որ նախդրային կիրառությունների պարագայում առավել գործուն են «ի» և «զ» նախդիրները. «ի»-ն այն նախդիրն էր, որ գրաբարում կազմում էր բացառական և ներգոյական հոլովները, իսկ «զ»-ն հայցական հոլովին առկայացում էր հաղորդում:

Ներկայացնենք դարձվածքների կառուցվածքային խմբերի քանակային բաշխման աղյուսակը.

<b>Կառուցվածքային խմբեր</b>	<b>Քանակը</b>
Երկանդամ	52
Եռանդամ	60
Քառանդամ	14

Հնգանդամ	13
Վեցանդամ	2

Ակնհայտ է եռանդամ դարձվածքների քանակական գերակայությունը: Բերենք բնութագրական օրինակներ:

**Երկանդամ դարձվածքներ**- *Հանգստեան լինել* (76), *յագեցուցանել ուսմամբ* (76), *դատաստան ուտել* (81), *աչս արձակել* (97), *աւուրս պակասել* (143), *աղբատուրթիւն ժողովել* (145), *գարթուցանել չարիս* (276), *փառս յաւելուլ* (276), *աչք գայթակեցուցանել* (284):

**Եռանդամ դարձվածքներ** – *համբառնալ գաչս* (78), *կակդացուցանել գրարբառ* (78), *տանիլ ի կապանս* (81), *ածել ի բարկութիւն* (87), *գաւուրս կարճել* (95), *ի փառաց ընկենուլ* (122), *ի բաց կենալ* (123), *վարել զկեանս* (142), *ի գատ գնալ* (144), *ընդ այլ գնալ* (171), *յուսումն տալ* (171), *ի լեզուէ երկնցիլ* (271), *կորուսանել զխելս* (275), *ի յանդիմանութիւն գալ* (276), *թափել ի մտաց* (282) :

**Քառանդամ դարձվածքներ**- *Հանգստեամբ վճարել զժամանակս* (89), *հասնել զափն գերեզմանին* (105), *ի բարուց դատարկ մնալ* (149), *յաչս թեթեւ թուել* (104), *բարեմիտ կանգնել զաշխարհս* (281), *ի զգաստութենէ թափուր գտանիլ* (287), *անկանիլ ի բազում խօսս* (289):

**Հնգանդամ դարձվածքներ** – *պահել զբերան ի ստութենէ* (86), *պահել զձեռն ի գողութենէ* (144), *երկայն աւուրբք կենալ յերկրի* (86), *ի տանէ սիրտն առողջ լինել* (152), *զմարդոյն երեսին ջուրն տանել* (152), *փռջի ցանել ի վերայ հողմոյ* (272), *տանել զամօթ յերեսայ* (275):

**Վեցանդամ դարձվածքներ** – *պահել զաչս յարատ հայելոյ* (86), *կրթել զլեզու ի խօսս բարիս* (101):



Մեր բնագրի 140 դարձվածքները համեմատել ենք «Գրաբարի դարձուածարանական բառարան»-ում (ԳԴԲ)<sup>3</sup>: առկա միավորների հետ: Խրատագրքի 140 դարձվածային միավորներից միայն 17-ն է վկայված Ռ. Ղազարյանի բառարանում: Այն փաստը, որ այդքան շատ դարձվածային միավորներ վկայված չեն գրաբարի անդրանիկ և դեռ եզակի դարձվածարանական բառարանում, կարող ենք բացատրել հետևյալ հանգամանքով՝ բառարանագիրը չի առնչվել սույն երկի հետ, այն իբրև սկզբնաղբյուր չի դիտարկել:

Հավարտ արձանագրենք, որ Խիկար Իմաստունին վերագրվող խրատագրքի գրաբար թարգմանության մեջ վկայված զգալի թվով դարձվածքներ անփոփոխ կամ որոշ ձևաբանական տեղաշարժերով կիրառելի են առ այսօր արդի արևելահայերենում. *ծաղր առնել, կարող լինել, որոզայթ խորհել - որոզայթ լարել, ամօթով լինել, ծաղր լինել, ի փառաց ընկենուլ-փառքից ընկնել, կորուսանել զխելս- իելքը կորցնել, թափել ի մտաց -* մտքերը թափվել և այլն:

Narine Dilbaryan - Phraseological units in the Armenian edition of book "The history and teachings of Hikar the Wise".- The time of the translation of the text about Hikar the Wise into the Ancient Armenian language is not precisely defined, the oldest manuscript dates from 1321. The language of the book "History and Instructions of Hikar the Wise" is a postclassical, popular Grabar with dialect elements that is rich in phraseologisms. The article explores the semantics and structure of 140 phraseological units of the Ancient Armenian, identified in the book "History and teachings of Hikar the Wise." Structures with words denoting movement, state, mind and body parts dominate. The number

---

<sup>3</sup> Ռ. Ղազարյան, *Գրաբարի դարձվածարանական բառարան*, Ե., 2012, <http://www.nayiri.com>.

of components of phraseological units varies from 2 to 6. A significant part of these phraseological units is used in Modern Armenian.

Нарине Дилбарян - Фразеологизмы в армянской редакции книги «История и поучения Хикара Премудрого». – Время перевода на древнеармянский язык текста о Хикаре Премудром точно не определено, самая древняя рукопись датируется 1321 г. Язык книги «История и поучения Хикара Премудрого» - это постклассический, народный грабар с диалектными элементами, который богат фразеологизмами. В статье исследуются семантика и структура 140 фразеологизмов древнеармянского языка, выявленных в книге «История и поучения Хикара Премудрого». Доминируют конструкции со словами обозначающими движение, состояние, мышление и члены тела. Число компонентов фразеологизмов варьируется от 2 до 6. Существенная часть этих фразеологизмов используется и в современном армянском языке.

Ծ ՄԿԶԲՆԱՀՆՁՅՈՒՆՈՎ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ  
ՄՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայերենում կան իմաստով և ձևով այն աստիճանի իրար նման բառեր ու արմատներ, որ դրանք միննույն նախաձևի՝ ձայնդարձով ու հերթագայությամբ առաջացած տարբերակներ չհամարելը խիստ դժվար է: Օրինակ՝ «ճյուղ, շյուղ, ճղել, պատռել» իմաստով հետևյալ բառերն ու արմատները:

Շիղ – ճիղ – ծիլ, ծիղ

Շիւղ – ճիւղ – ծիւղ

Շեղ-ք – ճեղ(ք) – ծեղ

Եթե նմանատիպ դեպքերում դիտարկում ենք հնագույն ծագման ձայնդարձ ու հերթագայություններ, ապա ճիշտ ու համոզիչ չի լինի դրանք հ.-ե. տարբեր արմատների հանգեցնելը: Պետք է ձգտել դրանց նկարագրությունները տալու հ.-ե. միննույն արմատի տարբերակների շրջանակում: Հենց դա էլ փորձել ենք անել սույն հոդվածում՝ առնչվելով սահող **s**-ի հետ:

Ըստ Յ. Պոկոռնու, Հ. Աճառյանի, Գ. Ջահուկյանի, Ս. Նիկոլանի ստուգաբանական բառարանների<sup>1</sup> տվյալների՝ հ.-ե. բառասկզբի **\*(s)k'(h)**- հնչյունակապակցությունն՝ իր շարժուն (սահող) **s**-ով/առանց **s**-ի, շնչեղացած/չշնչեղացած, քմայնացած/չքմայնացած **k**-ով տարբերակներով, հայերենում արտացոլվել է հետևյալ համապատասխանություններով:

<sup>1</sup> **J. Pokorny**, *Indogermanisches etymologisches Wörterbuch*. Bern-München, 2005 (<http://dnghu.org/indoeuropean.html>) (այսուհետ՝ Պոկ.), **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հհ. 1-4, Ե., 1971-1979 (այսուհետ՝ ՀԱԲ), **Գ. Ջահուկյան**, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010 (այսուհետ՝ ՆԱԲ), **S. Nikolaev**, *Database of Indo-European etymology* (<http://starling.rinet.ru/>):

1. **\*(s)k** > **p** (*քերել, քիւ, քորել, քուրջ, քաղել նն*),
2. **\*(s)k'** > **u** (*սենեակ, սկրթել, սալարիլ նն*),
3. **\*(s)kh** > **խ** (*խելք, խել, խիլ, խոր, խուղ, խաւ նն*),
4. **\*sk** > **կ** (*կեղել, կոփ, կուրտ, կտել նն*),
5. **\*sk'** > **g** (*ցեղ, ցիր, ցուպ, ցախ, ցլեպ նն*),
6. **\*skh** > **շ** (*շիւղ, շերտ, շիւ, շոր, շարշիւղ նն*):

Այս շարքում բացակայում են **\*(s)k'h** և **\*sk'h** տարբերակները:

Է. Աղայանը, նկատի ունենալով նույնարմատ **ճեղ(p)**, **ճիղ**, **ճիւղ** և **շեղք**, **շիղ**, **շիւղ** ձայնդարձային շարքերի զուգահեռությունը, առաջարկել է հայերեն արտացոլումների այս շարքին ավելացնել նաև հայերենի **ճ** սկզբնահնչյունը՝ սակայն առանց հստակեցնելու դրա նախաձևը:<sup>2</sup> Կարծում ենք, որ դա կարող է լինել **\*sk'h** (շարժուն **s**-ով, քմայնացած, շնչեղացած) տարբերակը: Մի այլ առիթով փորձել ենք օրինակներով ու զուգահեռներով փաստարկել ու հիմնավորել **\*sk'h** > **ճ** վարկածը:<sup>3</sup>

Ինչ վերաբերում է **\*(s)k'h** (առանց շարժուն **s**-ի, քմայնացած, շնչեղացած) տարբերակին, ապա նույն տրամաբանությամբ կարծում ենք, որ դրա հայերեն արտացոլումը կարող է լինել **ծ** սկզբնահնչյունը՝ նկատի ունենալով վերոհիշյալ *շիւղ* – *ճիւղ* – *ծիւղ* այլև *խուղ* – *ծուղ-ակ*, *սայր* – *ծայր*, *սկրթել* – *ծկրթել*, *սեթևեթել* – *ծեթևեթել*, *սորսոր* – *ծործոր*, *ցլեպ* – *ծլեպ*, *ճլկել* – *ծլկել*, *ճղ-ոն* – *ծղ-ան*, *ճխան* – *ծ(ղ)խնի*, *ճկ-ոյթ* – *ծկ-իկ*, *ճիպ-ոտ* – *ծիպ-լի*, *քարք* – *ծարք*, *կեռ* – *կոր* – *ծուռ* և նման այլ զուգահեռ-

<sup>2</sup> Է. Աղայան, *Բառաբանական և ստուգաբանական հետազոտություններ*, Ե., 1974, էջ 113-115 (այսուհետ Աղ.):

<sup>3</sup> Հ. Զաքարյան, *Ճ սկզբնահնչյունով մի քանի բառերի ստուգաբանություն*, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնախնդիրներ» 10-րդ միջազգային գիտաժողով, Գյումրի, 2019 թ.:

ներ: Այստեղ առկա **p/կ/ւ/շ/ճ/ծ/ց/խ** ակնհայտ հերթագայությունները պետք է որևէ կերպ բացատրվեն և նկարագրվեն:

Սահող **s**-ի առաջացման 2 ուղի պետք է տարբերել: Մեկն այն է, երբ «**s**+ձայնավոր» սկզբով արմատի մեջ հնչյունափոխության հետևանքով **s**-ն հայտնվում է բաղաձայնից առաջ, օրինակ՝ \*sek- >\*ske-l-, \*ske-t-, \*ske-d- «կտրել, ճեղքել» և այլն (Պոկ., 929-930, 954, ՀԱԲ, 4, 570-572): Մյուսն այն է, երբ բաղաձայնով սկսվող արմատին հավելվում է **s** սկզբնահնչյուն, օրինակ՝ \*(s)melo- «փոքր», \*(s)leug- «կուլ տալ» և այլն:<sup>4</sup>

Երկրորդ դեպքի համար թերևս պետք է տարբերել շարժուն (սահող) **s** չստացած և այդ **s**-ն կորցրած տարբերակները: Շարժուն (սահող) **s** չստացած տարբերակը կարող է լինել ձայնեղ կամ շնչեղ ձայնեղ սկզբնաբաղաձայնով, որը **s**-ի ավելանալու դեպքում վերածվում է խուլի կամ շնչեղ խուլի (Զիբսի օրենք):<sup>5</sup>

Եթե ենթադրենք, թե \*g'ēi- (>g'ī-lo- >ծիլ) «ծլել, ծաղկել» արմատը՝ իր \*g'hēi- (>ձ-) տարբերակով, առաջնային է, հետո նրան ավելացել է շարժուն \*s-ն և առաջ բերել \*sk'ēi- (>g-) տարբերակը, որից էլ \*s-ի հետագա անկումով, \*k'-ի ապաքմայնացմամբ և կամ շնչեղացմամբ առաջացել են \*(s)k'ēi- (>u-), \*(s)kēi- (>p-), \*(s)khēi- (>խ-), \*sk'hēi- (>ճ-), \*skhēi- (>շ-), \*skēi- (>կ-) տարբերակները, ապա կբացատրվի տեսականորեն հնարավոր կեղ – քեղ – սեղ – խեղ – ցեղ – շեղ – ճեղ – ծեղ – ձեղ հերթագայությունների շարքի առաջացումը: Բայց այդ դեպքում հարկ

<sup>4</sup> Տե՛ս <https://ru.wikipedia.org/wiki/S-mobile>

<sup>5</sup> Տե՛ս Ն. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 6, Ե., 1971, 563; Օ. Семереньи, *Введение в сравнительное языкознание*. М., 1980, с. 119-120, 108-109; Э. Макаев, *Структура слова в индоевропейских и германских языках*. М., 1970, с. 217-253; [https://ru.wikipedia.org/Закон\\_Зибса](https://ru.wikipedia.org/Закон_Зибса)

կլիների գոնե *ծեղ* – *ձեղ* տարբերակների առկայության դեպքում հրաժարվել շարժուն \**s*-ի առաջացման \**sek*- > \**ske*- ուղուց, իսկ շարժուն \**s*-ն կհամարվի անորոշ նշանակությամբ (սոսկական) նախամասնիկ: Նաև հարկ կլինի միավորել \**g'ēi*- «ծլել, ծաղկել» և \*(*s*)*k'ēi*- «կտրել, ճեղքել» արմատների ժառանգ ձևերի փնջերը:

Իսկ եթե ենթադրենք, թե \**g'ēi*- (> \**g'ī-lo*-) «ծլել, ծաղկել» արմատը ծագումնաբանական կապ չունի \**sek*- > \**ske-l*- «կտրել, ճեղքել» արմատի հետ, որից սերված է համարվում **շիւղ** (**շեղ**, **շիղ**)-ը, ապա հարկ կլինի շարժուն \**s*-ով այս նախաձևի տարբերակների շարքում փնտրել **ճիւղ** (**ճեղ**, **ճիղ**)-ը և **ծիւղ** (**ծեղ**, **ծիղ**, **ծիլ**)-ը: Ահա այս երկրորդ ուղիով էլ փորձել ենք ընթանալ, թեև կարծում ենք, որ մյուս ուղին էլ իրական է այլ արմատների դեպքում: Մեր նախընտրած ուղին կարելի է լրացնել՝ դիտարկելով **ծ>ձ**, **ճ>ջ** սաստկական ձայնեղացման հնարավոր ուղին, որի աղերսները կարող են հասնել մինչև *h*-*ե*- նախալեզու:

Ստորև կփորձենք փաստարկել ու հիմնավորել \*(*s*)*k'h* > **ծ** վարկածը՝ առաջարկելով ստուգաբանական վերանայումներ ու ճշգրտումներ: Օրինակները բառեր են՝ հիմնականում սերված – *h*-*ե*- \**sek*- «կտրել, հատել, ճեղքել» պարզական արմատից, որի՝ սղված, ապա զանազան աճականներով ընդլայնված, ձայնդարձի տարբեր աստիճաններով արտահայտված տարբերակները լայն տարածում ու ճյուղավորումներ ունեն *h*-*ե*- ժառանգ լեզուներում, այդ թվում՝ հայերենում:

Ստորև քննարկվող հայերեն բառերին իմաստով մոտ են ոչ միայն վերոհիշյալ **շիւղ**, **ճիւղ**-ը, այլև հետևյալները. **խեղբ** (**խիղբ**) «ծիլ, ընձյուղ» [*\*khe-l-p*], **խիլ** «ծղոտի կտոր, փայտի փուշ, շյուղ, ծեղ» [*\*khe-l*- \*(*s*)*kel*- «կտրել, անջատել»] (ՀՄԲ, 326, Աղ. 77), մրգ. *schiel* (< \**skēulo*-) «բեկոր, տաշեղ», *h.hուն*. σκυτάλη «մական, ձող», σκυτάλις «գավազան, դագանակ» ( *skēu*-*6*) և

այլն: Այս շարքին առաջարկում ենք ավելացնել հետևյալ հայերեն բառերը:

**Ծիլ (ծիղ)** «1. ընծյուղ, 2. բողբոջ, 3. մազի ճյուղ» բառը Գ. Ջահուկյանը 3. Պոկոռնու հետևողությամբ բխեցրել է հ.-ե. \*g'ī-lo-՝ \*g'ēi- «ծլել, ծաղկել» արմատից՝ համեմատելով գոթ. keinan «ծիլ արձակել, բողբոջել», լատվ. ziēdēt, լիտվ. žydėti «ծաղկել» բառերի հետ (ՀՄԲ, 362): Հ. Աճառյանը այս վարկածը, որ նախապես առաջարկել է Հ. Պեդերսենը, մերժել է (ՀԱԲ, 2, 455): Հատկանշական է, որ Հ. Աճառյանը **ծիլ (ծիղ)**, **ծեղ**, **ծիւղ** բառերը կասկածով նույնացրել է **ճիւղ (ճեղ, ճիղ)**-ի հետ (նույն տեղում): Հիշենք, որ վերջինս էլ է. Աղայանը կապել է հ.-ե. \*(s)kel-՝ \*sek- «կտրել, ճեղքել» նախաձևի հետ, որից մասնավորապես բխեցվում է **շիւղ (շեղ, շիղ)**-ը (ՀՄԲ, 687): Այս կապը հաստատում են նաև **ծլիլ (ծլել)** «կտրվել, ջարդվել»<sup>6</sup> և դրանից կազմված **անծլելի** «անխախտելի, անխորտակելի» բառերը (ՀԱԲ, 2, 461-462), որոնք արմատով նույնական են **ծիլ**-ի հետ, իսկ իմաստով ավելի մոտ են \*sek- «կտրել, ճեղքել» նախաձևին: Նկատի ունենալով նաև, որ **ծիլ** բառի ստուգաբանության վերաբերյալ միասնական կարծիք չկա, առաջարկում ենք դա ևս կապել հ.-ե. \*(s)k-(') (h)eu- <\*sek- «կտրել, հատել, ճեղքել» արմատի հետ՝ **ծիլ (ծիղ)** <\*(s)k'hē-1- բանաձևով, որտեղ \*1-ն աճական է: Սա նշանակում է, որ «կտրել, ճեղքել, ճղել, ճղատել» իմաստից առաջացել են ինչպես **շիւղ (շեղ, շիղ)**-ը, այնպես էլ **ճիւղ (ճեղ, ճիղ)**-ը և **ծիւղ**

---

<sup>6</sup> Գ. Ջահուկյանը այս բառի համար քիչ հավանական կապ է ենթադրել հ.-ե. \*g'ēis- «խիճ» արմատի հետ՝ ենթադրելով վերջինիս նախնական «ջարդել» իմաստը (ՀՄԲ, 364): Հ. Աճառյանը **ծլիլ** «կտրվել» բառը չի ստուգաբանել, ոչ էլ կապել է **ծիլ (ծիղ)**-ի հետ (ՀԱԲ, 2, 461-462): Ստ. Մալխասյանցը համանուններ է համարել **ծլել** «բուսնել» և **ծլել** «կտրվել» բառերը (**Մ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան**, հ. 2, Ե., 1944, էջ 340 (այսուհետ՝ Մալխ.)):

(**ծեղ, ծիղ, ծիլ**)-ը: Ըստ Հ. Աճառյանի՝ հայերենի բառակերպի **ծ**-ն կարող է ծագած լինել հ.-ե. **g'**-ից:<sup>7</sup> Գ. Ջահուկյանը հնարավոր է համարել բառակերպի **ծ**-ի՝ նաև (**s**)**k**-ից և (**s**)**k'**-ից ծագած լինելը (մասնավորապես **ծամ**-ածուռ, **ծափ**-ահարել, **ծուլ** արմատները):<sup>8</sup> Այստեղից մի քայլ է մնում մինչև մեր առաջարկած (**s**)-**k'h**-ն: Բայց հարց է ծագում. եթե հայերենի բառակերպի **ծ**-ն կարելի է համապատասխանեցնել հ.-ե. **\*g'**-ի հետ, ապա ի՞նչ կարիք կա որոշ բառերի դեպքում ենթադրել **\*(s)k'h>ծ** համապատասխանություն: Պատճառը հետևյալն է. որպեսզի բացատրելի լինեն **ծիւղ (ծեղ, ծիղ) // ճիւղ (ճեղ, ճիղ) // շիւղ (շեղ, շիղ)** և նման կարգի այլ հերթագայություններ, որոնք հնարավոր են միայն շարժուն (սահող) **s**-ի պարագայում: Հայտնի են դեպքեր, երբ միևնույն դիրքում միևնույն հնչյունը տարբեր բառերի (արմատների) դեպքում ծագած է լինում տարբեր նախածններից: Օրինակ՝ **թ < \*th, \*pt; խ < \*kʷh, \*(s)kh; կ < \*gʷ, \*sk; յ < \*s, \*p; շ < \*kʷ, \*skh; տ < d, st; ք < \*kʷ, \*(s)k** և այլն:

**Ծեղ** «1. շյուղ, հարդի փշուր, փայտի ցլեպ, 2. չոր ցողուն» և **ծիւղ (ծուղ)** «1. ծեղ, շյուղ, հարդի փշուր, 2. խոիվ» բառերը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են **ծիլ (ծիղ)**-ի ձայնդարձային տարբերակներ (ՀԱԲ, 2, 455, ՀՄԲ, 362): Դրանց ծագման բանաձևերը կլինեն՝ **ծեղ <\*(s)k'he-l-** և **ծիւղ (ծուղ) <\*(s)k'heu-l-**:

<sup>7</sup> Տե՛ս Հ. Աճառյան, *Լիակատար...*, հ. 6, Ե., 1971, էջ 533-534, 583:

<sup>8</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, *Հայերենի անհայտ ծագման բառարմատները*, ՊԲՀ, 1990, հմ. 2, էջ 62-77: Գ. Ջահուկյանը **ծ**-ն համարում է դեռևս վաղնջահայերենում պայթականների առաջին քմայնացման արդյունք, իսկ **ճ**-ն՝ հնագույն հայերենում երկրորդ քմայնացման արդյունք (Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987):



**Օղօս** (**ծղաւտ, ծղնօստ, ծղետաւն, ծղօն**) «չոր ցողուն» բառը համարվում է **ծիլ (ծիղ)**-ի ածանցյալ (ՀԱԲ, 2, 455, ՀՄԲ, 362)՝ **աւտ** ածանցով (հմմտ. ծն-**աւտ**, կար-**աւտ**, առ-աւ-**աւտ**):

Այլ ածանցյալներից հիշենք՝ **ծլել** «1. ծիլ արձակել, 2. շաքարակալել», **ծլկել** «ծլել» (Մալխ., 2, 341) (**կ**-ի համար՝ հմմտ. **խցկել** < խուց-**իկ**-ել, **կոծկել** < կոծ-**իկ**-ել), **ծլկիլ** «շաքարակալել» (բրբռ.) (ՀԱԲ, 2, 455), **ծղան** «1. ճղոն, վառելափայտի կտոր, 2. շերտ» (ՀԱԲ, 2, 455, Մալխ., 2, 344)՝ **-ան** ածանցով (հմմտ. խոտ-**ան**, խար-**ան**, շար-**ան**, պար-**ան** և այլն), **ծղանել** «կոճղը կացնով ճղճղել, կտրտել, ցախ սարքել» (ՀԱԲ, 2, 455, Մալխ., 2, 344), **ծղողել** «թել-թել պատռել, ճղճղել, բզկտել» (Մալխ., 2, 344)՝ **-ող** ածանցով (հմմտ. խճ-**ող**-ել, ձախ-**ող**-ել, յ-աջ-**ող**-ել), **ծղունդ** «եղունգի կամ շրթունքի կողքի պտռվածք՝ վերք» (Մալխ., 2, 344)՝ **-ունդ** ածանցով (հմմտ. ել-**ունդ**, սեր-**ունդ**, ծն-**ունդ**), **ծլեայ** «ցլեայ, սրածայր բեկոր» (Մալխ., 2, 340)՝ **-եայ** ածանցով (հմմտ. կլ-**եայ**), **ծլանք (ծլանգ)** «1. պատառոտված շորի կախ ընկած կտոր, 2. բրդուճ, 3. շերտ, 4. խեցեղենի կոտրվելու ձայնը» (Մալխ., 2, 340)՝ **-անք** բաղադրյալ ածանցով, **ծլաք** «փոքր արտ» (Մալխ., 2, 340)՝ **-աք** ածանցով (հմմտ. թան-**աք**, սլ-**աք**), **ծլիկ** «կլիտոր» (ՀԱԲ, 2, 455)՝ **-իկ** ածանցով, **ծղի (ծղիկ, ծղուկ, ծղին, ծղիկք)** «թն՝ ուսից մինչև արմունկ» (ՀՄԲ, 565)՝ **-ի, -իկ(ք), -ուկ** կամ **-ին** ածանցով, **ծ(ղ)իսնի** «ծխնի, ճխան» (ՀՄԲ, 565)՝ **-(ի)ս-նի** բաղադրյալ ածանցով (հմմտ. աղավ-**նի**, նախ-**նի**, գաղտ-**նի** և այլն):

**Օլկել** «փախչել, անհետանալ, աննկատ գնալ» բառը (Մալխ., 2, 341) նույնարմատ համանուն է վերոհիշյալ **ծլկել** «ծրլել»-ին: Ստուգաբանական բառարաններում չկա: Սրա մի տարբերակն է **ճլկել**-ը: Սրանց հոմանիշ են անհայտ ծագման համարված **ճողոպրել** «1. փրցնել, խլել, պոկել, 2. փախչելով

փրկվել, պրծնել, ծլկել» և **ճղել** «1. պատռել, 2. ծլկել, փախչել, անհետանալ» բառերը: Իմաստային զարգացման համար հմմտ. ռուս. **удрать** «ծլկել, ճողոպրել, փախչել» բառը, որը **драть** «պատառոտել, ճղճղել, քերթել, պլոկել, փրցնել» բառի ածանցյալն է,<sup>9</sup> անգլ. lam «ջարդել, ծեծել» բառը, որ ունի նաև «փախչել, ծլկել, ճողոպրել» իմաստը:<sup>10</sup> Սրանց համար կարելի է առաջարկել **ծլկ-** <\*ծուլուկ <\*(s)k'hōlō-g<sup>w</sup>- <\*(s)k'hō-l-, **ճլկ-** <\*ճուլուկ <\*sk'hōlō-g<sup>w</sup>- <\*sk'hō-l-, **ճողոպ-** <\*sk'holo-b- <\*sk'ho-l-, **ճղ-ել** <\*sk'hō-l- ստուգաբանական բանաձևերը:

**Շղբել** «ճյուղերով պատ հյուսել» բառը (Մալխ., 2, 344) ստուգաբանական բառարաններում չկա: Իմաստը (**ճյուղ** բառի հետ կապը) և ձևը հուշում են, որ սա **ծիլ (ծիղ)**-ի ածանցյալ է՝ **բ** աճականով: Ստուգաբանական բանաձևը կլինի՝ **ծղբ-ել** <\*(s)k'hē-l-bh- կամ \*(s)k'hō-l-bh-: Սրան ձևով և իմաստով մոտ է բարբառային **ծեխկ** «բարակ ճյուղերից հյուսած ցանկապատ» բառը, որի ծագման բանաձևը կլինի **ծեխկ** <\*ծեղգ <\*(s)k'hō-l-g-:

**Շուղակ (ծողակ, ծաղուկ, ծղուղակ, ծալալակ, ծոլ)** «թափարդ, որոգայթ» բառի համար Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը հավաստի ստուգաբանությունն չեն տալիս (ՀԱԲ, 2, 472, ՀՄԲ, 368): Դրա **ծղաղակ** բարբառային տարբերակի բացատրությունն է «բարակ ճյուղերից հյուսված ծուղակ» (Մալխ., 2, 344): Դարձյալ իմաստը (**ճյուղ** բառի հետ կապը) և ձևը հուշում են, որ սա **ծիլ (ծիղ)**-ի ածանցյալ է՝ **-աղ** և **-ակ** ածանցներով (**-աղ**-ի համար հմմտ. փակ-**աղ**-ակ, կախ-**աղ**-ան, հոտ-**աղ** և այլն): Ուստի առաջարկում ենք **ծուղ-ակ** <\*(s)k'hō-l- ստուգաբանական բանաձևը: Այս ստուգաբանությունը հասատում են նաև

<sup>9</sup> St' u Викисловарь (<https://ru.wiktionary.org/wiki/>):

<sup>10</sup> St' u Wiktionary (<https://en.wiktionary.org/wiki/>):

**ծղիկ (ծղենակ)** «ծղոտից կամ ուռենու ճյուղերից հյուսված փոքր սակառ՝ կողով՝ զամբյուղ, կոսորակ, շշի պատյան», **ծղելակ** «ծղոտահյուս գլխարկ, քթոց», **ծղի** «ուռենու ճյուղերից հյուսած փեթակ» բառերը:<sup>11</sup> **Տուղ-ակ**-ը իմաստով կապվում է նաև նույնարմատ **խուղ** բառի հետ (ՀԱԲ, 2, 416-417), քանի որ երկուսն էլ նշանակում են ճյուղերից, ձողերից սարքված փոքր խցիկ»:

**Ընծիւղ (ընծիւղ, ընծիդ, ընծիդ)** «1. ծիլ, 2. բողբոջ, 3. շյուղ, ճյուղ, շառավիղ» բառը Մտ. Մալխասյանցը վերլուծել է «ըն+ծիւղ=ծիդ, ծիլ» բանաձևով (Մալխ., 2, 66)՝ առանց հ.-ե. նախաձև վերականգնելու: Գ. Ջահուկյանը Յ. Պոկոռնու հետևողությամբ **ծիւղ**-ը բխեցրել է հ.-ե. \*g'el- «ընձյուղել, բողբոջել» արմատից՝ **ըն(դ)**-ը համարելով ածանց (ՀՄԲ, 250): Այս նախաձևը, ի դեպ, **ծիլ**-ի համար նույն հեղինակների ենթադրած \*g'i-lo-՝ \*g'ei- «ծլել, ծաղկել» արմատի մի տարբերակն է: Հ. Աճառյանը առաջարկել **\*իւնծ-իւղ** ստուգաբանությունը (ՀԱԲ, 2, 131), որտեղ **\*իւնծ**-ը այլուստ անծանոթ արմատ է, իսկ **-իւղ**-ը՝ ածանց: Դարձյալ նկատի ունենալով միասնական կարծիքի բացակայությունը՝ առաջարկում ենք այս բառի **ծիւղ (ծիւղ, ձիւղ, ծիւղ)** արմատը նույնացնել վերոհիշյալ **ծիլ (ծիւղ, ծիւղ)**-ի հետ՝ որպես նրա ածանցյալ, մանավանդ որ ենթադրելի է **ընծիւղ (ընծիդ)** [ $*(s)k'heu-l-$ ] տարբերակի նախնականությունը, որից առաջացած **ընծիւղ (ընծիդ)**-ի **ծ**-ն **ծ**-ի առնմանական ձայնեղացման հետևանք է **ընդ**- ածանցի ձայնեղ **դ**-ի ազդեցությամբ՝ **\*ընդծիւղ** > **\*ընդծիւղ** > **ընծիւղ**: Այս բառի ածանցյալն է **ընծիւղել (ընծիւղել)** «ծլել, բողբոջել, բուսնել» բայը, որն ունի նաև **ընծեղել, ընծիղել** տարբերակները (Մալխ., 2, 66):

<sup>11</sup> Տե՛ս *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ. 2, Ե., 2002, էջ 415:

**Ընձուել (ընձուիլ, ընծուիլ)** «1. ծլել, բուսնել, 2. (փխր.) լույս արձակել, ճառագայթել, ցոլալ, փայլել, լուսավոր(վ)ել, ծագել, բխել» բառը (Մալխ., 2, 66) (որից բխեցվում է **ընձիւղ** բառը) Գ. Ջահուկյանը Է. Ադայանի հետևողությամբ դուրս է բերել \*g'el-u-` \*g'ei-` \*gi- «ընձյուղել, բողբոջել, ծլել, ծաղկել» արմատից՝ \*u ա- ճականով (ՀՄԲ, 250): Հ. Աճառյանը առաջարկել է **\*ինձ-ու-իլ** ստուգաբանությունը՝ «**ու** մասնիկով» (ՀՄԲ, 2, 131): Առաջարկում ենք **(ըն)ծու-իլ** <\*(s)k'hē-u- ստուգաբանական բանաձևը, որտեղ \*u-ն աճական է, **ըն(դ)**-ը՝ նախածանց: Ինչ վերաբերում է բառի փոխաբերական իմաստներին, ապա այդպիսի իմաստային զարգացումը տիպաբանական հանրույթ է, որի գուգահեռն է **շառավիղ** «1. ճյուղ, ոստ, 2. ճառագայթ» զարգացումը (ՀՄԲ, 2, 131):<sup>12</sup> Հ. Աճառյանը նշել է նաև **ընձուորութիւն** «աշկերտություն, համբակություն, նորընծայություն» ածանցյալը (նույն տեղում), որը իմաստային մի այլ զարգացում է:

Hovhannes Zakaryan – Etymology of Some Armenian Words with the Initial Sound **Ծ**.- The article, dwelling upon phonetic, morphemic and semantic analyses, puts forward the following new etymologies: **ծիլ** "sprout, sprig" <\*(s)k'hē-l- <\*sek- "to cut, to split", **ծեղ** "sprig, straw, shavings" <\*(s)k'he-l-, **ծիւղ** "1. "straw, 2. brushwood" <\*(s)k'heu-l-, **ծլկ-ել** "to run away, scoot, lam" <\*ծուլուկ <\*(s)k'hōlō-g<sup>w</sup>- <\*(s)k'hō-l-, **ծուղ-ակ** "ловушка, сеть" <\*(s)k'hō-l- etc.

Оганес Закарян - Этимология некоторых армянских слов, с начальным звуком **Ծ**.- В настоящей статье на основе фонетического,

<sup>12</sup> Հմմտ. նաև լատ. radius «1. ձողիկ, ճաղ, շառավիղ, 2. ճառագայթ», անգլ. beam «1. ձող, 2. ճառագայթ», ֆր. rayon «1. ճաղ, շառավիղ, 2. ճառագայթ» (տե՛ս նաև Պ. Բեդիրյան, *Մի քանի ստուգաբանություններ*, ՊԲՀ, 1962, հմ. 1, էջ 146):

словообразовательного и семантического анализов предлагаются следующие новые этимологии: **ծիլ** "росток, побег" <\*(s)k'hē-l- <\*sek- "резать, раскалывать", **ծեղ** "веточка, соломинка" <\*(s)k'he-l- , **ծիւլ** "1. соломинка, 2. хворост" <\*(s)k'heu-l-, **ծլկ-եղ** "удрать" <\*ծուլուլ <\*(s)k'hōlō-g<sup>w</sup>- <\*(s)k'hō-l-, **ծուղ-սլ** "ловушка, сеть" <\*(s)k'hō-l- и т. д.

**Թաղևոսյան Հասմիկ**  
(ԳԱԱ լեզվի սինստիտուտ)

**ԳՐԻԳՈՐԻՍԻ «ՔՆՆՈՒԹԻՒՆ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՅ ԵՒ ՆՈՐԻՆ ՑԱԻՈՑ» ԲԺՇԿԱՐԱՆԻ  
ԲԱՌԱՊԱՇՇԱՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Միջնադարյան բժշկաբանները հսկայական նյութ են պարունակում հայերենի բառապաշարի, քերականական կառուցվածքի կրած փոփոխությունների, բարբառագիտության և առհասարակ լեզվի ուսումնասիրության համար: Ինչպես գիտենք, միջնադարում շեշտը դրվում էր ժողովրդական լայն զանգվածներին հասկանալի լեզվով շարադրելու վրա, և ինչպես նկատում է Ղ. Յովնանյանը, բնական գիտություններից այդ խնդիրն ամենից ավելի ուներ բժշկությունը<sup>1</sup>:

Ինչպես գիտենք, 12-րդ դարում հայ բժշկագիտական տերմինաբանության զարգացման գործում մեծ ներդրում ունեցան Մ. Հերացին և նրա ստեղծած կիլիկյան բժշկագիտական դպրոցը<sup>2</sup>: 13-րդ դարում արժևորվում է Հերացու հետևորդ և նույն դպրոցի հայտնի ներկայացուցիչ Գրիգորիսի «Քննություն բնութեան մարդոյ և նորին զանազան կրից և պատճառանաց ցաւոց» բժշկաբանը, որը միջնադարյան հայ բժշկագիտության ընդհանուր ախտաբանության տեսական ու գործնական հարցերին նվիրված մի եզակի հուշարձան է<sup>3</sup>: Այն ընդգրկում է հին և միջնադարյան

---

<sup>1</sup> Ղ. Յովնանյան, *Հետազոտությունք նախնեաց ռամկօրէնի վրայ*, Վիեննա, 1897, հ. Ա, էջ 112:

<sup>2</sup> Մ. Վարդանյան, *Հայաստանի բժշկության պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը*, Ե., 2000, էջ 119:

<sup>3</sup> Գրիգորիս, *Քննություն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց*, Ե., 1962, Ներածություն, էջ XXXVII:

բժշկագիտությանը հայտնի գրեթե բոլոր հիվանդությունները բնորոշող ախտանշանների մանրամասն նկարագրությունները, պատճառագիտության և ախտաճնության գիտականորեն հիմնավորված մեկնաբանությունները:

Բժշկարանը, ցավոք, մեզ չի հասել ամբողջությամբ և անադարտ բնագրով: Քննական բնագիրը 1962թ. կազմել և հրատարակել է բժշկապատմաբան Արծրուն Կծոյանը՝ հիմք ընդունելով Մատենադարանի թիվ 415 և թիվ 8873 ձեռագրերը: Առաջին ձեռագիրը մեզ հասել է Ծարպիանի որդի տեր Հակոբի 1465-1473թթ. ընդօրինակությամբ, իսկ երկրորդ ձեռագիրը 17-րդ դարում ընդօրինակվել է առաջինից. պարզապես սրբագրվել է, և միջինհայերենյան ձևերը գրաբարացվել են<sup>4</sup>:

Երեք մեծ գրքերից բաղկացած բժշկարանը թերի է սկզբի մասով և այդ պատճառով մենք որոշակի տեղեկություն չունենք Գրիգորիսի մասին, սակայն Կծոյանը համոզիչ փաստարկներով ապացուցել է, որ Գրիգորիսն ապրել է 13-րդ դարում՝ հայ բժշկության բուռն զարգացման շրջանում, գործել է Կիլիկիայում և մայրենիից բացի, տիրապետել է հունարենին, արաբերենին, պարսկերենին, ասորերենին<sup>5</sup>: Երեք գլուխներում համապատասխանաբար տրվում են արտաքին (այտուցներ, մաշկային հիվանդություններ), ներքին հիվանդությունների նկարագրությունները, ապա նաև անդրադարձ է արվում դրանց կանխատեսման և ախտորոշման հարցերին:

Բժշկագիտական կարևոր հուշարձան լինելուց բացի, Գրիգորիսի բժշկարանը արժևորվում է որպես միջին հայերենի՝ մաս-

---

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ VII-XV:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, էջ XXXVI- XXXVII:

նավորապես կիլիկյան նորմավորման շրջանի<sup>6</sup> հուշարձան: Վերջինս, շարադրված լինելով կիլիկյան միջին հայերենով և Հերացու հետևողությամբ, անշուշտ, աչքի է ընկնում բառապաշարի, մասնավորապես բժշկական տերմինների, նաև քերականական իրողությունների ընդհանրությամբ: Մակայն այս բժշկարանում տեղ են գտել նախորդ դարի բժշկարաններում (Հերացի, Աբուսայիդ) չվկայված զգալի թվով բառեր, և հնարավոր է, որ վերջիններս առաջին գրավոր վկայությունները լինեն:

Գրիգորիսի բժշկարանը հատկապես կարևորվում է բառապաշարի քննության տեսանկյունից, քանի որ նշված երկում տեղ են գտել միջին հայերենի շրջանին բնորոշ բազմաթիվ, ժողովրդախոսակցական, բարբառային բառեր, նորակազմություններ, փոխառություններ, ինչպես նաև՝ բառիմաստի նոր դրսևորումներ: Նշենք նաև, որ «*Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց*»-ի բառապաշարն չի ընդգրկվել «Նոր հայկազեան բառարան»-ում, Հ. Աճառյանի «Հայերէն արմատական բառարան»-ում, արտացոլվել է միայն «Միջին հայերենի բառարան»-ում: Քննելով ախտաբանական և կազմախոսական հարցեր՝ Գրիգորիսի բժշկարանը, բնականաբար, առավելապես աչքի է ընկնում ախտաբանական և կազմախոսական տերմիններով: Դրանք առաջ են եկել տերմինաստեղծման երեք ուղիներով. 1. փոխառյալ բառերի հաճախակի գործածությամբ, 2. նոր բառերի կազմությամբ, 3. գրաբարյան բառերի վերաիմաստավորմամբ:

1. Ինչպես և բնորոշ է միջնադարյան բժշկարաններին առհասարակ, Գրիգորիսի բժշկարանի բառապաշարի անքակտելի մասը ևս փոխառյալ բժշկական տերմիններն են: Դրանց մեջ գերակշռում են արաբական փախառությունները՝ պայմանավորված

---

<sup>6</sup> Գ. Զահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 26:



արաբական բժշկագիտության աղբյուրների օգտագործմամբ, այնուհետև զգալի տեղ են գրավում նաև պարսկական փոխառությունները, իսկ հունարեն և լատիներեն բառերն ավելի սակավ են հանդիպում: Գրիգորիսի բժշկարանում կիրառվել են զգալի թվով փոխառյալ նոր բառեր, որոնք վկայված չեն ավելի վաղ ստեղծված բժշկարաններում: Ներկայացնենք դրանցից մի քանիսը.

**Բուհրան** (<արաբ. buhrān) «կրիզիս, ճգնաժամ». «Բազարաստ ասէ, թէ *բուհրանն* լինի ի վաթսունն, և ի յոթսունն, և ի հարիւրն. և այլ ասէ նեղ, որ տղայոցն հանդիպի, նայ իւր *բուհրանն* ի յեօթն ամիսն լինի, և ի յեօթն տարին»<sup>7</sup>:

**Էպարի** (<արաբ. ibari) թեփուկի տեսակ. «Եւ ազգ մի այլ կայ ի յինքն ի նման, որ ասեն իւրն *էպարի*, է որպէս ասխան հետեր և այս ազգս այլ ի թեփուկն նման է և ինքն ընծայի ի բուխարէն» (43):

**Ղարպ** (<արաբ. qarṣ) «աչքի ելունդ». «Իսկ *ղարպն*, որ է ելունդ և ելնէ ընդ աչիցն աղբիւրն և ընդ քիթն ի մօտ» (87):

**Ղուտայ** (<արաբ. ḡudda «գեղձ») «արցունքագեղձ». «Իսկ *ղուտայն* այն մսին ասեն, որ յաւազ աղբիւրն է, զի այս միսս ժամ կայ, որ մեծնայ և ժամ, որ յիւր չաքսն կենայ: Եթէ մեծ է այս *ղուտայս*, որ անուանի գիղձ» (87):

**Պահր** (<արաբ. baḥr «տհաճ հոտ») «թոքախտ», **ռապու** (<արաբ. rabū, պարսկ. rābv) «շնչարգելություն, հեղձանք». «Եւ այլ նեղեր, որ պատահին թոքին, որ ասին *ռապու* և *պահր*» (107):

**Տայուն** (<արաբ., պարսկ., թուրք. taun) «ժանտախտ». «Ասեն իւրն ելունդ և սուր ելունդ, և այլ ասեն *տայուն*, որ է խոցող» (30):

**Գարդան** (<պարսկ. gārdan) «կրկնվող ջերմ». «... լինի ջերմն, որ ասի *գարդան*, նայ թըշանայձն թողու զինքն» (73):

---

<sup>7</sup> Տե՛ս **Գրիգորիս**, *Քննություն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց*, Ե., 1962, էջ 197 (Այնուհետ օրինակների էջերը կնշվեն փակագծերում):

**Թիննի** (<պարսկ. tin «թուզ») «թզանման պալար, չիբան». «Եւ կայ ազգ մի, որուս ասեն *թիննի* և ինքս ի թզի միջին նման է և լինի պինդ և կարմիր» (43):

**Մարդակ** (<պարսկ. mārđāk) «բիր». «Եւ անվնասն ի յայս շտերոյս այն է, որ տեսնուս զինքն ի դրացէ ի յերեսն այն կեղտոյն, որ քերած յեղջիւրի նման է, և ի *մարդակէն* ի յետ լինի» (82):

**Քապուս** (<պարսկ. kabus) «մղձավանջ». «Եւ *քապուսն*, որ անուանի խիպիլիկ, նայ և այս մաղձս ի պլղամէ լինի, և ի շատ արբենալոյն և շատ ուտելոյն, և ի թուխմայէ և հաստ կերակրոց... և այս *քապուսս* առաջք է յանլայութենէն և ի խորու քուն» (64):

**Պաւլիմուս** (<հուն. poliemus «լիարյուն») «ստամոքսի քաղցկեղ». «Եւ այն ցաւոյն ասեն *պաւլիմուս*, որ թարգմանի հատցնող շնչոյ և հատցնող յատկական տաքութեան» (121):

**Սլիմիսիա** (<հուն. seliniasmós) «լուսնոտություն». «Եթէ սա-րահն ի կարճելոյ ջլացն լինի՝ անուանի *սլիմիսիա*» (64):

**Սնթերի** (<հուն. dysenteria) «դիզինտերիա, արյունալի լուծ», «Եւ մինն ի ցաւոցն այն է, որ անուանի *սնթերի*» (137):

Բերված փոխառոյալ տերմինները, ընդհանուր կիրառություն չունենալով, չեն պահպանվել և ամրագրվել մեր լեզվում:

2. Մեր լեզվի համար առավել կարևոր նշանակություն ունեն օտար տերմինների կողքին հայերեն համարժեք բառերի կիրառությունները: Միջնադարյան հայ բժիշկների նման Գրիգորիսը ևս ձգտել է օտար բժշկական տերմինները բացատրել միջին հայերեն նոր կազմություններով, որոնք էլ գործածել է փոխառություններին զուգահեռ, ինչպես՝

**Շահտիեհ** (<արաբ. šahdiya) «մաշկի բշտիկային բորբոքում, որից ծորող արտադրությունը մեղրի նման է»- *մեղրծոր*. «...և այս քերքեշս շատ ազգեր են, զի կայ ի յինքս, որ անուանի *շահտիեհ*, որ ասի *մեղրծոր*» (43):

**Մաշարայ** (<պարսկ. mašara) «արյունոտ խոց» - **խումարցաւ** (կազմվել է արաբ. humra «կարմիր քամի» բառից). «Եթէ ի գլուխն կամ ի յերեսն՝ անուանի *մաշարայ*, որ է *խումարցաւ*» (29):

**Սարահ** (<արաբ., թուրք., sar'a պարսկ. sār' ) «ընկնավոր, ընկնավորություն» բառը մի դեպքում բացատրվում է գրաբարյան *ղիւսհար*-ով, մյուս անգամ՝ **խերնկած** (չկա ՄՀԲ-ում) նորակազմությամբ. «...և սարահն, որ է *ղիւսհար*՝ ընկնի և փրփրի» (61): «...և *սարահին*, որ անուանի *խերնկած*» (5):

**Հլումորդիդայ** (<արաբ. əlum rağigə) «ուղեղի փափուկ թաղանթ» - **նօւրմայր**. «և ի յայս մաշկէս ի մէկայլ մաշկն, որ անուանի *ըլումորդիդայ*, և է հայերէն *նօւրմայր*» (53-54):

**Հլումրճաֆիէհ** (<արաբ. əlum jafiya) «ուղեղի կոշտ թաղանթ, կարծրենի» - **հաստմայր**. «Եւ հասնի այս ուռիցս ի յայն մաշկն, որ ասեն իւր *ըլումրճաֆիէհ*, որ անուանի հայերէն *հաստմայր*» (53):

Գրիգորիսի բժշկարանն աչքի է ընկնում հայերենի բառակազմական գրեթե բոլոր միջոցներով կազմված բառերի առատությամբ: Այս երկի բնույթով պայմանավորված՝ նորակազմությունները, հիմնականում ախտանուններ են և կազմախոսական բառեր, որոնց ստեղծման գործում, ինչպես և միջնադարյան բժրշկարաններում առհասարակ, ակնառու է ժողովրդական մտածողության ազդեցությունը, ինչպես՝ *արիւնբերութիւն* «արյունահոսություն» (110), *գաղտտուն* «հոգետուն» (54), *դեղապետել* «դեղերով բուժել» (145), *երկրմայր* «անձրևորդ, գետնի մայր» (112), *խրոչայգլուխ* «շնչափողի վերին մասը (102), *կարմրհեղձ* «խիստ կարմիր» (42), *կողմաշկ* (118), *մատնշունչ* (30), *տափող* «մեջք» (71) և այլն:

Բժշկարանում զգալի թվով նոր ախտանուններ են կիրառվել **ցաւ** բաղադրիչով՝ նշանակելով տվյալ օրգանի կամ մարմնի

մասի հիվանդություն, ինչպես՝ *ականջնայցաւ* (91), *բարակցաւ* (187), *երիկամայցաւ* (141), *զօղուածայցաւ* (141), *թոքայցաւ* (7), *կողցաւ* (8), *սաղավարտցաւ* (55), *ստամոքցաւ* (139), *վարդցաւ* «կարմրուկ»(38), *փակեղնայցաւ* «զլխացավի տեսակ» (55), *փղայցավ* «փղախտ» (44): Նույն նշանակությունը զուգահեռաբար արտահայտվել է նաև **-ուրիւն** վերջածանցի ավելացմամբ, ինչպես՝ *բարակցաւուրիւն* (120), *լերդցաւուրիւն* (187), *ոսկրցաւուրիւն* (141), *ստամոքցաւուրիւն* (186) և այլն:

**-Ոտ** վերջածանցով կազմված բառերը բժշկարանում արտահայտում են այս կամ այն հիվանդություն ունեցողի նշանակությունը, ինչպես՝ *նեղոտ* (115) «հիվանդ», *բարակցաւոտ* (210) «թոքախտով հիվանդ», *կողացաւոտ* (117) և այլն:

**-Ոտ** վերջածանցին **-ել/իլ** բայածանց ավելացնելով գործածվել են *ակցաւոտիլ* «աչքի հիվանդությամբ տառապել» (187), *բարակցաւոտելլ* (209) և այլ բայեր:

Ախտանունների կազմության գործում նկատելի են նաև **-ակ**, **-իկ**, **-ուկ** վերջածանցները, ինչպես՝ *ղաշտիկ* «արյունոտ խոց» (180), *գարեակ* «աչքի գարեկ» (86), *գորտնուկ* (33), *խափակ* «հիշողության և մտածողության խանգարում» (59), *խոյլիկ* «փոքր ելունդ, որ հիմնականում աչքի կոպերին է լինում» (87) և այլն:

Կազմախոսական նոր բառեր են կազմվել **մեջ**, **տակ**, **տեղ**, **փող** բաղադրիչներով, ինչպես՝ *ակոայտակ* (100) «լինդ», *ակոայմեջ* (101) «ատամի խոռոչ», *կողմիջեր* (118) «կողամեջ», *քնայտեղ* (35) «քունք», *ջրփող* «միզուկ» (157), *քթայփող* «քթի խոռոչ» (96) և այլն:

Վերոհիշյալ նորակազմությունների մի մասը՝ *ականջացավ*, *բարակացավ*, *գաղտուն*, *գարեկ* (գարուկ), *գորտնուկ*, *երիկամացավ*, *թոքացավ*, *մատնաշունչ*, պահպանվել և ամրագվել է արդի հայերենի բառապաշարում:

3. Գրիգորիսի բժշկարանում զգալի տեղ ունեն գրաբարյան բառերի վերաիմաստավորմամբ առաջացած կիրառությունները: Դրանք առօրյա-խոսակցական այն բառեր են, որոնք հիմնականում *նմանության գուգորդությանը*<sup>8</sup> կիրառվել են բժշկական տերմինի նշանակությամբ: Բերենք դրանից մի քանիսը.

**Բևեռ** «եղջերային ուռուցք». «Եւ կոծիծն փոքր շտեր են և պինտ զերդ զքար և բոլոր, և ազգ մի, որ ասեն իւր *բևեռ*» (40):

**Բաղարճ** «չմարսված». «զի չկարէ փոխել զկերակուրն գոր մարսէ, և գոր ելնէ՝ հում ելնէ և *բաղարճ*» (146):

**Գուղձ** «բերանի կամ այտերի վրա առաջացող կոշտ ուռուցք». «Եւ այլ ուռից, ...որ անուանի *գուղձն*» (9): «...և այս *գըղձներս* շտեր են, որ արձակին ի լեզուին ի վերնն և կեղւնին և բերանն, ի թշերն և ի լնդերն» (98):

**Լուսայմուտ** «աչքի ոսպնյակ». «զի լուսոյն տեսանելն ի յինքն կայ և ինքն *լուսայմուտ* է և այս *լուսայմուտս* ժամ կայ արձակնայ, և ժամ կայ որ նեղնայ» (8):

**Թուրթ** «պալար, ուռուցք». «...և *թուրթ* որ լինի ի յերեսն» (41): «Եւ որ *թուրթ* անուանի, նա իւր ընծայիլն ի մորթին լինի և երննայ ի յամէն տեղ, ...և է *թուրթ* նման» (43-44):

**Կացք** (գրբ. նիստուկաց) «տկարություն, կիսահիվանդ վիճակ». «Եւ այս փոփոխս գուշակէ ցաւ կամ *կացք*, որ ոչ առողջ է և ոչ դժար տկար» (183):

**Նահանջ** «շնչարգելություն». «Իսկ շնչոյն նեղնալն, որ թարգմանի *նահանջ*, ... և շատն ի յայնորմէ լինի *նահանջն*, որ մաղձն զշնչոյ երակն է լցեալ» (108): «և ոչ խոցտայ և ոչ ունենայ *նահանջ*, և ոչ հազ» (118):

**Նահանջիլ** «շունչը կտրվել». «Եթէ առագաստն ուռենայ...

---

<sup>8</sup> Է. Աղայան, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984, էջ 79:

հագայ, և *նահանջի*» (119):

**Նեղ** «հիվանդություն». «Եւ այս երկու *նեղս* մուխատրայ են և վնասակար և մահաբեր» (57): «Եւ այս *նեղոյս* նշանն՝ աչից խորիւն, ...և նօսրութիւն մարմնոյն» (67): «...ամենայն *նեղ*, որ յետև այլ *նեղոյն* գայ այլ դժար լինի» (207):

**Նուշ** «նշագեղձ». «Եւ այս Բ(2) խոյլս, որ անուանեցաւ երկու *նուշ*, նայ իւրեանց նեղն ուտից է, որ ի տաքութենէ լինի: Բ *նուշ*, որ հաստատեալ են ի խոչակիւն յաջ դեհն և ի ձախն, և այս Բ *նուշս* ուռենան՝ արգոյոյն զկերակուն և ընպելին» (102)

**Շարադրութիւն** «համաչափություն». «Շնչալն յոյլ և վատուժ, և ոչ ունի *շարադրութիւն* շունչն» (58): «...և չունի երակն *շարադրութիւն*, այլ մի և երկու, երկուք և մի» (68):

Բերված բառերից միայն *նուշ*-ն է պահպանվել «նշագեղձ» կազմախոսական իմաստով և իբրև բժշկական տերմին ամրագրվել արդի հայերենում *նշիկ* ձևով<sup>9</sup>:

4. Գրիգորիսի բժշկարանում աչքի են ընկնում բարբառային, ժողովրդախոսակցական բառերը. *գուշ* «կավե կամ փայտե խոր աման» (148), *թապլիլ* «շրջվել» (71), *խոզոտ* «ձայնը կտրրված», *խոզոտել* «ձայնը խզվել» (105) (Ար, Վն), *մրջմնուկ* «եղնջացան» (30), *պոպոզ* «աչքի դուրս ցցված ուռուցք» (75), պոպոզնալ «դուրս ցցվել» (114) և այլն:

5. Բժշկարանում կիրառվել են նաև մի շարք անձանոթ բառեր, որոնք արձանագրված են միայն ՄՀԲ-ում, ինչպես՝ *գիղճ* «արտասվագեղձ» (87), գորփիլ/գորփնալ «աչքը պղտորվել» (115), *խիզ* «խորխ» (105), *խիզել* «խորխել» (7), *պուրի* «անձանոթ կծու բույս» (66), *պոճկոռ* «ազդր զիստ» (189), *ստուկք* «որկոր» (97),

---

<sup>9</sup> Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, հ. 2, էջ 1078:

տողունկ «աչքի եղջերաթաղանթի թարախային խոց» (80), *քարտաղ* «մաշկի գորշագույն պիգմենտավորում» (34)\* և այլն:

Այսպիսով, Գրիգորիսի բժշկարանում կիրառվել են բժշկական տերմինի արժեք ունեցող բազմաթիվ նորակազմ, նորիմաստ և փոխառյալ, ինչպես նաև ժողովրդախոսակցական, բարբառային բառեր, որոնք չեն հանդիպում նախորդ դարաշրջանի բժշկարաններում: Դրանց մի մասը՝ հիմնականում նորակազմ բառեր, պահպանվել և ամրագրվել է արդի հայերենի բառապաշարում:

Tadevosyan Hasmik- General characteristics of the vocabulary of Grigoris' Medical Book "Analysis of Human Nature and His Ailments". – Grigoris was one of the greatest representatives of the 13th century Cilician medical school and the follower of Mkhitar Heratsi. His medical book "Analysis of Human Nature and His Ailments" is of great interest from the point of view of Middle Armenian vocabulary observation. There are numerous newly-formed, newly-semantic and loan words with pathological and anatomical term value, as well as some colloquial and dialect words that are not used in medical books of previous centuries. Some of them are preserved and recorded in the Modern Armenian vocabulary.

Татевосян Асмик – Общая характеристика словарного запаса лечебника Григориса «Анализ природы человека и его недугов. - Григорис - один из крупнейших представителей киликийской медицинской школы 13-ого века, последователя Мхитара Гераци. Его лечебник «Анализ природы человека и его недугов» представляет большой интерес с точки зрения изучения словарного запаса среднеармянского языка. В этом лечебнике были использованы многие новообразования, семантические новые слова, заимствованные слова, а также народно-разговорные и диалектные слова, свойственные анатомическим и патологическим терминам, которые не встречаются в лечебниках предыдущего века. Часть из них были сохранены и зафиксированы в современном армянском словарном запасе.

---

\*Նշված բառերի վերաբերյալ ունենք որոշ նկատառումներ, սակայն դրանց կանոնադաշտանք մեր հետագա ուսումնասիրություններում:

## **Թորոսյան Հռիփսիմե**

(Երևանի պետական կոնսերվատորիա)

### **ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՊԱՐՍԿԵՐԵՆԻ ԱՆՁԻ ՀԱՏԿԱՆԻՉ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՍԱՏԻՊԵՐԸ**

Հայերենի և պարսկերենի դարձվածաբանական շտեմարանում մեծ թիվ են կազմում անձի հատկանիշ արտահայտող բայական դարձվածային միավորները: Բայական կապակցությունների միջոցով են արտահայտվում բազմաթիվ հասկացություններ, որոնք վերաբերում են մարդկային գործունեության տարբեր ոլորտներին՝ ապրելակերպին, աշխատանքին, կենցաղին, սովորույթներին, ինչպես նաև միջանձնային հարաբերություններին, ֆիզիկական և հոգևոր վիճակին:

Հայերենի և պարսկերենի անձի հատկանիշ արտահայտող բայական դարձվածքները անվանողական միավորներ են, որոնք հաղորդակցական գործառույթ կատարելիս ձեռք են բերում նաև հարացուցային ձևեր: Այս դարձվածքները ստորադասական, համաստորադասական կապով օժտված կապակցություններ են, որոնց բաղադրիչները հիմնականում արտահայտում են խնդրային-պարագայական հարաբերություններ: Եվ՝ հայերենում, և՛ պարսկերենում անձի հատկանիշ արտահայտող բայական դարձվածքները լրիվ կամ մասնակի վերաիմաստավորմամբ երկբաղադրիչ կամ բազմաբաղադրիչ կազմություններ են, որոնք ունեն անվանական և բայական բաղադրիչներ: Երկու լեզվում էլ որպես անվանական բաղադրիչ կարող են գործածվել գոյականներ, ածականներ և դերանուններ: Բա-



յական բաղադրիչն արտահայտվում է անցողական կամ անանցողական (համադրական կամ հարադրական) բայերով (պարսկերենում՝ նաև նախդրավոր):

Հայերենի և պարսկերենի անձի հատկանիշ արտահայտող բայական դարձվածքները ըստ բաղադրիչների քանակի լինում են **երկբաղադրիչ** և **բազմաբաղադրիչ**:

**Ս. Երկբաղադրիչ բայական դարձվածքները** կազմված են անվանական և բայական մասից: Հայերենում այս դարձվածքների անվանական մասը կարող է արտահայտված լինել գոյականով, ածականով, բայական մասը՝ անորոշ դերբայով: Այս կապակցությունները կազմությամբ բայական հարադրություններ են, սակայն քանի որ բաղադրիչների առանձին իմաստը պատճառաբանված չէ, և փոխաբերական վերաիմաստավորում կա, այս միավորները համարվում են դարձվածքներ: Բայական հարադրությունների և դրանց վերաիմաստավորման արդյունքում առաջացած բայական դարձվածքների սահմանների որոշումը բավական բարդ խնդիր է: Այս հարցի շուրջ լեզվաբաններն իրենց տեսակետներն ունեն (Մ. Աբեղյան, Ա. Մուրվալյան, Ալ. Մարգարյան, Յու. Ռուբինչիկ, Ա. Վերետեննիկով): Շահրման Նաբաթին հարադիր բայերի սահմանման՝ այլ լեզվաբանների տեսակետներն է ներկայացնում իր հոդվածում<sup>1</sup>: Ալ. Մարգարյանը այս հարցը նույնպես քննության է ենթարկել. «Դարձվածային են կոչվում այն հարադրավոր բայերը, որոնց հարադիրն ու բայական բաղադրիչը միասին առանձնահատուկ իմաստային նշանակություն են արտահայտում և հանդես են

---

<sup>1</sup> **Ш. С. Набатъ,** *Сложный глагол как основная аналитическая тенденция развития глагольной системы в современном персидском языке*, Выпуск №6, М., 2016, էջ 49-61:

գալիս որպես մտքի արտահայտման պատկերավոր ձևեր»<sup>2</sup>: Հայերենի երկանդամ դարձվածքներից են, օրինակ, *ատամները սեղմել* – դիմանալ, համբերել, *այծեր ունենալ* – ժամանակ առ ժամանակ գժվել, *անունը գողանալ* – ուրիշի վաստակը, փառքը յուրացնել, *աչքը չբանալ* – անընդհատ զբաղված լինել և այլն:

Պարսկերենում բայական դարձվածքների անվանական մասը հիմնականում գոյական է, բայական մասը՝ համադրական բայ: Յու. Ռուբինչիկը նշում է, որ պարսկերենի քերականության շատ գրքերում երկանդամ այդ դարձվածքները կոչվում են բարդ բայեր, որոնք էլ պարսկերեն բացատրական և թարգմանական բառարաններում ամենաշատն են արտահայտված<sup>3</sup>: Օրինակ՝

magas parāndan	مگس پراندن	ծուլություն անել բոց. ճանճ թոցնել
langar andāxtan	لنگر انداختن	երկարաժամկետ տեղավորվել, մի տեղում մնալ բոց. խարիսխ գցել
dom jonbāndan	دم جنباندن	պոչ խաղացնել բոց. պոչը շարժել

Վերոնշյալ օրինակներում դարձվածքների բայական բաղադրիչն արտահայտված է անցողական բայով. դա դեռ չի նշանակում, որ ամբողջ բայական կապակցությունը ներգործական սեռի է: Հնարավոր է, նաև որ անցողական բայ բաղադրիչով բայական կապակցությունն արտահայտի չեզոք սեռի նշանա-

<sup>2</sup> Ա. Մարգարյան, *Հայերենի հարադիր բայերը*, Ե., 1966, էջ 225:

<sup>3</sup> Ю. А. Рубинчик, *Грамматика современного персидского литературного языка*, М., 2001, էջ 2017:

կություն, ինչը պայմանավորված է դարձվածքների՝ իբրև լեզվական ամբողջությունների բնույթով: Վերջին՝ *dom jombāndan* դարձվածքը հայերենում համարժեք ունի՝ *պոչ խաղացնել* – խուսափել, խուսանավել: Հայերեն և պարսկերեն տարբերակում բայական բաղադրիչն արտահայտված է պատճառական բայով: Նշենք, որ հայերենում պատճառական *-ցն-* ածանցը, ավելանալով դարձվածային միավորի չեզոք բայով արտահայտված բաղադրիչին, կարող է փոխել դարձ-վածքի իմաստը, ինչպես՝ *աչքը մտնել* – սիրելի դառնալ, *աչքը մտցնել* – հանդիմանել: Ոչ բոլոր դեպքերում է *-ցն-* ածանցը ազդում դարձվածքի իմաստաբանության վրա, օրինակ, *մեջքը պնդանալ* – հարստանալ, պաշտոն ձեռք բերել, *մեջքը պնդացնել* – հարստանալ, պաշտոն ձեռք բերել: Ինչպես երևում է, այստեղ վերաիմաստավորում չկա: Հայերենի բայական դարձվածքներում իմաստափոխություն է նկատվում նաև ներգործական – կրավորական սեռային հակադրությամբ կազմված բայերում, ինչպես՝ *լեզուն բռնել* – մի բան ասելու համարձակություն ունենալ, *լեզուն բռնվել* – չկարողանալ խոսել, *սիրտն առնել* – սիրաշահել, *սիրտն առնվել* – ազդվել: Կան նաև բայական կապակցություններ, որոնք կրավորական դառնալիս վերաիմաստավորվում են և վերածվում դարձվածքի, ինչպես՝ *ծնկները ծալել* – *ծնկները ծալվել*, *դեմքը բացել* – *դեմքը բացվել*, *նոտքերը գետնից կտրել* – *նոտքերը գետնից կտրվել*:

Պարսկերենում **անանցողական բայով կազմված երկբաղադրիչ դարձվածքները** ի տարբերություն անցողական բայով կազմված դարձվածքների առավել քիչ են հակված կառուցվածքաբերականական կաղապարավորման<sup>4</sup>: Այս դարձ-

<sup>4</sup> Г. С. Голева, *Фразеология современного персидского языка*, М., 2006, էջ 79:

վածքների կազմությանը, որպես բայական բաղադրիչներ, մասնակցում են šodan կամ budan անանցողական բայերը: Օրինակ,

sabz šodan	سبز شدن	պատահական հայտնվել բոց. կանաչ դառնալ
siyāh šodan	سیاه شدن	դժբախտանալ բոց. սև դառնալ
ātaši šodan	آتشى شدن	բռնկվել բոց. կրակոտ դառնալ

Պարսկերենի երկբաղադրիչ բայական դարձվածքների շարքին են պատկանում նաև անվանական մասում ածանց ունեցող դարձվածքները, ինչպես՝

be čāk zadan	به چاک زدن	փախչել, ծլկել բոց. ծակը մտնել
be xodā residan	به خدا رسیدن	տանջվել, ուժերը հատնել բոց. աստծուն հասնել
az kise xordan	از کيسه خوردن	դատարկաձեռն մնալ բոց. քսակից ուտել

Բ.Հայերենի և պարսկերենի **բազմաբաղադրիչ** դարձվածքների անվանական բաղադրիչ են դառնում հիմնականում գոյականներն ու ածականները, ինչպես՝ հայ. *ականջի բուրդը հանել* – լավ լսել, ուշադիր լինել, *անձնական հաշիվները մաքրել* – վրեժ լուծել, դիւր հանել, *աչքով աչք չունենալ* – ատել, *արյունը երեսին խփել* – շիկնել, ամոթից կարմրել, *բակլայի ջուր դառնալ* – դեմքը սաստիկ խոժոռել, *գրպանում մկներ խաղալ* – շատ աղքատ լինել, *բառի համար ձեռքը գրպանը չտանել* – ճոխ լեզու ունենալ, ճարտարախոս լինել:

Պարսկերենի բազմաբաղադրիչ բայական դարձվածքների բայական բաղադրիչը կարող է արտահայտվել և՛ բարդ, և՛ պարզ բայերով: Հայերեն դարձվածքների բայական բաղադրիչը հիմնականում համադրական բայով է ձևավորվում: Պարսկերենի բարդ բայական բաղադրիչ ունեցող դարձվածքներից են, օրինակ՝

چشم چهار کردن čašm čāhar kardan	աչքը չորս անել բոց. աչքը չորս անել
دل خالی کردن del xāli kardan	սիրտը դատարկել բոց. սիրտը դատարկել

Պարսկերենի *čašm čāhār kardan*, *del xāli kardan* և *guš tiz kardan* դարձվածքները հայերենում ունեն իրենց համարժեքները՝ *աչքերը չորս անել*, *սիրտը դատարկել* և *ականջը սրել*: *Guš tiz kardan* և *del xāli kardan* դարձվածքները պարսկերենում եռանդամ են, իսկ հայերենում՝ երկանդամ, քանի որ *սրել* և *դատարկել* բայերը հայերենում համադրական բայեր են, իսկ պարսկերենում՝ բարդ:

Պարսկերենի *գոյական + որոշիչ + բայ* կառուցատիպով դարձվածքները համապատասխանում են հայերենի *գոյական + գոյական + բայ* (գոյականներից առաջինը սեռական հոլովով է արտահայտված, ինչպես՝ *հավի խելք ունենալ* – ապուշ, հիմար լինել, *շան բախտ ունենալ* – հաջողակ, շատ բախտավոր լինել) և *գոյական + ածական + բայ* (ինչպես՝ *երեսը սպիտակ լինել* – հավատարիմ լինել, *փափախը ծուռ (թեք) դնել* – անհոգ, առանց վախենալու ապրել) կաղապարն ունեցող դարձվածքներին: Պարսկերենում այս դարձվածքի անվանական մասը ձևավորում է իզաֆեթային կապ, որը պարսկերենի բառակապակ-

ցություններին բնորոշ ստորադասական կապակցման եղանակներից է, ինչպես՝

مغز خر خوردن mağz-e xar xordan	հիմար լինել բոց. էշի ուղեղ ուտել
خیال خام پختن xiyāl-e xām poxtan	սին հույսեր ունենալ բոց. դատարկ հույսեր եփել
دل شیر داشتن del-e šir dāštan	առյուծի սիրտ ունենալ բոց. առյուծի սիրտ ունենալ

Հայերենի և պարսկերենի բայական շատ դարձվածքներում որպես անվանական բաղադրիչ հանդես է գալիս *ինքը* դերանունը՝ տարբեր հոլովածներով: Պարսկերեն օրինակներում նույնպես *xod*՝ «*ինքը*» դերանունը տարբեր նախդիրների պահանջով տարբեր հոլովական իմաստներով է արտահայտվում<sup>5</sup>: *Xod* դերանունով կազմված դարձվածքներից են, օրինակ՝

به ریش خود خندیدن <sup>6</sup> be riš-e xod xandidan	ինքն իր վրա ծիծաղել բոց. իր մորուքի վրա ծիծաղել
در پوست خود ننگجیدن dar pust-e xod naganjidan	ուրախությունից տեղը չգտնել բոց. իր կաշվի մեջ չտեղավորվել
از خر خود پیاده شدن az xar-e xod piāde šodan	դադարել համառություն անել բոց. իր էշից իջնել

<sup>5</sup> Քանի որ պարսկերենը վերլուծական լեզու է, չունի հոլովի քերականական կարգը. հոլովական իմաստներն արտահայտվում են նախդիրների, հետդիրների և իզաֆեթային կապի միջոցով:

<sup>6</sup> Ըստ առակի՝ մեկը երազում տեսնում է շեյթանին՝ սատանային: Բռնելով սատանայի մորուքից՝ ապտակում է: Հետո ուզում է ապտակել երկրորդ անգամ, սակայն արթնանում է և տեսնում, որ բռնել է իր իսկ մորուքից: St ʿu, G. C. Голева, *Фарси-русский фразеологический словарь*, М., 2006, էջ 292:

Հայերենի *ինքը* դերանուն-բաղադրիչ ունեցող բայական դարձվածքներից են. *իր ձեռքով իր աչքի լույսը հանել, իր ձեռքով իր տունը քանդել* – ինքն իրեն վատություն անել, *իրեն մեծ քանի տեղ դնել* – մեծամիտ, ինքնահավան լինել, *իր էջը / ձինքը* – համառ, պնդաձակաստ լինել, *իր քթից դենը չտեսնել* – մեծամիտ, գոռոզ լինել:

Վերոբերյալ երկլեզու դարձվածքների բաղադրիչներն արտահայտում են ստորադասական հարաբերություններ: Հայերենում կան նաև համաստորադասական, իսկ պարսկերենում՝ զուգադրական կապով ձևավորված դարձվածքներ: Հայերենի համաստորադասական կապով բայական դարձվածքներից են. *աղ ու հացը մոռանալ* – ապերախտ լինել, *աշխարհի խերից-շառից հասկանալ* – բանիմաց լինել, կյանքի գաղտնիքները հասկանալ, *աչքն ու հոնքը բացվել* – ուրախանալ, տրամադրությունը բարձրանալ, *բահով – փայտով կարդալ գիտցող* – կարդալ չիմացող, անգրագետ կամ կիսագրագետ:

Պարսկերենի զուգադրական կապերով ձևավորված բայական դարձվածքները համադասական *va` «և»* շաղկապով կապակցություններ են, որոնց բովանդակությունը բխում է երկու հավասարազոր բաղադրիչ մասերի իմաստներից. բաղադրիչ մասերն առանձին իմաստ չեն արտահայտում, դրանք կարող են պատկանել նույն իմաստային դաշտին կամ լինել իմաստով հականիշ միավորներ: Ա. Վերետեննիկովը դարձվածքների այս տեսակը համարում է առանձին խումբ, քանի որ վերջիններս օժտված են իմաստակառուցվածքային այնպիսի հատկանիշներով, որոնք բնորոշ չեն դարձվածքների այլ տեսակներին<sup>7</sup>:

---

<sup>7</sup> А. А. Веретенников, *Очерки глагольной фразеологии персидского языка*, М., 1993, էջ 23:

Օրինակ՝

گندم نمودن و جو فروختن gandom nemudan va jou foruxtan	խաբեությանը զբաղվել բոց. ցորեն ցույց տալ և գարի վաճառել
گل گفتن و گل شنیدن gol goftan va gol šenidan	ջան ասել, ջան լսել բոց. ծաղիկ ասել ու ծաղիկ լսել
لب رودخانه بردن و تشنه بر گرداندن lab-e rudxāne bordan va tešne bar-gardāndan	տանել ծովը, ծարավ հետ բերել բոց. տանել գետը ու ծարավ հետ բերել

Հոդվածում տեղ գտած հայերենի և պարսկերենի անձի հատկանիշ արտահայտող բայական դարձվածքների կառուցատիպերի քննությունը ցույց է տալիս, որ այս դարձվածքները անվանողական դարձվածքներ են, որոնք երբեմն ունենում են նաև հաղորդակցական արժեք: Բայական դարձվածքները ստորադասական կամ համաստորադասական կապով (պարսկերենի դեպքում՝ զուգադրական) երկբաղադրիչ կամ բազմաբաղադրիչ կապակցություններ են, որոնք կազմված են անվանական և բայական անդամներից: Անվանական մասը արտահայտված է լինում հիմնականում գոյականով, ածա-կանով կամ դերանունով, իսկ բայական մասը՝ անցողական կամ անանցողական (համադրական կամ հարադրական) բայերով:

Hripsime Torosyan - The Structural Types of Verbal Phraseological Units Denoting a Human's Appearance in Armenian and Farsi.-The article discusses the structural types of verbal phraseological units denoting a human's appearance in Armenian and Farsi. These phraseological units are nominal combinations which sometimes have also a communicative function. Verbal phraseological units of Armenian and Farsi are double-component or multi-component coordinate or subor-



dinate (in case of Farsi-copulative) combinations, which have nominal and verbal parts. The nominal component can be expressed with noun, adjective or pronoun, the verbal component- transitive or intransitive (simple or compound) verb.

The structural types of verbal phraseological units denoting a human's appearance attest about multi-layer expressions of Armenian and Farsi's world view and lingual mentality through language patterns.

Рипсима Торосян - Структурные типы глагольных фразеологических сочетаний со значением признака личности в армянском и персидском.- В статье рассматриваются структурные типы глагольных фразеологических сочетаний со значением признака личности в армянском и персидском. Эти фразеологические единицы являются номинативными фразеологизмами, которые иногда выявляют коммуникативные функции. Глагольные фразеологизмы имеют именные и глагольные части. Именная часть выражается существительным, прилагательным или местоимением, глагольная часть - переходными или непереходными (простыми или сложными) глаголами.

Структурные типы глагольных фразеологизмов свидетельствуют о многослойных проявлениях языкового мышления армянского и персидского с помощью лингвистических моделей.

ՀԻՆՀԱՅԵՐԵՆՅԱՆ ԲԱՌԱՇԵՐՏԻ ՈՐՈՇ  
ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈՂՈՒՄԸ ՀԱՄՇԵՆԻ  
ԲԱՐԲԱՌՈՒՄ

Հ.Աճառյանը «Քննություն Համշենի բարբառի» աշխատության բարբառային բառացանկում ներկայացնում է գրաբարի հետ ընդհանուր մոտ 1223 բառային միավոր<sup>1</sup>: Ինչպես հայերենի այլ բարբառներում, Համշենի բարբառում ևս այս բառաշերտի հիմնական մասը կազմում են ընդհանուրհայերենյան բառերը, որոնք պատկանում են հիմնական բառազանձին և կազմում են բարբառային բառապաշարի միջուկը: Սույն հոդվածի շրջանակներում կանդրադառնանք Համշենի բարբառում առկա հինհայերենյան բառաշերտի այն դրսևորումներին, որոնք վկայված են հայ հին մատենագրության մեջ, սակայն բացակայում են կամ քիչ գործածական են արդի գրական հայերենում:

1. **Անալույթ**: Ենթադրյալ «ընձուղտ» իմաստով մեկ անգամ գործածվել է Աստվածաշնչում՝ *զանալույթ* ձևով: Խորենացու գրքում ևս հիշատակված է *անալույթ*-ը՝ «Կենդանի ինչ նման *զանալույթոյ*» և «լինի ի նմա *անալույթ* և հաճար ծառ և սերկկիլ և տօսախ»: Ղ.Ալիշանը, հիշատակելով վերջին օրինակը և այն, որ Հայաստանում ընձուղտ չկա, կարծում է, թե *անալույթը* ինչ-որ բույս է կամ շփոթված է մի ուրիշ բուսանվան հետ: Ըստ Հ. Աճառյանի՝ այս տարաձայնությունը վերանում է, եթե ընդունենք, որ *անալույթ*-ը ոչ թե «ընձուղտ», այլ, ինչպես վկայված է Համ-

<sup>1</sup> Հ. Աճառյան, *Քննություն Համշենի բարբառի* (այսուհետ՝ ՔՀԲ), Ե., 1947, էջ 219-258:

շենի բարբառում, «եղնիկ» է նշանակում<sup>2</sup>: Ի դեպ, փաստենք, որ Համշենի բարբառում *անալութ* բառը դրսևորված է սույն բարբառին բնորոշ ուշագրավ հնչյունափոխությամբ. *ն* ոնգայինից առաջ *ա* ձայնավորը դառնում է *օ* (*ա>օ*), և *անալութը* բարբառում դառնում է *օնլութ* կամ *օնլուտ*: Հ. Աճառյանի կարծիքով՝ Համշենի բարբառի *օնլութ* հազվագյուտ բառի առկայությունը հաստատումն է այն բանի, որ *զանալութ* բառի «ընձուղտ» իմաստը պարզապես սխալմունք է: *Օնլութ (օնլուտ)* բառաձևը՝ որպես *եղնիկ* հասկացության նշանակելի, վկայված է Համշենին վերաբերող գրեթե բոլոր աշխատությունների բառացանկերում<sup>3</sup>, անգամ բանահյուսական նմուշներում («Նազիկին սիրուն էր ժեղը չէ՞, սայն էլ ծակիմ էնդին կօսնցիմ», - մըտքին մէջ ասելով իրեք հեղ խօնըրհեցուց իշխօնին առաջ, հէնու *օնլութօն* պէս թըռավ գընաց տունը)<sup>4</sup>: Բալլուղ գ.-ի խոսվածքի բարբառախոսներից գրանցել ենք հետևյալ օրինակը. «Էյսի կընձաձ, *օնլուտ* զայնաձ ունէյը (Ռրսի էինք գնացել և եղնիկ էինք զարկել)»:

2. **Պատակ**: Ըստ Հ. Աճառյանի՝ «կող» իմաստով մեկ անգամ գործածված է Ե. Կողբացու երկում. «Է ձուկն՝ որոյ իբրև խոզի *պատակաց*, թամբ ի վերայ կողիցն կայ...»: Այնուհետև, գիտնականի կարծիքով, այս բառը փոխաբերաբար ձեռք է բերել «լեռան կող» իմաստը: Վերջին նշանակությամբ հիշատակել է Ս. Օրբելյանը. «Հարսնավազին ձորակովն գառ ի կողմն յեկեղեցին

<sup>2</sup> Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետ՝ ՀԱԲ), հ. 1, Ե., 1971, էջ 179, *ՔՀԲ*, էջ 220:

<sup>3</sup> Ս. Վարդանյան, *Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը*, Ե., 2009, էջ 330, **Խաչատուր Թահմազ, Ջենիգի բարբառի բառարան**, Սոչի, 2014, էջ 214:

<sup>4</sup> Բ. Թողաքյան, *Նշխարներ Համշենի և Տրապիզոնի բանահյուսության*, Ե., 1986, էջ 35:

որ *ի պատակոց* ճանապարհին»: Այս իմաստից էլ առաջացել է *պատակիլ* «կողի վրա ընկնել, պակել» բայանունը<sup>5</sup>: *Պատակ* արմատական ձևը, որ չկա գրական հայերենում, լայն ընդգրկում ունի բարբառային հայերենում: Այսպես՝ բառը *պատեկ* հնչաձևով Ալաշկերտում, Մուշում, Վանում ունի «մեջք», Ղարադաղում՝ «արեգդեմ, արև առնող տեղ», *բառագ* ձևով Խոտըրջում՝ «լեռան կամ արտի թեք կող» նշանակությունը<sup>6</sup>: Գորիսում նույնիսկ լեռների վրա աճող բույսի մի տեսակ կոչվում է *պատակքեղ*<sup>7</sup>: Հարկ է նշել, որ այս դեպքում Համշենի բարբառը պահպանել է բառի գրաբարյան արմատական ձևը՝ իհարկե, բարբառին բնորոշ *բառագ* հնչատարբերակով, և ունի «ձիու գավակ, լեռան թեք լանջ, գառիթափ» նշանակությունները (*Բառագը* հերգուշը գոր՝ թեք լանջը հերկելը դժվար է, *Բառագն* ի վիր կելլեր, *բառգին* ձ՝ րին): Ի դեպ, *բառագ* բառանունը ստացական հոդով Համշենում ունի նաև «մեջք, շալակ» նշանակությունները՝ *Բառագըս մի՛ էլլիլ*՝ «Շալակս մի՛ էլ»<sup>8</sup>: *Բառագ*-ն այսօր էլ գործածական է համշենահայերի խոսվածքում, սակայն արդեն դարձվածային իմաստով՝ *բառագըս մի՛ էլլիլ*, այսինքն՝ «հոգուս հետ մի՛ խաղա» կամ «մի՛ գայրացրու»:

3. **Անութ** կամ **անթ**: Հայ հին մատենագրության մեջ ավանդված է «թևի տակի փոսը, խօլթուխ» նշանակությամբ<sup>9</sup>: Բարբառային հայերենում հիշյալ բառանունը շատ կենսունակ

<sup>5</sup> Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 4, Ե., 1979, էջ 27:

<sup>6</sup> Հ. Աճառյան, *Քննություն Վանի բարբառի*, Ե., 1953, էջ 287, *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ., Ե., 2008, էջ 29-30:

<sup>7</sup> Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 4, էջ 28:

<sup>8</sup> Խ. Թահմազ, նշվ. աշխ., էջ 17, Հ. Գուրունյան, *Համշենահայ բանահյուսություն*, Ե., 1991, էջ 314:

<sup>9</sup> Հ. Աճառյան, ՀԱԲ, հ 1, էջ 207:

է: Որոշ բարբառներում գրաբարյան իմաստով է գործառել, ինչպես օրինակ՝ Վանում (թևի տակը՝ հինթ)<sup>10</sup>: Մի շարք խոսվածքներում նույն՝ «թևի տակ» իմաստը դրսևորված է *անութ* և *տակ* արմատներով բաղադրված բառանունով (Ալաշկերտում՝ *հանտէտակ*, Մուշում՝ *հանդէտակ*, Մոկսում՝ *հընթըտակ*, Վանում՝ *ընթատակ* և *հընթիտակ*): Վանում կա նաև *հընթէլ*՝ «թևի տակ դնել» բայը: Սակայն բարբառային հայերենի որոշ խոսվածքներում *անութ* բառի նշանակությունը գրաբարից մի փոքր տարբեր է: Օրինակ՝ Հաճընում «կապոց, տրցակ», Ակնում «մի կուրծք բեռ, լանջքի վրայ առած բեռան քանակությունը», Մարաշում «ուս, կոնակ»<sup>11</sup>: Սույն բառանունը առկա է նաև Համշենի բարբառում: Այստեղ բառը գրաբարից իմաստային առումով որոշակիորեն տարբերվում է՝ հանդես գալով «գիրկ» նշանակությամբ և, իհարկե, դարձյալ *ն* ռնգայինից առաջ *ա>օ* հնչյունափոխությամբ ստանալով *օնտ* կամ *օնթ* ձևը, որից էլ՝ *օնթուշ* կամ *օնտուշ* «գրկել»<sup>12</sup>: Ըստ ՀԲԱ ծրագրով հավաքած նյութերի՝ արձանագրված են հետևյալ օրինակները: Մ՝ ըը բ՛ - բ՛ գին *օնտէծ* (տետր հ. 252): Մ՝ ըը *օնտէծ* դըդին (տետր 336, 52): Բայանունը բարբառներում ևս տարբեր իմաստներով է գործառում, օրինակ՝ Ջեյթունում՝ *անթիլ*՝ «գրկել», Ակնում՝ *օնթիլ*՝ «հափշտակել, մի բան ամբողջովին խլել ու փախչիլ, կրծքի վրայ բեռնավորուիլ», Խոտրջուրում՝ *անթէլ*՝ «անթով կամ գրկով չափել»<sup>13</sup>:

<sup>10</sup> Հ. Աճառյան, *Քննություն Վանի բարբառի*, Ե., 1953, էջ 245:

<sup>11</sup> Հ. Աճառյան, *ՀԱԲ*, հ 1, էջ 207-208:

<sup>12</sup> Հ. Աճառյան, *ՀԱԲ*, հ. 1, էջ 207, *ՔՀԲ*, էջ 221:

<sup>13</sup> Հ. Աճառյան, *ՀԱԲ*, հ.1., էջ 208:

4. **Աղիս** կամ **աիս**: Հին հայերենում գործածվել է «փականք, օղակ, կահ-կարասիք, վաճառքի բեռներ, ճամփորդների բազմություն, ամբոխ, ցեղ, զարմ», ինչպես նաև «մարմնի հող» իմաստներով, որից էլ, ըստ Հ.Աճառյանի, *աղիսել* «կողպել», ինչպես նաև *աղիսեալ* «փակված, կողպված, կույս» (Ս. Կոյսի համար ասուած՝ ի կուսական արգանդէ և յախեալ մօրէ)<sup>14</sup>: Բարբառային հայերենում ևս փաստված է հիշյալ բառանունը *աիս* զուգաբանությամբ՝ որպես դռան փականք: Գործածվել է Մուշում, Ախալցխայում, Համշենում՝ *աիս*՝ «փակիչ առանց բանալիի՝ սողնակ»: Առկա է նաև բայը Ակնում, Խարբերդում՝ *աիսել*, Համշենում՝ *աիսուշ* «դուռը փակել, զոցել սողնակով», Չենկիլերում, Սեբաստիայում՝ *աիսել* «դուռը կողպել՝ շղթան դնելով» իմաստով: Բարբառներում վկայված են նաև *աիսլը* (Սեբաստիա)՝ «զոց, կողպված», *աիսանք* (Բինկյան, Եվդոկիա, Կյուրին, Չենկիլեր)՝ «դուռը կողպելու համար վրան անցկացված շղթան», *աիսիկ* (Ակն)՝ «դռան կողպեք» ձևերը: Կարծում ենք, ճիշտ դիտարկում է անում Հ. Աճառյանը՝ *աիսլը*, *աիսանք*, *աիսել* բառերի լ-ն համարելով հին *ղ* հնչյունի տարբերակ:

5. **Գէջ**: Բնիկ հայերեն այս բառը Համշենի բարբառում «խոնավ, թաց» իմաստով վկայված է *կէջ*, *կէ* (կէջ փ՝ դ՝ «խոնավ փայտ») հնչաձևերով: Բյուրակնում Կիլիկիեի տարածանագրել է այսպիսի օրինակ. «Փետր գեճ է, գոլել մի. մուխ կուտայ»<sup>15</sup>: *Կէջ* բառանունը Համշենի բարբառում գործածվել է ոչ միայն «թաց, խոնավ», այլև «չորացած, կանաչ, թարմ» իմաստներով (Ճե-

<sup>14</sup> Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 1, էջ 132:

<sup>15</sup> *Քիւրակն*, 1899, էջ 559:

նիկ)<sup>16</sup>: Ի դեպ, ՀԲԱ ծրագրով հավաքած նյութերում, ըստ բարբառախոսների վկայության, *կէջ*-ը գործածվում է միայն փայտի խոնավությունը նշելու համար: Բարբառս խոնավ իմաստով ունի նաև *լէմլի*, *լըմլի*, *թած* բառանունները (*Լըմլի* խեղ, *լէմլի* հալավ, խեղը *թած*՝ )<sup>17</sup>:

6. **Գէրմակ**: Հին հայերենից ավանդված այս բառը ունի «ճերմակ, բարակ ալյուր, ճերմակ ալյուրով փափուկ հաց», ինչպես նաև «մանրամաղ, բարակ փոշիի պես» մեկնությունները<sup>18</sup>: Համշենի բարբառում ևս առկա է հիշյալ բառանունը՝ բառասկզբում բարբառին բնորոշ գ>կ անցումով՝ *կէրմագ* հնչաձևով: Սակայն, ի տարբերություն գրաբարյան ավանդված նշանակության, բառիմաստային ճյուղավորմամբ ձեռք է բերել «փոքր, մանր» իմաստը (Հավգիտնին *կէրմագ* էն: *Կէրմագ* քայ ժողվեծի): Բարբառում գործառում են նաև *կէրմըգուշ* «մանրացնել», *կէրմըգած* «մանրացած» բայաձևերը: Հավելենք նաև, որ *գէրմակ* բառը այլ բարբառներում ևս (օրինակ՝ Ջուղայում, Ագուլիսում) փաստված է «մանր, բարակ, փոքրիկ, պստիկ» ընդհանուր նշանակությամբ: Այս իմաստով *գէրմակել* (*կէրմակել*) բայը Շուլավերում «կալը մանրել, ջարդել», իսկ *գէրմակ ավել*-ը Սալմաստում «թոնիրը մաքրելու համար եղեգի ծայրի փնջիկներից շինված *բարակ ավել*» նշանակությունն ունի<sup>19</sup>:

7. **Գործելի**: Գրաբարյան մատենագրության մեջ վկայված *գործելի* բառանունը ծագումնաբանորեն առնչակից է բնիկ հայերեն *գործ* արմատին և կիրառվել է «գործող, անող» նշանա-

---

<sup>16</sup> **Հ. Աճառյան**, ՔՀԲ, էջ 224: **Ս. Վարդանյան** նշվ. աշխ., էջ 298: **Խ. Թահմազ**, նշվ. աշխ., էջ 108:

<sup>17</sup> Տե՛ս տեսր հ.252, 52, 336, 39:

<sup>18</sup> **Հ. Աճառյան**, ՀԱԲ, հ. 1, էջ 545, ՔՀԲ, էջ 126:

<sup>19</sup> **Հ. Աճառյան**, ՀԱԲ, հ. 1, էջ 545:

կությամբ: Ուշագրավ է նաև, որ գրաբարում *գործ* բառը նաև «*ածուխ*» իմաստով է գործածվել, որից էլ փաստված է *գործելահասոն*՝ ածխախառն բառը<sup>20</sup>: Համշենի բարբառում որպես «*ածուխ*» հասկացության բառանուն՝ *քէմիր*, *քօմուր* փոխառյալ բառանվանը զուգահեռ արձանագրվել է նաև *գործելի-ն*՝ *կոյձէլի*, իսկ կրոնափոխ համշենահայերի մոտ՝ *գորձէլի* հնչատարբերակով (*Գորձէլին (քյօմուրը)* լեցի զիյագին վասան՝ Ածուխը լցրու՛ կրակի վրա)<sup>21</sup>:

8. **Կհւ**: Հետաքրքրական է, որ Համշենի բարբառում այսօր էլ գործածվում է բնիկ հայերեն *կհւ* բառը՝ հնիս. ց<sup>2</sup>iv «ծամել» արմատից, որը զուգահեռներ ունի նաև հնդեվրոպական այլ լեզուներում, ինչպես, օրինակ, անգլ. *chew*, ռուսերեն *жевать*, նույն արմատի կրկնությամբ էլ՝ լատ. *gingiva* «լինդ, լնդերք»: *Կհւ* հին արմատից գրաբարում կազմված է նաև *կուենի* բառանունը՝ «մի տեսակ մայրի, մարխի ծառը»<sup>22</sup>: Համշենի խոսվածքներում «մաստակ, ծամոն» հասկացության *կհւ* բառանունը *գհվ* հնչաձևով է դրսևորված (Հայսը *գհվ* ձօմէր գու<sup>23</sup>, հոգն.՝ *գրվէր*): Բարբառում գործածվել է նաև *գրվընի-ն*՝ որպես ծառատեսակ՝ *գրվընի* ձառ «զիվի ծառ»: Ս.Վարդանյանը *գհվ* բառանունը արձանագրել է նաև որպես «ծառի խեժ» հասկացության բառանուն (Դադան քաջեց ձառինէ *գհվը*՝ երեխան հավաքեց ծառի խեժը)<sup>24</sup>: Հավելենք, որ գրաբարյան *կհւ*-ը ծամոն իմաստով գործառում է նաև Ախալցխայի (*կհվ*), Խոտրջուրի (*գհվ*) խոսվածքներում:

<sup>20</sup> **Հ. Աճառյան**, ՀԱԲ, հ. 1, էջ 583, ԲՀԲ, էջ 225:

<sup>21</sup> **Ս. Վարդանյան**, նշվ. աշխ., էջ 84:

<sup>22</sup> **Հ. Աճառյան**, ՀԱԲ, հ. 2, Ե., 1973, էջ 596:

<sup>23</sup> Տե՛ս տետր հ.252,

<sup>24</sup> **Ս. Վարդանյան**, նշվ. աշխ., էջ 87:



9. **Կիճ՝ գիջ:** Ըստ Հ. Աճառյանի՝ *կիճ*-ը *կիժ* արմատի տարբերակներից է՝ «խածնել, կծել, փրցնել, պոկել, խայթել, կճել, ցավեցնել, մարմաջեցնել» ընդհանուր իմաստով<sup>25</sup>: Նա բառի հրատակ ստուգաբանությունը չի տալիս: Այնինչ Գ. Ջահուկյանը հնդեվրոպական ծագման բառ է համարում՝ իհարկե, առնչակից *կիժ* արմատին՝ \*gidjo- կիճ, \*gig'- կիժ, կծանեմ<sup>26</sup>: *Կիճ*-ը՝ որպես «կարիճի կամ մեղվի խայթոցի սուր ծայր, որ վերքի մեջ է մնում», ինչպես արձանագրում է, Հ.Աճառյանը, հին գրականության մեջ ավանդված չէ, բայց պահպանված է հայերենի բարբառներում: Ի դեպ, միջին հայերենում ևս վկայված է հիշյալ բառանունը (Բսկ պիժակն ու մեղուն յորտեղ որ խայթեն՝ ուռենան և կարմրին, և մեղունի *գկիճն* ի տեղն մնայ)<sup>27</sup>: Համշենի բարբառում «մեղվի խայթոցը» *կիճ* բառի *գիջ* հնչաձևով է դրսևորված (Մեղվին *գիջը* աղուլի՛ (թունավոր է): Հարկ է նշել, որ բարբառում «խայթել» հասկացության բառային դրսևորումները բառիմաստային ուշագրավ տարբերակումներով են հանդես գալիս: Եթե օձի խայթոցը նկատի ունեն, ասում են՝ «օձը խաձեժ», իսկ եթե՝ մեղուն, ապա՝ «մեղուն գրջաձ ունի»<sup>28</sup>:

10. **Գաղտիկուր:** Ըստ Հ.Աճառյանի՝ այն աղերսներ ունի բնիկ հայերեն *գաղտ* արմատի հետ: Մատենագրության մեջ վկայված է *գաղտակուր* «մի տեսակ ծովային խեցեմորթ» և *գաղտիկուր* կամ *գաղտակուր* «ջղախոտ կամ եզնալեզու» բա-

<sup>25</sup> Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 2, էջ 586-587:

<sup>26</sup> Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 124, 209:

<sup>27</sup> Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան* (այսուհետ՝ ՄՀԲ), Ե., 2009, էջ 373:

<sup>28</sup> Տե՛ս տե՛սը հ. 252, 94, 39, 187, 336:

ռերը<sup>29</sup>: Համշենի բարբառը պահպանել է *գաղտիկուր* բառանունը՝ *գաղգուր* համառոտված տարբերակով, որում, ինչպես տեսնում ենք, միջին վանկը ամբողջությամբ ջնջվել է, իսկ բառակերպի *գ* հնչյունը ճանիկի խոսվածքում, որ պիտի տար *կ*, պահպանել է իր նախնական հնչումը: Այդ պատճառով էլ Հ. Աճառյանը *գաղգուր* բառանունը Տրապիզոնի խոսվածքից փոխառյալ է համարում, որում նախաձայն *գ*-ն մնում է *գ*<sup>30</sup>: Համշենի բարբառում գրաբարյան *գաղտիկուր* բառանունը՝ *գաղգուր* հնչաձևով, ունի «եզան լեզու» նշանակությունը: «Յարին վրբն *գաղգուրի* թեր տրնին գու», «*Գաղգուրի* ձաղիկը փօրօնծի իլլաջ՝ »:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք ասել, որ Համշենի բարբառի բառապաշարային ներկայանակում առ այսօր կենսունակ են և գործառում են հինհայերենյան բառապաշարի գրաբարյան մատենագրությամբ վկայված այնպիսի յուրահատուկ բառանուններ, ինչպիսիք են՝ *անալութ*, *գիվ*, *պառակ*, *գաղտիկուր*, *թաթավ*, *գերմակ*, *գեջ* և այլն՝ երբեմն, իհարկե, բառիմաստային զուգորդումներով ձեռք բերելով զգալիորեն տարբեր իմաստներ:

Khachatryan Hasmik - Reflection of Some Old Armenian Vocabulary Realities in the Dialect of Hamshen.- In this article, we have addressed some unique words that are presently active in the vocabulary of Hamshen dialect, but coming from Old Armenian and testified in the Old Armenian manuscripts. They are: *անալութ* (deer), *գիվ* (chewing gum), *պառակ* (back), *անութ* (armpit), *գերմակ* (small), *գեջ* (damp), *գաղտիկուրը* (plantain), *թաթավ* (rain) and so on.

---

<sup>29</sup> Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 1, էջ 506:

<sup>30</sup> Հ. Աճառյան, ՔՀԲ, էջ 42:

Хачатрян Асмик - Отражение некоторых явлений древнеармянской лексики в диалекте Амшена.- В рамках данной статьи мы обратились к таким уникальным лексемам, зафиксированным еще в глоссарии древнеармянских летописей (на грабаре) и по сей день активно употребляющимся в диалекте Амшена, как *шш-лнѣ* (аналут - олень), *qhц* (гив - жвачка), *цшпшл* (парак - спина), *шлнлѣ* (анут - подмышки), *qkplшл* (гермак - мелкий), *qkz* (гедж - сырой), *qshnpplnp* (гахтикур - подорожник), *ршршц* (татав - дождь) и др.

## Խաչատրյան Վալենտին (ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

### ՆՈՐԱՀԱՅՑ ԲԱՌԵՐ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսարանը Լիբանանի Անթիլիաս քաղաք տեղափոխվելուց առաջ Սիսում ունեցել է ձեռագրերի հավաքածու: Սակայն հայ ժողովրդի տարագրությունից հետո, բացի երկու նշանավոր ձեռագրերից՝ Կոստանդին Բարձրբերդցու Ավետարանից (1248 թ.) և Մայր Մաշտոցից (1311 թ.), որոնք կորստից փրկվել են կաթողիկոսի անձնական հոգաձության շնորհիվ, մյուսների ճակատագիրը մնացել է անհայտ: Ներկայիս հավաքածուն գոյացել է տարբեր վանքերից բերված և առանձին նվիրատուների նվիրած ձեռագրերից: Այդ ամենի մասին մանրամասնորեն ներկայացրել է Անուշավան վարդապետ Դանիելյանը Անթիլիասի ձեռագրերի իր կազմած և 1884թ. տպագրած մայր ցուցակի ներածականում<sup>1</sup>: Հիշյալ աշխատության մեջ նկարագրված են 223 ձեռագրեր, և սովորականի նման տրված են դրանց հիշատակարանները, որոնցից և օգտվել ենք սույն ուսումնասիրությունը կատարելիս<sup>2</sup>:

Քանի որ հետագայում հավաքածուն համալրվել է 25 նոր ձեռագրերով՝ հասնելով 248-ի, ուստի և Անթիլիասի մատենադարանում ծանոթացել ենք նաև նշվածների՝ մասնավորապես նրանցում գտնելով և լեզվական քննության ենթարկելով հիշա-

---

<sup>1</sup> Մայր ցուցակի հայերեն ձեռագրաց Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, կազմ.՝ Անուշավան վարդապետ Դանիելեան, Անթիլիաս-Լիբանան, 1984:

<sup>2</sup> Ստորև բնագրային վկայությունների կողքին տրվում են ձեռագրերի համարները և հիշատակարանների գրության դարաշրջանը:

տակարանները: Թեև վերջիններում չի նկատվել բառարաններում չարձանագրված բառ, սակայն առկա են լեզվական այլ ուշագրավ իրողություններ, այդ թվում և քերականական բարբառային ձևեր, որոնց կանդադառնանք մեկ այլ հոդվածում:

Այսպիսով, Կիլիկիո կաթողիկոսարանի ձեռագրերի հիշատակարանների բառապաշարի ուսումնասիրությամբ պարզվում է, որ չորս տասնյակից ավելի բառեր ու բառատարբերակներ, որոնք հիմնականում բաղադրյալ կազմություններ են, չեն ամրագրվել մի շարք հայտնի բառարաններից որևէ մեկում<sup>3</sup>: Հարկ է նշել, որ խիստ ուշագրավ և ինքնատիպ կազմություններով աչքի են ընկնում որոշ ստվարածավալ հիշատակարաններ, որոնք հիմնականում գրել են նշանավոր անձինք՝ գրի և գրչության վարպետներ: Անկասկած, այդ բառերը մեծ մասամբ կազմել են հենց հիշատակագիրները՝ ելնելով հիշատակարանների բնույթից ու բովանդակությունից: Դրանց մեջ, ինչպես և ստորև նկատելի է, մեծ թիվ են կազմում ածականները: Այսպես.

---

<sup>3</sup> Նկատի ունենք հետևյալ բառարանները. *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, Վենետիկ, 1836-1837 (այսուհետև՝ ՆՀԲ), Գ. Ճելալեան, *Առձեռն բառարան հայկազեան լեզուի*, Վենետիկ, 1865, Ս. Սեբաստացի, *Բառգիրք հայկազեան լեզուի*, հ. 1, Վենետիկ, 1749, հ. 2, Վենետիկ, 1769, Ն. Բիւզանդացի, *Բառագիրք ստորին հայերենի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց*, Ժնև, 2000, (այսուհետև՝ ՆԲԲ), Հ. Աճառեան, *Հայերեն արմատական բառարան*, Ե., 1971-1979 (այսուհետև՝ ՀԱԲ), Լ. Հովհաննիսյան, *Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր*, Ե., 2010, Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, *Նորայտ բառեր գրաբարում*, Ե., 2007, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009 (այսուհետև՝ ՄՀԲ), Ս. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, Ե., 1944-1945, Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976 (այսուհետև՝ ԱՀԲԲ), *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, Ե., 1969 (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), Ռ. Մաքապետոյեան, *Արեւմտահայերեն-արեւելահայերեն նոր բառարան*, Ե., 2011 (այսուհետև՝ ՌՍԲ), Ա. Սարգսյան, *Արեւմտահայերենի բառարան*, Ե., 1991:

*Աստուածայարկ* «Աստծու տաճար». «Արդ գրեցաւ սա... *յաստուածայարկ* կաթողիկէ եկեղեցիս» (38): Ըստ ՆՀԲ-ի՝ *յարկ* բառը դրսևորվել է հետևյալ իմաստներով՝ «բնակարան, խորան, տաճար», ուստի տեղին է նշված բառի համապատասխան բացատրությունը: Ի դեպ, նույն հիշատակարանի շարունակության մեջ գործածվել է նաև հիշյալին հոմանիշ *յաստուածաբնակ* բառը. «Եւ եղև յաւարտ սորին ի *յաստուածաբնակ* մենաստանս»:

*Հաշտակամ* «երկրպագություն, նվիրում կամեցող». «Ընկալ գնուէրս բարէխնամ, և յիս հայեա Տէր *հաշտակամ*» (8-ԺԳ): Բառը նույնպիսի կիրառությամբ վկայվել է նաև 13-րդ դարի մեկ այլ հիշատակարանում. «Առ զայս նուէրս ... և յիս նայեա տէր *հաշտակամ*»<sup>4</sup>: Սկզբնական տպավորությունն այն է, որ վերջինս *հաշտ* «հանգիստ, խաղաղ» բառարմատով է բաղադրված, ինչպես և ԱՀԲԲ-ում վկայված *հաշտասէր* «հաշտություն սիրող» բառը: Այնինչ, ինչպես կարելի է դատել համատեքստից, գործ ունենք *յաշտ* «զոհ, նվեր» արմատի հետ՝ բառակազմի *յ-*ի փոխարեն *հ* գրությամբ, որն արդեն միջին հայերենի շրջանում, պատմական հնչյունափոխությամբ պայմանավորված, դարձել էր սովորական: Նշվածի առնչությամբ խիստ ուշագրավ է *յաշտ* բառի մեկնությունը ՆՀԲ-ում. «զոհ՝ մանաւանդ հաշտութեան, նուէրք, ուխտ, աղօթք», ապա նշված է՝ լծ. պարսկ. *աշտի* «հաշտություն» բառին: ՀԱԲ-ի տվյալների համաձայն՝ *հաշտ*-ը պահլ. *ašt* «հաշտ, խաղաղ» բառից է, իսկ *յաշտ*՝ պահլ. *yašt*-ից «աղօթք, երկրպագություն»: Կարծում ենք, որ նշված արմատների լծորդությունը, ինչպես և նկատվել է ՆՀԲ-

---

<sup>4</sup> Տե՛ս *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ* (ԺԳ դար), կազմ. Ա. Մաթևոսյան, Ե., 1984, էջ 216:

ում, շատ հավանական է: Նույնկերպ մտորելու հիմք է տալիս նաև դիտարկված նորահայտ բառը:

**Տեառնահույ** «Տիրոջը մերձեցող, հաղորդվող». «Աստուածասեր և *տեառնահույ* բանի սպասատր Սարգիս վարդապետս զսայ վերընծայեաց ի դուռն սուրբ Մենաստանին» (213-ԺԷ): Ակնհայտ է, որ նշված բառը գործածվել է որպես *բան* «խոսք» գոյականի որոշիչ, իսկ նախորդող *աստուածասեր* բառը, ամենայն հավանականությամբ, որոշիչ է *Սարգիս վարդապետ* բաղադրյալ հասուկ անվանը: ՆՀԲ-ում *հույ*-ը բացատրված է «մօտաւոր, կցորդ, հաղորդ»: ՀԱԲ-ում առկա է հետևյալ մեկնությունը. «Բնիկ հայ բառ՝ հնիս. sub- ձևից. սրա ամենամօտիկ ժառանգներն են լտ. sub «տակը, ըստ, մօտիկ, դէպի, վրայ», subeo «հույ լինել, մօտենալ», իսկ համապատասխան բաղադրությունների մեջ տրված է *երկրահույ* «հողին մօտեցած»: ՄՀԲ-ում էլ արձանագրվել է *ծովահույ* «ծովամերձ, ծովեզրյա»: Հիշատակարաններից մեկում գործածվել է նշվածին հոմանիշ *աստուածամերձ* բառը՝ որպես *կտակ* «կտակարան» բառի որոշիչ՝ «*աստուածամերձ* և... *ճշտուսոյց* սուրբ կտակ» (78- ԺԷ):

**Գեղուղի** «գեղեցիկ և ուղիղ». «Քանզի յորժամ հատաւ մահուամբ *գեղուղի* ծառս այս բարեբեղուն» (44-ԺԸ): Հանրահայտ է հայերենում գլխավորապես որպես *ծառ* բառի որոշիչ գործածվող *գեղուղեշ* բառը: ՆՀԲ-ում *ուղեշ* -ը բացատրված է «բարունակ, ընձիւղ, սաղարթ, ճիւղ», ինչպես և աղերսվել է բնագրային վկայություններից: ՀԱԲ-ում նշված է, որ Հինք.-ը այն բխեցնում է *ուղիղ* բառից: Նկատի է առնվել Յ. քահանայ Հինքարպէլէնտեանի ստուգաբանական բառարանը<sup>5</sup>: Ամեննին

---

<sup>5</sup> Յ. քահանայ Հինքարպէլէնտեան, *Ստուգաբանական բառարան*, Պոլիս, 1894 (այսուհետև՝ Հինք.):

չի բացառվում, որ *ուղեշ* -ը իրականում առաջացած լինի *ուղիղ*-ից (նաև՝ *ուղիղ // ուղեղ // ուղեղ*)՝ բաղաձայնների տարնամանությամբ: Ընդ որում, հիշատակարանում վկայված բառն այս մեկնության օգտին է: Ավելին, պետք է հիշել, որ *գեղուղեշ*-ը գործածել են նաև որպես *հասակ* բառի որոշիչ, ինչպես և վկայված է ԱՀԲԲ-ում և ԺՀԼԲԲ-ում, ուստի և այս պարագայում համոզիչ է *ուղիղ* բառից բխեցնելը: Պետք է հավելել նաև, որ վերոնշյալ նախադասության մեջ *ծառ* բառը գործածվել է փոխաբերական իմաստով՝ որպես մարդ, անձնավորություն:

***Երկնահլու*** «Երկնքին, Աստծուն հնազանդ». «...*երկնահլու*, մշտագուարթ, աստուածազան ներկատուն բանիցս ի փոքու մատենիս եղե ջանացող գծել մեղապարտ գրիչս Թեօֆիլէ սուտանուն կրօնաւոր» (223-ԺԳ): ***Ճշտուայց*** «Ճիշտը ուսուցանող». «...գրաւ կատարման և յանգումն աւարտման *ճշտուայց* սուրբ կտակիս և աստուածաբանեալ սուրբ մատենիս...»(78- ԺԷ): ***Շատարև*** «երկարակյաց». «*Շատարև* երեսփոխանն և այլ միաբան ժողովուրդն...» (8-ԺԳ): ***Շնորհապերճ*** - «...ստիպեցին Տէր Կարապետ *շնորհապերճ* և գերագոյ վարդապետն ի ձեռնարկութիւն այսորիկ ցանկալի գրքուկիս առ ի գաղափարել»: ***Քուրաներկ*** «անուշահոտ ներկով ներկված». «Ձի զկնի *քուրաներկ* մարմնով յեթեր կոյս թելածելոյ եռամեծի հայրապետին...» (44-ԺԸ): ***Խոհեմափայլ*** - «*Խոհեմափայլ* և հանճարաշատ... պիտակ նեթ ԸՍտեփաննոսէս գրեալ և կազմեալ եղև...» (54-ԺԹ): ԺՀԼԲԲ-ում վկայվել են *քուրահեղուկ*, *քուրախեժ* բառերը:

Հետևյալ մի քանի ածականները վերաբերում են ձեռագիր ընդօրինակող, հիշատակագրող կամ ձեռագրերին որևէ առնչություն ունեցող անձանց: ***Սաղմոսատեաց*** - «Որ որմութեամբն Աստուծոյ աւարտեցաւ՝ Ձեռամբ անարգ և անպիտան, Հող և



փոշի, անուամբ միայն, Ծուլ յաղաթից, դատարկ ունայն, *Մաղմոսաստեաց*, ձևս երևման...» (109-ԺԷ): ՄՀԲ-ում արձանագրվել է հականիշը՝ *սաղմոսասէր: Անձնատրուպ - տրուպ* «նվաստ» բառից. «Գրեցաւ սա ձեռամբ մեղօք ցնորեալ և մրափած հող և մոխիր Յովանէսի աղտեղացեալ *անձնատրուպ* նուաստի» (155-ԺԸ): Հիշատակագիրները, սովորության համաձայն, հաճախ են նվաստացուցիչ բառերով բնութագրել իրենց, որպէսզի դրանով արժանանան Աստծու ողորմությանն ու թողությանը<sup>6</sup>: Այս նույն իրողությունը նկատվում է նաև նախորդ բնագրային օրինակում: Այդ բառերի շարքում հաճախակի գործածություն ունի *տրուպ*-ը: Ահա և սրանից էլ կազմվել է նշված բարդությունը: Ավելացնենք, որ հիշատակագիրները հաճախ իրենց բնութագրել են «անձամբ տրուպ» բառակապակցությամբ, ուստի և վերջինս վերածել են համադրական բարդության: *Ակոսայհան* «ատամ հանող, քաշող». «Գրեցաւ յիշատակարանս ի ձեռն *ակոսայհան* նորընծայ Տէր Յովսէփին» (77-ԺԷ): ԱՀԲ-ում արձանագրված է *ակոսայիլ* բառը, որը, սակայն, «ատամ հանելու փոքրիկ աքցան» նշանակությամբ է: *Կասպգիր* «գիրք, ձեռագիր մատյան կապող, թերթերն իրար միացնող». ձեռագրում ուղղակի նշված է՝ *կասպգիր*՝ «Կարապետ» (55-ԺԹ): Հիշատակարաններում կիրառվել է նաև տրված բառի բաղադրիչների փոխատեղական տարբերակը՝ *գրակասպ*, որն ավելի բնորոշ է հայերենի բառակազմությանը. «...ողորմեա ստացողի սորա Բարսեղ *գրակասպու*» (98-ԺԴ): Վերջինս արձանագրվել է ՄՀԲ-ում՝ միայն ԺԵ դարի հիշատակարանների վկայությամբ, մինչդեռ, ինչպես

<sup>6</sup> Հիշատակագրությամբ պայմանավորված բառակազմության մասին ավելի մանրամասն տե'ս Վ. Խաչատրյան, *Նորահայտ բառեր 13-րդ դարի ձեռագրերի հիշատակարաններում*, «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի զեկուցումներ, «Ասողիկ», Ե., 2014, էջ 69-76:

նկատելի է, ավելի վաղ էլ է գործածվել: Ինչ վերաբերում է դիտարկված տարբերակին, այդպիսի բառակազմությունը անսովոր չէ բարբառային հայերենին: Նմանատիպ կազմություն ունի բարբառային բառարանում<sup>7</sup> տեղ գտած *կապզուխ* «զուխը կապած» բառը: Ընդ որում, *գրակապ*-ը մեկ ուրիշ իմաստով էլ է հայտնի՝ ըստ ՆՀԲ-ի՝ «կապ և հեզ գրոյ»: Նման բացատրություն ունի նաև *կապգիր* տարբերակը ՌՍԲ-ում՝ «1. սղագրութեան պայմանական նշաններ, 2. սղագրություն», սակայն, անկասկած, հիշատակարանում վերոնշյալ իմաստն է նկատի առնվել:

Նորահայտ ածականների շարքը համալրվում է նաև հետևյալ բառերով: ***Նեղստոյիթ*** «նեղություն պատճառող». «...յառաջ ճեպել փութային *նեղստոյիթ* դիպուածք» (44-ԺԸ): ***Աղետայիդ*** «աղետալից». «Եւ յաղագս *աղետայիդ* դիպուածոյն շնորհէին ոչ սակաւ մխիթարութիւն սիրելիքն մեր աստուածասիրացն դասք» (44-ԺԸ): ***Միակրան*** (ած.) կամ ***միակրանք*** (անեզ. գոյ.) «համակիր,-ներ». «...կենցաղայկցելով իբրև հարազատք և միայշունչք և *միակրանք* և գուգայիաւանք» (1-ԺԴ):

Ահա նաև մի քանի գոյականներ: ***Քարոզամատեան*** - «Եղև օրինակեալ ի լաւ և ընտիր գաղափարէ գայս... տարելից *քարոզամատեանս* ի նախկնոյ շարադրեցելոյ» (4-ԺԸ): Հիշատակարաններում նշված բառի փոխարեն հաճախ գործածվել է *քարոզագիրք* // *քարոզգիրք* համարժեքը: ***Ցրուապատկերք*** «սփռված, ցրիվ եղած պատկեր». «Գ խորանքն ընդդիմակայ պատկերքնովն և զայլ տնօրինական տեղիքն *ցրուապատկերքներն* ըստ կարեաց մերոց զարդարեցաք զտառս» (214-ԺԵ): Մի հիշատակարանում արձանագրվել է նաև *ցրուացանկ* «ցրիւ ցանկ (գրքի)» բառը, որ և վկայում են ՆԲԲ-ն և ՄՀԲ-ն. «Զօրինակն շնորհեաց,

<sup>7</sup> Տե՛ս *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ. 3, Ե., 2001 (այսուհետև՝ ՀԼԲԲ):

որ զգրուացանկն գրեցի» (ԺԵ, Գ, 133): *Տումարապետք* «տումարը ներկայացնող նյութեր»։ «Բազում *տումարապետք*, որ աստ կային՝ պատճենք նոցա ոչ համաձայն գտանելին միմեանց ըստ շարադրութեան կարգի» (44-ԺԵ)։ *Կուսապետ* «կույսերի պետ, մայրապետ»։ «...ն մահտեսի *կուսապետ* Եղիսայի, որ սուրբ յԵրուսաղէմ հանգեաւ ի Քրիստոս... յիշատակ է այս գիրքս» (77-ԺԸ)։ *Թուահաշութիւն* «թվականություն»։ «Ի *թուահաշութեան* մերում ՌՃՂԹ (1750), և ի հայրապետութեան Ղազար կաթողիկոսի...» (157-ԺԸ)։ Հիշատակարաններում ձեռագրերի ընդօրինակության ժամանակը կամ որևէ տարեթիվ նշելիս հիշատակագիրները սովորաբար գործածել են *թուականութիւն, թուաբերութիւն* բառերը։ Ահա և վերջիններիս շարքում հայտնվել է *հաշիւ* բառի բաղադրությամբ առկայացած հոմանիշը։ Կարծում ենք, որ այն պետք է ուղղել *թուահաշութիւն*՝ արձանագրված տարբերակը համարելով *ու-*երի՝ իրար հաջորդող դիրքերում հայտնվելու հետևանքով առաջացած սխալագրություն։ *Ջրակ* «ջրի ակ»։ «Ով հանդիպողք այս *ջրակին*, Տուք զոդորմիս ամենայնին» (157-ԺԸ)։ Բառը վկայվել է «Պատարագամատոյց»-ի հիշատակարանում, որտեղ նշված երկը փոխաբերաբար անվանվել է *ջրակ*։ Նույն հիշատակարանի սկզբում նույնպիսի համեմատություններ ևս կան։

*Իջևօթս կալնուլ* «իջևանել, օթևան գտնել»։ «Տեառն շնորհիւ *իջևօթս կալաք* յաստվածախնամ քաղաքն Ատանայ» (44-ԺԸ)։ ՆՀԲ-ում *օթ*-ը բացատրված է «արմատ օթելոյ. օթիլն, ազանիլն, երեկօթք, և օթևան»։ Հիշյալ հարադրավոր բայը, ինչպես նկատվում է, *իջևան, օթևան* հոմանիշ բառերի բաղադրիչներով և *կալնուլ* բայի հարադրությամբ է կազմվել։ Միայն թե հասկանալի չէ՝ այդ բառում *և-*ը *իջևան* բառի կրճատ գրությա՞ն հե-

տևանք է, թե՞ և շաղկապն է, որը միավորել է երկու բայարմատ, ինչպես արդի հայերենի *առևտուր* բառում: ՆՀԲ-ում վկայված է *օթեւանս ունել* (// *կալնուլ*) «օթեվանիլ» համարժեքը, իսկ ՄՀԲ-ում էլ *էջեւան* բառատարբերակի հոդվածում հիշատակվում է *կալնուլ* բայի հարադրությամբ նույնպիսի վկայություն:

Այնուհետև նկատվում են մի քանի սովորական բառեր, ածանցավոր կազմություններ. *ագնուակերպութիւն*, *անօթեղէն* (157-ԺԸ), *չհանդուրժական* (109-ԺԵ). հետևյալներում էլ առկա են ավելորդ բաղադրիչներ, որոնք, ամենայն հավանականությամբ, հիշատակագիրները ավելացրել են որպես ճոխություն. *նուստագուննդ*, *բազմամեղապարտ* (8, 27-ԺԵ), *հոգիակեցուցիչ վերոյմակագրեալ*, *անգննաբար*, *գերամբիծ* (44,157-ԺԸ):

Թեև *ծովակոյտ* «ծովի չափ կուտակված, անթիվ» բառն առկա չէ բառարաններում, փոխարենը արձանագրվել է նշվածով բաղադրված *ծովակուտակ* համարժեքը. «Յիշեցէք Քրիստոս Աստուածն, որ *ծովակոյտ* և անհուն մեղաց մերոց թողութիւն շնորհեսցէ» (214-ԺԵ): Հետաքրքրություն է ներկայացնում նաև հիշատակարաններից մեկում վկայված *ծովածոց* բառը, որը «ծովի մեջ, ծովի ծոցում գտնվող» ածականական իմաստով է, մինչդեռ արդի հայերենում այն գոյականի արժեք ունի՝ ԱՀԲԲ - «ծովային ծոց, ցամաքի մեջ փոքրիկ շերտով խորացած ծովամաս»: ՀԱԲ-ի՝ *ծով* գլխաբառի հոդվածում նշված է նոր բառերի մեջ, մինչդեռ 1670 թ. հիշատակարանում է վկայվել: Այստեղից կարելի է հետևություն անել, որ այդ բառը վաղուց է գրական վկայագիր ստացել, միայն թե ժամանակի ընթացքում այլ իմաստ է ձեռք բերել: Ահա հիշատակարանի բնագրային վկայությունը. «Արդ, գրեցօ սա ի *ծովածոց* կղզին ի Կեպրոս» (213-ԺԵ): Որոշ բառեր հիշատակարաններում հնչյունական կամ բառա-

կազմական այլ տարբերակներով են՝ ի տարբերություն բառարաններում արձանագրվածների. *զուգայկշեն* (1-ԺԴ), *բարձր-հասակ* (107-ԺԴ), *հոգիանորոգ* (78-ԺԵ), *զերայի* (10-ԺԵ), *արենատուշտ*, *արենածարսու* (44-ԺԸ), *եռանձեայ* (15-ԺԸ):

Գործածվել են նաև օտար ծագման բառեր (հիմնականում արևելյան լեզուներից), որոնք համապատասխան բառարաններում<sup>8</sup> վկայված չեն. *պոյաճի* «ներկարար» (8-ԺԳ), *պահճաճի* «պարտիզայան» (77-ԺԸ), *ութուճի* «արդուկ անող» (211-ԺԵ) ևլն:

Դիտարկված չորս տասնյակից ավելի նորահայտ բառերն ու բառատարբերակները կարող են համալրել հայերենի՝ ապագայում կազմվելիք բառարանները:

Khachatryan Valentin-New-known Words in the Recorded Manuscripts of the Catholicosate of the Great House of Cilicia – This article examines more than four dozens of words and word-variants used in the recorded manuscripts of Catholicosate which haven't been in any famous Armenian dictionaries. Work on adjustment of words meanings has also been done.

Хачатрян Валентин- Новоявленные слова в колофонах рукописях Католикосата Великого Дома Киликийского - В статье исследуются более четырех десятков слов и их версий, употребляемые в колофонах рукописях Католикосата Киликийского, которые не засвидетельствованы ни в одном из ряда армянских известных словарей. Также проведены работы уточнения значений слов.

---

<sup>8</sup> Նկատի ունենք հետևյալ բառարանները՝ ՄՀԲ, Ն. Աճառեան, *Թուրքերենէ փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի և Նոր-Նախիջևանի բարբառներուն*, Մոսկուա-Վաղարշապատ, 1902: Հաշվի առնելով նաև այդպիսի բառերի տարածվածությունը արդի բարբառային հայերենում՝ ստուգել ենք նաև ՀԼԲԲ-ով: Ուսումնասիրված հիշատակարաններում գործածված օտար բառերին անդրադառնալու ենք հետագա աշխատանքներում, ուստի և սահմանափակվել ենք նշված բառարաններում չվկայված միայն երեք բառի նշումով:

## Կատվայան Վիկտոր (ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

### ԽՈՒՌՆԱՎՈՒԼԻ ԽՈՍՎԱԾՔԸ

Տարածության ու ժամանակի մեջ լեզվի դրսևորումները բազմաթիվ են ու բազմազան, և որևէ լեզվի մասին ըստ հնարավորին ամբողջական պատկերացում կազմելու, այդ լեզվի համակարգի օրինաչափությունները և առկա յուրօրինակությունները վեր հանելու և մեկնաբանելու համար ուսումնասիրության պետք է ենթարկել հնարավորինս շատ լեզվատարբերակներ: Հայերենի պարագայում ինդիքը մեծ կարևորություն ունի, եթե նկատի ենք առնում մեր ժողովրդի և լեզվի անցած ուղու պատմական վայրիվերումները: Ներկայում էլ արտալեզվական ու լեզվական շատ իրողություններ՝ հայության սփոլածությունը աշխարհով մեկ, հայերենի բարբառային տարբերակվածությունը, բարբառների տարածման բնական սահմանների խախտումները, խառը տիպի խոսվածքների ձևավորման գործընթացները, գրական ու խոսակցական լեզուներում տեղի ունեցող զարգացումները, պայմանավորում են հայերենի ոչ միասնական գոյությունն ու գործառությունը: Ինչ խոսք, հայերենի քննությունը ներառում է նշված իրողությունների հանգամանակի դիտարկում և բոլոր կարգի լեզվատարբերակների հետազոտում: Մեծ կարևորություն ունի նաև կորած բարբառների ուսումնասիրությունը, մանավանդ որ դրանցից շատերին դեռևս գիտական որևէ լուրջ անդրադարձ չի կատարվել, և ավելի ու ավելի նվազ են դառնում դրանց վերաբերյալ հավաստի տեղեկություններ ձեռք բերելու հնարավորությունները<sup>1</sup>: Հայե-

---

<sup>1</sup> Չ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագետները անցյալ դարի վերջին քառորդում Արևելյան Հայաստանի տարբեր բնակավայրերում ապաս-

րենի դեռևս չուսումնասիրված նման տարբերակներից է Մե-  
բաստիայի բարբառը<sup>2</sup>, որի դրսևորումներից մեկի՝ Խուռնավու  
գյուղի<sup>3</sup> խոսվածքի նկարագիրն է ներկայացվում սույն աշխա-  
տանքում: Հետազոտությունը կատարել ենք՝ օգտագործելով  
ՀԲԱ ծրագրով լրացված թիվ 294 տետրում բերված տվյալները<sup>4</sup>:  
Անդրադառնալով Մեբաստիայի բարբառին՝ Հ.Աճառյանը փաս-  
տել է, որ այն «յատուկ է Մեբաստիա հայաշատ քաղաքին և  
անոր շրջակայ բազմաթիւ հայ գիւղերուն, որոնք բռնած են Ալի-  
սի հովիտը, Մեբաստիայէն սկսեալ դէպի արևելք մինչև Ջառա:  
....Ալիսի հովիտին գիւղերը քիչ մը կը տարբերին քաղաքին

---

տանած բարբառակիրներից Հայերենի բարբառագիտական ատլասի (այսու-  
հետ՝ ՀԲԱ) նյութերի հավաքման ծրագրի շրջանակում կատարված հարցում-  
ներով գրանցել են Արևմտյան Հայաստանի հայաթափված հարյուրավոր բնա-  
կավայրերի խոսվածքների հատկանիշները, որոնց դիտարկումը հնարավոր  
ություն է տալիս ամբողջացնելու ոչ միայն կորած, այլ նաև նոր հայրենիքում  
գործառող բարբառային միավորների գիտական նկարագիրը:

<sup>2</sup> Այս բարբառի մասին ժամանակին Հ.Աճառյանը գրել է. «Ընդարձակ և մա-  
քուր բարբառ մ'է, որ սակայն բոլորովին անծանօթ մնացած է գիտութեան  
առջև. ունի *է* և *ո* ձայները և երեք աստիճանի բաղաձայններ. *բ*, *բ*, *փ* են: Ա-  
սոնց փոփոխութիւնը ճիշտ այն ձևով է, ինչպէս Խարբերոյ, Ջեթուն են: Այլ  
ձայնափոխութեանց և քերականութեան վրայ տեղեկութիւն չկայ» (**Հ.Աճա-  
ռեան, Հայերէն գաւառական բառարան**, Թիֆլիս, 1913, էջ 34):

<sup>3</sup> Խուռնավու կամ Խուռնավիլ գյուղը գտնվում էր Փոքր Հայքի Մեբաստիայի  
գավառում՝ Տնրիկ քաղաքի մոտ: 1915թ. եղեռնի նախօրեին գյուղն ուներ 150  
տուն՝ 1200 հայ բնակչով: Եղեռնի ընթացքում բնակչությունը տեղահանվել է  
(տե՛ս **Թ.Հակոբյան, Սո.Մելիք-Բախշյան, Հ.Բարսեղյան, Հայաստանի և հա-  
րակից շրջանների տեղանունների բառարան**, հ. 2, Ե., 1988, էջ 824):

<sup>4</sup>Գրանցումները 1985թ. կատարել է խուռնավուլցի Նշան Սահակյանը, համա-  
ձայն որի՝ խուռնավուլցիների նախնիները 12-րդ դարում գաղթել են Անիից՝  
ազնվական Սարգիս Օշինի առաջնորդությամբ: Ի դեպ, այս տեղեկությունը  
առիթ դարձավ, որ Խուռնավուլի խոսվածքը դիտարկենք Մեբաստիա քաղաքի  
խոսվածքի հետ համեմատությամբ: Մեբաստիա քաղաքի խոսվածքի հատկա-  
նիշները ՀԲԱ ծրագրով ներկայացված են թիվ 81 տետրում: Գրանցումները  
կատարել է բարբառագետ Ա.Հանեյանը 1978թ.:

բարբառէն»<sup>5</sup>: Գ.Ջահուկյանը Սեբաստիայի բարբառը ընդգրկել է հայ բարբառների արևմտյան խմբակցության Փոքր Ասիայի կամ արևմտյան բարբառախմբում<sup>6</sup> և ներկայացրել ըստ երկու վայրերի՝ Սեբաստիայի<sup>7</sup> և Բրզնիկի: Սեբաստիայի բարբառի առավել էական հատկանիշներից կարելի է նշել բառասկզբի ձայնեղ պայթականների և հպաշփականների շնչեղ ձայնեղությունը, խուլերի դիմաց ձայնեղների առկայությունը, երկակի թվի *լ/ի* մասնիկի առկայությունը, Կը ճյուղին պատկանելությունը և եղանակիչի հետադաս կիրառությունը<sup>8</sup>, շարունակական ներկայի, *ը*-ով վաղակատարի առկայությունը և այլն:

Խոունավուլ գյուղի խոսվածքի բաղաձայնական համակարգը նույնպես եռաստիճան իլլազուրկ է՝ բաղկացած լինելով շնչեղ ձայնեղներից (բ', գ', դ', ձ', ջ), ձայնեղներից (բ, գ, դ, ձ, ջ) և շնչեղ խուլերից (փ, ք, թ, ց, չ): Այլ կերպ ասած՝ խոսվածքում,

---

<sup>5</sup> **Հ.Աճառեան**, *Հայ բարբառագիտություն*, Մոսկուա – Նոր-Նախիջեւան, 1911, էջ 225: Հ.Աճառեանը նշել է, որ բարբառի վերաբերյալ չտպագրված ընդարձակ ուսումնասիրություն ունի Կ.Գաբրիկյանը, որը և իրեն տրամադրել է որոշ նյութեր (տե՛ս նշվ. աշխ., նույն տեղում): Կ.Գաբրիկյանի աշխատությունը հրատարակվել է 1952թ., այն ընդարձակ բառարան է, որ պարունակում է նաև բարբառի հնչյունական համակարգի նկարագրություն և բանահյուսական հարուստ նյութ (տե՛ս **Կ.Գաբրիկեան**, *Բառգիրք սեբաստահայ գաւառալեզուի*, Երուսաղէմ, 1952):

<sup>6</sup> **Գ.Ջահուկյան**, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 132-133:

<sup>7</sup> Սեբաստիան եղել է Փոքր Հայք պրովինցիայի, Առաջին Հայքի, իսկ 536 թվից՝ Երկրորդ Հայքի մայրաքաղաքը: 1021թ. բյուզանդացիների կողմից Սեբաստիան Վասպուրականի դիմաց տրվում է Վասպուրականի թագավոր Սենեքերիմ-Հովհաննեսին, որն իր արքունիքով, գորքով տեղափոխվում է Սեբաստիա: Նրանց հետ հազարավոր հայեր տեղափոխվում և բնակվում են Սեբաստիայում և նրա շրջակայքում: 1915-1918թթ. նահանգի հայ բնակչության մեծագույն մասը զանգվածաբար ոչնչացվեց կամ տեղահանվեց (**Թ. Հակոբյան**, **Ստ.Մելիք-Բախշյան**, **Հ.Բարսեղյան**, նշվ. աշխ., հ. 4, Ե., 1998, էջ 552-555):

<sup>8</sup> Հ.Աճառեանը նկատել է, որ բարբառումն բայերի պարզ ներկան կազմվում է հետադաս *զը* մասնիկով, որը երբեմն կարող է «առաջ ալ դրուիլ» (տե՛ս **Հ. Աճառեան**, նշվ. աշխ., էջ 227):



ինչպես ողջ Սեբաստիայի բարբառում, հինհայերենյան խուլերի դիմաց արձանագրվել են ձայնեղներ՝ *բառավ, գաքավ, դախդագ, ձիրան, ջազադ*: Բայց եթե Սեբաստիա քաղաքի խոսվածքի բառամիջում՝ խուլ շփականներին հաջորդող դիրքում, խուլեր են վկայված (գասկաձ, նըստիլ, գիշտանալ), ապա Խուռնավուլի խոսվածքում այդ դիրքում ևս արձանագրվել է ձայնեղացում (հասգընալ, նըսդիլ, գըշդանալ): Բացի այդ՝ եթե Սեբաստիայի խոսվածքի բառամիջում ու բառավերջում ձայնեղ պայթականների ու հպաշփականների դիմաց առկա են շնչեղ խուլեր (խափել, թաք, օց, արչ, բ'արց, ախպուր)<sup>9</sup>, ապա Խուռնավուլի խոսվածքում այդ դիրքերում ևս արձանագրվել են շնչեղ ձայնեղներ (խաբ'ել, արագ'իլ, թագ', օձ', առջ', բ'արձ', ախբ'ուր): Խուռնավուլի խոսվածքում փաստվել են յուրահատուկ իրողություններ նաև ձայնավորական համակարգում: Խոսվածքին բնորոշ են *է* և *ռ* երկբարբառային հնչյունները (խելք, ասեղ, գ'որձ, օշլոդ), մինչդեռ Սեբաստիայի խոսվածքում *է* երկբարբառային հնչյուն չի նկատվել<sup>10</sup> (խելք, նեղ, ասեղ), իսկ բառամիջի շեշտակիր *ռ*-ի դիմաց առկա է ոչ թե սուկ երկբարբառային, այլ նաև քմայնացած հնչյուն (բ'եժղգ, գ'եժրձ, դ'եժո)<sup>11</sup>: Այս իրողու-

<sup>9</sup> Այս հատկանիշը Սեբաստիայի բարբառում արձանագրել է նաև Գ.Ջահուկյանը (տե՛ս **Գ.Ջահուկյան**, նշվ.աշխ., էջ 53):

<sup>10</sup> Գ.Ջահուկյանն արձանագրել է Սեբաստիայի բարբառի երկու վայրերում էլ այդ իրողության առկայությունը (տե՛ս **Գ.Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 72), Կ.Գաբիկյանը նույնպես Սեբաստիայի բարբառում փաստել է դրա գոյությունը (տե՛ս **Կ.Գաբիկյան**, նշվ. աշխ., էջ 6-7), իսկ Հ.Աճառյանը նշել է, որ «Ե (հընչուած ծանր *իէ*) աւելի սովորական է Ալիսի հովիտին գիւղերուն մէջ» (**Հ.Աճառեան**, նշվ. աշխ., էջ 226):

<sup>11</sup> Հ.Աճառյանը նկատել է, որ այս հնչյունը «Սեբաստիոյ յատուկ յատկանշական ձայն մ'է, որուն հնչիւնը մօտաւորապէս *ռէօ* խումբին արագ արտասանութեան նման է: Կը գտնուի բառին սկիզբը և մէջը, բայց միշտ շեշտի տակ. երբ շեշտէն զրկուի, կը դառնայ պարզ օ» (**Հ.Աճառյան**, նշվ. աշխ., էջ 225):

յունների հետ փոխկապակցված են միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *է, ն* հնչյունների դիմաց դրսևորվող միավորների տարբերությունները. եթե Խուռնավուլում ունենք *վոխ, վորդ, վոչ* (նաև՝ *որ>որ, օրձ>որձ*) և *յեզ, յեն, յերբ*, ապա Սեբաստիայի խոսվածքը ներկայացնում է այսպիսի պատկեր՝ *վերփ, վերթ, վետկ, վերց* և *յեզ, յէս, յերթ, յէփ*: Ինչպես արևմտյան շատ բարբառներում (այդ թվում և՝ Սեբաստիայի բարբառում), այնպես էլ Խուռնավուլի խոսվածքում հինհայերենյան *ն*-ի և *է*-ի դիմաց բազմավանկ բառերի սկզբում առկա են *օ* և *է* (օչիլ, օսկի, էրէս, էրգանք), բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորը սղված է (ավիլ, բուսնիլ, գ'օղնալ) և այլն: Սեբաստիայի բարբառին հատուկ է *այ* երկբարբառի դիմաց *ա* ձայնավորի առկայությունը, այդ են վկայում նաև Խուռնավուլի խոսվածքի օրինակները (ադ, աս, գ'ալ, ձար /ծայր/, ձ'ան, հար, փադ): Սեբաստիայի խոսվածքում նախաբաղաձայնական դիրքում հետնալեզվային հպականների դիմաց վկայվել է *յ* (մէմէգ, մըյնէր, գընիյնէր, ախչիյնէր), միավանկ բառերի սկզբի *հո* խմբի դիմաց՝ *ֆէ* (ֆերթ, ֆէդ, ֆէդ, ֆէս, ֆէդ, ֆէն), մինչդեռ այդ իրողությունները բնորոշ չեն Խուռնավուլի խոսվածքին (մեզմէգ, աքլօր, մըզրադ, հորթ, հող, հող, հոս, հող, հոն): Այնպիսի իրողություններ, ինչպիսիք են բաղաձայնից առաջ հպաշփականների շփականացումը (աշք, ասնիլ, վըլասք, խըսզէլ), *նզ, նկ, տր* խմբերի դիմաց *յ*-ի առկայությունը (ըդօյներ /եղունգներ/, կայնել, ձըյներ /ծնկներ/, Բէյոս, գօյել /կոտրել/), օտար բառերի սկզբում *դ*-ի առկայությունը (դուրթի, դուշ), ընդհանուր են երկու խոսվածքների համար: Ընդհանրապես, երկու խոսվածքները մեր դիտարկած հնչյունական 22 հատկանիշների շրջանակում ունեն 12 ընդհանրություն, 5 տարբերություն և 5 մասնակի ընդհանրություն: Վերջին կարգի հատկանիշներից է շեշտափոխական հնչյունա-

փոխությունը. եթե Խուռնավուլի խոսվածքում շեշտագրկման հետևանքը միշտ ձայնավորների հնչյունափոխությունն է (գըժի, խընամու, թըթի, քախքի), ապա Սեբաստիայի խոսվածքում շեշտագրկված ձայնավորը կարող է և պահպանվել (քըթի, վըզի, ցըրդի, թութի, ջ՛ուրի//ջ՛ըրի, մուխի//մըխի):

Խուռնավուլի խոսվածքի անվանական հատկանիշներից ուշագրավ է երկակի թվի *վի* մասնիկի առկայությունը (աշվի, դ՛ըովի, ըքվի /ունքեր/, ձ՛եովի, օդվի, անգըջվի): Այս հատկանիշը հատուկ է նաև Սեբաստիայի խոսվածքին (աշվըներ//աշկեր, ձըվըներ//ձըյներ, ձ՛ստվըներ//ձ՛ստքեր, ձըզվըներ /ձիձ/): Նկատելի են հոգնակիակազմության որոշ տարբերություններ. եթե ձայնավորով ավարտվող բառերի հոգնակին Խուռնավուլում ունի *ք* հոգնակերտ (խընամիք, թըշնամիք, քեռիք), ապա Սեբաստիայի խոսվածքում նման դեպքերում հոգնակին ունի *նէր* մասնիկ (խընամինէր, հօքինէր, ջամփընէր), Խուռնավուլին բնորոշ են *աղջըկէրք, աղբըրդանք, գընանիք, դաքէրդանք, քուրվըդանք* հոգնակիները, իսկ Սեբաստիային՝ *ախշըյներ, ախպըրդիք, գընիյինէր, դաքըրվըդիք, քըրվըդիք* ձևերը և այլն: Խուռնավուլի հոլովական յուրահատկություններից են անեզական բառերի սեռականի ձևավորումը *սց* կազմիչով (աչաց, մըդքի//մըդաց, ձեռաց, միջաց, կենաց), հատուկ տեղանունների հոլովումը Ա կամ Ռ հոլովիչով (Պուսօ, Սևանա, Կարսա, Վանա, Մշօ, Եդեսիօ, Եվդօզիօ, Կեսարիօ): Երկու խոսվածքներին էլ հատուկ է Ոջ հոլովման առկայությունը, եզակի թվում կենդանիների մի շարք անունների և հոգնակի գոյականների ենթարկվելը Ու հոլովման, *սուն* (սյուն), *ձ՛նն* (ձյուն) բառերի արտաքին հոլովումը (սունի, ձ՛ունի) և այլն: Բացառական հոլովի կազմիչը երկու խոսվածքներում էլ *էն* վերջավորությունն է, բայց եթե Խուռնավուլում անձերի դեպքում արձանագրվել է *ւէ*-ով բացա-

ռական (հօրմէ, մօրմէ, քրօջմէ, գնօջմէ), ապա Սեբաստիայում վկայվել են նման բառերի նաև վերլուծական բացառականներ (հօրը մէնէ//հօրմէն, ախպօրը մէնէ // ախպօրմէն, քուրէշը մէնէ // քուրէշմէն)<sup>12</sup>: Անձնական դերանվան տրականի ձևերում երկու խոսվածքներին էլ հատուկ է հավելական *հ*-ն (Խ. ինձի, քեզի, մեզի, ձ'եզի, Ս. ը/ի/նձի, քեզի, մեզի, ձ'եզի): Մյուս դերանունների դեպքում առկա են ինչպես ընդհանրություններ, այնպես էլ տարբերություններ, այսպես՝ Խ. *ըս, ըղ, ըն, սը, ղը, նը, սըվոնք, ղըվոնք, նըվոնք, վէվ, օրու*, Ս. *աս, աղ, ան//ասի, աղի, անի, զըվէնք, ղըվէնք, նըվէնք, վէվ, օրու* և այլն: Երկու խոսվածքներն էլ ունեն *ը* և *ն* որոշիչ հոդեր, անորոշ հոդի հետադաս կիրառություն (Խ. *բաղառ մի*, Ս. *զընիզ մը*), սեռականի հոդառություն (ջ' ըրին մէջ//մէջ): Դիտարկված անվանական 24 հատկանիշներից երկու խոսվածքների համար ընդհանուր են 12-ը, տարբեր են 9-ը և մասամբ տարբեր են երեքը:

Խուռնավուլի խոսվածքը Սեբաստիայի խոսվածքից համեմատաբար քիչ տարբերություններ ունի բայական համակարգում, հաճախ տարբերությունները կրում են մասնակի բնույթ: Խուռնավուլի խոսվածքում արձանագրվել է ներկայի կազմությունը *գու* մասնիկով (գու սիրիմ), Սեբաստիայի խոսվածքում՝ *զը* մասնիկով (զըսիրէմ), սակայն *գալ, լալ, տալ* բայերի դեպքում երկու խոսվածքներում էլ ներկայի կազմիչն է *գու*-ն: Բայց եթե Խուռնավուլի խոսվածքում այս բայերի ներկա ժամանակաձևում գուգորդվում են *գու* եղանակիչի նախադաս և հետադաս դրսևորումները (գուգ'ամ գու), ապա Սեբաստիայում հետադաս դիրքում արձանագրված է *գօր* ձևը (գուգ'ամ գօր):

<sup>12</sup>Գ.Ջահուկյանի դասակարգման աղյուսակներում այս հատկանիշը Սեբաստիայի բարբառում չի փաստվել (տե՛ս **Գ.Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 60):

Այդպես նաև՝ շարունակական ներկյան Խուռնավուլում ունի հետադաս *գու* մասնիկ (ուղիմ գու), իսկ Սեբաստիայում՝ *գոր* մասնիկ (գարթամ գոր): Ընդհանրապես, երկու խոսվածքներում էլ արձանագրված է ներկայի մասնիկի թե՛ նախադաս, թե՛ հետադաս կիրառություն<sup>13</sup>: Երկու խոսվածքում էլ վաղակատարն ունի *ը*-ով վերջավորություն, հարակատարը՝ *աձ* վերջավորություն<sup>14</sup>, անցյալ ժամանակաձևերի հոգնակի առաջին դեմքում առկա են *ա*-ով վերջավորություններ (եանք /էինք/, իւրմէցանք), ներգործաձև և կրավորաձև խոնարհումներ անցյալ կատարյալում (իւրմէցի, նըստա), պատճառական *ցըն* ածանց (Խ. գարմացընէլ, Ս. գարմացընէլ), իսկ անցյալ կատարյալում՝ դրա *ցուց* տարբերակը (հասկըցուցի) և այլն: Խուռնավուլի խոսվածքում էական բայի ներկայի ձևերն են՝ *ըւ, ըս, է, ընք, ըք, ըն, Սեբաստիայի խոսվածքում՝ էւ, էս, է, էմք, էք, էն*: Խուռնավուլում պատճառական բայերի հրամայականը վերջավորվում է *ն ի* մասնիկով (իւրմցո՛ւ), Սեբաստիայում՝ *ն իր* մասնիկով (իւրմցո՛ւր) և այլն: Հետաքրքրական են Խուռնավուլի խոսվածքում արձանագրված՝ *գալ* բայի ժխտական խոնարհման ներկայի եզակի առաջին և երկրորդ դեմքերի ձևերը՝ իրենց *ի* նախդրով՝ *չեւ ի գ՛ար, չես ի գ՛ար*:

<sup>13</sup> Սեբաստիայի խոսվածքի հատկանիշները գրանցած բարբառագետ Ա. Հանեյանը թիվ 81 տետրում նկատել է, որ նախապես ավելի տարածված է եղել *ցը* մասնիկի հետադաս գործածությունը, սակայն հետագայում հավասարապես գործածական է դարձել նաև դրա նախադաս գործածությունը:

<sup>14</sup> Գ.Ջահուկյանի աղյուսակներում Սեբաստիայի և Բրգնիկի վերագրված է *ուկ*-ով հարակատար (տե ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 110), սակայն խոսվածքների հատկանիշները ՀԲԱ ծրագրով ներկայացնող երկու տետրերում էլ (թիվ 81 Սեբաստիա, թիվ 294՝ Խուռնավուլ) արձանագրված է *աձ*-ով հարակատար դերբայ:

Մեր դիտարկած բայական 20 հատկանիշների շրջանակում Խուռնավուլի և Մեբաստիայի խոսվածքներն ունեն 15 ընդհանրություն, 2 տարբերություն և երեք մասնակի ընդհանրություն: Այսպիսով, Խուռնավուլի և Մեբաստիայի խոսվածքները դիտարկված 66 բարբառային հատկանիշների շրջանակում ունեն 39 ընդհանրություն, 16 տարբերություն և 11 մասնակի ընդհանրություն: Խոսվածքների ընդհանրությունները ավելի շատ են բայական համակարգում, տարբերությունները՝ անվանական համակարգում:

Խուռնավուլի խոսվածքում ևս թե՛ իմաստային, թե՛ բառակազմական և թե՛ ծագումնաբանական առումներով առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում բառապաշարային իրողությունները: Շատ դեպքերում բառապաշարի յուրահատկությունները ներկայացնում են բարբառակիր տվյալ հանրության բնական միջավայրին, կենցաղին ու աշխարհընկալմանը առնչվող իրողություններ: Խուռնավուլի խոսվածքի բառային նման միավորներից են՝ քար դանձ/լեռան դանձ (վայրի տանձ), միջաց օսգօր (ողնաշար), դեղան (անկողին), շրոդուն (միգապարկ), եղինք (իրիկնապահ), իրզըվան հաց (ընթրիք), փօրօվ (հղի), բեդքարան (զուգարան), ժողվօղ (մուրացկան), խընդալ (ծիծաղել) և այլն: Այլ դեպքերում ուշագրավ է բառերի կազմությունը, ինչպես՝ հողվըրդի (գերեզման), ինզըզմեջ (ընկույզի միջուկ), ինքաբաբ (համառոտություն է *կնքապապ*-ից), բըռունց (բռունցք), քարօղել (քարկոծել), խըման (հարբեցող), դըբնալ (դիպչել), ցուցընել (ցույց տալ) և այլն: Խոսվածքի բառապաշարի մաս են կազմում հնաբանություններ, գավառական բառեր, փոխառություններ, որոնցից են՝ ներ (բնիկ հայերեն արմատ՝ *տազերակին* նշանակությամբ), օրհարսագ (հինհայերենյան *օրհասարակ* ձևից), առիք, մուխ, գոցել, գարզըվիլ, դըփել

(գավառական բառեր՝ *առաստաղ, ծուխ, փակել, ամուսնանալ, ծեծել* նշանակություններով), խամաջիգ (տիկնիկ. թթր. quma «մի կնոջ ամուսնու մյուս կանայք» + թրք. jik նվազական մասնիկ<sup>15</sup>), աղույել (թունավորել. արմատն է թթր. al «թույն») և այլն: Բերված բառերից շատերը գուգահեռներ ունեն Սեբաստիայի խոսվածքում՝ *հ'առիք, գարքըվիլ, ընգըզմէչ, մուխ, դէդան, նէր, միչաց օսկէր, ցըցընէլ, գ'օցէլ, քարօղէլ, խընդալ* և այլն:

Սեբաստիայի բարբառի Խուռնավուլի խոսվածքը, այսպիսով, ներկայացնում է բարբառային հայերենի հատկապես արևմտյան տարբերակներին հատուկ հատկանիշների մի յուրօրինակ փունջ՝ Սեբաստիայի խոսվածքի հետ էական ընդհանրություններով և հիմնականում խոսվածքային բնույթի տարբերություններով: Խոսվածքի որոշ հատկանիշներ հետաքրքրական են ոչ միայն բարբառագիտության, այլ նաև լեզվի պատմության համար:

Viktor Katvalyan–The Speech of Khurnavul. –The speech of Khurnavul is a unique set of features that are peculiar to the variants of the Western Armenian dialectal language. This speech and the speech of Sebastia have a number of common essential features, at the same time they have some unshared features. Some features of this speech are of important value not only for the dialectology, but also for the history of the language.

Катвалян Виктор – Говор Хурнавула. - Говор Хурнавула представляет собой своеобразную совокупность признаков, характерных для вариантов западноармянского диалектного языка. Этот говор имеет существенные сходства с говором Себастии, а также – некоторые различия от него. Некоторые особенности говора имеют важное значения не только для диалектологии, но и для истории языка.

<sup>15</sup>Տե՛ս Ն.Աճառյան, *Հայերեն արևատական բարբառան*, հ. 2, Ե., 1973, էջ 324:

**Հակոբյան Ֆրիդա**  
(ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

**ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ**

Մեքենական թարգմանությունը՝ որպես կիրառական լեզվաբանության առանձին բնագավառ, ձևավորվել է նախորդ դարի 50-ական թվականներին: XX դարում ստեղծված մեքենական թարգմանության համակարգերը սահմանափակ հնարավորություններ ունեցող հաշվողական մեքենաներ էին: Դրանց օգնությամբ կարելի էր ավտոմատ եղանակով կատարել թվաբանական և տրամաբանական բազմաթիվ գործողություններից բաղկացած հաշվարկներ<sup>1</sup>: 1970-80-ական թվականներին լեզվաբանության մեջ սկսեցին օգտագործվել կառուցվածքային լեզվաբանության և մաթեմատիկայի նորագույն նվաճումները: Դա էլ իր հերթին նպաստեց մեքենական թարգմանության համակարգերի կատարելագործմանը: Այս շրջանում ստեղծվեցին և լայն տարածում գտան ավտոմատ թարգմանության բազմաթիվ համակարգեր: Մեքենական թարգմանության համակարգեր ստեղծելու ուղղությամբ աշխատանքները հիմնականում տարվում էին ԱՄՆ-ում, Ճապոնիայում, Կանադայում և եվրոպական մի շարք երկրներում<sup>2</sup>: 1990-ական թվականներին, պայմանավորված անձնական համակարգիչների և տեղեկատվական տեխ-

---

<sup>1</sup> Ռ. Ուոուտյան, *Կիրեննետիկան և լեզվաբանությունը*, Ե., 1978, էջ 10:

<sup>2</sup> Н. Рябцева, *Информационные процессы и машинный перевод*, М., 1986, стр. 70.



նույն ժամանակների բուռն զարգացմամբ, ավելի բարձրորակ և արժեքավոր թարգմանական համակարգեր ստեղծվեցին:

XXI դարում մեքենական թարգմանություն բնորոշումը կարելի է փոխարինել էլեկտրոնային թարգմանությամբ, քանի որ վեբ տեխնոլոգիաներն արմատապես փոխել են համակարգչային ծրագրերի միջոցով կատարվող թարգմանությունների որակը՝ նպաստելով թարգմանական նոր տեխնոլոգիաների ստեղծմանը:

Էլեկտրոնային թարգմանություններ կատարելու նպատակով շարունակում են ստեղծվել մեծ թվով թարգմանական բառարաններ և համակարգեր գիտահետազոտական տարբեր հաստատությունների, համակարգչային ծրագրեր ստեղծող այնպիսի խոշորագույն ընկերությունների կողմից, ինչպիսիք են Google-ը, Yahoo-ն, Yandex-ը կամ Microsoft-ը: Վերջիններս շարունակաբար զարգացնում են իրենց համակարգերը՝ ավելացնելով լեզուների քանակը և բարձրացնելով թարգմանության որակը:

Խոսելով օտարալեզու թարգմանական համակարգերում հայերենի ներկայացվածության մասին՝ պետք է նշել, որ հայերենը օտարալեզու որևէ էլեկտրոնային բառարանում կամ համակարգում ներկայացված չէ: Միայն Google և Yandex որոնողական համակարգերի թարգմանական ծառայություններն են հնարավորություն տալիս կատարել հայերեն բառերի և տքստերի թարգմանություններ տարբեր լեզուներով: Մինչդեռ նույնիսկ Microsoft-ի Bing թարգմանական համակարգում հայերենն ընդգրկված չէ:

Արդի հայ լեզվաբանության մեջ էլեկտրոնային թարգմանության խնդիրներն առավելապես պայմանավորված են թարգմանական լիակատար բառարանի բացակայությամբ: Չնայած

պետք է նշել, որ հայ լեզվաբանության մեջ մեքենական թարգմանական համակարգերի ստեղծման ուղղությամբ աշխատանքներ տարվել են:

Հայաստանում մեքենական թարգմանությունների հիմքը դրվեց 1960-ական թվականներին: Այս շրջանում մեքենական թարգմանության ուղղությամբ աշխատանքները հիմնականում տարվում էին բուհերի տեխնիկական և մաթեմատիկական ֆակուլտետներում: Առաջին սերնդի մեքենական թարգմանությունները խիստ ցածրորակ էին: Այդ մեքենաները հնարավորություն էին տալիս տեքստերը թարգմանել առանձին նախադասություններով, որոնց միջև գոյություն ունեցող իմաստային կապը ոչ միշտ էր լրիվ դրսևորվում: Ամենահաջող թարգմանական համակարգը «Գառնի» մեքենան էր:

1976 թվականին «Հրազդան 3» հաշվողական մեքենայի օգնությամբ ստեղծվեց հայոց լեզվի հանգաբառարանը: Դրա ստեղծման նպատակը ձևաբանական ալգորիթմների մշակումն էր, որի համար անհրաժեշտ էր հակադարձ այբբենական կարգով դասավորված բառացանկ: Ամբողջ բառացանկը պետք էր վերածել թվային հաջորդականության, ներածել մեքենայի հիշողության մեջ, շրջել թվային հաջորդականությունը և վերածել բառերի<sup>3</sup>:

Մեքենական թարգմանության համար կարևոր նշանակություն ունեցավ **միջնորդ լեզվի** գաղափարը, որի համաձայն խոսքի բովանդակային պլանը ներկայացնելիս պետք է ստեղծել «**արհեստական միջնորդ լեզու**՝ ինտերլինգվա (interlingua)», իսկ առանձին լեզուների համար՝ «փոխակերպիչներ՝ բովան-

---

<sup>3</sup> Ա. Մանուկյան, Ա. Մարգարյան, Ռ. Ուռուտյան, *Ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառումը լեզվաբանության մեջ*, Ե., 2004, էջ 59:

դակության պլանից արտահայտության պլանին» և արտահայտության պլանից բովանդակությանն անցնելու համար<sup>4</sup>:

1996թ. Հ. Ուշիդայի գլխավորությամբ ՄԱԿ-ի հովանու ներքո գործող Տոկիոյի առաջատար տեխնոլոգիաների ինստիտուտում սկսեցին աշխատանքներ տարվել UNL միջնորդ լեզվի ստեղծման ուղղությամբ: Այդ աշխատանքներին մասնակցել են տասնյոթ երկրների ներկայացուցիչներ (Բրազիլիա, Իսպանիա, Իտալիա, Հնդկաստան, Ճապոնիա, Պորտուգալիա, Չինաստան, Ռուսաստան, Ֆրանսիա, Գերմանիա և այլն)<sup>5</sup>: ՀՀ պետական գիտական հաշվողական համակարգերի ստեղծման նպատակային ծրագրի շրջանակներում փորձ է արվել մշակել UNL-ի հայկական մոդուլը: Աշխատանքներն ընթացել են երեք փուլով՝ 1. լեզվական նյութի դասակարգում և ներկայացում, 2. հայերեն արտահայտությունների սերման և վերլուծության ալգորիթմների և դրանց հիման վրա համակարգչային ծրագրերի մշակում, 3. հայերենի լեզվական նյութի UNL-ի ձևաչափով ներկայացում:

ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների իստիտուտը ղեկավարել է UNL-ի գծով Հայաստանում տարվող աշխատանքները, որոնց մասնակցել է նաև Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը: Ենթադրվում էր, որ կստեղծվի և համացանցում կտեղադրվի «բազմալեզվյան ավտոմատացված թարգմանական ծրագիր, որը թույլ կտա տարբեր լեզուներից թարգմանել հայերեն և, հակառակը, ...»<sup>6</sup>: Պետք է

---

<sup>4</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 64:

<sup>5</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 64:

<sup>6</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 64:

նշել, սակայն, որ UNL-ի հայկական մոդուլի ստեղծման աշխատանքները մնացել են անավարտ:

Հայ լեզվաբանության մեջ մեքենական թարգմանության ուղղությամբ տարվող աշխատանքներն այսքանով չեն սահմանափակվում: Ստեղծվել են էլեկտրոնային բառարաններ, թարգմանական համակարգեր, բջջային հավելվածներ երկլեզվյան և բազմալեզվյան թարգմանություններ կատարելու նպատակով: Անդրադառնալով հայերեն թարգմանական բառարաններին՝ նշենք, որ հայերեն էլեկտրոնային լիակատար թարգմանական բառարան գոյություն չունի: Առկա էլեկտրոնային բառարաններում ([nayiri.com](http://nayiri.com), [bararanonline.com](http://bararanonline.com), [hy.glosbe.com](http://hy.glosbe.com), [armdict.com](http://armdict.com), [armenian2english.com](http://armenian2english.com)) ներկայացված են միայն տպագիր թարգմանական բառարանների թվայնացված տարբերակները:

Աշխատանքներ են տարվել նաև բազմալեզու թարգմանական համակարգի ստեղծման ուղղությամբ: Հայերեն բազմալեզու էլեկտրոնային թարգմանական ծրագրերի թվում առանձնանում է [www.translator.am](http://www.translator.am) կայքում գործող ISMA **Online Translation** թարգմանական համակարգը: Այն ստեղծվել է ՀՊՃՀ-ի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, գիտաշխատողներ Էդուարդ և Սուրեն Մանուկյանների կողմից: Խումբը սկզբնական շրջանում զբաղվում էր տվյալների, ինչպես նաև գիտելիքների հենքերի, հեռակառավարման և արհեստական բանականության համակարգերի մշակումով: Կատարվել են տեքստային ինտելեկտուալ վերլուծիչների ստեղծման փորձեր: Դրանց հիման վրա 2000թ. սեպտեմբերից նախաձեռնվել են հայերեն-անգլերեն և անգլերեն-հայերեն թարգմանական համակարգի մշակումները:

Համակարգի աշխատանքի հիմքում ընկած է միջնորդ լեզվի գաղափարը: Այսինքն՝ մուտքային ինչ-որ *A* լեզվից մեկ ուրիշ

լեզու թարգմանություն կատարելու համար իրականացվում է *A* լեզվից թարգմանություն միջնորդ լեզվի և ապա նոր միջնորդ լեզվից կատարվում է թարգմանություն *B* լեզու: Միջնորդ լեզուն մի սխեմա է, որի գազաթները մուտքային նախադասության՝ բառերով արտահայտված հասկացություններ են, իսկ կապերը՝ շարահյուսական հարաբերությունները, որոնք գոյություն ունեն նախադասության անդամների միջև: Թարգմանական համակարգում գործող միջնորդ լեզուն կառուցվածքային որոշակի ընդհանրություններ ունի համացանցային UNL լեզվի հետ: Թարգմանություններ կատարելիս համակարգն օգտվում է թարգմանվող լեզվի շարահյուսության նկարագրությունից և գիտելիքների հենքից: Այդ հենքն արտացոլում է արտաքին աշխարհի առարկաները, հասկացությունները և դրանց միջև առկա հարաբերությունները: [www.translator.am](http://www.translator.am) կայքում թարգմանությունները կատարվում են հետևյալ լեզուներով՝ անգլերեն, հայերեն, արևմտահայերեն, ռուսերեն (բառ.), գրաբար (բառ.), լատիներեն (բառ.), թալիշերեն (բառ.), թուրքերեն (բառ.), գերմաներեն (բառ.), եզդիերեն (բառ.), քրդերեն (բառ.), ֆրանսերեն (բառ.), զազաերեն (բառ.), համշենահայերեն (բառ.), լեզգիերեն (բառ.):<sup>7</sup> Թարգմանական համակարգի օգնությամբ կարելի է կատարել բառերի և տեքստերի թարգմանություն: Պետք է նկատել սակայն, որ բառի թարգմանության ժամանակ ներկայացվում է դրա ոչ բոլոր իմաստների թարգմանությունը: Ամբողջական տեքստերի թարգմանության լեզվական որակը ևս ցածր է. նույնիսկ պարզ ընդարձակ նախադասությունները հիմնականում սխալ են թարգմանվում:

---

<sup>7</sup> Տե՛ս <http://translator.am/am/index.html>:

Էլեկտրոնային թարգմանություններից բացի՝ [www.translator.am](http://www.translator.am) կայքում հնարավոր է կատարել նախադասության շարահյուսական վերլուծություն: Նախադասության քերականական մշակումը ևս թերի է: Օրինակ՝ ձևաբանական վերլուծության ժամանակ ոչ բոլոր քերականական կարգերն են ներկայացվում: Երբեմն սխալ քերականական կարգ է վերագրվում խոսքի մասին: Հայերենում գոյականը չունի դեմք, իսկ համակարգը բոլոր գոյականները համարում է երրորդ դեմքի բառեր, առման կարգը բացառական հոլովում չի դրսևորվում. բացառական հոլովով դրված բառերը համարում է որոշյալ առումով բառեր:

[www.translator.am](http://www.translator.am) կայքն ունի նաև տառասխալների ուղղման հնարավորություն: Պետք է նշել սակայն, որ համակարգի սրբագրման ծրագիրը շատ դեպքերում կամ չի ուղղում սխալները կամ առաջարկում է ուղղման սխալ տարբերակներ:

Ընդհանուր առմամբ՝ [www.translator.am](http://www.translator.am) կայքը էլեկտրոնային թարգմանական համակարգի ստեղծման հետաքրքրական փորձ է, սակայն այն լիակատար թարգմանական համակարգ դարձնելու համար պետք է զգալի փոփոխությունների ենթարկել:

Էլեկտրոնային բառարաններից և թարգմանական համակարգերից բացի՝ ստեղծվել են iOS և Android օպերացիոն համակարգերով աշխատող սմարթֆոնների համար նախատեսված թարգմանական հավելվածներ: Դրանցում ներկայացված բառարանային նյութը ևս վերցված է տպագիր բառարաններից:

Հայերեն թարգմանական բոլոր համակարգերում պետք է կարևորել ոչ թե ընդգրկված լեզուների քանակը, այլ *թարգմանվող բառամիավորի բառահողվածի լիակատարությունը և թարգմանության որակի բարձրացումը*: Օրինակ՝ [102](http://www.transla-</a></p></div><div data-bbox=)

[tor.am](http://tor.am) կայքում գործող ISMA **Online Translation** թարգմանական համակարգը մեծապես կշահեր, եթե կրճատվեր համակարգում ընդգրկված մուտքային և ելքային լեզուների թիվը՝ սահմանափակվելով միայն աշխարհում և հայախոս հանրության շրջանում տարածված լեզուներով (անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, գերմաներեն, ռուսերեն և այլն): Ճիշտ կլիներ լեզուների ցանկից դուրս թողնել գրաբարը, լատիներենը, թալիշերենը, եգիպտերենը, քրդերենը, զազաերենը, համշենահայերենը, լեզգիերենը: Ընդունելի չէ թարգմանական համակարգում լեզվի պատմական զարգացման տարբեր փուլերը, բարբառները ներառել մուտքային և ելքային լեզուների թվում:

Կա ընդգծված անհամապատասխանություն տվյալ օտար լեզվի բառապաշարի համաժամանակյա վիճակի և հայերեն թարգմանական բառարաններում ներկայացված օտար լեզվի բառապաշարի միջև: Պետք է *համալրել-հարստացնել թարգմանական համակարգերի հենքում եղած բառարանները*, քանի որ դրանց ընդգրկած բառապաշարը խիստ սահմանափակ է և չի արտացոլում տվյալ օտար լեզվի բառապաշարի արդի վիճակը: Օրինակ՝ անգլալեզու էլեկտրոնային մամուլում գործածվող հսկայական թվով բառերի թարգմանությունը հայերեն թարգմանական բառերաններում չի տրվում: Սա նշանակում է, որ թարգմանական բառարաններում ընդգրկվելիք բառապաշարը պետք է որոշել ըստ այդ լեզվի ամենաօրինակելի լեզվական կորպուսի հիման վրա ստեղծված բառերի գործածության հաճախականության ցանկի:

Թարգմանվող բառամիավորի բառահոդվածը պետք է մշակել *ըստ այդ լեզվի օրինակելի էլեկտրոնային բառարանների*: Օրինակ՝ Բրիտանական ազգային կորպուսի (BNC) տվյալներով անգլերենի հաճախական գործածություն ունեցող գոյա-

կանների առաջին տասնյակում գտնվող **time** գոյականը Collins-ի էլեկտրոնային բառարանում ունի երկու տասնյակի հասնող իմաստներ, մինչդեռ անգլերեն-հայերեն առկա բոլոր տպագիր և էլեկտրոնային բառարաններում թարգմանվում է հիմնականում «Ժամ, ժամանակ» իմաստներով:

Կարևոր է նաև թարգմանվող բառամիավորի *բառահոդվածի ծավալի ընդլայնումը, բազմիմաստ բառերի բոլոր իմաստների թարգմանության, գործածության օրինակների, իմաստային (հոմանիշ, հականիշ) և հասկացական հարաբերությունների* ներկայացումը:

Հաշվի առնելով շատ լեզուներում բառերի գրության և արտասանության միջև եղած տարբերությունները՝ չպետք է անտեսել *թարգմանական համարժեքների արտասանության ներկայացումը*:

Այսպիսով՝ նպատակ չունենալով անդրադառնալ տպագիր կամ դրանց թվայնացման եղանակով ստեղծված բոլոր էլեկտրոնային բառարաններին և թարգմանական ծրագրերին՝ նշենք, որ, ինչպես տեսանք, հայերեն թարգմանական բառարաններում բառապաշարը և բառահոդվածի ներկայացման եղանակները հնացել են և չեն համապատասխանում բառարանագրության արդի պահանջներին: Հետևաբար, էլեկտրոնային թարգմանության արդի փուլում պետք է մեծապես կարևորել **էլեկտրոնային բազմալեզու թարգմանական նոր համակարգի** ստեղծումը՝ նախապես ուսումնասիրելով օտարալեզու հեղինակավոր թարգմանական բառարանների կազմության սկզբունքները և թարգմանական նորագույն տեխնոլոգիաները:



Hakobyan Frida – The problems of the electronic translation. - The article presents the problems of electronic translation in the Armenian linguistics. It is noted the Armenian paper and electronic dictionaries, translation systems do not match the requirements of the modern computational lexicography. Therefore, in the current phase of electronic translation, the creation of a new multilingual electronic translation system is emphasized. It's suggested to study electronic dictionaries of foreign languages and the latest trends of electronic translation.

Акопян Фрида - Проблемы электронного перевода. - В статье представлены проблемы электронного перевода в армянском языкознании. Отмечается, что в армянских бумажных и электронных словарях системы перевода не соответствуют требованиям современной компьютерной лексикографии. Поэтому важно подчеркнуть создание новой многоязычной системы электронного перевода. Предлагается изучать электронные словари иностранных языков и новейшие тенденции электронного перевода.

ՀԱՅԵՐԵՆ ՄԱՐԳԱՐԻՏ ԲԱՌԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայերենի բառապաշարում այսօր սովորական *մարգարիտ* բառը, որ «Նոր հայկազյան բառարան»-ում բացատրվում է «հատիկ («ուլն». հմմտ. *ուլունք*) ծովային խեցեմորթի. սերմն սատափի. գոհար բոլորչի կաթնորակ փայլուն» իմաստով, հայտնի է նախագրային ժամանակաշրջանից, օրինակ՝ «Վիպասանք»-ից, որից անցել է ոչ միայն Ս. Գրքին, այլև ինքնուրույն և թարգմանական գրականությանը<sup>1</sup>:

Այստեղ մեր բուն ուշադրության առարկան բառի՝ «Վիպասանք»-ի հայտնի հատվածում գործածությանը վերաբերող ծագման և ժամանակի հարցն է:

Հ. Աճառյանն, առհասարակ, բառը համարում է հետագայում գրառված, որն առարկելի է: Այդ բառին Հ. Աճառյանն անդրադառնում է նախ՝ «Արմատական»-ում (հ. 3, Ե., 1977, էջ 277-278), իսկ ավելի ուշ՝ առանձին հոդվածով (նույնը՝ «Լեզվի պատմության» 2-րդ մասում)<sup>2</sup>:

«Արմատական»-ում, բառի ստուգաբանությանը հաջորդում է հետևյալ լրացուցիչ բացատրությունը. «Հայերեն բառը առհասարակ դնում են (իմա՝ Կլապոտ, Բուազաք և ուրիշներ.Վ. Հ.) հունարենից. բայց որովհետև նա ավանդված է այնքան հին

---

<sup>1</sup> Գ. Աւետիքեան, Խ. Միրումելեան, Մ. Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 218: Տարակուսելի է, որ բառարանի վկայություններում չենք գտնում «Վիպասանք»-ի հատվածի օրինակը:

<sup>2</sup> Հ. Աճառյան, *Վիպասանական հայերեն* // «Գրական-բանասիրական հետախուզումներ», գիրք 1, Ե., 1946, էջ 163-173:

Ժամանակից, երբ դեռ հունարեն փոխառություններ չէին կարող լինել հայերենում, ուստի ավելի հարմար էմ կարծում դնել հռովմեական փոխառություն, քանի որ լատ. *margarita, margaritum* ձևերը դեռ Կիկերոնի և Տակիտոսի ժամանակից գործածական են» (ՀԱԲ, 3, էջ 277):

Գրեթե նույնը գտնում ենք հեղինակի հետագա աշխատանքում՝ փոքր-ինչ ավելի ընդարձակ բացատրությամբ. «Ջարմանալի է, որ այդ հնագույն ժամանակից ունենք նաև մի հունական փոխառյալ բառ (*մարգարիտ*), որ լեզվի պատմության հետ համաձայնեցնելու համար պետք է համարել ավելի հռովմեական փոխառություն, քանի որ լատինական *margarita, margaritum* ձևերը դեռ Կիկերոնի և Տակիտոսի ժամանակից գործածական են»<sup>3</sup>:

Այլ կերպ ասած՝ բառի ժամանակագրությունը բերվում է ավելի հետ, դիտվում է համեմատաբար ուշ փոխառություն: Աճառյանը նշում է, որ լատ. *margarita* բառը, իր հերթին, փոխառություն է հուն. *μαργαρίτης* ձևից («հոմանիշից»), որ հանդիպում է ոչ միայն այդ, այլև *μάργαρον, μαργαρις* և *μάργαρος* ձևերով: Այնուհետև, օգտագործելով Բուազաքի բառարանի տվյալները (որ ժամանակին օգտագործել է նաև Հյուբշմանը)՝ Աճառյանը նշում է բառի հետ նույնական ձևեր այլ լեզուներում. պրսկ. *marvārīd, murvārīd*, ասոր. *margānīṯā*, գոթ. *marikreitus*, որոնց սկզբնաձևը համարվում է հինդկ. *manīra* «ծաղիկների փունջ, ծաղկի կոկոն, մարգարիտ»<sup>4</sup>:

<sup>3</sup> Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, II մաս, Ե., 1951: Գ. Ջահուկյանը ընդունում է Աճառյանի ստուգաբանությունը (Տե՛ս «Հայերեն ստուգաբանական բառարան», Ե., 2010, էջ 515):

<sup>4</sup> Հ. Աճառեան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 3, Ե., 1977, էջ 277: Հմմտ. *Boisacq*, *Dictionnaire étymologique de la langue grecque*, 2-ème ed., Heidelberg-Paris, 1923, էջ 610:

Աճառյանը նշում է նաև, որ առաջինը Կլապրոտն է, որ հայ. *մարգարիտ* բառը համարում է հունարենից փոխառյալ, որն ընդունում են «Նոր հայկազյան բառարան»-ի հեղինակները, ինչպես նաև Հյուբշմանը<sup>5</sup>: Մակայն, ի տարբերություն Հյուբշմանի, որ փոխառությունը համարում է հունարենից, Աճառյանը, ինչպես վերը տեսանք, «ավելի հարմար է կարծում» համարել լատիներենից՝ այն բացատրությամբ, որ այն, կրկնում ենք, «ավանդված է այնքան հին ժամանակից, երբ դեռ հունարեն փոխառություններ չէին կարող լինել հայերենում» (նույն տեղում):

*Մարգարիտ* բառի ամենահին գործածությունը հանդիպում է «Վիպասանք»-ում, այդ մասին նշում է նաև Աճառյանը «Արմատական»-ում՝ տողատված բերելով համապատասխան հատվածը. «Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի, // Տեղայր մարգարիտ ի հարսնութեանն Սաթինկանն» (*Խոբ.*, էջ 179)<sup>6</sup>: Այս ամենով հանդերձ, բառի փոխառության ժամանակի վերին սահման պետք է դիտել ոչ վաղ, քան հայոց Արտաշես արքայի (մ. թ. ա. 189-160 թթ.) գահակալությունը, և ոչ ուշ, քան քրիստոնեական մշակույթի սկզբնավորումը հայ իրականության մեջ, քանի որ ինչպես այդ, այնպես էլ «Վիպասանք»-ի մյուս հատվածները, իբրև հայ բանավոր ստեղծագործության նմուշներ, առաջացած պիտի լինեն հեթանոսական տևական ժամանակում:

<sup>5</sup> **H. Hübschmann**, *Armenische Grammatik, Erste Teil; Armenische Etymologie*, Leipzig, 1895, էջ 363: Հմմտ. **М. Фасмер**, *Этимологический словарь русского языка*, т. II, М., 1967, էջ 572:

<sup>6</sup> Խորենացու Պատմության քննական բնագրում *մարգարիտ* բառը չունի գրբնագրական որևէ տարրնթերցում, այսինքն՝ բառը ձեռագրերում գործածված է անխաթար ձևով: Տե՛ս **Սովսես Խորենացի**, *Պատմութիւն հայոց*, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի, (նկարահանված հրատ.), Ե., 1991, էջ 179:

Ըստ այդմ, հայերենի նախագրային ժամանակաշրջանի պատմության նոր շրջանաբաժանում անցկացնելու դեպքում նկատում ենք, որ այդ ժամանակը պիտի լինի հայ-հնդիրանահունական առնչությունների շրջանը (մ. թ. ա. I հզր, կես – մ. թ. I-III դդ.), երբ, կարելի է ասել, բանավոր հյուսվում և պատմվում է հերոսական դեպքերի պատմությունը, մինչև որ գրի առնվեր առավելապես Խորենացու երկում<sup>7</sup>:

Այսպես, իմացական առումով անհետաքրքիր չէ *նսկի* և *մարգարիտ* բառերի հարաբերակցությունը դիտարկել հին աշխարհի պատկերացումների (առասպելական-միֆոլոգիական. այլաբանական) համատեքստում՝ հետևյալ մասնավորմամբ. ենթադրել, որ *նսկու* և *մարգարտի* [արականի և իգականի՝ + (պլյուս) // - (մինուս) (?)] այլաբանական սերտաճումը (կապակցումը կամ համակցումը) կար հին աշխարհի վերերկրային պատկերացումներում, ուստի, ըստ այդմ, նաև գիտակցության մեջ, և կարելի է մտածել, որ այն ունեցել է (վիպական առասպելականի) լեզվական նշանակում<sup>8</sup>:

*Մարգարիտ* բառի վերը բերված համեմատությունը՝ տարբեր տիպի լեզուներում, թույլ է տալիս ենթադրելու, որ հիշյալ կապակցումը կամ համակցումը եթե ոչ փառապանծ միասնության, ապա երախտաբեր (արգասավոր) միակցության խորհրդանիշ է եղել՝ այլաբանություն հին աշխարհի տարբեր ժողովուրդների (հնդեվրոպական և այլն) վիպական պատումնե-

---

<sup>7</sup> Ինչպես հայ-հնդիրանահունական, այնպես էլ նման մյուս շրջանների առանձնացումը հայերենի նախագրային ժամանակաշրջանի պատմության համար ոչ միայն անհրաժեշտ է, այլև միանգամայն արգասավոր և հեռանկարային:

<sup>8</sup> Հմմտ. **Գ. Խ. Մարգարյան**, *Պատմագիտական հետազոտություններ*, Ե., 2006, էջ 15-16:

րում, որի նշույլները կարելի տեսնել նաև հետագա ժամանակներում, օրինակ՝ Ս. Գրքում նույնպես այն ունի իր բուն և այլաբանական արտացոլումը:

*Մարգարիտ* բառը Ս. Գրքում գործածվել է 14 անգամ, որից 6-ում այն հարակցվում է *նսկի* բառին կամ կապակցվում նրա հետ՝ իբրև հիմքում ընկած ընդհանուր հասկացության գույգ (միաձույլ) նշանակում (*նսկի // մարգարիտ*):

Ընդ որում երեք անգամ հարակցությամբ (*նսկի ... մարգարիտ*). «ուր կային գոհոյք բազումք *նսկեղէնք* եւ արծաթեղէնք ընդելուզեալք *մարգարտաւք* եւ ակամբք պատուականաւք» (*Եսթեր*, Ա, 6), «մի՛ ի հիւսս *նսկեմանս* ընդելուզեալս *մարգարտով*, կամ ի հանդերձս պաճուճեալս» (Ա *Տիմոթ.*, Բ, 9), «Վա՛յ, վա՛յ, քաղաք մեճ, որ զգեցեալ էիր բեհեզս եւ ծիրանիս եւ որդան, *նսկեզօծս* եւ քարինս պատուականս եւ *մարգարիտս*» (*Յայտն.* ԺԸ. 16): Եվ նույնքան անգամ կապակցությամբ (*նսկի և մարգարիտ*). «եւ զգեցեալ էր զպատմուճան փառացն իւրոց, որ էր ընդելուզեալ *նսկուով եւ մարգարտով* եւ ակամբք պատուականօք» (*Եսթեր*, ԺԵ, 9), «Եւ Հողովեռն նստէր ի գահոյսն իւր, եւ էր փակեալ զնա վարագուրաւք շուրջանակի, զորս էր ընդելուզեալ *նսկուով եւ մարգարտով* եւ ակամբք պատուականաւք» (*Յուդիթ*, Ժ, 19), «Եւ կինն զգեցեալ էր ծիրանիս եւ կարմիրս, եւ զարդարեալ *նսկուով եւ մարգարտով* եւ ակամբք պատուականաւք» (*Յայտն.*, ԺԷ, 4):

Ի դեպ՝ հունարեն բնագրում *նսկի* և *մարգարիտ* բառերը գործածված ենք գտնում նույնպիսի հարաբերակցությամբ հմմտ. «ուր կային գոհոյք բազումք *նսկեղէնք* եւ արծաթեղէնք ընդելուզեալք *մարգարտաւք* եւ ակամբք պատուականաւք» (*Եսթեր*, Ա, 6) [հմմտ. “ κλίναί χρυσαί και άργυραί έπι λιθοστρώτου μαραγδίου λιθου και πιννίνου και παρίνου λίθου“

(Septuaginta, Stuttgart, 1935, 952-953)], «Եւ Հողովեանն նստէր ի գահոյսն իւր, որ էր փակեալ զնա վարագորտաւք շուրջանակի, գորս էր ընդելուզեալ *սուկուլ եւ մարգարտով* եւ ակամբք պատուականաւք» (*Յովիթ*, Ժ, 19) [= “και ήν Ολοφέρνης άναπαύομενος επί της κλίνης ούτου έν τω κωνωπίω, ό ην έκ πορφύρας και χρυσίον και σμαραγδου και λίθων πολυτελώ” (Septuaginta, Stuttgart, 1935, p. 991)].

Ս. Գրքի հուն. *սμαραγδίτου (մարգարտաւք), սμαραγδου (մարգարտով)* ձևերը հնչյունապէս հեռու են մարգարիտէ, այլև մարգարոն, մարգարիս և մարգարոս ձևերից (բուն արմատով՝ մոտ), որ կարող է առանձին քննութեան առարկա լինել, սակայն այստեղ նկատենք, որ բառարաններում և նախորդ ուսումնասիրողների աշխատություններում նշվող հուն. մարգարիտէ, այլև լատ. margarita (հիմնական) ձևերը հազիվ թէ կորցրած լինեն իրենց սեռանիշ (-ից, -ա) վերջավորությունները հայ. *մարգարիտ* ձևի վերածվելու համար (իրբն մեկից կամ մյուսից անմիջական փոխառություն), այլ ավելի հավանական է ենթադրել դրանցից յուրաքանչյուրի ինքնուրույն զարգացումը: Իսկ այս դեպքում ո՞րն է այն բուն աղբյուրը, որից ծագում (հնդեվրոպական նախաձևից) կամ փոխառվում (հնդեվրոպական մեկ այլ լեզվից, կամ ոչ հնդեվրոպական որևէ լեզվից) են այդ (հուն., լատ. հայ.) ձևերը. այստեղ է, որ մենք ենթադրություն ենք անում, այն է՝ բառը փոխառություն է ոչ հնդեվրոպական մեկ այլ լեզվից:

Այսպիսով, նկատենք, որ հայ. *մարգարիտ* բառի *-(ա)րիտ* ենթադրելի մասը համընկնում է ոչ միայն հուն. *-արիտէ*, լատ. *-arita* և պրսկ. *ārīd*, գոթ. *-reitus*, այլև ասոր. *-ānīthā*, վերջապէս հինդկ. *-ara* «բաղադրիչներին»<sup>9</sup>: Ըստ այսմ, մի կողմից՝ ունենք

<sup>9</sup> Տե՛ս՝ **Ն. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ. 3, Ե., 1977, էջ 277:

*t/d/θ* տարբերություն, իսկ մյուս կողմից՝ այդ «բաղադրիչներին» նախորդող հետնալեզվայինի *g/θ* տարբերակում (հմմտ. հուն., լատ., հայ., ասոր. *g*-ով ձևերը հինդկ. *θ*-ով ձևի հետ): Այնուհետև, եթե հին հայերենի բառապաշարում չունենք (ըստ գրաբարի բացատրական և ստուգաբանական բառարանների տվյալների) փոխառյալ *մարջան* (*մարճան*) «ծովաբույսի (կենդանու) կրացումից առաջացած մի տեսակ միացություն», ապա այն գտնում ենք միջին հայերենի գրական հուշարձաններում. «*Մարջան*, տե՛ս *մարճան*: Եւ են, որ բոյս են, որպէս *մարջանն* ի ծովն, և են ի կենդանոյ, որպէս *մարգարիտ*» (Հովհաննես Երզնկացի) և այլն<sup>10</sup>:

*Մարջան*-ը փոխառություն է արաբերենից, որի դեպքում արդի հայերենի բառարանները հղում են *բուստ* բառին. ըստ Մալխասյանցի՝ «*բուստ*, *բիստ*. պարսկ. *busad*. պոլիպների կրացած՝ ծառի նման ճյուղավորված, սպիտակ, կարմիր կամ սև մարմինը, որը ծովի տակից որսալով՝ նրանից զարդարանքներ են պատրաստում. *մարջան*», իսկ ըստ Աղայանի՝ «ծովային կենդանի, պոլիպների միտեսակը. այդ կենդանիների կրացած մարմիններից գոյացած սպիտակ, կարմիր կամ սև գույնի քար, որից հատուկ մշակությամբ զարդարանք են պատրաստում, *մարջան* (կորալ)»<sup>11</sup>: Բառը, իր հերթին, կարծում ենք, ծագումով առնչվում է ասոր. *margānīθā* ձևին (հմմտ. արաբ. *margān*. ըստ Մալխասյանցի):

Եվ եթե մեր այս համեմատությունը և ըստ այդմ՝ ենթադրությունը հավանական են, ապա պետք է նաև կարծել, որ հայերենի *մարգարիտ* բառն ունի հնագույն ծագում, որ հասնում

<sup>10</sup> Ռ. Ղազարյան. *Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան*, Ե., 2009, էջ 504:

<sup>11</sup> Ստ. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, հ. I, Ե., 1944, էջ 393:

Բ. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, էջ 209-210:



Է հնդեվրոպական-սեմական առնչությունների ժամանակները: Իսկ դա, իրոք, առանձին քննության առակա է ոչ միայն, այսպես կոչված, միջընտանիքային (հնդեվրոպական-սեմական) առնչությունների առումով, այլև տարբեր ընտանիքների ներսում դրանց՝ առանձին լեզուներում (հունարեն, լատիներեն, հայերեն, իրանական լեզուներ և այլն) ժառանգորդական ձևերի ինքնուրույն կամ փոխազդեցական զարգացման տեսանկյունից:

Hambardzumyan Vazgen - On the etymology of the Armenian word *մարգարիտ* [margarit] “pearls”. - The oldest usage of the word "margarit" is found in "Vipasank". Therefore, the upper limit of the time of word borrowing should be viewed not earlier than the enthronement of the Armenian King Artashes (189-160 BC), and not later than the origin of the Christian culture in the Armenian reality. That word is the same as the Arab. coral, which has been ignored by previous researchers. And if this hypothesis is probable, we must also suppose that the Armenian pearl has an ancient origin that dates back to the Indo-European-Semitic relationships.

Амбарцумян Вазген - Об этимологии армянского слова *մարգարիտ* [margarit] “жемчуг”.- Самое древнее употребление слова «маргарит» встречается в «Випасанк». Поэтому верхний предел времени заимствования слова следует рассматривать не раньше, чем воцарение армянского царя Арташеса (189-160 до н.э.), и не позднее возникновения христианской культуры в армянской действительности. Это слово то же самое, что и араб. слово коралл: на это предыдущие исследователи не обращали внимания. И если эта гипотеза вероятна, мы должны также предположить, что армянское слово жемчужина имеет древнее происхождение и достигает времени индо-европейско-семитских отношений.

## Հասմիկ Հնայակյան

(ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ)

### ՄՕՄԻ ԲՈՒՄԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ<sup>1</sup>

«Սօս»-ը «ի» հոլովման բառ է, «անտառային բարձր ծառ, չինար», հանդիպում է V դարի պատմագրությունից սկսած, իսկ նրանից կազմված «սօսանուէր» բառը նշանակում է «հին Հայոց Սօսեաց սրբազան անտառին ձօնուած»: «Սօսի» բառը, ըստ Հր. Աճառյանի, ստույգ ստուգաբանություն չունի: Առկա է նաև սօս՝ ածականը, որ փոխաբերական իմաստով նշանակում է «պերճ, հպարտ, սեգ»<sup>2</sup>: Հր. Աճառյանի մոտ առկա է նաև «սօս»՝ «պայծառ գույն» ածականը, որը համարվում է անստույգ բառ,<sup>3</sup> և որի համար Նոր բառագիրք Հայկազյան լեզուի բառարանը տալիս է հետևյալ վկայությունները. «Եւ այս ինչ է նշան հողոյն. կանաչ և կապոյտ, սև դեղին, սօս և սպիտակ»: Ինչպես նաև «սօս» ածականը մեկնաբանվում է որպես «պայծառ գույնով, թերևս ի գոյն սպիտակ կաղամախի»: Այստեղ առկա է նաև «սօս» բառի մեկ այլ իմաստ՝ սեգ, պերճ, պայծառ և, իհարկե, հիմնական իմաստը՝ որպես բուսանուն, որ նշանակում է՝ «բարտի, կաղամախի սպիտակ»<sup>4</sup>:

Նոր բառգիրք հայերեն լեզվի բառարանում «սօսի» բառը հանդիպում է թե որպես բուսանուն՝ «Բարտիի նման ծառ, որ և

---

<sup>1</sup> Հռոլվածը հրատարակվում է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ 18Տ-6Ա139 թեմատիկ ֆինանսավորման գիտական թեմայի շրջանակներում:

<sup>2</sup> Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. IV, Ե., 1979, էջ 290:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Գ. Աւետիքեան, Խ. Միրումելեան, Մ. Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, Վենետիկ, 1837, էջ 768:

կըստի սպիտակ ծառ», թե որպես ածական՝ «սօս՝ հպարտ, սեգ, սօսի ծառի պէս փառաւոր, պայծառ»<sup>5</sup>: Բառարան գանձարան հայերէն լեզուի բառարանում «սօսի» բուսանունը նշանակում է «լայնատերեւ, գեղեցիկ տերեւներով բարձր ծառ», իսկ «սօս» ածականը նշանակում է՝ «սեգ, հպարտ»<sup>6</sup>: Մտ. Մալխասյանցի հայերենի բացատրական բառարանում առկա է թե բուսանունը. «սօսի» նշանակում է կնձենիների կարգին պատկանող շքեղ ծառ, մոխրագույն կեղևով, ինչպես նաև առկա են երկու տարիմաստ «սօս» ածականներ, որոնցից մեկը նշանակում է. «մի անհայտ պայծառ գույն», իսկ մյուսը՝ մեկնաբանվում է որպես բարձրահասակ, պերճ, չինարի հասակով, փոխաբերական իմաստով օգտագործվում է «սօս հասակ», «սօս երիտասարդներ», սեգ, հաղթանդամ<sup>7</sup>: «Մոսի» բառը օգտագործվում է նաև ժամանակակից հայերէնում և նշանակում է սոսազգիների ընտանիքին պատկանող ծառ, չինարի, իսկ փոխաբերական իմաստով կիրառվելիս նշանակում է՝ բարձրահասակ, բարձր ու պլացիկ հասակով<sup>8</sup>: Ինչ վերաբերում է բառի ստուգաբանությանը, ապա, ինչպես նշվեց վերևում, այն ստույգ չէ, ըստ Գ. Ջահուկյանի, կասկածելի է «սաւս» հայերէն բառի կապը հյուսիսսլավոնական *sosna*, ռուս *соча* եղևնի բառի հետ: Իսկ «սաւս» ածականի, որ նշանակում է «մի պայծառ գույն», ծագումը ևս անհայտ է<sup>9</sup>:

Եթե ամփոփենք, ապա հայերէնում առկա է «սօսի» բուս-

<sup>5</sup> Մ. Գաբանաձեան, Նոր բառագիրք հայերէն լեզուի, Կ. Պոլիս, 1910, էջ 1227:

<sup>6</sup> Յովհաննէս Թովմաս Գայայեան, *Բառարան գանձարան հայերէն լեզուի*, Գահիրէ, 1938, էջ 463:

<sup>7</sup> Մտ. Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան*, Ե., 1944, էջ 285:

<sup>8</sup> Էդ. Աղայան, *Արդի հայերէնի բացատրական բառարան*, Ե., 1976, էջ 1318:

<sup>9</sup> Գ. Ջահուկյան, *Հայերէն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 673:

անուն, «սօս» ածական, որ մի դեպքում նշանակում է՝ սեգ, հպարտ, մյուս դեպքում՝ պայծառ գույն:

Սեգ, հպարտ իմաստով «սօս» ածականը գործածված է Անկանոն Գիրք Կտակարանացում տեղ գտած «Տեսիլ Ենովքայ Արդարոյնեում, ուր այն հանդիպում է հետևյալ նախադասութեան մեջ. «Եւ ահա ի վերայ ծովուն արծուի մի սօս և բարձրաթռիչ, ութ թեւք և երեք գլուխք ի վերայ նորա, և կայր ի վերայ ջուրց ծովուն և դիտէր ընդ հարաւ...»<sup>10</sup>: Այստեղ «սօս» բառը կարելի է ակնհայտորեն մեկնաբանել որպէս «սեգ, հպարտ»: Այս ածականը միանգամայն բնորոշ է այնպիսի բարձր և սեգ ծառերի համար, ինչպիսին է սոսին: Բուսանունները հաճախ են իրենց անվանումը ստացել գունային, որակական և արտաքին հատկանիշների արդյունքում կամ ընդհակառակը՝ տվյալ բուսանունը կարող է հիմք հանդիսանալ մի շարք ածականների համար: Հայտնի է, որ «սօսի» բուսանունը հիմք է հանդիսացել նաև Սոսանվեր Անուշավանի անվան համար, որի պաշտամունքը կապվում էր սրբազան սոսյաց անտառներին, ըստ Խորենացու հաղորդման:

Ակնհայտ է, որ սոսին սրբազան ծառ է եղել և նրա պաշտամունքը հնուց ի վեր տարածված է եղել Հայկական լեռնաշխարհում:

Հայտնի է, որ ուրարտական ժամանակաշրջանից սկսած, թերևս ավելի վաղ ևս, սոսի ծառը ունեցել է հատուկ պաշտամունքային դեր՝ համարվելով Խաղի աստծո սրբազան ծառ: Ուրարտական հավատալիքներում ընդհանրապէս շատ կարևոր դերակատարում ունի կենաց ծառի պաշտամունքը, որը

---

<sup>10</sup> *Անկանոն գիրք Հին Կտակարանաց*, Վենետիկ, 1896թ. («Թանգարան հին և նոր նախնեաց» Ա), էջ 378:

կարելի է դիտարկել ուրարտական պատկերագրությունից: Եվ ուրարտական պատկերագրության մեջ «սրբազան ծառի» բազմակի հանդիպող սիմվոլիկ պատկերումները Պ. Կալմայերին հանգեցրել են այն եզրահանգման, որ դրանց մի տեսակը հնարավոր է հայկական սրբացված սուսի ծառերի նախատիպը լինել<sup>11</sup>: Ե. Գրեկյանը, հենվելով Կալմայերի և այլոց տեսակետների վրա, անմիջական կապ է տեսնում նաև Խալդիի հիմնական սրբարանի՝ «սուսի» տաճարի և կենաց ծառի միջև՝ չբացառելով, որ բուն տաճարն ինքը կարող է ընկալված լինել որպես «կենաց ծառ»<sup>12</sup>: Մենք կհավելեինք, որ ակնհայտ է Խալդի աստծուն նվիրված ուրարտական պաշտամունքային վերոնշյալ կառույցների՝ «սուսիների» անվանական նմանությունը սուսի բուսանվանը, հատկապես եթե վերոնշյալ գիտնականները փաստում են նրանց միջև առկա պաշտամունքային կապի մասին:

Հարկ է նշել, որ հայերենում առկա վերոնշյալ «սուս» ստույգ ստուգաբանություն չունեցող ածականի համար «պայծառ գույնով» մեկնաբանությունը, որը Նոր հայկազյան բառարանում ենթադրաբար բխեցվում է «սուսի» բուսանունից՝ «Թերևս ի գոյն սպիտակ կաղամախի»<sup>13</sup>, շատ հավանական կարող է լինել, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ այլ հին արևելյան լեզուներում, օրինակ, արքադերենում՝ «մաքուր, փայ-

---

<sup>11</sup> **П. Кальмейер**, *Символ Халди, Древний Восток*, 4, Е, 1993, с. 184. Ի դեպ, ոչ միայն սուսի ծառերի արձագանքն է, ըստ Կալմայերի, պահպանվել ուրարտական պաշտամունքում, այլ նաև պաշտամունքային աշտարակաձև ուրարտական շինությունների և Խորենացու ու Բուզանդի մոտ հիշատակված Արայի դին աշտարակին դնելու փաստի հետ ևս որոշակի նույնություններ է դիտարկում, նույն տեղում, էջ 188, прим. 22:

<sup>12</sup> **Ե. Գրեկյան, Մ. Բադալյան, Ն. Տիրացյան, Ա. Պետրսյան**, *Բիսյնիլի-Ուրարտու, աստվածներ, տաճարներ, պաշտամունք*, Ե. Գրեկյան, Ուրարտուի պետական դիցարանը, էջ 21:

<sup>13</sup> **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ. 4, էջ 290:

լուն ծառ» հասկացությունը համարժեք է «սրբազան ծառ» հասկացությանը<sup>14</sup>: Աղբյուրների ուսումնասիրությունից պարզվում է, որ սուսիների պաշտամունքը, սկիզբ առնելով վաղնջական ժամանակներից, հարատևել է Հայաստանում անգամ հետքիստոնեական փուլում: Ղ. Ալիշանը, խոսելով սուսի ծառի պաշտամունքի տարածվածության մասին հայերի շրջանում, հղում է ջուղայեցի մի վարդապետի, որ գրել է «մեծամեծ ծառոցն համբուրեն, եթե Սուրբ կայ ի վերայ», և նշում է, որ մինչև այժմ էլ այդ մեծամեծ ծառերի գտնված վայրերում կան նաև դրանց չափից ավելի պատվի արժանացնողներ<sup>15</sup>:

Խորին շնորհակալությամբ ուզում ենք անդրադառնալ այստեղ նաև Վ. Կատվայանի մեկ բանավոր դիտարկմանը, ըստ որի, Փավստոս Բուզանդի մոտ պահպանվել է Միւսն մի վայրի հիշատակություն՝ Գնելին մահապատժի ենթարկելու մասին պատմող հատվածում, որ շատ հետաքրքրական մեկնաբանությունների հիմք կարող է հանդիսանալ: Տեքստը հետևյալն է. «Իսկ զպատանեակն Գնել առնուին գնային մօտ ՚ի Միւսն արքունի, և անդէն կառափէին ՚ի սարակ լերինն, որում տեղւոյն Լսին անուանեալ է, մօտ յորմածս արգելոցացն որսոյն էրիոցն, ընդդէմ մուրտաստանին աղբերացն բազմոցացն արքունի, յանդիման բանակատեղ բնին»<sup>16</sup>: Այստեղ հետաքրքրական է այն հանգամանքը, որ գրաբարայան բնագրում առկա Միւսն արքունիի փոխարեն արևելահայերեն թարգմանության մեջ առկա է ուղղակի արքունի որսատեղի բառը՝ առանց ծա-

---

<sup>14</sup> **Г. Комороци**, К символике дерева в искусстве древнего Двуречья, Древний Восток и мировая культура, Москва, 1981, с. 50-51.

<sup>15</sup> **Ղ. Ալիշան**, *Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը*, Ե., 2002, էջ 43:

<sup>16</sup> **Փավստոս Բուզանդ**, *Հայոց պատմություն*, բնագիրը Ք. Պատկանյանի, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, ԺԵ, էջ 188:

նոթագրությունների և մեկնաբանության: Մակայն վայրի նկարագրությունը՝ բարձր լեռան վրա, շրջակայքում առկա է աղբյուր, արքունի բազմոցներ, որսատեղի, այս ամենը հնարավորություն է տալիս ենթադրելու ինչ որ հնագույն պաշտամունքավայրի մասին, իսկ անվանումը իսկապես հիշեցնում է ուրարտական «սուսի» տաճարների անվանումը: Մա, իհարկե, սոսկ ենթադրություն է, որը հետագա ճշգրտման կարիք ունի:

Վերադառնալով բուն նյութին՝ նշենք, որ մեր հոդվածներից մեկում, համեմատական առասպելաբանական նյութի քննարկման արդյունքում, փորձել ենք ցույց տալ Սոսանուէր դիցանվան առաջին՝ Սոս-Մաւս բաղադրիչի և խուռիական Շավուշա-Շավուշկա դիցանունների հնարավոր ստուգաբանական և առասպելաբանական կապերը<sup>17</sup>: Եվ այս գուգահեռները անելիս հանդիպեցինք խուռիական Շավուշկա աստվածուհու անվան ստուգաբանությանը, որը կատարել էր խուռիերեն լեզվի հայտնի ուսումնասիրող Ի. Վեգները: Նրա կարծիքով, խուռիական Շավուշկա դիցանվան հիմքում հնարավոր է ընկած լինի *šavoši* խուռիերեն ածականը, որը թարգմանվում է «երևելի, բացառիկ, մեծ, վեհ, վեհանձն, հզոր, ուժեղ»<sup>18</sup>: Անկախ մեր առասպելաբանական դիտարկումներից, որոնք հետաքրքիր գուգահեռների հնարավորություն են ստեղծում, ակնհայտ է հայերեն սոս՝ «սեգ, հպարտ» ստույգ ստուգաբանություն չունեցող ածականի և վերոնշյալ *šavoši* խուռիական ածականի իմաստաբանական նմանությունը: Ելնելով այն հանգամանքից, որ հա-

---

<sup>17</sup> **Չ. Հմայակյան**, *Խուռիական Ša(w)uška աստվածուհու անվան և կերպարի դրսևորումները հայկական առասպելական և լեզվական նյութերում*, Մերձավոր և Միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XVIII, Ե., 2011, էջ 239-252:

<sup>18</sup> **I. Wegner**, *Der name der Ša(w)uška, Studies on the Civilization and Culture of Nuzi and Hurrians*, Winona Lake: Eisenbrauns, 1995, S. 117-119.

յերենում առկա «սօս» ածականը՝ պերճ, սեգ, հպարտ՝ ստույգ ստուգաբանություն չունի՝ առաջարկում ենք այն բխեցնել վերոնշյալ խոռոիական *šavosi*՝ ածականից, որը թարգմանվում է «երևելի, բացառիկ, մեծ, վեհ, վեհանձն, հզոր, ուժեղ»<sup>19</sup>: Իսկ վերոնշյալ «սօս» ածականը իր հերթին հայերենում հիմք կարող է հանդիսանալ այնպիսի բարձր ու սեգ ծառերի անվան ծագման համար, ինչպիսին է «սօսի» բուսանունը:

Ամփոփելով՝ կարելի է առաջադրել հետևյալ վարկածները.

1. Հայերեն «սօս»՝ պերճ, հպարտ, սեգ ածականը հնարավոր է ծագել է խոռոիական *šavosi*՝ «երևելի, բացառիկ, մեծ, վեհ, վեհանձն, հզոր, ուժեղ» ածականից՝ հնարավոր է նաև ուրարտերենի միջնորդությամբ:
2. Հայերենի «սօսի» բուսանունը հավանաբար ծագել է վերոնշյալ «սեգ, հպարտ» հայերեն ածականից, որը միանգամայն բնութագրական է սոսու նման բարձր ու մեծ ծառերի համար:
3. Հայերենում առկա «սօս»՝ «պայծառ գույն» անահայտ ստուգաբանությամբ ածականը հավանաբար ծագել է «սօսի» բուսանունից, քանզի այլ հին արևելյան լեզուներում և ավանդույթներում ևս սրբազան ծառերը բնութագրվում են նաև որպես փայլուն, պայծառ ծառեր:
4. Հնարավոր է ուրարտական «սուսի» կոչվող տաճարների և հայերենում առկա «սօսի» բուսանվան ստուգաբանական կապերը, քանզի ուսումնասիրողները դիտարկել են ուրարտական «սուսի» տաճարի և կենաց ծառի կապը, ինչպես

---

<sup>19</sup> Նույն տեղում:



նաև համապատասխանաբար, ուրարտական կենաց ծառերի և սուսի ծառի հնարավոր կապը:

Hmayakyan Hasmik- An Etymological Attempt of Plant Name *Sōsi*.  
The author discusses all existing etymologies and interpretations of the plant name *sōsi* in Armenian and adjective *sos* with a few meanings. By summarizing the author arrived to a number of conclusions: A) The adjective *sos* in Armenian (‘splendid’, ‘proud’, ‘high’) may derive from Hurrian adjective *šavoši* (‘famous’, ‘noble’, ‘enormous’, ‘gorgeous’, ‘powerful’, ‘strong’); B) The Armenian plant name *sōsi* probably derived from the Armenian adjective meaning ‘high’, ‘proud’ that can be undoubtedly describe such a high and large tree as plane-tree (*Platanus*); C) The Armenian adjective *sōs* (a bright color) with unknown etymology probably derived from the plant name *sōsi*, as in languages and traditions of the Ancient East, the saint tree species are characterized as ‘shiny’, ‘bright’; D) It’s also possible to notice etymological connections of the Urartian *susi* (a type of temple) with the Armenian plant name *sōsi*.

Амаякян Асмик –Попытка этимологии слова *Sōsi*. - Автор рассматривает все существующие этимологии и интерпретации названия растения *sōs*. Подводя итоги, автор пришел к нескольким заключениям а)Армянский *sōs* («роскошный», «гордый», «возвышенный») возможно произошел от хурритского слова *šavoši* («известный», «уникальный», «большой», «возвышенный», «великодушный»); б)Название растения *sōsi* в армянском вероятно произошло от прилагательного «гордый, горделивый», который вполне может относиться к платанам (*sōsi*) - высоким и большим деревья; в)Прилагательное неизвестного происхождения *sōs* в армянском вполне возможно, что произошло от названия растения *sōsi*; г)Возможно также проследить этимологические связи между урартским названием типа храма *susi* и названием растения *sōsi* в армянском языке.

**Հովհաննիսյան Լավրենտի**  
(ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

**ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ ԵՎ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ  
ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ**

**Խծուծ:** Բառի ամենահին վկայությունը Աստվածաշնչից է. «Եղեն կարքն ի բագուկս նորա իբրև զխճուծ յորժամ ի հուր հոտոտիցի» (Դատ., ԺԵ, 14): Գրաբարի բառարանում բառը բացատրվում է. «Խոշոր մասունք վշոյ զգելոյ, կամ կանեփի սանտրելոյ, որ լիցի խցան և պատան պէս-պէս»<sup>1</sup>: Նույն բացատրությունն է նաև ստուգաբանական բառարաններում. «Գզած վուշի կամ սանտրած կանեփի թափթփուքը», «զգվածք, զգած վուշի կամ կանեփի մնացուկ»<sup>2</sup>: Բնագրային օրինակներից և այլ լեզուներով թարգմանված զուգահեռներից ակնհայտ է, որ խրճուծը «վառված, մոխրացված թել, պարան» բառն է: Հմմտ. ռուս. *Веревки бывшие на руках его сделались как перегоревший лён*: Աշխարհաբար թարգմանությունը՝ «նրա բագուկների վրայի պարանները դարձան կրակից այրված թելի նման»:

Մերժելի է *խճուծ*-ի բառարանային բացատրությունը, ինչպես նաև *բուսանուններ* իմաստային խմբում ներառելը:

**Խոլորձ(ն):** Այս բուսանունը առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում տարբեր լեզուների համապատասխա-

---

<sup>1</sup> *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ. I, Վենետիկ, 1836, էջ 947 (այսուհետև՝ ՆՀԲ):

<sup>2</sup> **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ. II, Ե., 1973, էջ 375 (այսուհետև՝ ՀԱԲ): **Գ. Ջահուկյան**, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 334 (այսուհետև՝ ՋՀԱԲ):

նակների բառակազմական և բառիմաստային ընդհանրությունների տեսանկյունից:

Բառի հոմանիշն է *աղվեսաձու(ք)*-ը, որի երկրորդ բաղադրիչը՝ *ձու(ք)*, առկայանում է նաև այլ լեզուներում: Հուն. *օրչիօ* «ամորձի, ձու, խոլորձ», ռուսերենում՝ *ятрышник*, որի արմատն է *яτρο* «ձու»<sup>3</sup>:

Պարսկերենում այդ բուսանունը կոչվում է *robāh-torob*, *robāh* «աղվես», *torob* «բողկ, նան՝ ձու»: Միջինհայերենյան գրավոր աղբյուրներում կա նաև այդ բուսանվան արաբերեն անվանումը. «Խուսաթ ըլ սայլապ, որ է աղուեսաձուքն»<sup>4</sup>:

*Աղվեսաձու(ք)* – հայերենում ունի նաև մի շարք հոմանիշներ. *ձվատակ, որձամատ, այծատունկ, կտրոտ տակ*<sup>5</sup>:

*Ձու* հասկացության հետ կապը, անշուշտ, աղերսվում է այդ ծաղկի կոկոնի հետ, որը ձևաձև է:

*Խոլորձ(ն)*՝ ըստ Գ. Ջահուկյանի. թերևս հին բարդություն է, «որի մեջ առկա է հուն. *օրչիօ* «ամորձի, ձու, խոլորձ» բառին ցեղակից *որձ* (հ.-ե. \**orgh-*)բաղադրիչը» (ՋՀՄԲ, էջ 338):

*Որձ* «արու» բառն էլ, անշուշտ, կապվում է *ձու* բառի հետ հմմտ. *ամորձի, ամորձատել*:

*Որձ*-ը նաև մի քանի այլ բուսանունների բաղադրիչ է. *որձախոտ, որձարմատ, որձաքիստ...* Այդ կարգի բուսանուններում *որձ*-ը կարող է ունենալ «ձու», «ձվի նման» իմաստը, այլ

<sup>3</sup> **М. Фасмер**, *Этимологический словарь русского языка*, т. 4, М., 1987, стр. 569. **В. И. Даль**, *Толковый словарь живого великорусского языка*, т. 4, М., 2008, стр. 682.

<sup>4</sup> *Ամիրտովլաթ Ամասիացոյ Անգիտաց անպէտ կամ բժշկական նիւթոց*, Վիեննա, 1926, էջ 26:

<sup>5</sup> **Ռ. Ղազարյան**, *Բուսանունների բառարան*, Ե., 1981, էջ 42:

դեպքում՝ «անպտուղ»: Վերջինիս մի վկայություն կա «Գիրք վաստակոց»-ում. «Որ մօտ ի ծաղիկն լինի կեցեալ գործուն և ի յեզ արմաւենի ծառն կախէ, նա լավ և քաղցրահամ պտուղ առնէ»<sup>6</sup>:

**Խոլորձ(ն)** ՀԱԲ-ում ստուգաբանված չէ, իսկ Գ. Ջահուկյանը փաստորեն ստուգաբանում է բառի երկրորդ՝ *որձ* բաղադրիչը: *Խոլորձ*-ի *խոլ*-ը, թերևս, գրաբարյան *խոյլ* «ուռուցք, պալար» բառն է, միջին հայերենում այդ արմատով կա *խոլային* «այտուցված»<sup>7</sup>, Արցախի բարբառում՝ խուլխուլ «անցավ ուռուցք, պալար» նաև «փայտի վրա հանգույց, ոստ»<sup>8</sup>:

*Խոյլ*-ը բնիկ հայերեն բառ է, հ. -ե. \*kheul- «ուռուցք» (ՋՀՄԲ, էջ 40): Այս նույն արմատն է նաև *խաղալրտ* «պալար, ուռուցք» բառում:

**Հուշտ:** Բառը հանդիպում է հիմնականում *հուշտ անել* «խըրտնեցնել», *հուշտ լինել* «խրտնել, տեղից վեր թռչել» հարադրություններում և գործածական է խոսակցական լեզվում ու միշտ բարբառներում:

Էդ. Աղայանը *հուշտ*-ը համարում է ձայնարկություն<sup>9</sup>:

Բառը ձայնարկություն է համարում նաև Ալ. Մարգարյանը. «*Հուշտ* բառը... ծագում է, անշուշտ, մեկին (կենդանու կամ մարդու) հանկարծակի քշելու-հեռացնելու, խրտնեցնելու նպատակով արտաբերված *հուշտ//հուշտ* ձայնից, որը անկախաբար

---

<sup>6</sup> Գիրք Վաստակոց. *Թարգմանությունն նախնեաց յարաբացի լեզուէ, Վենետիկ, 1877, էջ 157:*

<sup>7</sup> Ռ. Ղազարյան, Շ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009, էջ 326:

<sup>8</sup> Ա. Մարգարյան, *Ղարաբաղի բարբառի բառարան*, Ե., 2019, էջ 285 (այսուհետև ՂԲԲ):

<sup>9</sup> Էդ. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, էջ 912:

հենց միջարկության կամ ձայնարկության (իմա՝ խրտնեցնելու բացականչության) նշանակությունն է արտահայտում»<sup>10</sup>:

Կարծում ենք՝ բառի ձայնարկությունն համարելը այնքան էլ համոզիչ չէ, որովհետև՝

ա) ձայնարկությունները *լինել* բայով հարադրություն կազմել չեն կարող (ասում են՝ *վայ անել, ախ անել, օֆ անել*, բայց ոչ՝ *վայ լինել, օֆ լինել, ախ լինել...*)

բ) *հուշտ* բաղադրիչով կազմված են նաև այլ բառեր. *հուշտոռիկ//հուշտոռիկ* (1. խրտնոդ. 2. թեթևսուլիկ, թեթևամիտ), *հուշտհուշտիկ* «մի չնչին բանից հուշտ եղող՝ խրտնոդ (ն.ս.)»:

Արցախի (Ղարաբաղի) բարբառում *հուշտ(ը)ռիզ*-ի հոմանիշն է *խրթնեզ*՝ ածականը. «Կըխտարը խըրթնեզ հեյվան ա» (ՂԲԲ, էջ 283):

Վերոհիշյալ դիտարկումները հաշվի առնելով՝ առաջարկում ենք *հուշտ*-ի ստուգաբանության նոր վարկած:

Գրաբարի *յոյզ*- արմատը ունի «շփոթություն, աղմուկ» իմաստները (ՀԱԲ, III, 403-404): Այդ արմատով է կազմված և *յուզել* բայը, որը բազմիմաստ է, նշանակում է նաև «շարժել, շփոթել, խարբալել...» (ՆՀԲ, II, էջ 374):

*Յոյզ*-ը միջին իրանական լեզուներից կատարված փոխառություն է: Պարթևերենում այդ բառի դերբայական ձևն է *յստ*՝ «անհանգիստ շարժումներ անել, շփոթվել»<sup>11</sup>:

Իրանական բայերի այդպիսի մի ձևափոխության այլ օրինակ ևս կա. *յազ*, գրաբարում՝ *յազեմ*՝ «զոհ մատուցել», նույն ար-

<sup>10</sup> Ալ. Մարգարյան, *Ստուգաբանություններ*, Ե., 2015, էջ 125:

<sup>11</sup> *Основы иранского языкознания, среднеперсидские языки*, М., 1981, стр. 215.

մատի *yašt* դերբայական ձևը առկա է գրաբար *յաշտ* «գոհ», *յաշտ անել* «գոհ մատուցել»: Այդ արմատն է և *Յաշտիշատ* տեղանվան մեջ:

Նշված բառերը (*y*-ով սկսվող) փոխառության սկզբնական շրջանում նույնպես ունեցել են *j* հնչյունը, հետագայում ձայնավորից առաջ գրվող *j*-ն արտասանվել է *h*: *Յուշտ*-ն էլ արտասանվել է *հուշտ* (հմմտ. *յաւեստ* «հավետ», *յաւէժ* «հավերժ», *յովատակ* «հովատակ» (նշվածները իրանական փոխառություններ են):

Մի խուբով՝ *յուշտ*-ը ձայնարկություն չէ:

Հավելենք, որ հայերեն բացատրական մեկ այլ բառարանում *հուշտ*-ը համարվում է գոյական<sup>12</sup>:

**Ձիաստաց:** ՆՀԲ-ում որպես գլխաբառ նշված են *ձիաստան*, *ձիաստանի*, *ձիաստաց* «ազգ չարատանջ մեղուաց կամ ճանճից ձիոց, պիծակ, խումբ պիծակաց»: Բառը վկայված է Աստվածաշնչում. «Եւ առաքեաց յառաջագոյն քան զձեզ զձիաստացն... (Յեսու, ԻԴ, 12): «Եւ եղիցի յաուր յայնմիկ շարժեցէ Տէր զճանճիոնն, որ տիրեցէ յայնկոյս գետոյն Եգիպտացոց, եւ ձիաստացն՝ որ է յերկրին Ասորեստանեայց (Եսայի, Է, 18):

Աստվածաշնչի (Հին կտակարանի) մեկ այլ գրքում *ձիաստաց*-ի փոխարեն *պիծակ* է «Եւ առաքեցից առաջի քո զպիծակ, և մերժեցէ զԱմովրիացին... (Ելք, ԻԳ, 28):

Յովհան Ոսկեբերանը գրում է. «Եբրայեցին և ասորին ոչ մեղուս ասեն, այլ ձիաստաց»<sup>13</sup>: Ակնհայտ է, որ *ձիաստաց*-ը,

---

<sup>12</sup> *Ճամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, Ե., 1974, էջ 400:

<sup>13</sup> *Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն Եսայեայ մարգարէի*, Վենետիկ, 1880, էջ 92:

խայթող միջատ է: Աստվածաշնչի բոլոր վկայությունների հունարեն համապատասխանակն է *σφοκεις*, լատիներեն՝ *crabrones*: **Ձի** բաղադրիչը չկա և ռուսերեն Աստվածաշնչում, *шершень* (հոգնակի՝ *шершней*):

Ինչ վերաբերում է Ոսկեբերանի վկայությանը, ասենք, որ եբրայերեն և ասորերեն Աստվածաշնչի համապատասխան հատվածներում նույնպես *ձի* բաղադրիչը չկա (ասորագետ Ա. Հակոբյանի բանավոր հաղորդմամբ):

Գրաբարում կենդանու անվանումներով կազմված խայթող ճանճեր (միջատներ) վկայված են. *իշամեղու, ձիապիծակ, շանաճանճ...*: Անհասկանալի է մնում *ձիաստաց*-ի երկրորդ բաղադրիչի իսկությունը: *Ստացի*-ի բացատրությունը գտնում ենք Փիլոն Եբրայեցու ճառերից մեկում՝ *պարսաւ ձիոյ* բաժնում. «Ի նեխութենէ և յապականութենէ մեռելոց, որպէս բանք են, յարջառոց ծնեալ, որպէս և ձիաստացոյ ի ձիական մարմնոց»<sup>14</sup> (ուրեմն՝ *ձիաստաց*-ը ձիու նեխած մարմնից ստացված խայթող միջատն է): Այս բացատրությունը ավելի հստակ է «Գիրք պիտոյից»-ի *պարսաւ ձիոյ* բաժնում. «... չարաթոյն իմն եւ վնասակար զեռուն, ըստ իմաստասիրացն բանի, ի նեխեալ մարմնոցն սորա ասեն ծնանել՝ յարանուն ինքեան ձիաստաց կոչեցեալ, յոլովից սատակման լինելով պատճառ»<sup>15</sup>:

*Ձիաստաց*-ը կազմված է *ստանալ* բայի անցյալ կատարյալի հիմքից, իսկ *ձիաստանի*-ն՝ ներկայի հիմքից:

---

<sup>14</sup> *Փիլոնի Եբրայեցոյ ճառք*, Վենետիկ, 1892, էջ 202:

<sup>15</sup> Գիրք Պիտոյից. աշխատասիրությամբ **Գոհար Մուրադյանի**, Ե., 1993, էջ 134: Գ.Մուրադյանը ծանոթագրում է. «Ահա մի լրացուցիչ ապացույց, որ այս բնագիրը հունարենից չէ թարգմանված, քանի որ այստեղ *σφοκεις* կապ չունի *ἴπποσ*-ի հետ (նշվ. աշխ., էջ 297):

**Սկսել\*:** Գրաբարում բառը վկայված է հիմնականում *սկսան(իս)*, եզակի վկայությամբ:

ՀԱԲ-ում բառը ստուգաբանված չէ: Ըստ Աճառյանի՝ բառի արմատն է *սկիս*: Գ. Ջահուկյանի կարծիքով «կապ ունի կես (կիս) բառի հետ՝ զ- նախդիրով, որը *կ*-ի մոտ խլացել է, իսկ *ս*-ն ձայնեղացել է *բ*-ի ազդեցությամբ «\*զ-կիս>սկիս>սկիզբ» (ՋՀՄԲ, էջ 684):

Գ. Ղափանցյանը նույնպես բառիմաստը համարում է սկիս-ը, իսկ *kis-* արմատը համեմատում է իտերերեն *kiš* «դառնալ»-ի հետ<sup>16</sup>: Խեթերենի հետ այս համեմատությունը մերժում է Գ. Ջահուկյանը՝ «իմաստային ակնհայտ տարբերությունների պատճառով»:

Բառարմատի զ<ս անցումը անժխտելի է. գրաբարում կան բազմաթիվ օրինակներ *զփռել<սփռել*, *զթափել-սթափել*, *զքողել-սքողել...* Ինչ վերաբերում է արմատին, կարծում ենք, որ այն կարող է լինել *կցել*-ի *կից* արմատը:

Հայերենի մի շարք բարբառներում *կցել*-ը ունի «սկսել» իմաստը (Աճառյանը նշում է Թիֆլիսի, Սուչավայի բարբառները (ՀԱԲ, IV, էջ 231): (Բարբառագետ Ջ. Բառնասյանի բանավոր հաղորդմամբ նաև՝ Վանի բարբառում):

---

\* *Սկսանել/սկսել*-ի ստուգաբանությանը անդրադարձել ենք (տե՛ս «Պատմաբանասիրական հանդես», 2001, N1, էջ 187-188): Այժմ այն լրացված է նոր փաստարկներով: Նշենք նաև, որ բացառելի չենք համարում գրաբարում *սկսել*- ձևի առկայությունը. հ.-ե. ծագում ունեցող մի շարք բառեր ունեն կրկնակ ձևերը. հմմտ. *բեկեմ-բեկանեմ*, *գողեմ-գողանամ*, *լիզեմ-լիզանեմ*, *ողողեմ-ողողանիմ* և այլն: Ստուգաբանորեն հին են անաժանց ձևերը:

<sup>16</sup> Գ. Ղափանցյան, *Հայոց լեզվի պատմություն, հին շրջան*, Ե., 1961, էջ 199:



Կցել «սկսել» գործածվում է նաև Ղարաբաղի բարբառում, հատկապես ավագ սերնդի խոսքում: Այս բարբառում սկ<ց անցման այլ օրինակներ կան. հմմտ. հըղ<ց-հըղըսկ «ուղի, ճանապարհ», կ<ցկ(ը)-կ<սկ(ը) «հազուստ»:

Անդրադառնանք այլ փաստարկների, որոնք կարող են հաստատել *սկսել*-ի և *կցել*-ի նույնարմատ լինելը:

Բարսեղ Կեսարացու «Յադագս վեցօրեայ արարչութեան» գրքի «որ է *սկիզբն սկսուածոյ կազմութեան նաւի*» նախադասութեան վերաբերյալ Նորայր Բյուզանդացին գրում է, որ մի ձեռագրում «*սկիզբն կցուածոյ է, այնուհետև՝ պարզաբանում. «յերկուքն ալ կըրնան յարմարիլ»*<sup>17</sup> (ընդգծումները մերն են–Լ.Հ.):

Մի փաստարկ ևս. հունարեն *ἄπτο*-ն ունի «կապել, ամրացնել», նաև «ձեռնարկել, սկսել» իմաստները, *συν-απτόσ*-ը «միացնել» նաև «սկսել»<sup>18</sup>:

Վերոգրյալ փաստարկները հիմք են տալիս եզրակացնելու, որ *սկսել*-ի արմատն է *կից*-ը:

Նշենք, որ *կից* արմատն էլ հ.-ե. ծագում ունի: Ըստ Գ. Ջահուկյանի՝ հ.-ե. \*geit-so- կամ \*geit-sk- (\*geit «հարևան, կամ կից լինել») (ՋՀՄԲ, էջ 407): (Գ. Ջահուկյանը նշում է, որ արմատի վերականգնումը իրենն է):

Ավելի համոզիչ է Է. Աղայանի ստուգաբանությունը՝ հ.-ե. ger արմատից՝ -sko մասնիկով<sup>19</sup>:

---

<sup>17</sup> Նորայր Բիւզանդացի, *Հայկական բառաքննութիւն*, Կոստանդնուպոլիս, 1880, էջ 67:

<sup>18</sup> И.Х. Дворецкий, *Древнегреческо-русский словарь*, т. I, М., 1958, стр. 226, т. II, стр. 1553.

<sup>19</sup> Է. Աղայան, *Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ*, Ե. 1974, էջ 85-86:

Hovhannisyan Lavrenti – Lexicological and Etymological Observations.– **Khtsuts** (խծուծ): semantic interpretation in dictionaries is correctable. The oldest evidence is noted in the Bible: "Burned flax".

**Kholordz** (խոլորձ): lat. orchis, in Armenian as well "aghvesadzuk" (աղվեսաձու(ք)). The word dzu ("egg") exists in Russian - "yatrishnik" ("yatro"- "testicle"). In persian – **robah torob** (robah - «fox», torob - «egg»).

**Khusht linel** (հուշտ լինել, «խրսնել»): "scare off". In dictionaries, "husht" is considered an interjection, but probably the participial form "yušt" of the Middle Persian language.

**Dziastats** (ձիաստաց): "hornet", gr. σφήκεσ. The explanation of the second part of the word "to receive" is given by Philo (V c.) as "The gadfly resulting from the horse's rotten body".

**Sksel** («սկսել»): "to start". In some Armenian dialects the word "to attach" («կցել») has the meaning "to start" («սկսել»). Words "to attach" («կցել») and "to start" («սկսել») are same root words, cp: ztapel>stapel, zprel>sprel, zkokhel>skokhel (զթափել > սթափել, զփոնել>սփոնել, զքողել>սքողել). The Greek word ἄπτω means "to unite" and also "to undertake, do something".

Оганесян Лаврентий – Лексикологические и этимологические заметки. – **Хцуц** (խծուծ): семантическое толкование в словарях исправимо. Самое древнее свидетельство замечено в Библии: "перегоревший лен".

**Холордз** (խոլորձ): лат. orchis, по армянски так же "ахвесадзук" (աղվեսաձու(ք)): Слово дзу(ձու) существует и на русском языке - ятрышник (ятро - "яйцо"). В персидском- **robah - torob** (robah- "лиса", torob - "яйцо").

**Хушт линел** (hnlɹin ɫhúɛɫ, «ɫurɪnúnɛɫ»): "отпугиваться". В словарях "хушт" считается междометием, но вероятно причастная форма **yušt** среднеперсидского языка. **Дзиаствац** (dʒiastavac): шершень, греч. σφήκεσ. Объяснение второй части слова «станал» "получать" дает Филон (V век) – "овод получившиеся из гнилого тела лошади".

**Сксел** («uɫuɛɫ»): "начать". В некоторых армянских диалектах слово "кцел" имеет значение «uɫuɛɫ». "Кцел" («ɫɟɛɫ») и сксел («uɫuɛɫ») однокоренные слова, ср. зтапел>стапел, зпрел>спрел, зкохел>скохел (qɾəʃɫɛɫ>uɾəʃɫɛɫ, qɾɪnɛɫ>uɾɪnɛɫ, qɾnɪɫɛɫ>uɾnɪɫɛɫ). Греческое слово ἀπτο тоже имеет значение "объединять", "соединять", а также "предпринимать, начать что-то".

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԻՄԱՍՏԱՓՈԽՎԱԾ  
ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԻ ՄԱՍԻՆ

Էդուարդ Աղայանի հավաստմամբ՝ «...ժամանակակից հայերենի պատմական իմաստաբանության համար առաջնակարգ նշանակություն ունեն գրաբարյան իմաստափոխությունները, որովհետև մեր լեզվի բառապաշարի հիմնական զանգվածը կամ միջուկը գրական ժառանգորդությամբ գրաբարից է գալիս և գրաբարյան իմաստափոխությունները, բնականաբար, ժառանգորդաբար անցել են ժամանակակից հայերենին»<sup>1</sup>: Նա, վերլուծելով «գրաբարից գրական ժառանգորդությամբ աշխարհաբարին անցած բառերի գրաբարյան և ժամանակակից իմաստների հարաբերակցությունները», հանգում է այն եզրակացության, որ «գրաբար-աշխարհաբար իմաստների հարաբերակցությունը» որոշելը «հնարավորություն է տալիս առանձնացնելու բառերի ոչ գրաբարյան նշանակությունները...., որոնց օգնությամբ միայն կարելի է ճշտորոշել գրական աշխարհաբարում տեղի ունեցած իմաստային փոփոխությունները և դրանով իսկ ճիշտ պատկերացում կազմել ժամանակակից հայերենի իմաստափոխությունների մասին»<sup>2</sup>:

XVIII դ. ավանդված ձեռագիր բառարաններում բառիմաստային զարգացումներ, բառիմաստային փոփոխություններ արձանագրելուն առնչվող բառարանային պրպտումները հնարա-

<sup>1</sup> Է.Աղայան, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984, էջ 76-77:

<sup>2</sup> Է.Աղայան, նշվ. աշխ., էջ 77- 78:

վորություն են ընձեռում անդրադառնալու որոշ բառերի՝ ժամանակակից հայերենում ձեռք բերած իմաստներին:

Ե՛վ գրաբարի, և՛ արդի հայերենի բացատրական բառարանները **արգահատել** բայն արձանագրում են «գթալ, կարեկցել, խղճալ, խղճահարվել» իմաստներով<sup>3</sup>: Ըստ Հ.Աճառյանի՝ *արգահատել*-ը կազմված է առանձին անգործածական, «գույթ» նշանակությամբ *արգահատ* արմատից<sup>4</sup>: Արդի հայերենում *արգահատել* բայը առավելապես կիրառվում է «արհամարհել» իմաստով: Այդ ոչ հիմնական՝ երկրորդական, իմաստը վկայում է միայն Է. Աղայանը (ԱՀԲԲ, էջ 126): Ա. Սուքիասյանը արձանագրում է ոչ միայն «Արգահատել... Գթալ, խղճալ, կարեկցել, մեղքանալ, գորովել...», այլև *արգահատելի* հոմանիշային շարքը, որում ներկայացվում են «Խղճալի, խղճուկ, կարեկցելի, կարեկցական, արգահատական, ցավալի, ողորմելի, եղկելի, ողբալի: Գթաշարժ» հոմանիշները<sup>5</sup>: Այս բառարանում *արգահատելի* բառն առկա է նաև «Եղկելի... ողբալի, թշվառական, թըշվառ .... խղճալի, ողորմելի, ցավալի, արգահատելի... եղկական (հզվդ.)» հոմանիշային շարքում (ՀԼՀԲ, էջ 108):

---

<sup>3</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), հ. 1, Վենետիկ, 1836, էջ 343: Առձեռն բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ԱԲ) Վենետիկ, 1865, էջ 131: **Ռ. Ղազարեան**, *Գրաբարի բառարան* (այսուհետև՝ ԳԲ), հ. 1, Ե., 2000, էջ 203: **Միս. Մեքաստացի**, *Բառգիրք հայկազեան լեզուի* (այսուհետև՝ ԲՀԼ), հ.1, Վենետիկ, 1749, էջ 101: **Սոս. Մալխասեանց**, *Հայերեն բացատրական բառարան* (այսուհետև՝ ՄՀԲԲ), հ. 1, Ե., 1944, էջ 255: **Է. Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան* (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976, էջ 126: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), հ. 1, Ե., 1969, էջ 210:

<sup>4</sup> **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 1, Ե., 1971, էջ 302:

<sup>5</sup> **Ա. Սուքիասյան**, *Հայոց լեզվի հոմանիշների բառարան* (այսուհետև՝ ՀԼՀԲ), Ե., 1967, էջ 92:

Կարելի<sup>6</sup> է արդյոք ընդունել, որ, ինչպես նշում է Է. Ադայանը, ըստ իմաստային զարգացման արդյունքի, տեղի է ունեցել իմաստների փոխհաջորդում՝ բառի հին իմաստի կորուստ և նոր իմաստի ձեռքբերում<sup>6</sup>, թե առավել հավանական է իմաստափոխություն՝ ապաստուգաբանության հիմունքով<sup>7</sup>, այսինքն՝ *արգահատ* արմատի փոխարեն ենթադրել «առանձին անգործածական» *արգ* («յարգ, արժեք, արժանիք». ՀԱԲ, հ. 1, էջ 301) և *հատ* («կտրելը, հատուած կտոր...., որից *հատանել* «կըտրել, կրճատել.... պակասեցնել....»)<sup>8</sup> արմատներով կազմություն:

Իմաստային այս անցումը, այդուհանդերձ, տարակուսանք է հարուցում, քանի որ չի կարելի անվերապահորեն պնդել, որ խղճալի, խղճուկ, այլև կարեկցանք և խղճահարություն առաջացնող կամ աղերսող անձն արհամարհանքի է արժանի:

Գրաբարի տպագիր բառարաններում **գոեհիկ** բառի գոյականաբար և ածականաբար վկայված իմաստներն են՝ «ռամիկ՝ որ ի գոեհս շրջի. շինական. աշխարհիկ. տխմար. ռամկական. վարի մարդիկ, գեղջուկ, գեղացի» (ՆՀԲ, հ.1, էջ 581. ԱԲ, էջ 227. ԳԲ, հ. 1, էջ 342): Հ. Աճառյանը համարում է, որ *գոեհիկ*-ը «... «ռամիկ, հասարակ դասակարգի մարդ, գեղջուկ»-ն է, «(.... ինչպես կայ հիմայ փողոցային բառը)....» (ՀԱԲ, հ. 1, էջ 600): *Գոեհիկ*-ի «փողոցային, անճաշակ, անվայել. անտաշ, կոպիտ, տըխմար. անմշակ, ռամկական» նշանակություններն է արձանագրում Ստ. Մալխասյանցը՝ «գիւղացի, շինական» իմաստի հա-

<sup>6</sup> Պ. Բեդիրյանը «*Արգահատել* «խղճալ» > «արհամարհել» (հմմտ. *արգահատելի*// *ողորմելի*//*խղճալի*, *խղճուկ*// *թշվառական*) բառերի շարքը ներկայացնում է իբրև բառիմաստի անցման (շրջման) օրինակ. տե՛ս **Պ.Բեդիրյան**, *Իմաստի փոփոխությունները հայերենում*, թեկն. ատեն., Ե., 1955, էջ 72:

<sup>7</sup> **Է.Ադայան**, նշվ. աշխ., էջ 84-86:

<sup>8</sup> ՀԱԲ, հ. 3, Ե., 1977, էջ 50-51:

մար նշելով, որ այն հատկապես «հնում» է գործածվել (ՄՀԲԲ, հ. 1, էջ 471): Արդի հայերենի բացատրական բառարաններում *գռեհիկ*-ը վկայված է Ստ.Սալխապյանցի առանձնացրած անկանական, գոյականական իմաստներով, այլև մակբայական նոր կիրառությամբ (ԱՀԲԲ, էջ 259. ԺՀԼԲԲ, հ. 1, էջ 443)<sup>9</sup>:

Ուրեմն կարելի է ընդունել, որ *գռեհիկ*-ը արդի հայերենում ենթարկվել է իմաստափոխության՝ Է. Աղայանի ձևակերպմամբ զգացական-վերաբերմունքային հիմունքով<sup>10</sup>:

Ինչ վերաբերում է ձեռագիր բառարաններում առկա **գիւղակ** բառին (*գիւղակ*՝ «պզտի գեղ, փոքրիկ գիւղ». ԱԲ, էջ 217. ՄՀԲԲ, հ. 1, էջ 441. նաև՝ ԱՀԲԲ, էջ 248. ԺՀԼԲԲ, հ. 1, էջ 421), ապա, նկատի առնելով հաջորդող *շինական* և *ռամկական* բառերը, այն կարելի է թերևս սխալագրություն համարել՝ ընդունելով, որ *գիւղական* բառի փոխարեն գրիչն ընդօրինակել է կըրճատ ձևը՝ *գիւղակ*-ը: Ձեռագիր բառարաններում *գիւղական* նորակազմ բառն ակնհայտորեն ունի «գեղջուկ, ռամիկ, գեղացի» իմաստները: Արդի հայերենի բացատրական բառարաններում *գիւղական*-ի համար առկա են «գյուղին, գյուղացուն վերաբերող՝ հատուկ, գյուղի» նշանակությունները (ԺՀԼԲԲ, հ. 1, էջ 421. ԱՀԲԲ, էջ 248): Հ. Աճառյանը հիշատակում է «Նոր գրա-

---

<sup>9</sup> Տե՛ս նաև **Յ. Գայայեան**, *Բառարան-գանձարան հայերէն լեզուի*, Գահիրէ, 1938, էջ 90: **Պ. Ճիգմէճեան**, *Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան*, հ. 2, Հալէպ, 1957, էջ 104: **Ա. Տէր Խաչատուրեան**, **Հ. Գանգրունի**, **Փ. Կ. Տօնիկեան**, *Հայոց լեզուի նոր բառարան*, Պէյրուօ, 1968, էջ 98: **Գ. ՃԼԷՃեան**, **Փ. Կ. Տօնիկեան**, **Ա. Տէր Խաչատուրեան**, *Հայոց լեզուի նոր բառարան*, Պէյրուօ, 1992, էջ 421: **Ա. Կոստեան**, *Բառգիրք գործնական հայերէնի*, Պէյրուօ, 1998, էջ 87:

<sup>10</sup> **Է. Աղայան**, նշվ. աշխ., էջ 87: Հարկ է հիշատակել նաև Պ. Բեդիրյանի կարծիքը. նա «**Գռեհիկ** (փոողոցային) բառի անցումը «ռամիկ, հասարակ դասակարգի մարդ, գեղջուկ» իմաստին» համարում է իմաստափոխություն՝ կապված հասարակական վերաբերմունքի հետ. **Պ. Բեդիրյան**, նշվ. առտեւ., էջ 242:

կանում ընդունուած *գիւղ* ձև...»-ից կազմված *գիւղական*-ը (ՀԱԲ, հ. 1, էջ 563): Մի. Սեբաստացին նույնպէս արձանագրում է բառի՝ «գեղացի. կամ գոռեհիկ. կամ գեղջուկ» իմաստները (ԲՀԼ, հ. 1, էջ 185): Ուշագրավ է, որ *գիւղական*-ի «գյուղացի» նշանակությունն է վկայում Վ. Համբարձումյանը XIX դ. հրատարակված «Ճանապարհորդութիւն Մեսրոպբայ Թաղիադեանց ի Հայս» երկում<sup>11</sup>: Բարբառներում և ժողովրդախոսակցական լեզվում բառի գոյականական կիրառություն են արձանագրում Մ. Ջախջախյանը<sup>12</sup>, Հ.Աճառյանը<sup>13</sup>, Ստ. Մալխասյանցը և արդի հայերենի բացատրական բառարանները (ՍՀԲԲ, հ. 1, էջ 441. ԺՀԼԲԲ, ն.տ.. ԱՀԲԲ, ն.տ.):

**Ջլանալ** բայի՝ գրաբարի տպագիր բառարաններում վկայված «Որպէս Ջրկել. անիրաւել. դրժել. հատանել զիրաւունս..... նենգել. խարդախել» և «Ժխտել. ուրանալ զիրան և զիրաւունս .....» (ՆՀԲ, հ. 1, էջ 737. ԳԲ, հ. 1, էջ 442) իմաստներին ԱԲ-ն առադրում է «խնայելով տալ»-ը (ԱԲ, էջ 295): Նշված իմաստներն արձանագրում է նաև ՍՀԲԲ-ն՝ հավելելով «Խնայել մի բան անել՝ տալ, մերժել» (ՍՀԲԲ, հ. 2, էջ 26): *Ջլանալ* բայի «խնայել» նրբիմաստն է հավաստվում նաև Հ. Վիլլոտի՝ 1714 թ. հրատարակած լատիներեն-հայերեն նոր բառարանում՝ «.... զլանալ վարձկանի զվարձս իւր.... զլանալ աղքատի յողորմութենէ»<sup>14</sup>: Իսկ «Գրահավաք» կայքի «հայերեն բնագրերի առցանց շտեմարանում» հայերեն բառերի որոնումը հնարավորություն ընձեռեց «Գիրք

<sup>11</sup> Վ.Համբարձումյան, *Գրաբարի գործառնությունը որպէս գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ.*, Ե., 1990, էջ 250:

<sup>12</sup> Մ. Ջախջախեան, *Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական* (այսուհետև՝ ՋԲ), Վենետիկ, 1837, էջ 363:

<sup>13</sup> Հ.Աճառեան, *Հայերէն գաւառական բառարան*, Թիֆլիս, 1913, էջ 232:

<sup>14</sup> **Jacobus Villotte**, *Dictionarium Novum Latino-Armenium*, Roma, 1714, p. 5.



թղթոց»-ից առանձնացնելու «... Ժպրհին գլանալ գերկրպագութիւնն տեառն» նախադասությունը<sup>15</sup>, որից «մերժել, ժխտել»-ի հետ նաև ենթադրելի է «խուսափել» նրբիմաստը:

Արևմտահայերենի բառարանները պահպանել են *զլանալ*-ի վերոնշյալ «մերժել, ժխտել» նշանակությունները<sup>16</sup>, իսկ ահա արևելահայերենում այն բառիմաստի փոփոխությամբ հանգել է առաջնային «դժվարանալ մի բան անել, խուսափել մի բան անելուց՝ տալուց՝ իմաստների (ԱՀԲԲ, էջ 375)<sup>17</sup>:

Գրաբարի տպագիր բառարաններում **խօսնակ** բառը վկայված է «Աքաղաղ .... բարեխօս. փաստաբան. խօսական. քաջաբան. ճարտարախօս» (ՆՀԲ, հ.1, էջ 997. ԱԲ, էջ 399. ԳԲ, հ. 1, էջ 598) նշանակություններով: Նույն իմաստները «հնց.» նշումով է արձանագրում Ստ. Մալխասյանցը<sup>18</sup>: Արևմտահայերենի արդի բառարաններում *խոսնակ*-ի առաջնային իմաստը «Ռատիոյի՝ հեռուստատեսիլի վրայ լուրեր հաղորդող, լրատու»-ն է, այնուհետև նշվում են «հատուկ յայտագիր վարող», «յօգուտ մեկու մը ի պաշտօնէ խօսող, փաստաբան, ջատագով, պաշտպան», «անձի մը կամ կազմակերպութեան մը կողմէ խօսող, բանբեր, ներկայացուցիչ», «յօգուտ մեկու մը միջնորդող, բարեխօս» իմաստները<sup>19</sup>: Արդի հայերենի բացատրական բառարանները վկայում են «խոսուն, ճարտար» և «հազվադեպ հանդիպող բառ», «փխբ.» նշումներով «դատապաշտպան, պաշտպան» ի-

<sup>15</sup> <http://titus.uni-frankfurt.de/texte/etcs/arm/girk/girk.htm?girk003.htm>.

<sup>16</sup> Հմմտ. **Յ.Գայայեան**, նշվ. բառ., էջ 130: **Գ. Ճերէճեան, Փ. Կ. Տօնիկեան, Ա.Տէր Խաչատուրեան**, նշվ. բառ., էջ 617: **Ա. Կռանեան**, նշվ. բառ., էջ 124:

<sup>17</sup> ԺՀԼԲԲ, հ. 2, Ե., 1972, էջ 38:

<sup>18</sup> ՄՀԲԲ, հ. 2, Ե., 1944, էջ 313:

<sup>19</sup> **Գ. Ճերէճեան, Փ.Կ. Տօնիկեան, Ա. Տէր Խաչատուրեան**, նշվ. բառ., էջ 888: **Ա. Մարգարյան, Արևմտահայերենի բառարան**, Ե., 1991, էջ 155: **Ա. Կռանեան**, նշվ. բառ., էջ 186:

մաստները՝ արձանագրելով նաև «ռադիոյի հաղորդավար»-ը (ԱՀԲԲ, էջ 596. ԺՀԼԲԲ, հ. 2, էջ 555): Արևելահայերենում այժմ կիրառվող *խոսնակ*-ի «սպիկեր»՝ «Ազգային Ժողովի նախագահ», նշանակությունն արձանագրել է Ս. Էլոյանը<sup>20</sup>: Այն, ամենայն հավանականությամբ, փոխառություն է ռուսերենից (հմմտ.՝ «the Speaker սպիկեր. ա) անգլիական համայնքների պալատի նախագահ. բ) ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատի նախագահ»)՝: Այսօր հաճախակի գործածվող *մամուլի խոսնակ* բառակապակցությունում այն, թերևս, գործածվում է «անձի մը կամ կազմակերպութեան մը կողմէ խօսող, բանբեր, ներկայացուցիչ», նաև «խոսելու շնորհք ունեցող» (այլև «յօգուտ մեկի խօսող») նշանակություններով: Այնպես որ կարելի է արձանագրել՝ արդի արևելահայերենում, ըստ իմաստային զարգացման արդյունքի, տեղի է ունեցել իմաստների փոխհաջորդում:

**Ձեռնու լինել** հարադրությունը գրաբարի տպագիր բառարաններում վկայված է «Ձեռն տալ. ունել զձեռանէ. ի թիկունս հասանել. օգնել... որպէս Առիթ կամ պատճառ գտանիլ... որպէս Անձնատուր լինել» նշանակություններով (ՆՀԲ, հ. 2, էջ 154. ԱԲ, էջ 518. ԳԲ, հ.2, էջ 110)<sup>22</sup>: Բայի նույն իմաստներն են նշում նաև Գ. Փեշտրմալճյանի<sup>23</sup>, Մ. Ջախջախյանի (ՋԲ, էջ 915), Ա. Խուդաբաշյանցի<sup>24</sup> XIX դ. հրատարակված բառարանները:

<sup>20</sup> Ս. Էլոյան, *Նորարանությունների բառարան*, Ե., 2002, էջ 215:

<sup>21</sup> *Անգլերեն-հայերեն բառարան*, իմբ.-մբ Ն.Ասմանգուլյանի և Մ. Հովհաննիսյանի, Ե., 1984, էջ 904:

<sup>22</sup> Տե՛ս նաև Ռ.Ղազարեան, *Գրաբարի դարձուածարանական բառարան*, Ե., 2012, էջ 188:

<sup>23</sup> Գ.Փեշտրմալճեան, *Բարձրիք հայկազեան լեզուի*, հ. 2, Կ.Պօլիս, 1846, էջ 143:

<sup>24</sup> Ա. Խուդաբաշեանց, *Բառարան ի հայկական լեզուի ի ռուսաց բարբառ*, հ. 2, Մոսկուա, 1838, էջ 293:

Բառարաններից առանձնանում է ԱԲ-ն՝ առանց բնագրային օրինակի *ձեռնտու լինիմ*-ի համար արձանագրելով նաև «ինքը զինքը ձեռք տալ» նշանակությունը (ԱԲ, էջ 518): Հետագայում նույնն է վկայում Մ.Գաբամաճյանը<sup>25</sup>: Ստ. Մալխասյանցը *ձեռնտու լինել*-ի համար հավելում է «Շահաւէտ՝ նպատակայարմար լինել, ձեռք տալ» նշանակությունը<sup>26</sup>: Արդի հայերենի բացատրական և դարձվածաբանական բառարանները *ձեռնտու լինել*-ը չեն նշում. *ձեռնտու*-ն բացատրում են նաև «շահավետ, օգտակար, նպաստավոր», միաժամանակ *ձեռք տալ*-ը մեկնում նաև «շահավետ՝ ձեռնտու լինել» (ԱՀԲԲ, էջ 920)<sup>27</sup>: Արևմտահայերենի բառարաններում *ձեռնտու* բառը նույնպես վրկայվում է «շահաւէտ, օգտակար. նպատակայարմար» իմաստներով<sup>28</sup>:

Հարադրությունն առկա է միայն ՀԼՀԲ-ում՝ «շահավետ լինել, ձեռք տալ» նշանակությամբ, վերջինս՝ «(ժողովրդական դարձված)» նշումով (ՀԼՀԲ, էջ 412):

Եվ դարձյալ կարելի է արձանագրել, որ արդի արևելահայերենում, ըստ իմաստային զարգացման արդյունքի, տեղի է ունեցել իմաստների փոխհաջորդում, «բառի նախկին իմաստի փոխարինում նոր ուղղակի իմաստով»<sup>29</sup>:

**Մերթերթել** բայը գրաբարում ունեցել է «պաճուճել, պճնել. արուեստակել. հայթայթել. յարդարել. և Փերկերթել<sup>30</sup>», «աւելորդ բաներով զարդարել» նշանակությունները (ՆՀԲ, հ.2, էջ 704. ԱԲ,

<sup>25</sup> Մ. Գաբամաճեան, *Նոր բառագիրք հայերէն լեզուի*, Կ. Պօլիս, 1910, էջ 856:

<sup>26</sup> ՄՀԲԲ, հ. 3, Ե., 1944, էջ 167: Տե՛ս նաև Մ.Աբեղյան, Երկեր, Զ, 1974, էջ 124-125:

<sup>27</sup> ԺՀԼԲԲ, հ. 3, Ե., 1974, էջ 413:

<sup>28</sup> Պ. Ճիզվեճեան, նշվ. բառ., հ. 2, էջ 904: Ա. Տեր Խաչատուրեան, Հ. Գանգրունի, Փ. Կ. Տօնիկեան, նշվ. բառ., էջ 568:

<sup>29</sup> Է.Աղայան, նշվ. աշխ., էջ 106:

<sup>30</sup> ՆՀԲ-ն մեկնում է նաև «ճեմել սիգալով» (ՆՀԲ, հ. 2, էջ 941):

էջ 718. ԳԲ, հ.2, էջ 450): Ստ. Մալխասյանցի հեղինակած բառաբանում դրանք պահպանվել են<sup>31</sup>: Ուշագրավ է Մխ. Մեքաստացու բացատրությունը՝ «...սեթևեթիլ ասի՝ զարդարիլն զինուք, կամ սպառազինիլն, և ըստ այսմ ասի ի հին պատմագիրս զգորաց. Այսր այդր սրավառեալ, սեթևեթեալ երթային» (ԲՀԼ, հ. 1, էջ 978), ասել է՝ այն, ինչ հետագայում վկայել է ՆՀԲ-ն՝ նշելով՝ «փերևեթել»՝ «ճեմել սիգալով»:

Արդի հայերենի բառարանները թեև վկայում են *սեթևեթել*-ի «պաճուճվել, ավելորդ պճնվել, շատ զարդարվել» առաջնային իմաստը, սակայն այժմ *սեթևեթել*-ն առավելապես գործածվում է բառարաններում նշված «նագել, կոտրատվել, ծեքծեքել» երկրորդական իմաստներով (ԱՀԲԲ, էջ 1288. ԺՀԼԲԲ, հ. 4, էջ 284)<sup>32</sup>:

Այսպիսով, պարզորոշ է, որ առանձնացված բառերի՝ արդի հայերենի բառարաններում վկայված առաջնային իմաստները չեն պահպանվել. այդ բառերը XX դ. կեսերից արդեն իսկ կիրառվում են նոր իմաստներով:

Hovhannisyan Nazik- On Some Words that Underwent Semantic Change in the Modern Armenian Language.- Changes in the meanings of the words արգահատել "to regret", գոեհիկ "peasant", զիւղական "peasant", զլանալ "to deny", խօսնակ "eloquent", ձեռնտու (լինել) "to help", սեթևեթել "to decorate " are considered. Comparing and exploring the meanings of the above-mentioned words in Old Armenian and modern Armenian, it turns out that their primary meanings, testified in the dictionaries of the modern Armenian language, have not

---

<sup>31</sup> ՄՀԲԲ, հ. 4, Ե., 1945, էջ 197:

<sup>32</sup> Տե՛ս նաև Պ. Ճիզվեճեան, նշվ. բառ., հ. 2, էջ 1268: Գ. Ճերեճեան, Փ.Կ. Տոնիկեան, Ա.Տեր Խաչատուրեան, նշվ. բառ., հ. 2, էջ 787: Ա. Տեր Խաչատուրեան, Հ. Գանգրունի, Փ. Կ. Տոնիկեան, նշվ. բառ., էջ 754:

been preserved: these words were already used in the middle of the 20th century in new meanings (արգահատել "to despise", գռեհիկ "rude", գիւղական "rural", զլանալ "to avoid", խօսնակ " speaker ", ձեռնսոու (լինել) " to be profitable ", սեթևեթել " attitudinize").

Оганесян Назик-О некоторых словах, претерпевших семантические изменения в современном армянском языке.- Рассмотрены изменения значений слов արգահատել "жалеть", գռեհիկ "крестьянин, простолюдin", գիւղական "крестьянин", զլանալ "отрицать", խօսնակ "красноречивый", ձեռնսոու (լինել) "помогать", սեթևեթել "украшать". Сопоставляя и исследуя значения вышеупомянутых слов в древнеармянском и в современном армянском выясняется, что их первичные значения, засвидетельствованные в словарях современного армянского языка, не сохранены: эти слова в середине XX века уже использовались в новых значениях (արգահատել "презирать", գռեհիկ "грубый", գիւղական "сельский", զլանալ "избежать", խօսնակ "спикер", ձեռնսոու (լինել) "быть прибыльным", սեթևեթել "жеманиться").

## Ղամոյան Լուսինե (ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

### «ՀԱԳՈՒՍ» ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆ- ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Արդի հայերենի երկու գրական տարբերակները՝ գրական արևելահայերենը և գրական արևմտահայերենը, սկսած անցյալ դարի 60-ական թվականներից դիտվում են որպես հայերենի իրավահավասար գոյավիճակներ և ներկայացնում են լեզվական ուրույն համակարգեր:

Արևելահայերենը, որպես ՀՀ պետական համընդհանուր լեզու, մանրակրկիտ կերպով ուսումնասիրվել է լեզվաբանների կողմից, լեզվական իրողությունները քննվել են և այժմ էլ քննվում են ամենատարբեր հայեցակարգերով: Արևմտահայերենը Մփյուռքի հայության լեզուն է, որով հաղորդակցվում են աշխարհի տարբեր երկրներում սփռված հայերը: Վերջին ժամանակներս Հայաստանում մեծ ուշադրություն է դարձվում արևմտահայերենի քննությանը. հրապարակվում են բազմաթիվ հոդվածներ ու մենագրություններ, որոնցում ուսումնասիրվում են լեզվական տարբեր իրողություններ, երևույթներ, կատարվում են համադրական քննության փորձեր, որոնց հիմնական նպատակը արևելահայերենի և արևմտահայերենի առավել մերձեցումն ու փոխհարստացումն է:

Մեր ուսումնասիրության նյութը գուգադրական քննության մի փորձ է, որի միջոցով որոշ չափով բացահայտում ենք գրական երկու տարբերակների բառապաշարի նմանություններն ու տարբերությունները *«հազուստ»* իմաստային դաշտում:

Թեև հայերենի բառապաշարի մեծ մասն ընդհանուր է երկու գրական տարբերակների համար, այդուհանդերձ *լեզվա-*

*կան (տարբերակների ակունքների (գրաբար, միջին հայերեն) և բարբառային հիմքերի (Արարատյան և Պոլսի ու հարակից շրջանների)) և արտալեզվական (քաղաքական, տնտեսական կամ աշխարհագրական հանգամանքների) գործոնների հետևանքով իմաստային այս դաշտում ևս առանձնացվում են որոշակի տարբերություններ: Ինչպես նշում է Ռ. Մաքապետոյանը, «դառնալով սփյուռքահայ տարբեր գաղթօջախների հաղորդակցման լեզուն՝ արևմտահայերենը սկսեց իր վրա կրել բնիկ ժողովուրդների լեզուների ազդեցությունը, որն առանձնապես նկատելի է հնչյունաբանության (արտասանության) և բառապաշարի (փոխառությունների, բառակազմության և իմաստաբանության) ոլորտներում»<sup>1</sup>:*

Արևմտահայերենի և արևելահայերենի բառապաշարային տարբերությունների գիտական բնութագրին առաջինն անդրադարձել է Չ. Աճառյանը՝ ներկայացնելով որոշակի խմբերով. 1. ուղղագրական-հնչյունափոխական տարբերակներ, 2. միայն արևմտահայերենին բնորոշ բառեր, 3. արևելահայ-արևմտահայ համանուն և բազմիմաստ բառեր, 4. բառակազմական տարբեր բաղադրիչներով կազմված բառեր, 5. հայերեն բառեր օտար բառերի դիմաց, 6. առավելապես արևմտահայերենին բնորոշ բառեր, 7. գրաբարյան բառեր, որոնք պահպանվել են միայն արևմտահայերենում<sup>2</sup>: Այսպիսի դասակարգում կատարել է նաև Ռ. Մաքապետոյանը՝ հիմք ընդունելով Աճառյանի դասակարգումը՝ որոշակի խմբագրումներ անելով<sup>3</sup>:

---

<sup>1</sup> Ռ. Մաքապետոյան, *Արևմտահայերենի դասագիրք* (այսուհետ՝ ԱԴ), Ե., 2006, էջ 9:

<sup>2</sup> Չ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, մաս 2, Ե., 1951, էջ 554-568:

<sup>3</sup> Ռ. Մաքապետոյան, նույն տեղը, էջ 43-91:

Հենվելով Հ. Աճառյանի և Ռ. Սաքապետոյանի կատարած դասակարգումների վրա, ուսումնասիրելով «հագուստ» իմաստային դաշտը և՛ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում՝ կատարել ենք համեմատություններ, ապա մեր ունեցած բառային միավորները դաստասել ենք խմբերով՝ համեմատելով մի շարք բառարաններում արձանագրված տվյալները<sup>4</sup>:

*Առաջին խմբում* անդրադառնալով ուղղագրական-հնչյունափոխական տարբերակներին և հաշվի առնելով պատմական զարգացման հետևանքով ձևավորված հայերենի երկու գրական տարբերակների հնչյունական համակարգերի տարբերությունները՝ նկատել ենք, որ դրանք «հագուստ» իմաստային դաշտում ի հայտ են գալիս արևելահայերենի եռաշարք և արևմտահայերենի երկշարք բաղաձայնական ոլորտներում: Արևմտահայերենը գրության մեջ պահում է ավանդական համակարգը՝ չտարբերվելով արևելահայերենից (կան բացառություններ՝ *փեղոյր, մոյկ, հագուսածք, նորելոյթ*), սակայն արտասանության մեջ ի հայտ են գալիս մի շարք տարբերություններ. պայթական բաղաձայնների գրաբարյան եռաստիճան համակարգը գրական արևմտահայերենում վերածվել է երկաստիճան

---

<sup>4</sup> **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ. Ա-Դ, Ե., 1971, *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան* (այսուհետ՝ ԺՀԼԲԲ), հհ. 1-4, Ե., 1969-1980, **Էդ. Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան* (այսուհետ՝ ԱՀԲԲ), Ե., 1976, **Ռ. Սաքապետոյան**, *Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարան* (այսուհետ՝ ԱՍՆԲ), Ե., 2011, **Ա. Կռանեան**, *Բաղկիթ հայերեն լեզուի* (այսուհետ՝ ԲՀԼ), Պէյրութ, 1998, **Ա. Սարգսյան**, *Արևմտահայերենի բառարան* (այսուհետ՝ ԱԲ), Ե., 1991, **Գ. արքեպիսկոպոս Ճերեճեան**, **Փ. Կ. Տոնիկեան և Ա. Տեր Խաչատուրեան**, *Հայոց լեզուի նոր բառարան* (այսուհետ՝ ՀԼՆԲ), հհ. 1-2, Պէյրութ, 1992, **Ռ. Ղազարեան**, *Գրաբարի բառարան* (այսուհետ՝ ԳԲ), 2 հ., Ե., 2000, **Սո. Մալխասեանց**, *Հայերեն բացատրական բառարան* (այսուհետ՝ ՀԲԲ), հհ. 1-4, Ե., 1944-1945, *Հայոց լեզվի բարբառային բառարան* (այսուհետ՝ ՀԼԲԲ), հհ. 1-7, Ե., 2001-2012, **Ռ. Ղազարյան**, **Հ. Ավետիսյան**, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009:



խլագուրկ համակարգի (բ-պ-փ-ի փոխարեն՝ բ-փ, գ-կ-ք-ի փոխարեն՝ գ-ք և այլն): Այսպես՝ *տաբատ-[դափաղ]*, *գիշերազգեստ-[քիշերասքեստ]*, *մուճակ-[մուջագ]*, *կրկնազգեստ-[գրրգնասքեստ]*, *գտակ-[քղղակ]*, *վարտիք-[վարդիք]*, *լանջազգեստ-[լանչասքեստ]* և այլն: Իսկ եթե արևմտահայերենում տեսնում ենք պարզ խուլերի առկայություն, ապա ուսումնասիրողները դա կապում են շրջապատող լեզուների ազդեցության հետ, որը բնական է, սակայն ոչ համակարգային: Ինչպես նկատում է Ա. Մարգայանը, դրանք տեղացի բնակչության լեզվական աշխարհի հետ շարունակաբար շփման մեջ գտնվելու հետևանք են, որի արդյունքում յուրացրել են նաև նրանց բաղաձայնական համակարգի առանձին հնչյունների որակները<sup>5</sup>:

«Հագուստ» իմաստային դաշտում ձայնավորների հետ կապված առանձնակի տարբերություններ, փոփոխություններ չենք նկատել. միայն միջնավանկի *ա* ձայնավորը երբեմն կլորձատվում է արևմտահայերենում, ինչպես՝ *գիշերանոց-գիշերանոց* [քիշերնոց], *անձրևանոց-անձրևնոց*:

*Երկրորդ խմբում* առանձնացրել ենք բառեր, որոնք գործածական են և՛ արևմտահայերենում, և՛ արևելահայերենում, նույնանիշ բառեր են, ինչպես՝ *աղքատազգեստ* (ԺՀԼԲԲ, հ.1, 46, ԱԱՆԲ, 20), *ձեռնամուշտակ* (ԺՀԼԲԲ, հ.3, 411, ԱԱՆԲ, 195), *ննջազգեստ* (ԺՀԼԲԲ, հ.4, 37, ԱԱՆԲ, 258), *թաթյան* (ԺՀԼԲԲ, հ.2, 124, ԱԱՆԲ, 107), *լանջազգեստ* (ՀԼՆԲ, հ.1, 755, ԺՀԼԲԲ, հ.2, 379), *ջրազգեստ* (ԱԱՆԲ, 278, ԺՀԼԲԲ, հ.4, 94), այդպես նաև՝ *քնազգեստ*, *հագուստ*, *քող*, *սեղմիրան*, *օձիք*, *հողաթափ*, *զգեստ վարտիք*, *տաբատ*, *գտակ*, *գրպան* և այլ բազմաթիվ բառեր:

<sup>5</sup> Ա. Մարգայան, *Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ*, Ե., 1985, էջ 26-27:

Թեև երկու գրական տարբերակների բառապաշարը ձևով և բովանդակությամբ ընդհանուր է, և շատ սակավաթիվ բառեր ունեն իմաստային տարբերություններ, այնուամենայնիվ, ներկայացնելով «հագուստ» իմաստային դաշտի բառապաշարի ընդհանրությունները երկու գրական տարբերակներում՝ նրկատվում են նաև իմաստային որոշակի տարբերություններ՝ պայմանավորված լեզվական և արտալեզվական գործոններով:

Ըստ այդմ, *երրորդ խմբում* առանձնացրել ենք այնպիսի բառեր, որոնք գործածական են և՛ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում, սակայն ունեն իմաստային տարբերություններ՝ չնայած ձևային նույնությանը, ինչպես՝ *սփածանելի* (արևմտ.՝ [ըսփածանելի])՝ «1. մեջքին կապվող լաթ, 2. գոգնոց» (ԱԱՆԲ, 332)-*սփածանելի* (արևել.՝ «վրան գցելու, ծածկելու շոր» (ԺՀԼԲԲ, հ.4, 352), «գոգնոց» իմաստով կա ԱՀԲԲ-ում՝ «*հնց.*» նշումով (էջ 1348), *անթոց* (արևմտ.՝ «խշտիկ, հագուստի անութատեղին կարվող եռանկյունի կտոր»)-*անթոց* (արևել.՝ «անթացուպ»), *լաստիկ* (արևմտ.՝ «1. ռետին, կաուչուկ, 2. (փխբ.) կըրկնակոշիկ» (ԱԱՆԲ, 121))-*լաստիկ* (արևել.՝ «մի երեսը փայլուն բամբակյա կտոր, որ հատկապես գործածվում է իբրև աստառացու» (ԺՀԼԲԲ, հ.2, 382)), *հագնել* (արևմտ.՝ «կարկատել, կցկցել» իմաստն ունի (ԱԱՆԲ, 171), որը եկել է գրաբարից (ԳԲ, հ.2, 11))-*հագնել* (արևել.՝ «շորերը վրան անցկացնել, կոշիկները ոտքերին անցկացնել» և այլն (ԺՀԼԲԲ, հ.3, 251)). այս իմաստն արևմտահայերենն արտահայտում է *հագնիլ* բառաձևով (ԱԱՆԲ, 171)):

Նշվում է, որ «Այսպիսի տարբերիմաստ բառեր շատ քիչ են: Հայերենի բառային կազմի ամբողջ հարստութիւնը հաւասարապէս կը գործածուի գրական հայերենի մեր երկու տարբե-

րակներուն մէջ ալ»<sup>6</sup>, սակայն, ինչպէս նկատել է Մ. Շահումյանը. «Անգամ եթէ բառը գոյություն ունի երկու տարբերակներում էլ, ապա դեռ ճշգրտման հարց է, արդյո՞ք այդ բառի արտահայտած իմաստային դաշտը նույն ընդգրկումն ունի երկու գրականներում, թե՞ նրա իմաստները խաչվում են մի կետում միայն»<sup>7</sup>:

Այս տեսակետից *չորրորդ խմբում*՝ ներկայացրել ենք այնպիսի մի բառախումբ, որտեղ բառերը որոշակի իմաստով կամ իմաստներով նույնանում են, սակայն ինչ-որ կետում ի հայտ են գալիս իմաստային տարբերություններ: Իբրև ապացույց՝ Ա. Մարգարյանը բերում է *լաթ* և *շոր* բառերի զուգադրությունը՝ տալով դրանց իմաստային բոլոր հնարավոր դրսևորումները երկու գրականներում: Նշված բառերի զուգադրությունից նկատում ենք, որ *լաթ*-ը արևմտահայերենում «*հագուստի կտոր*» է, «*միագույն համազգեստ*» և այլն. այս իմաստով այն չի գործածվում արևելահայերենում: Ի տարբերություն արևմտահայերենի՝ արևելահայերենի նույն բառին բնորոշ է փոխաբերական իմաստ՝ «*կամազուրկ, անգործունյա մարդ*». այս իմաստը չունի արևմտահայերենը: Արևելահայերենում *շոր*-ը առաջին հերթին «*զգեստ*» է, «*հագուստ*», որը բնորոշ չէ արևմտահայերենին: Արևելահայերենում *շոր* բառի միայն *չորրորդ* իմաստն է համընկնում արևմտահայերենի արտահայտած իմաստին՝ «*երեխայի բարուրի կտորեղեն*»<sup>8</sup>: Հետևելով Ա. Մարգարյանի օրինա-

<sup>6</sup> Մ. Աբրահամյան, Բ. Վերդեան, Վ. Քոսեան, *Հայերեն լեզուի դասագիրք*, Ե., 1966, էջ 19:

<sup>7</sup> Մ. Շահումյան, Արևմտահայերենի բառապաշարի հարցերի քննությունը Հրաչյա Աճառյանի աշխատություններում, *Գիտական հոդվածների ժողովածու*, Ե., 2016, էջ 277:

<sup>8</sup> Ա. Մարգարյան, *Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ*, Ե., 1985, էջ 86-87:

կին՝ ներկայացնենք մի շարք այդպիսի բառանուններ, ինչպես՝ **ձորձ** բառը արևմտահայերենում ունի «1. հագուստ, զգեստ, 2. քուրջ, ցնցոտի» իմաստները (ԱԱՆԲ, 199), արևելահայերենում՝ «1. զգեստ, հագուստ, վերարկու, 2. կտոր, որից շոր են կարում, 3. ծածկույթ, սփածանելիք» իմաստները (ԺՀԼԲԲ, հ.3, 424): Այդպես նաև՝ **կրծազգեստ** (արևմտ.՝ «կանացի զգեստ (կորսաժ)» (ԱԱՆԲ, 170)), (արևել.՝ «կուրծքը պատելու կանացի զգեստ, կրծակալ, կրծկալ» (ԺՀԼԲԲ, հ.3, 224)), **նշանազգեստ** (արևմտ.՝ «1. նշանդրերի զգեստ, 2. թագավորի կողմից պատվավոր զգեստ, 3. տարազ, 4. շքազգեստ, 5. համազգեստ» (ԱԱՆԲ, 258)), (արևել.՝ «(հզվդ.) որոշակի ձևով կարած զգեստ (զինվորականների, պաշտոնյաների, ուսանողների), համազգեստ» (ԺՀԼԲԲ, հ.4, 38)), **կրծկալ** (արևմտ.՝ «երեխայի կրծքին կապվող շոր, վզնոց՝ ուտելիքը վրան չթափելու համար» (ԱԱՆԲ, 170)), (արևել.՝ «1. կուրծքը պատելու շոր, զգեստ, կրծակալ, կրծապանակ, լանջապանակ, լանջակալ, 2. արևելյան տարազով կանացի զգեստի մաս, որ զգեստի վրայից ծածկում է կուրծքը, 3. շորի կտոր, որ կապում են երեխայի վզից՝ զգեստը մաքուր պահելու համար» (ԺՀԼԲԲ, հ.3, 225)) և այլն:

Ռ. Սաքապետոյանը կարծում է, որ նման բազմիմաստ բառերից շատերը լեզվի երկու տարբերակներում իմաստային անդամների հետագա մթագնումով վերածվել են համանունների<sup>9</sup>:

**Հինգերորդ խմբում** առանձնացրել ենք այն բառերը, որոնք գործածական են արևմտահայերենում և բարբառներում, ինչպես՝ **ճաթ** (բբ.՝ «ցնցոտի, քուրջ, ձորձ (Վանի բարբառում այս բառի հոգնակի թիվը կազմվում է արմատի կրկնությամբ՝ **ճաթ-**

<sup>9</sup> Ռ. Սաքապետոյան, *Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները*, Ե., 2004, էջ 77-78:

**ճարթ**» (ՀԼԲԲ, հ.3, 361)), արևմտ.՝ «ցնցոտի» (ԱԱՆԲ, 200)), **նայիկ** (արևմտ.՝ «բաղնիքում գործածվող փայտե ոտնաման» (ԱԱՆԲ, 249), «որոշ տեղերում, օր. Համշենում **նայիկ** հագնում են նաև տանը», իսկ Մուշում (Ալշ.) գործածվում է «սոլ, կոշիկ» իմաստով (ՀԼԲԲ, հ.4, 128)), **բուճ** (Ակն., Երզ., Խրբ., Կր., Ղրբ. և այլուր՝ «գուլպա» (ՀԼԲԲ, հ.1, 221), արևմտ.՝ «կարճ գուլպա» իմաստով (ԱԱՆԲ, 63)), **կապանակ** («հովվական թաղիքե վերարկու» (ԱԱՆԲ, 152, ՀԼԲԲ, հ.3, 43)) և այլն: Այս բառերն արձանագրված չեն արևելահայերենի բառարաններում, իսկ եթե արձանագրված են, ապա՝ «գվռ.» կամ «բրբ.» նշումով:

**Վեցերորդ խմբում** առանձնացրել ենք այն բառերը, որոնք գործածվում են միայն արևմտահայերենում: Մի շարք պատճառներով դրանք մնացել են որպես արևմտահայերենին բնորոշ բառեր և չեն գործածվում արևելահայերենում, ինչպես՝ **մոմազգեստ** («անջրանցիկ թիկնոց՝ վերնազգեստ» (ԱԱՆԲ, 230)), **ամազոն** (բազմիմաստ բառ է, ունի նաև «կնոջ զգեստ՝ ձի հեծնելու հատուկ» իմաստը (ՀԼՆԲ, 36)), **այծազգեստ** («այծի մորթուց պատրաստված զգեստ». արձանագրված է միայն ՀԼՆԲ-ում (հ.1, 61)), **բուսազգեստ** («բուսական նյութերից պատրաստված հագուստ» (ՀԼՆԲ, հ.1, 345). գրաբարում այս բառը գործածվել է՝ «բոյսերով զգեստաւորուած՝ զարդարուած՝ պատուած» իմաստով (ԳԲ, հ.1, 298, նույն իմաստով՝ ԺՀԼԲԲ, հ.1, 353), **գառաքաշ** («կանացի ոսկեճամուկ երկար զգեստ» (ԱԱՆԲ, 97)), **փողպատ** («1. օձիք, 2. վիզը պատող շալ (շարֆ)» (ԱԱՆԲ, 361)), **հաջաղ** («քող, լաչակ» (ԱԱՆԲ, 179)), այդպես նաև՝ **կրկնազգեստ** (ԱԱՆԲ, 70), **համտակ** (ԱԱՆԲ, 177), **ներքնագրպան** (ԱԱՆԲ, 255), **ծովաշոր** (ԱԱՆԲ, 146), **ջրասուզազգեստ** (ԱԱՆԲ, 317) և այլն:

**Յոթերորդ խմբում** առանձնացրել ենք այն բառերը, որոնք հատուկ են միայն արևելահայերենին և չեն գործածվում արևմտահայերենում, ինչպես՝ **անթևք** (ԺՀԼԲԲ, հ.1, 93), **գլխաշոր** (ԺՀԼԲԲ, հ.1, 410), **գլխափաթաթ** (ԺՀԼԲԲ, հ.1, 411), **ժամաշապիկ** (ԺՀԼԲԲ, հ.2, 266), **լողաթիկնոց**, **լողահագուստ** (ԺՀԼԲԲ, հ.2, 422), **ծածկագրպան** (ԺՀԼԲԲ, հ.2, 610), **կողքագրպան** (ԺՀԼԲԲ, հ.3, 172), **հարսնաբող** (ԺՀԼԲԲ, հ.3, 326) և այլն:

**Ութերորդ խումբ.** «Արևմտահայերենը կյանքի է կոչել գրաբարի շատ բառեր, որոնք անգործածական էին դարձել»<sup>10</sup>: Այս բառերի գործածությունը արևմտահայերենում սովորական է, իսկ արևելահայերենում՝ ոչ այնքան, գործածվում են հիմնականում գեղարվեստական գրականության մեջ՝ խոսքը երանգավորելու նպատակով, ինչպես՝ **դիպակազգեստ** (ՀԼՆԲ, հ.1, 491, ԳԲ, հ.1, 370), **եքիճաղ** (ՀԼՆԲ, հ.1, 524, ԳԲ, հ.1, 385), **փակեղ** (ՀԼՆԲ, հ.2, 1026, ԳԲ, հ.2, 589), **օթոց** (ՀԼՆԲ, հ.2, 1133, ԳԲ, հ.2, 649), **մեկնոց** (ԲՀԼ, 294, ԳԲ, հ.2, 170), **մոյկ** (ԲՀԼ, 307, ԳԲ, հ.2, 201), **մուճակ** (ԲՀԼ, 307, ԳԲ, հ.2, 203), **ամդան** (ՀԼՆԲ, հ.1, 47, ԳԲ, հ.1, 48), **աղաբողոն** (ՀԼՆԲ, հ.1, 22, ԳԲ, հ.1, 27) և այլն:

Այսպիսով, երկու գրական տարբերակների բառապաշարի զուգադրական քննությունը կարելի է կատարել ինչպես առանձին, այնպես էլ բառախմբերի իմաստային դաշտերի առումով: Արևելահայերենի և արևմտահայերենի «հագուստ» իմաստային դաշտի թռուցիկ զուգադրական քննության փորձն անգամ ակնբախ է դարձնում, որ երկու գրական տարբերակների շրփումները չեն բացառում ներկայացվող բառերի փոխներթափանցումները, հատկապես որ բազմաթիվ բառեր այսօր գործածական են երկու տարբերակներում էլ, և հետո, միայն արևմ-

<sup>10</sup> **Ն. Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն*, Ե., հ.2, 1951, էջ 561:

տահայերենին բնորոշ բառեր ասելով՝ հիմնականում նկատի ենք ունեցել բառարաններում արձանագրվածները:

Ghamoyan Lusine-Comparative analysis of the semantic field "Clothes" in Eastern Armenian and Western Armenian.- Comparative analysis of our two literary Armenian variants, as well as any two languages in general, can be done both separately and in terms of the semantic fields of the word groups. It is known that the existence of the same words in two literary variants does not mean that we deal with the volumetric coincidence of their meanings. The words with the same phonemic composition, even if they do not express different meanings, often do not "cover" each other with their semantic nuances, figurative meanings, and so on. In this case, the intercourse and relations between the two parts of our people do not exclude the interpenetration of the words presented.

Гамоян Лусине- Сопоставительный анализ семантического поля "Одежда" в восточноармянском и западноармянском вариантах.- Сравнительный анализ наших двух литературных армянских вариантов, а также любых двух языков в целом, может быть сделан и отдельно и с точки зрения семантических полей групп слов. Известно, что существование одних и тех же слов в двух литературных вариантах не означает, что мы имеем дело с объемным совпадением их значений. Слова с одинаковым фонематическим составом, даже если они не выражают разные значения, часто не «покрывают» друг друга своими семантическими нюансами, переносными значениями и так далее. В этом случае общение и отношения между двумя частями нашего народа не исключают взаимопроникновения представленных слов.

**ԿԻՍԵԼ ԵՎ ԿԻՍՎԵԼ ԲԱՅԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ  
ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Հայտնի է, որ լեզուն անփոփոխ, քարացած երևույթ չէ և անընդհատ փոփոխվում ու զարգանում է: Այդ փոփոխությունները պայմանավորված են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոններով: Լեզվի պատմական զարգացման ընթացքում փոփոխության կարող են ենթարկվել բառի ինչպես ձևը, այնպես էլ իմաստը:

Այդ առումով ուշագրավ է **կիսել** և **կիավել** բայերի գործածությունը ժամանակակից հայերենում: **Կէս** անստույգ արմատով<sup>1</sup> բաղադրված **կիսել** «կէս անել» ներգործական բայի հիմնական իմաստի կողքին հատկապես խոսակցական լեզվում և սոցիալական ցանցերում լայն գործածություն է ստացել բառի մեկ այլ՝ **«մի բանի մասնակից, հաղորդակից դարձնել»** իմաստը, որի գործածությունը տարակարծությունների առիթ է տալիս և միանշանակ չի ընդունվում մասնագետների շրջանում: Մերժելի են համարվում այնպիսի կապակցություններ, ինչպիսիք են, օր., **կիսել կարծիքը, կիսել մտահոգությունը, կիսվել տպավորություններով, կիսվել խորհուրդներով** ևն:

Մեր ուսումնասիրության նպատակն է բացահայտել վերոհիշյալ բառերի իմաստային դրսևորումները հայերենի պատ-

---

<sup>1</sup>Տե՛ս **Հր. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ. 2, Ե., էջ 581-582: **Գ.Բ.Զահուկյան**, *Ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 403: **Կէս** արմատը համապատասխանում է նոստրատիկ լեզուների համեմատական բառարանում ներկայացված **kāčä** «կտրել, կիսել» ձևին (տե՛ս **Վ. Համբարձումյան**, *Հայերենի բառաքննական և ստուգաբանական ուսումնասիրություններ*, Ե., 2012, էջ 62):



մական զարգացման ընթացքում, ներկայացնել դրանց գործածությունը լեզվի տարբեր շրջաններում:

Սովորաբար մերժելի լեզվական միավորի դեպքում հիմնավորվում է, թե ինչու է այն սխալ. օտարաբանություն է, բարբառային է, քերականորեն ոչ ճիշտ կազմություն է ևն: Խնդրո առարկա բայերի դեպքում այդ հիմնավորումներն այնքան էլ համոզիչ չեն կամ ընդհանրապես բացակայում են համապատասխան աշխատություններում: Այսպես՝ Խ.Բաղիկյանի «Ճիշտ խոսենք հայերեն» գրքի ճիշտ և սխալ ձևերին վերաբերող հատվածում կարդում ենք հետևյալը. «...Նույնը կարելի է ասել **կիսել** և **բաժանել** բայերի ոչ տեղին գործածության մասին (չէ՞ որ ամեն բան *չի կիսվում*, իսկ բանավոր խոսքում մարդիկ իրար միջև **կիսում են** ուրախություն ու տխրություն, վիշտ ու թախիծ, **բաժանում են** կարծիք ու համոզմունք և այլն: Քիչ չենք լսում՝ «**Կիսում եմ** ձեր վիշտը», փոխանակ՝ *վշտակցում եմ, ցավակցում եմ*»<sup>2</sup>:

Անշուշտ, ուղիղ իմաստով հնարավոր չէ **կիսել կարծիք** կամ **ուրախություն**, իսկ փոխաբերաբար ինչու հնարավոր չէ, կամ դրանք ինչու չընդունել իբրև հոմանիշներ՝ չի նշվում: Ի դեպ, եթե վերոհիշյալ օրինակների դեպքում փոխարինող տարբերակները կան, ապա այլ դեպքերում դժվար է գտնել: Ներկայացնենք բառերի իմաստային դրսևորումների բառարանային վկայությունները՝ պարզելու համար մեզ հետաքրքրող հարցերի պատասխանը: Այսպես՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» աշխատության մեջ, ինչպես նաև գրաբարի բառապաշարն ընդգրկող մյուս բառարաններում վկայված է միայն **կէս**-ը՝ գոյականական, ածականական, մակբայական տարբեր նշանակությո-

---

<sup>2</sup>Խ. Բաղիկյան, *Ճիշտ խոսենք հայերեն*, Ե., 2012, էջ 81:

յուններով՝ «կէսը, հաւասարը, կէս մասը, մէջ, միջին» են, ինչպես նաև բազմաթիվ բաղադրություններով: Իսկ նրանով բաղադրված **կիսել**-ը վկայված չէ նշված բառարաններում<sup>3</sup>, ինչից կարելի է ենթադրել, որ գրաբարյան շրջանում բայն ընդհանրապես չի գործածվել (Հր. Աճառյանը ևս այն ներկայացնում է «նոր գրականում կազմված բառերի» շարքում<sup>4</sup>): Միջին հայերենի բառարանում բայը նշված չէ. **կէս** բաղադրիչով վկայված են միայն մի քանի բաղադրություններ<sup>5</sup>: *Կիսել* և *կիսվել* բայերն արձանագրված են միայն ժամանակակից հայերենի բառարաններում՝ ստորև ներկայացվող իմաստներով և համապատասխան օրինակներով:

Ըստ Ստ. Մալխասյանցի՝ բառն ունի հետևյալ իմաստները. «**Կիսել**, եցի, նբ., կէս անել, երկու կէսի բաժանել: Խնձորը կիսեց, կէսն ինձ տուեց, միւս կէսը ինքը կերավ: Վնասն էլ, օգուտն էլ հաւասար կիսենք: **Կիսվել**, վեցի, կբ., չբ., նոյն նշ.: Խնձորը հաւասար չկիսվեց: Բջիջները բազմանում են կիսվելով»<sup>6</sup>: Նկատելի է, որ մեզ հետաքրքրող իմաստային գործածություններն այստեղ նշված չեն:

---

<sup>3</sup>Տե՛ս **Գ. Աւետիքեան, Խ. Միրումեան, Մ. Աւգերեան**, *Նոր բարգիւրք հայկազեան լեզուի*, 1, Վենետիկ, 1836, էջ 1094, 1097: **Մ. Աւգերեան, Գ. Ճէլալեան, Առձեռն բառարան հայկազեան լեզուի**, Վենետիկ, 1865, էջ 438: **Ռ. Ս. Ղազարյան**, Գրաբարի բառարան, հ. 1, Ե., 2000, էջ 656: **Լ. Խաչատրյան**, *Գրաբարի ուսումնական բառարան*, Ե., 2013, էջ 185: **Լ. Հովհաննիսյան**, *Գրաբարի բառարան-Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր*, Ե., 2010, էջ 154: **Ռ. Ղազարյան**, *Գրաբարի դարձուածարանական բառարան*, Ե., 2012, էջ 65: **Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան**, *Նորայայտ բառեր գրաբարում*, Ե., 2007, էջ 53:

<sup>4</sup>Տե՛ս **Հ. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 582:

<sup>5</sup>Տե՛ս **Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան**, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009, էջ 370:

<sup>6</sup>**Ստ. Մալխասեանց**, *Հայերէն բացատրական բառարան*, հ. 2, Ե., 1944, էջ 440:

Ժամանակակից հայոց լեզվի քառահատոր քառարանում կարդում ենք հետևյալը. «**Կիսել**<sup>1</sup>, եցի, նբ, 1. կես անել, երկու կեսի՝ երկու մասի բաժանել: Ծերունին պարկի կորեկը կիսեց (ԱԲ): 2. Հատել, կտրել, թագավորը կովի մեջ արդեն սրով կիսել էր նրա կլուխը (Ս): 3. Պակասեցնել, նվազեցնել: Ամեն անգամ նրա վարձը կիսում էր, իր բաժինը պահում (Մամուլ): 4. Կիսատ թողնել, խափանել, խանգարել: Այս վեհ գիշերին, այսքան խաղաղ, Ամոթ է մարդու նինջը կիսել (ՀՀ): 5. **Հաղորդակից դարձնել, բաժանել, մի բանի մասնակից դարձնել**: Ինչպես մայրս էր վիշտս կիսում՝ Համբուրելով ինձ մի վայրկյան (ՀՇ)» (ընդգծումը՝ Վ.Ն.)<sup>7</sup>: Նկատելի է, որ վերջինը մեզ հետաքրքրող իմաստն է: Նույն աշխատության մեջ, սակայն, փոխադարձ սեռի՝ մեզ հետաքրքրող բայիմաստը (**կիսվել տպավորություններով**) նշված չէ<sup>8</sup>:

Է. Աղայանի բառարանում ևս վկայված է «**հաղորդակից դարձնել, բաժանել, մի բանի մասնակից դարձնել**» իմաստը՝ «Վիշտոդ կիսի՛ր ինձ հետ» օրինակով: Նախորդի համեմատությամբ այստեղ հավելված է նաև «ոքնէ բանի կես մասն անել՝ անց կացնել՝ կատարել, կեսին հասնել» իմաստը՝ «Այս տարին էլ կիսեցինք» օրինակով<sup>9</sup>: Նույն տեղում **կիսվել** բայը ներկայացված է որպես **կիսել**-ի, կրավորական և չեզոք տարբերակ<sup>10</sup>:

Հ. Աճառյանի «Հայերեն գաւառական բառարանում» **կէս** բաղադրիչով բաղադրված բազմաթիվ բառեր են վկայված, ինչպես՝ **կէս-գիշեր, կէս-բերան, կիսաբերան, կիսագագ, կիսագնի,**

---

<sup>7</sup> *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, Ե., 1969, հ. 3, էջ 140:

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>9</sup> Տե՛ս Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, հ. 1, Ե., 1976, էջ 735:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղում:

**կիսախեղդ լինել, կիսակուշտ, կիսատ, կիստուկ** ևն, սակայն **կիսել** բայը վկայված չէ<sup>11</sup>: Հայոց լեզվի բարբառային բառարանում ևս նշված են բազմաթիվ բառեր, ինչպես՝ **կիսաջան, կիսասիրտ, կիսատիկ** «խեղանդամ», **կիսաքամ, կիսկոտել** («1. Կիսել, բաժանել, երկու կես անել, 2. երկպառակտել, անմիաբանություն ստեղծել, քայքայել»), կիսվըտիլ («որևէ բան երկու հոգու միջև հաւասար բաժանել»), **կիստել** («պարունակությունը կիսատել, պակասեցնել»)՝<sup>12</sup> ևն, բայց **կիսել** բայը վկայված չէ:

Մեր օրերում համացանցում մեծ տարածում է գտել անգլերեն **share** բայը, որի ռուսերեն համարժեքն է **поделиться**, իսկ հայերեն թարգմանվում է **կիսվել** տարբերակով, ուստի հետաքրքիր է ծանոթանալ նաև թարգմանական բառարանների տվյալներին: Այսպես՝ «Անգլերեն-հայերեն բառարանում» նշված են բառի գոյականական և բայական իմաստները, որոնցից կներկայացնենք միայն վերջինները. «Share 2. v.1) բաժանել, բաշխել, բաժին տալ, բաժին հանել. 2) մասնակցել, բաժին ունենալ (որևէ բանի մեջ՝ in). 3) **համատեղ դիտել. բաժանել (որևէ բան որևէ մեկի հետ՝ with, օր.՝ ուրախություն)**» (ընդգծումը՝ Վ.Ն.)<sup>13</sup>: Ինչպես տեսնում ենք, այս բառարանի հեղինակները ևս ներկայացնում են բառի՝ մեզ հետաքրքրող իմաստային դրսևորումը:

Ա. Ղարիբյանի «Ռուս-հայերեն բառարանում» **поделить** և **поделиться** բայերի դիմաց այլ իմաստների կողքին նշված են վերոհիշյալ փոխաբերական նշանակությունները ևս. «**Поде-**

<sup>11</sup> Տե՛ս **Հ. Աճառեան**, *Հայերեն գաղափարական բառարան*, հ.3, Թիֆլիս, 1913, էջ 567, 570-571:

<sup>12</sup> Տե՛ս *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ. 3, ԳԱԱ ԼԻ, Ե., 2004, էջ 95-96:

<sup>13</sup> **Հ. Ասմանզույան, Մ. Հովհաննիսյան**, *Անգլերեն-հայերեն բառարան*, Ե., 1984, էջ 857:

**лить** կատ. что 1.իրար մեջ բաժանել. – барышы оգուотը իրար մեջ բաժանել. –пополам իրար մեջ հավասար բաժանել, կիսել: 2. с кем բաժին հանել, կիսել, –последнее с другом բարեկամի հետ վերջին ունեցածը կիսել: 3. **փխր.բաժանել, միասին վերապրել.** –с ним тяжесть забот նրա հետ բաժանել հոգուերի ծանրությունը: **Подделиться** կատ. 1.իրար մեջ բաժանել, իրար բաժին հանել. –съ со мной деньгами քո փողից ինձ բաժին հանի՛ր. փողդ ինձ հետ կիսի՛ր: 2.– с кем **հաղորդել, պատմել, բաժանել, հաղորդակից դարձնել.** – радостью с кем-л. որևէ մեկի հետ ուրախությունը բաժանել, մեկին իր ուրախությանը հաղորդակից անել» (ընդգծումները՝ Վ.Ն.)<sup>14</sup>:

Ա. Սուքիասյանի «Հումանիշների բառարանում» որպես **կիսել** բայի հումանիշներ նշված են հետևյալ բայերը՝ առանց փոխաբերականի. «Բաժանել, երկատել, երկփեղկել, (հզվդ.) մասմասել, զուգաբաժանել, երկկիսել [հավասար], ընդմիջել (հնց.), մաս-մաս անել, բաժան-բաժան անել, կես անել, տապակ անել, երկու անել (բրբ.) մեջ անել, խոթել, փայել, ճոթ անել»<sup>15</sup>: **Կիսվել** բայը վկայված է «բաժանվել, երկատվել, երկփեղկվել, կես լինել» նշանակություններով միայն<sup>16</sup>: Մինչդեռ **կիսել** բայի՝ մեզ հետաքրքրող իմաստը (**մի բանի մասնակից, հաղորդակից դարձնել**) վկայված է նաև Ե. Գևորգյանի «Համանունների բառարանում»<sup>17</sup>:

<sup>14</sup>Ա. Ղարիբյան, *Ռուս-հայերեն բառարան*, Ե., 1977, էջ 798:

<sup>15</sup>Ա.Սուքիասյան, *Հայոց լեզվի հումանիշների բառարան*, Ե., 1967, էջ 324:

<sup>16</sup>Տե՛ս նույն տեղում:

<sup>17</sup>Ե. Գևորգյան, *Ժամանակակից հայերենի համանունների բառարան*, Ե., 1978, էջ 181:

Արևմտահայերենի բառարաններում բայը կամ նշված չէ<sup>18</sup>, կամ նշված է առանց իմաստային մեկնաբանության («կիտուիլ [գիսվիլ], կբ. չբ») <sup>19</sup>:

Հետաքրքիր վկայություններ կան Պ. Բեդիրյանի դարձվածաբանական բառարանում, որտեղ *կիսել* բայով ներկայացված են հետևյալ դարձվածքները. «**493 մի բան մեկի հետ կիսել**1- Մտերմաբար բաժնեկից դառնալ՝ դարձնել: Նրանց հետ մենք կիսել ենք ոչ միայն նահանջի դառնությունն ու հաղթանակի հրճվանքը, այլև մի կուր ջուրը, մի կտոր հացը (ՄՄ «ՄՀ»): Անշահախնդիր կերպով ու շռայլորեն պատրաստ է այդ փորձը նորից կիսելու ուրիշների հետ («Մդ», թրգմ.): **494 մի բան մեկի հետ կիսել**2 (անխրիստ.) (ռուս. делить что с кем, делиться с кем) –Մեկի հետ մի բանում հավասարապես հաղորդակից լինել: Ամեն վայրկյան ու ակնթարթ /Դու՛ ես միայն ինձ հետ կիսել/Թե՛ վիշտ, թե՛ վերք, թե՛ երգ, թե՛ վարդ, –/Մաքու՛ր իմ սեր (Չ, Իմ մուսային): **495 մի բան երկուսի միջև կիսել**- Երկու ուղղությամբ աշխատել, ջանք թափել նև: Կնոջը մեծ մասամբ չի հաջողվում աշխատանքում իր բոլոր հնարավորությունները դրսևորել, քանի որ իր ուշադրությունը, ժամանակն ու ջանքերը կիսում է ընտանիքի և աշխատանքի միջև («Գար. »)»<sup>20</sup>: Հետաքրքիր է, որ միայն երկրորդ դարձվածքի գործածությունն է համարվում անխրախուսելի:

Այսպիսով՝ *կիսել* բայը վկայված է միայն ժամանակակից հայերենի բառապաշարն ընդգրկող բառարաններում, ո-

---

<sup>18</sup>Ա. Մարգարյան, *Արևմտահայերենի բառարան*, Ե., 1991, էջ 178:

<sup>19</sup>Ռ.Սաքապետոյեան, *Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարան*, Ե., 2011, էջ 162:

<sup>20</sup>Պ. Բեդիրյան, *Հայերեն դարձվածաբանական ընդարձակ բառարան*, Ե., 2011, էջ 666:

րոնցում նշված են մինչև վեց՝ ուղիղ և փոխաբերական իմաստներ, իսկ բայի **«մի բանի մասնակից, հաղորդակից դառնալ»** իմաստը նշված է գրեթե բոլոր բառարաններում:

Ինչ վերաբերում է **կիսվել** փոխադարձ բային, ապա նրա՝ մեզ հետաքրքրող իմաստը չի հիշատակվում որևէ բառարանում. նշված է միայն չեզոք սեռի ուղիղ իմաստով, որի դիմաց տրվում է «բջիջների կիսվելու» օրինակը: Ի դեպ, հետաքրքիր է նաև այս բայի պահանջած լրացման հարցը (**կիսվել տպավորություններով, մտքերով, հուշերով**), որը ո՛չ միջոց է ցույց տալիս, ո՛չ ներգործող խնդիր է: Այն թերևս պետք է համարել վերաբերության խնդիր, որն արտահայտվում է հիմնականում բացառական, բայց երբեմն էլ տրական (Խնդիրը վերաբերում է եկեղեցուն, կրոնին և հեղինակության (ՍԶ, Պապ թագավոր)<sup>21</sup>, երբեմն էլ գործիական հոլովներով (Նրանք հետաքրքրվեցին Երևանում կատարվող բնակարանային **շինարարությամբ, Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքով...**)<sup>22</sup>: Կարծում ենք՝ խնդրո առարկա կապակցություններում լրացումը դարձյալ վերաբերության իմաստ է արտահայտում:

Ամփոփելով մեր դիտարկումները *կիսել* և *կիսվել* բայերի գործածության և իմաստային դրսևորումների վերաբերյալ կարծում ենք՝ տեղին է հիշատակել ակադ. Գ. Զահուկյանի հետևյալ ձևակերպումը. «...ամեն մի լեզվական հանրություն գտնվում է պատմական փոփոխության մեջ, ապրում է տնտեսական, քաղաքական, մշակութային և գաղափարական անընդհատ նորացման պրոցես: Այդ նորացումը համապատաս-

<sup>21</sup>Տե՛ս Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, *Շամալակակից հայոց լեզու*, հ. 3, Ե., 1976, էջ 240:

<sup>22</sup>Տե՛ս Ս. Աբրահամյան, *Հայոց լեզվի շարահյուսություն*, Ե., 2004, էջ 45:

խան դրսևորում է գտնում լեզվի մեջ, որ կոչված է բավարարելու **հասարակության հաղորդակցման կարիքները**, փոխանցելու կուտակվող փորձը սերնդից սերունդ: Այսպիսով, հասարակական փոփոխությունները առաջ են բերում լեզվական փոփոխություններ, ստեղծում արտահայտության նոր միջոցների ու եղանակների անհրաժեշտություն, փոփոխում սրբանց նշանակման ոլորտները, դրանք ընդլայնում կամ նեղացնում» (ընդգծումը՝ Վ.Ն.)<sup>23</sup>:

Հայերենի հին և միջին շրջաններում, ինչպես տեսանք, առհասարակ չի գործածվել *կիսել* բայը՝ ո՛չ ներգործական, ո՛չ կրավորական, ո՛չ էլ կրավորակերպ չեզոք սեռի դրսևորումներով: Այն վկայված է նոր շրջանի բառարաններում և լայնորեն գործածվում է հատկապես առօրյա-խոսակցական ոճում: Այսինքն՝ բայն ստեղծվել է հետագայում՝ անշուշտ, **հասարակության հաղորդակցական կարիքները** բավարարելու համար: Ժամանակի ընթացքում այն սկսել է հանդես գալ իմաստային այլ նրբերանգներով ևս: Չէ՞ որ Է. Աղայանի ձևակերպմամբ՝ «Ունենալով իրենց ուղղակի իմաստը և արտահայտելով այս կամ այն առարկայի, երևույթի, հատկանիշի և այլնի հասկացությունը, **բառերը խոսքի մեջ կարող են գործածվել նաև այնպիսի առարկաների, երևույթների, հատկանիշների համար, որոնք ինչ-որ կողմով առնչվում կամ նմանվում են ուղղակի իմաստի ցույց տված առարկային, երևույթին և այլն**» (ընդգծումը՝ Վ.Ն.)<sup>24</sup>:

Փոխաբերական նոր գործածությունները ձևավորում են դարձվածային հետաքրքիր միավորներ: Լեզվի զարգացումը

---

<sup>23</sup>Գ. Բ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, 10:

<sup>24</sup>Է. Բ. Աղայան, *Լեզվաբանության հիմունքներ*, Ե., 1987, էջ 337:



շարունակվում է, և բազմաթիվ բառեր իմաստային նորանոր դրսևորումներ են ունենում՝ երբեմն արտացոլելով նաև օտար լեզուների ազդեցությունը: Չէ՞ որ լեզվաբանական գիտության մեջ հիմնավորված է լեզվական փոխազդեցությունների բնական և անհրաժեշտ լինելը:

Nersisyan Varsik—The semantic peculiarities of the verbs *կիսել* and *կիսվել* in the Armenian language.—The Armenian verbs *կիսել* and *կիսվել* besides their main meanings have some additional meanings as well. Concerning the usage of these verbs in their different meanings there are various viewpoints in the Grammar of the Armenian language. The given paper is devoted to the analysis of the semantic features of these verbs.

Нерсиян Варсик-Семантика глаголов *կիսել* и *կիսվել* в армянском языке.-Армянские глаголы *կիսել* и *կիսվել* наряду со своими основными значениями имеют также дополнительные значения. Относительно употребления данных глаголов в разных значениях существуют различные точки зрения в грамматике армянского языка. Данная статья посвящена анализу семантики этих глаголов.

Միմոնյան Նեկտար  
(ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ  
*ՀԱՎՈՏԵԼ*

«Հայ բարբառագիտության ներածություն» աշխատության մեջ Գ. Ջահուկյանը, ի թիվս այլ ինդիքների, անդրադառնում է նաև հայ բարբառների հնչյունաքերականական և բառային հնաբանություններին: Բառային հնաբանություններին նվիրված բաժնում բերում է բարբառներում առկա այնպիսի բառամիավորներ, որոնք չկան գրաբարում, և որոնց նա վերագրում է հնդեվրոպական ծագում: Այդ բառերից է *լավոթել* բայը, որը բարբառներում վկայված է լավոտել, լավոթել, լավո/ս/թել տարբերակներով և ունի «վրան՝ տակը կեղտոտել», «մնտոել, ապականել» իմաստները<sup>1</sup>: Գ. Ջահուկյանը *լավոտել* «կեղտոտել, ապականել, լույծ կղկղել» բայի համար վերականգնում է հ.-ե. \*lǝb/p-, \*lǎb/p-, \*lǝb/p- «թույլ կախվել» իմաստով նախաձեվերը և բերում է հ.-ե. այլ լեզուներում պահպանված զուգահեռները՝ նորվեգերեն *slevjen* «լորձնոտ», շվեդերեն *slabba* «կեղտոտել», միջին նիդերլանդերեն *slabben* «կեղտոտել»<sup>2</sup>:

Պետք է ասել, որ հենց նույն էջում Ջահուկյանը բարբառային *լապոռ*, *լեպոռ* «նիհար, կախ ընկած միս» բառերի համար ևս իբրև հ.-ե. նախաձև նշում է նույն \* lǝb/p-, \* lǎb/p-, \* lǝb/p- «թույլ

---

<sup>1</sup> *Հայոց լեզվի բարբառային բառարան*, Ե., 2001, հ. 2, էջ 205 (այսուհետև՝ ՀԼԲԲ): **Հ.Աճառյան**, *Հայերեն գավառական բառարան*, Թիֆլիս, 1913, էջ 414 (այսուհետև՝ ՀԳԲ):

<sup>2</sup> **Գ. Ջահուկյան**, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 295 (այսուհետև՝ ՀԲՆ):

կախվել» իմաստով արմատները և բերում է նորվեգերեն *lapa* «թույլ կախվել», հին իսլանդերեն *leppr* «լաթեր» ձևերը: Հայերենի *լապռ*, *լեպռ* բառերի համար բառարաններում նշվում են «մսի վրայի թաղանթ, փառ, որ եփելուց առաջ կտրում և դեն են գրցում»<sup>3</sup>: Բարբառային բառարաններում ևս *լապռ*, *լեպռ* բառերը նմանատիպ իմաստներ ունեն (ՀԳԲ, էջ 411, ՀԼԲԲ, հ. 2, էջ 202): Հնդեվրոպական \**leḥ*/p-, \**lab*/p-, \**lob*/p- արմատների համար Յ. Պոկոռնու ստուգաբանական բառարանում նշվում են «թույլ կախվել, սահել, սայթաքել» իմաստները<sup>4</sup>: Այս արմատից են հունարենի *λοβός* «ականջի բլթակ», *λεβηρίς* «օձի հանած կաշին», լատիներենի *labium* «կախ ընկած շրթունքներ», *labō*, *-āre* «երերալ, տատանվել», *lapsus* «սահել, սայթաքել», հոլանդերենի *laf* «թուլացած, թույլ, կախ ընկած», հին եկալավ. *сладъ* «թույլ» (Պոկոռնի, էջ 655-657) և այլն: Օրինակներ հ.-ե. լեզուներից էլի կարելի է բերել, բայց, կարծում ենք, այսքանն էլ բավարար է՝ համոզվելու համար, որ իմաստային առումով հայերենի *լավոտել*-ը հ.-ե. \**leḥ*/p-, \**lab*/p-, \**lob*/p- նախաձևերից ծագած համարելը այնքան էլ ճիշտ չէ:

Գ. Ջահուկյանը նույն տեղում էջատակի ծանոթագրության մեջ *լավոտել* բայի համար գրում է. «Հնչյունապես ավելի քիչ հավանական է բխեցնել (հ.-ե. *Leu-* (*leuə* *lu-*) «կեղտ, կեղտոտել» արմատից» (ՀԲՆ, էջ 295): Յ. Պոկոռնին հ.-ե. *leu*, *le* *ə*- *lū*- արմատի համար նշում է «կեղտոտ, կեղտոտել, անմաքրություն»

<sup>3</sup> Է. Ադայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1967, էջ 516 (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ս. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, Ե., 1944, հ. 2, էջ 184 (այսուհետև՝ ՀԲԲ):

<sup>4</sup> J. Pokorny, *Indogermanisches Etymologisches Wörterbuch*, Bern-München, 1959, s. 655-657 (այսուհետև՝ Պոկոռնի):

իմաստները: Հունարենում կան *λύμα*-«անմաքրություն, կեղտ», *λύμη* «աղտեղություն, աղբ», *λύθρον*, *ος* «արյունախառն ցեխ», *αιμα*, *տուկ*. *λυμ* «կեղտ, տիղմ», կելտ. *lut-*, *lūt* «կեղտ, կեղտոտում եմ», լատ. *polluo* «ապականել, կեղտոտել», նաև «անարգել, անպատվել»<sup>5</sup>, հին իռլանդերեն *loth* «կեղտ», միջին իռլանդերեն՝ *con-luan* «շան կղկղանք» (Պոկոռնի, էջ 681): Իմաստային առումով նշված բառերը համահունչ են հայերենի *լավոտել* բայի իմաստներին: Ինչ վերաբերում է հնչյունական կողմին, ապա պետք է նշել, որ հենց ինքը՝ Ջահուկյանը, հենց իր այդ աշխատության մեջ բերում է հ.-ե. *eu* ունեցող արմատներ, որոնց *eu-* ի դիմաց հայերեն բառերն ունեն *ավ*. *կալառ* «նեղ առու», որի համար նշում է հ.-ե. *\*geu-* (ՀԲՆ, էջ 286), *լավ* «հեղեղ» բառի համար՝ հ.-ե. *\*pleu-* արմատը (ՀԲՆ, էջ 289), *կավար* «բարակ տախտակ՝ տանիքը ծածկելու համար»՝ հ.-ե. (*s*)*keu-* (ՀԲՆ, էջ 323): Պետք է նշել նաև, որ «Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ բերում է *\*aleu-* *աղալաղ*, *\*gheu-* *գալ-առ*, *\*keu-* *քալ* բառերը, որոնցում նույնպես հ.-ե. *eu* – ի դիմաց հայերենն ունի *ավ*<sup>6</sup>:

Այսպիսով, կարծում ենք, որ ոչ միայն իմաստով, այլև հնչյունապես ավելի ճիշտ կլինի *լավոտել* բառը բիւեցնել հ.-ե. *\*leu*, *\*leuə* , *\*lū*- նախաձևից:

<sup>5</sup> Հետաքրքրական է, որ հայ բարբառներում (Դիաղին, Ալաշկերտ) լավօթել-ն ունի նաև «անպատվել» իմաստը. (տե՛ս Վ. Կատվայան, *Բայազետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ*, Ե., 2016, էջ 238):

<sup>6</sup> Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան*, (այսուհետև ՀԼՊ), Ե., 1987, էջեր 111, 128, 132:

## ԽԱՐԵԼ/ԽԱՐԽԱՓԵԼ

*Խարել* բայը Հ. Աճառյանը դասում է դեռևս չստուգաբանված բառերի շարքը և բացատրում է «խարել, մոլորեցնել, գլխե հանել», որից՝ *խարանք* «խարկանք», *խարող* «խարող, պատրող», և բերում է օրինակներ Փարպեցուց. նա ավելացնում է, որ այդ նորագյուտ բառն ինքն է գտել ու մեկնել (ՀԱԲ, հ. 2, էջ 344):

*Խարել* բայը չկա ՆՀԲ-ում, բայց կան *խարխափ* «խարխափելով, կուրօրեն, շօշափելով և երերալով», *խարխափեմ* «նման կուրացն մոլորելոց, որք ընդ խաւարն խարխափիցեն»<sup>7</sup>: *Խարել* բայը բերվում է և՛ Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարանում», և՛ Լ. Հովհաննիսյանի՝ «ՆՀԲ-ում չվկայված բառեր» բառարանում, և՛ Լ. Խաչատրյանի «Գրաբարի ուսումնական բառարանում»՝ բոլորն էլ «խարել, մոլորեցնել» իմաստներով<sup>8</sup>:

Գ. Զահուկյանը ստուգաբանական բառարանում *խարել* բառի մասին գրում է, որ ունի «խարել, մոլորեցնել» իմաստը և ավելացնում է, որ ծագումն անհայտ է<sup>9</sup>: Մինչդեռ 1967 թ. հրատարակած «Очерки по истории дописьменного периода древнеармянского языка» աշխատության մեջ *խարդախ* բառի բացատրության ժամանակ բերում է նաև *խարել* «խարել» բայը և համեմատում հունարենի *kerdistos* «նենգ, խորամանկ», *kerdaleos*

---

<sup>7</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Ե., 1979, հ. 1, էջ 931-932 (այսուհետև՝ ՆՀԲ):

<sup>8</sup> Ռ. Ղազարեան, *Գրաբարի բառարան*, Ե., 2000, էջ 561, Լ. Հովհաննիսյան, *Նոր հայկազեան բառարանում չվկայված բառեր*, Ե., 2010, էջ 135, Լ. Խաչատրյան, *Գրաբարի ուսումնական բառարան*, Վենետիկ, 2016, էջ 135:

<sup>9</sup> Գ. Զահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 320 (այսուհետև՝ ՀՄԲ):

«խորամանկ, օգտակար, շահեկան», kerdalee «խորամանկ աղվես», kerdos «շահ, օգուտ, խորամանկ մտահղացում» բառերի հետ և կանխադրում է հ.-ե. \*kerd- նախաձևը<sup>10</sup>: Ստուգաբանական բառարանում *խարդախ* բառի բացատրության ժամանակ, որի ծագումը նույնպես համարում է չպարզված, նորից նշում է *խարել* բայը (ՀՄԲ, էջ 230):

Անկախ *խարել* բայի ծագման մասին եղած կարծիքներից՝ կարծում ենք, որ *խարել* բայի հետ իմաստային աղերս ունի հայերենի *խարխափեմ* բայը:

Հ. Աճառյանը *խարխափ* բառի բացատրության մեջ գրում է. «կոյրի պես ձեռքով այս ու այն կողմ շօշափել»։ գործածում է միայն նախդիրով՝ *առ խարխափ, առ խարխափս, ընդ խարխափս*, որից *խարխափել*»: Հ. Աճառյանը *խարխափ*-ը համարում է կա՛մ \**խափ* արմատի կրկնությամբ կազմված, կա՛մ -*ափ* մասնիկով՝ անձանոթ \**խարխ* արմատից (ՀՄԲ, հ. 2, էջ 346):

Գ. Ջահուկյանը *խարխափեմ* բայի համար որոշ կասկածով ենթադրում է *խափ* արմատը, որի կրկնավոր ձևն է համարում *խարխափեմ*-ը. *խափ* -ի համար կանխադրում է հ.-ե. \*kap- «բռնել ճանկել, խլել» ձևը (*Очерки...* с. 203): Գ. Ջահուկյանը *խարխափեմ* բառը համեմատում է *շաւշափեմ*-ի հետ (*շաւշափեմ – խարխափեմ*)՝ նկատի ունենալով շ/խ լծորդ հնչյունների առկայությունը նաև հայերեն այնպիսի բառերում, ինչպիսիք են *շարշլեմ- խարխալեմ, շեղ-խեղ, շրտնում –խրտնում* և այլն:

Կարծում ենք, որ *խարխափեմ* բայը կազմված է *խարել* բայի, այլ ոչ թե \**խափ* արմատի կրկնությամբ: Նախ՝ *խափ* ար-

---

<sup>10</sup>Г. Джаукян, *Очерки по истории дописьменного периода древнеармянского языка*, Е., 1967, с. 111 (далее Очерки...).

մատը Հ. Աճառյանը համարում է չստուգաբանված արմատ, բացատրում է որպես «որոգայթի մէջ բռնուիլը, արգելք, խափանում»: Բնագրային բերված բոլոր օրինակներում նշվում են «արգելք լինել, դադարեցնել, աչքը փակուիլ, տեսութիւնը կորցնել, դադարիլ, վերջանալ, գոցել, մարել, հանգցնել» իմաստները (ՀԱԲ, հ. 2, էջ 353), որոնք, կարծում ենք, *խարխափել* բառի արտահայտած իմաստների հետ դժվար է աղերսակցել: Աճառյանը նշում է նաև *խափ* արմատի *խուփ* ձայնդարձային տարբերակը՝ որոշ կասկածով կապելով դրանք *կափ* արմատի հետ, որի «...առաջին նշանակութիւնն է փակել, գոցել» և ավելացնում է, որ «թերևս պետք է միացնել *խափ*, *խուփ* հոմանիշ արմատների հետ» (ՀԱԲ, հ. 2, էջ 562): Գ. Ջահուկյանը *խափ* և *խուփ* արմատների քննության ժամանակ կասկածով է կապում դրանք *խարխափել*-ի հետ (*Օչերки...* с. 111): *Խարխափել* բառի մասին նա խոսում է նաև *շոպեն/շոպշոպեն, շոպոեն, շուպեն/, շուփ, շփեն, շաւշափեն* արմատների կապակցությամբ (*Օչերки ...* с. 203). այս բառերը համեմատվում են *շ/խ* համապատասխանության առումով. ինչ վերաբերում է կրկնությանը, ապա այս բառերը կրկնության նույն տեսակը չունեն. *փ*-ով վերջացող արմատների կրկնության ժամանակ տեղի է ունենում *փ/ւ* անցում (հմմտ. թափել-թաթափել, շուփ-շփել-շաւշափել), իսկ *խարել* բառի կրկնության ժամանակ առկա է *ր/փ* անցում, ինչպես *սարսուռ-սարսափ*. այն հատուկ է ոչ միայն բնիկ՝ հ.-ե., այլև ոչ հնդեվրոպական արմատներին (հմմտ. նոր - նոփ-նոր, ճերմակ - ճեփ-ճերմակ, դատարկ - դափ-դատարկ (բարբառներում՝ դարդակ - դափ-դարդակ):

Հայերեն բարբառներում կան *խարխափել* «մոլորվել», *խարխափուն* «անճարակ, խեղճ» իմաստով բառեր:

*Խարխափել* բայի մասին գրել է նաև Գ. Նիկողոսյանը հայ-ֆիննական լեզվական աղերսներին նվիրված իր ատենախոսության մեջ. հայ-ֆիննաուգրական բառագուգաբանությունների մեջ բերում է նաև հայերեն *խարխափել* և ֆիններեն *haparoida*, *haroa* «խարխափելով փնտրել», *harhaila* «թափառել», *harhauttua* «մոլորվել», *harhauttaa* «մոլորեցնել», *harha* «մոլորություն, սխալ» համապատասխանությունները<sup>11</sup>: Այստեղ ուշագրավ է ֆիններենի *harhauttaa*, *harhauttua* բառերի՝ կրկնությամբ կազմված լինելը:

### ՀԵԻՍԼ/ՀԻՆԻՆԱԼ/ՀՆՀՆԱԼ/ՀՆՀՆՈՒՔ

Հայերեն *հեւալ* բայի համար և՛ Հ. Աճառյանը, և՛ Գ. Ջահուկյանը կանխադրում են հ.-ե. \**peu-*, \**pəu-* նախածնը՝ «փչել» իմաստով (ՀԱԲ, հ. 3, էջ 89-90, ՀՄԲ, էջ 459): *Հեւալ*-ի համար Հ.Աճառյանը բերում է «յոզնածութիւնից ևն հատկտուր շնչել» իմաստը (ՀԱԲ, հ.3, էջ 89-90): ՆՀԲ-ում չկա *հեւալ*-ը իբրև գլխաբառ, բայց *հինինալ*, *հինինումն* բառերի բացատրության մեջ նշվում է «շունչ առնուլ, ստեպ ստեպ կամ ոգի հազիւ առնուլ, հեծել, հեւալ» (ՆՀԲ, հ. 2, էջ 99): Ռ. Ղազարյանի գրաբարի բառարանում *հեւալ*-ը բերվում է *հինինալ* «արագ-արագ և ընդհատաբար շունչ քաշել, հեւալ», և *հինինումն* «հեւալը, հևոց, հևք» բառերի բացատրության մեջ<sup>12</sup>: Մ. Աւգերեանի և Գ. Ճելալեանի

<sup>11</sup> Գ. Նիկողոսյան, *Հայ-ֆիննական լեզվական առնչություններ*, (թեկն. ատենախոսություն) Ե., 2011, էջ 168:

<sup>12</sup> Ռ. Ղազարեան, *Գրաբարի բառարան*, Ե., 2000, հ. 2, էջ 72:



«Առձեռն բառարան հայկազնեան լեզուի» բառարանում *հեւալ*-ը բերվում է ռամկական նշումով և բացատրվում է «ստեպ շունչ առնուլ»<sup>13</sup>: Բանն այն է, որ հեւալը սովորական շնչելը չէ. բացատրական բառարաններում *հեւալ*-ի համար բերվում են «արագ-արագ և ընդհատաբար շնչել» (ԱՀԲԲ, 861), «հոգնածությունից ուժգին և արագ շունչ քաշել» (ՀԲԲ, հ.3, էջ 102). հոմանիշների բառարանում *շնչել*-ի հոմանիշների շարքում չի բերվում *հեւալ*-ը, իսկ *հեւալ* բայի հոմանիշների մեջ բերվում են *հինհնալ, թասել, շմալ* (ՀԼՊ, էջ 402): *Հինհնալ* բայը և՛ Աճառյանը, և՛ Ջահուկյանը բացատրում են *հեւալ* (ՀԱԲ, հ. 3, էջ 95-96, ՀՄԲ, էջ 461), բայց Աճառյանը բերում է նաև հայ բարբառներում վրկայված *հնհնալ* «հեկեկալ, մորմոքել», *հնհնուք* «մտատանջություն, մորմոք», *հնիկ հնիկ ըլլալ* «հեծել, հեւալ» (ՀԱԲ, հ. 3, էջ 95-96): Ս. Մալխասյանը ևս *հինհնալ*-ը հղում է *հեւալ*-ին, իսկ *հնհրնալ*-ը, *հնհնուք*-ը, *հնիկ-հնիկ լինել*-ը բացատրում է համապատասխանաբար «մորմոքել, սիրտը ցավել», «մտատանջություն, մորմոք», «հեծել, մորմոքել» (ՀԲԲ, հ.3, էջ 118): Հայերենի բարբառային բառարաններում ևս *հնհնուք, հնհնալ* բառերի բացատրությունների մեջ նշվում են «մտատանջություն, մորմոք, սրտի ցավ» իմաստները:

Հ. Աճառյանը *հինհնալ* բայի ծագման մասին խոսելիս գրում է, որ «հնիս. ձևը, որոշված չէ դեռ», և ենթադրում է քուսկամ քո սկզբնավորությամբ նախաձև (ՀԱԲ, հ. 3, էջ 95-96): Որոշ կասկածով նույն կարծիքն է հայտնում և Գ. Ջահուկյանը (ՀՄԲ, էջ 461): Յ. Պոկոռնու բառարանում \*քուս- «շնչել» արմատը հ.-ե.

<sup>13</sup> Մ. Ալզերեան, Գ. Ճէլալեան, *Առձեռն բառարան հայկազնեան լեզուի*, Վենետիկ, 1865, էջ 494:

ցեղակից լեզուներում արտացոլված է հիմնականում «շնչել» իմաստով, բայց կան նաև «հուզել, թախծել» իմաստներով բառեր. օրինակ՝ հունարեն *πνεω* «շնչել», *πνεῦμα* «քամի, սյուր», նաև, որ ավելի կարևոր է, կրկնությամբ կազմված *πνιπ-νύω* «հոգսեր ունենալ, զուրբ շարժել, հուզել», հին վերին գերմ. *fnāsteōn*, անգլսաքս. *fnesan* «նեղվել, տաղտկանալ, թախծել, տրտմել» (Պոկոռնի, էջ 838-839): Հնդեվրոպական լեզուներից բերված բառերը, կարծում ենք, իմաստային աղերսներ ունեն հայերենի *հինհնալ*, *հնհնուք* բառերի հետ, և դա թույլ է տալիս հայերենի այդ բառերի համար, արդեն առանց կասկածի, վերականգնել հ.-ե. \**pneu-* նախաձևը:

Simonyan Nektar - Etymological notes. - The article deals with the verbs լավոտել (to dirty, defecate), խարել (to deceive, mislead) / խարխափել (to blunder around), հևալ (to puff) / հիհիհալ (to groan, to pant). The Indo-European form of the verb լավոտել is clarified . It is proposed to raise to the Indo-European archetype \**leu* instead of \**lēb/p-*, \**lāb/p-*, \**lōb/p-*. The verb խարխափել (to blunder around) is considered to be a reduplicated form of the verb խարել. The verb հիհիհալ (to groan, to pant) is a reduplication of հևալ (puffing) and goes back to the Indo-European archetype \**pneu-*. There exist the roots in the other Indo-European languages (Greek, Anglo-Saxon) with similar meanings.

Симонян Нектар - Этимологические заметки. - В статье рассматриваются глаголы լավոտել (пачкать, загадить), խարել (обмануть, ввести в заблуждение)/ խարխափել (передвигаться ошупью), հևալ (запыхаться), հիհիհալ (пыхтеть). Уточняется индоевропейская праформа глагола լավոտել. предлагается возвести к

индоевропейской праформе \*leu- вместо \*lēb/p-, \*lāb/p-, \*lōb/p-. Глагол ἴσθῃσι (передвигаться ошупью) предлагается считать редуцированной формой глагола ἴσθῃσι. Глагол ἴσθῃσι (пыхтеть) - редупликация ἴσθῃσι (запыхаться) и восходит к и.-е праформе \*rneu-. В индоевропейских языках (греческом, англосаксонском) существуют корни аналогичными значениями.

ՄԻ ՇԱՐՔ ԱՆՁՆԱՆՈՒՆԵՐԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՁԵՎԵՐԻ  
ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայկական որոշ անձնատունների բարբառային ձևերը, ենթարկվելով հնչյունափոխության, երբեմն այնքան են հեռացած լինում իրենց բնօրինակներից, որ դրանց որոշ մասի նախնական ձևի վերականգնումը, առավել ևս՝ ստուգաբանությունը գրեթե անհնարին է դառնում:

Նման անձնատուններից է Հյուսիսային Նախիջևանում և Վայոց ձորում ժամանակին հայտնի **Թեբուր (Թեփուր)** անձնատունը: Առաջին հայացքից թվում է, որ այս անունը **փետուր** բառանվան բարբառային **թեբուր** ձևը պետք է լինի, սակայն հնարավոր ենք համարում ստուգաբանության առավել հավանական այլ տարբերակ:

Հայտնի է, որ Հայաստանի գյուղերում մինչև անցյալ դարի վերջերը կիրառական էին աստվածաշնչյան այնպիսի անուններ, որոնք ծանոթ էին միայն քահանաներին, իսկ հասարակ մարդկանց՝ անծանոթ: Հազվադեպ կիրառական **Ջեբեթ, Աբիսակ, Մամբրե, Բերսաբե, Ասանեթ** և նման այլ անուններով, թեև սակավ, անցյալում անվանակոչում էին մկրտվող երեխաներին: Հանրությանն այնքան անծանոթ են եղել այս անունները, որ երբեմն շփոթել են անգամ դրանց սեռային պատկանելությունը: Օրինակ, Շիրակի տարածաշրջանում ոչ հեռու անցյալում երբեմն հանդիպում էին **Ջեբեթ** (Հովհաննես և Հակոբ առաքյալների հոր անունը) արական անունով կանայք, իսկ Նախիջևանում՝ **Աբի-**

**սակ** (Դավիթ թագավորի հարձի անունը) իզական անունով տղա-  
մարդիկ:

Այս անունների շարքին կարելի է դասել նաև վերոհիշյալ **Թերուր** (**Թեփուր**) անձնանունը, որը, մեր կարծիքով, նույնական է աստվածաշնչյան **Դերորա** անձնանվան հետ: Հին կտակարանում հիշատակված մարգարեուհի-դատավորուհու անունը<sup>1</sup> քրիստոնեական աշխարհում բավական տարածված է եղել, իսկ անցյալ դարից հատկապես Միացյալ Նահանգներում և Անգլիայում խիստ կիրառական անձնանուններից մեկն է դարձել: Կարծում ենք, որ հենց **Դերորա** անունն է տեղական բարբառի (Վայոց ձորի կամ Ճահուկ-Վայքի միջբարբառ)<sup>2</sup> հնչյունափոխական կանոններով **Թեփուր** դարձել. նախ բառավերջի **ա**-ն է ընկել (ինչպես Թամարա-**Թամար**, Լաուրա-**Լավուր**) երկու ձայնավորների միջև **բ**-ն **փ** է դարձել (ինչպես Թագուհի-**Թաքօհի**, Թադևոս-**Թաթիվոս**), ապա **փ**-ի ազդեցությամբ **դ**-ն է դարձել **թ** (ինչպես գրդակ-**քրթակ**, գտնել-**քրթնիլ**), այնուհետև՝ **ր**-ից առաջ **ո**-ն դարձել է **ու** (ինչպես մորել-**մուրելի**, Հոռոմ-**Հուռում**): Այսպիսով, **Դերորա** > **Դերօր** > **Դերուր** > **Դեփուր** > **Թեփուր** հնչյունափոխության շղթայում նման անձանաչելի ձև է ստացել և աստվածաշնչյան այս անձնանունը:

**Մասպուռ** անձնանունը նույնպես անցյալում հանդիպում էր Վայոց ձորի և Հյուսիսային Նախիջևանի տարածաշրջանում: Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանի» համապատասխան բարբառային ձևերում բացակայող այս անունը, կարծում ենք՝ **Համափյուռ** անվան հնչյունափոխված ձևն է: Այստեղ ոչ շեշտակիր **ա**-ն, ինչպես նաև **հ** և **յ** հնչյուններն ընկել են, **ս** խուլի ազդեցությամբ **փ** շնչեղ խուլը ապաշնչեղացել է և արդյունքում

<sup>1</sup> *Աստուածաշունչ մատեն*, Դատաւորաց, Դ.4-14, Կոստանդնուպոլիս, 1896, էջ 295-296:

<sup>2</sup> **Ա. Վարդանյան**, *Վայոց ձորի միջբարբառը*, Ե., 2004:

հիշյալ ձևն է ստացել անձնանունը՝ **Համասփյուռ** > **Հըմասփյուռ** > **Մասփուռ** > **Մասպուռ**: Ի դեպ, այս անձնանունը նույն տարածաշրջանում կիրառական է նաև **Համաս** ամփոփված տարբերակով, ինչպես Եղիսաբեթ > **Մաբեթ**, Հայկանուշ > **Հայկան**, Սիրանուշ > **Սիրան** և այլն:

**Մայթաղի** անձնանունը նույնպես անցյալում հայտնի էր նույն տարածաշրջանի՝ Խոյի բարբառով խոսող բնակավայրերում: Մեր կարծիքով սա էլ **Մագդաղենի**<sup>3</sup> կամ **Մագթաղինե** անվան հնչյունափոխված ձևն է: Խոյի բարբառին որոշ դիրքերում (հիմնականում՝ ձայնորդներից և որոշ խուլերից առաջ) բնորոշ է **գ, կ, ք** > **յ** հնչյունափոխությունը (ինչպես **օգնել** > **օյնել**, **հագնել** > **հայնել**, **աքլոր** > **այլօր**, **աքսոր** > **այսօր** **օգտվել** > **օյտվել** և այլն): Այստեղ էլ, փաստորեն, առկա է **Մագդաղենի** > **Մագթաղի** > **Մայթաղի** հնչյունափոխական շղթան:

Աստվածաշնչյան **Աբիսակ** իգական անունը որոշ շրջաններում արական անվան նշանակություն ստանալու հանգամանքը կարելի է բացատրել **Միսակ**, **Միսակ** անունների համաբանությամբ կամ էլ որպես **Աբիսողոմ** անվան կրճատ ձև ընդունելու հանգամանքով: Հնարավոր ենք համարում նաև, որ քրդերենից փոխառյալ **Ավիսար** (**ava sar**՝ «պաղ ջուր, սառնորակ ջուր») անվան նմանությամբ է արական անվան նշանակություն ստացել անձնանունը:

**Կայսենիկ** անձնանունը թերևս կարելի էր ստուգաբանել **Արփենիկ**, **Վարսենիկ** անձնանունների համաբանությամբ հորինված անձնանուն, որի արմատը ամենայն հավանականությամբ **կասիա** (**դարիձենիկ**) ծառանունն է: Սակայն վերջին ձևը, որը Գ. Ջահուկյանը բխեցնում է պահլավերեն **dār-i čēnik** («կինամոն,

<sup>3</sup> **Ն. Աճառյան**, *Հայոց անձնանունների բառարան*, հ. 3, Ե., 1946, էջ 160:

դարչին», բառացի՝ «չինական փայտ») և պարսկերեն **dār-i čīnī, dārčīnē** ձևերից<sup>4</sup>, հայերենում ունեցել է նաև **դարիսեն, դարսենեկ, դարսենի(կ)** և այլ ձևեր<sup>5</sup>: Վերջին ձևերը հուշում են, որ անձնանունը ամենայն հավանականությամբ կարող ենք դիտարկել որպես վերոհիշյալ ծառանվան **կասիա** և **դարսենիկ** ձևերի բաղադրություն, մանավանդ, որ երկու նույնանիշ բառերի միախառնմամբ նոր բառի կազմման այս երևույթը բարբառին բնորոշ է, և առկա են համանման այլ օրինակներ՝ ծամոն + մաստակ > **ծամ-դաք**, մանգաղ + գերանդի > **մ՛ ր՛ նդի**, տոտիկ + ոլոք > **տոօք** և այլն<sup>6</sup>:

Հյուսիսային Նախիջևանում հայտնի էր նաև **Աձենիգ** իգական անձնանունը, որը ակնհայտորեն պատմական **Այծեմնիկ**<sup>7</sup> անձնանվան հնչյունափոխված ձևն է: Այստեղ էլ **յ** ձայնորդն է ընկել (**յ > Ø**), **մ** և **ն** ռնգայինները միաձուլվել են, իսկ բառավերջի **կ** խուլը ձայնեղացել է (**կ > գ**), որը խիստ բնորոշ է բարբառին:

Նախիջևանի տարածքում անցյալում հայտնի էր նաև **Թուխեր** անձնանուն, որը կարելի է ստուգաբանել որպես **Թուխեր** («թխահեր») բնօրինակի հնչյունափոխված (**h > Ø**) ձև, մանավանդ որ **թուխ** արմատով արական և իգական անձնանուններ կիրառական են հայերիս շրջանում՝ **Թուխայր, Թուխձամ, Թուխիկ** և այլն: Անգամ մեր ամենակիրառական անձնանուններից մեկը՝ **Աշխենն** է հին պարսկերենի **axšaēna** («թուխ») արմատից բխեցվում<sup>8</sup>:

<sup>4</sup> **Գ. Զահուկյան**, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 188:

<sup>5</sup> **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ. 1, Ե., 1971, էջ 638:

<sup>6</sup> **Ա. Վարդանյան**, նշված աշխատանքը, էջ 36:

<sup>7</sup> **Հ. Աճառյան**, *Հայոց անձնանունների բառարան*, հ. 1, Ե., 1942, էջ 142:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 179:

**Խաչիբաբ** անձնանունը անցյալում հայտնի է եղել Նախիջևանում (Ջուղա, Գողթն) և Սյունիքում: Բանաստեղծ Համո Սահյանն իր բանաստեղծություններում պապի անունը հիշատակել է **Խաչիպապ** ձևով, իսկ Ջուղայի խաչքարերից մեկի 1581 թ. վիմագիր արձանագրության մեջ անձնանունը հիշատակվում է **Խաչապապ**<sup>9</sup> ձևով. *«Այս է տապան հանգստեան պարոն Խաչապապայի, որ յանհրաւի մատնեցաւ ի ձեռս անհաւատից...»*:

Ազնաբերդում և Տղնայում հայտնի էր նաև **Խաչիբաբյան** ազգանունը: Հ. Աճառյանը ստուգաբանում է անձնանվան **Խաչաբաբա** ձևը՝ որպես հայերեն **խաչ** և թուրքերեն **baba** («հայր») բառերից կազմված անձնանուն<sup>10</sup>: Մակայն, անձնանվան՝ առավելապես Նախիջևանում և Գողթնում տարածված **Խաչիբաբ(ա)** ձևը հուշում է, որ այն ավելի շուտ հայերեն **խաչ** և պարսկերեն **baba** («հայր») բառերից բաղկացած իզաֆեթային կառույց է՝ «հոր խաչ» նշանակությամբ, իսկ **Խաչաբաբան** ձայնավորների ներդաշնակությամբ հնչյունափոխված ձևն է:

Գտնում ենք, որ **Հերիքնազ** անձնանունը նույնպես կարելի է դասել բնօրինակից հեռացած՝ վերոհիշյալ բարբառային անձնանունների շարքին՝ չնայած Հ. Աճառյանը այն ստուգաբանել է որպես «հերիք ինչքան նազ ես անում» բառակապակցության ամփոփված ձև<sup>11</sup>: Հետաքրքիրն այն է, որ այս անձնանվան այլ, ավելի հավանական ստուգաբանության տարբերակի մասին են հուշում հենց մեծ լեզվաբանի կողմից **նազ** արմատով մի ամբողջ շարք անձնանունների ստուգաբանությունների նախադեպերը: Օրինակ, **Մելեքնազ** անձնանունը Հ. Աճառյանը ստուգաբանում է որ-

---

<sup>9</sup> Ա. Այվազեան, *Նախիջևանի վիմագրական ժառանգությունը. Ջուղայ*, հ. Ա, Ե., 2004, էջ 145:

<sup>10</sup> Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հ. 2, Ե., 1944, էջ 467:

<sup>11</sup> Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հ. 3, Ե., 1946, էջ 86:



պես «հրեշտականազ»՝ բխեցնելով արաբերեն **melek** («հրեշտակ») և պարսկերեն **nāz** («նազ», «նազանք») բառերից<sup>12</sup>, **Գուլնազը**՝ որպես «վարդի նման նազելի», պարսկերեն **gol** («վարդ») և **nāz** բառերից<sup>13</sup>, **Սալվինազը**՝ որպես «նոճու նազ(անք) ունեցող», պարսկերեն **sarv** («նոճի») և **nāz** բառերից<sup>14</sup>, **Արեզնազը**՝ «արևի նազ(անք) ունեցող»<sup>15</sup>, հայերեն **արեզ(ակ)** և **նազ** բառերից և այլն: Պարսկերենում նույնպես առկա է **նազ** արմատով իգական անձնանունների մի ամբողջ շարք՝ **Մահինազ**՝ «լուսնի նազ(անք) ունեցող», **mah** («լուսին») և **nāz** արմատներից, **Գուլնազ**՝ «վարդի նազ(անք) ունեցող», **gol** («վարդ») և **nāz** արմատներից, **Փ՝ րինազ**՝ «փերու նազ(անք) ունեցող», **pari** («փերի») և **nāz** արմատներից, **Շ՝ հնազ**՝ «արքայական նազ(անք) ունեցող», **šāh** («արքա») և **nāz** արմատներից և այլն<sup>16</sup>:

Այս կազմությունները հուշում են, որ ամենայն հավանականությամբ **Հերիքնազ** անձնանունը նախապես ունեցել է **Հիրիկնազ** («հիրիկի նազ(անք) ունեցող») ձևը, այնուհետև ժողովրդական ստուգաբանությամբ **Հերիքնազ** է դարձել և մեկնաբանվել վերոհիշյալ «հերիք ինչքան նազ ես անում» իմաստով: Այս վարկածը հաստատում է նաև այն հանգամանքը, որ **հիրիկ** ծաղկանունը վկայված է գրաբարում<sup>17</sup>, միջնադարյան ձեռագրերում առկա է նաև **Հիրիզ** անձնանունը<sup>18</sup>, իսկ հայկական անունների ցան-

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 239:

<sup>13</sup> **Հ. Աճառյան**, *Հայոց անձնանունների բառարան*, հ. 1, Ե., 1942, էջ 505:

<sup>14</sup> **Հ. Աճառյան**, *Հայոց անձնանունների բառարան*, հ. 4, Ե., 1948, էջ 347:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 271-272:

<sup>16</sup> *Персидско-русский словарь* (руководитель подготовителей – Ю. Рубинчик), հ. 2, Մ., 1970, էջ 783-787:

<sup>17</sup> *Նոր բառգիրք հայագեան լեզուի*, հ. 2, Ե. 1981, էջ 100:

<sup>18</sup> *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ* (կազմեց Լ. Խաչիկյանը), հ. Գ, Ե., 1967, էջ 159:

կերում ավանդաբար ներառվում է **Հիրիկ** անձնանունը: Բարբառային **զ՛ մբեղ** (Վան), **բարբուսնակ** (Մուշ) և այլ ձևերի կողքին զագայերենում առկա է ծաղկանվան **հերիկ** տարբերակը<sup>19</sup>, որը հավանաբար փոխառություն է հայերենի Դերսիմի բարբառից: Չ. Աճառյանը նաև հնարավոր է համարում այս ծաղկանունվան և **հիր** («հակնթագույն») գունանվան կապը, մանավանդ որ սանսկրիտում առկա է **hari** («դեղնականաչ»), լատիներենում՝ **purpura** և հունարենում՝ **πορφύρα** («յասամանագույն») գունանունները, որոնք համեմատելի են միմյանց հետ, ինչպես նաև հունարենի **իրի** («հիրիկ») և հին պարսկերենի **xīr** («մեխակ») ծաղկանունների հետ: Հնարավոր ենք համարում, որ հնդկական **Հիր** իգական անձնանունը («Հիր և Ռանջա» փենջաբյան հայտնի սիրավեպի հերոսուհու անունը) նույնպես կապ ունենա այս ծաղկանվան հետ:

Ավելացնենք, որ հայկական անձնանունների մեջ քիչ չեն նաև պարզապես **նազ** արմատից ածանցված բազմաթիվ այլ անձնանուններ՝ **Նազիկ**, **Նազե**, **Նազելի**, **Նազենի(կ)**, **Նազան(ի)** և այլն, որոնցով հայ աղջիկներին դարեր շարունակ անվանակոչել և այսօր էլ անվանակոչում են նրանց մեջ հենց նազելիություն, հմայք տեսնելու ակնկալիքով:

Այսպիսով, անձնանունների բարբառային տարբերակների բնօրինակ ձևերը կարելի է վերականգնել՝ հաշվի առնելով տվյալ բարբառի հնչունափոխության օրենքները:

Vardanyan Artak – Etymology of Dialectal Forms of Some Personal Names.– The dialectal forms of some Armenian personal names are sometimes so far removed from the originals that their restoration or etymology is almost impossible.

<sup>19</sup> Չ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 3, Ե., 1977, էջ 96-97:

Among them are such names as **Թեփուր Тегур** < Դերորա Deborah, **Մասպուր Maspur** < Համասպիյուն Հамаспур, **Մայթաղի Maytaghi** < Մագդաղիներ Magdalene, **Վայսենիկ Kaysenik** < Վասիա Cassia + Դարսենիկ Darsenik and others, well-known in North Nakhjevan and Vayots Dzor region. In these names, the sound changes were made in accordance with the laws of the alternation of the sounds of a dialect. The well-known personal name **Հերիքնազ Heriknaz** < Հիրիկնազ Hiriknaz can also be attributed to this series.

Варданян Артак – Этимология диалектных форм некоторых личных имен.– Диалектные формы некоторых армянских личных имен иногда бывают настолько удалены от оригиналов, что их восстановление или этимология становится почти невозможной.

К таким личным именам относятся известные в Северном Нахиджеване и Вайоц Дзоре имена **Թեփուր Тегур** < Դերորա Дебора, **Մասպուր Маспур** < Համասպիյուն Амаспур, **Մայթաղի Майтахи** < Մագդաղիներ Магдалине, **Վայսենիկ Кайсеник** < Վասիա Касия + Դարսենիկ Дарсеник и другие, в которых в соответствии с законами чередования звуков диалекта произошли звуковые изменения. К этому ряду можно отнести также известное личное имя **Հերիքնազ Эрикназ** < Հիրիկնազ Ирикназ.

## Հ Ա Ղ Ո Ր Դ ՈՒ Մ Ն Ե Ր

Գրիգորյան Գայանե  
(ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

### ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ ՀՐԱՄՍՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԻՐ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅԱՆ Ը-Ի ԱՆԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Հնչյունների անկման տեսակներից ամենատարածվածը բառավերջի հնչյունի անկումն է՝ ապոկոպը (հուն. ἀποκοπή կրճատում), որը պայմանավորված է հնչամիավորի արտասանության թուլացմամբ: Հնչադասության, հնչաբառի արտաբերության վերջում նկատվում է հնչյունի ֆիզիկական չափեզրերի սվալների նվազում, որը հաստատվում է փորձառական հնչյունաբանական մեթոդների շնորհիվ:

Հայերենի խոսակցական լեզուն մենք ևս համարում ենք որպես «գրական լեզուն կրողների անկաշկանդ խոսք՝ նրանց առօրյա հաղորդակցմանը ծառայող»<sup>1</sup>: Եվ այդ անկաշկանդ խոսքում հաճախ են տեղի ունենում բացթողումներ, տնտեսումներ, անկումներ և կորուստներ: Ժամանակակից խոսակցական լեզվում հնչյունների անկման ցայտուն օրինակ է հրամայական եղանակի *իր* վերջավորության *ր*-ի անկումը, որը համատարած բնույթ ունի (*լսի՛ր* – ի փոխարեն արտասանում ենք *լսի՛*): Նշենք, որ անկման այս երևույթը տարածված է բարբառներում, որի ազդեցությամբ էլ թերևս այն ներխուժել է խոսակցական լեզու: Ա. Ղարիբյանը իր «Համառոտություն հայ բարբառագիտութ-

<sup>1</sup> Լ. Թեյլան, *Արդի հայերենի քերականության հարցեր*, Ե., 2016, էջ 4:

յան»<sup>2</sup> գրքում բերում է Ուրմիայի և Վանի բարբառների հրամայականի հետևյալ ձևերը՝

կյիրի', կյիրե'ք՝ Ուրմիայի բարբառ  
սըրի' սըրե'ք՝ Վանի բարբառ

Ա. Գրիգորյանը իր «Հայ բարբառագիտության դասընթաց» գրքում գրում է. «Բարբառներում եզակի հրամայականը ունենում է *ի, է, ա* վերջավորություններ (գըրի', կըրի', գրե', խըմա', կարթա')»<sup>3</sup>:

Հրամայական եղանակի *ի* վերջավորության *ը*-ի անկման երևույթը բացի բարբառներից գոյություն ունի նաև ժամանակակից խոսակցական լեզվում, որը պայմանավորված է մի շարք հանգամանքներով:

Առաջին պատճառը այսպես կոչված տնտեսման սկզբունքն է, երբ *ի* վերջավորության փոխարեն գործածվում է *ի* վերջավորությունը, սակայն խոսակիցը հասկանում է, որ իրեն հրամայում կամ խնդրում են, այսինքն՝ երբ փոփոխված տարբերակում իմաստը հասկացվում է: Հրամայական եղանակի *ի* վերջավորության *ը*-ի չարտասանելը, կարծում ենք, անփութության արդյունք է, և եթե մարդիկ խոսակցական լեզվում հրամայական եղանակի եզակի թվի երկրորդ դեմքի ձևը կազմում են *ի* վերջավորության ավելացումով, ապա նպատակն այն է, որ *ը*-ն ավելի է ուժեղացնում հրամայականի իմաստը:

Հրամայական եղանակի *ի* վերջավորության *ը*-ի անկման պատճառներից մեկն էլ կարող է լինել այն փաստը, որ հրամայականի այս ձևը համընկնում է ժխտական դերբայի հետ, որը մասնակցում է պայմանական եղանակի ժխտական ձևի կա-

---

<sup>2</sup> Ա. Ղարիբյան, *Համառոտություն հայ բարբառագիտության*, Ե., 1941, էջ 275, 344:

<sup>3</sup> Ա. Գրիգորյան, *Հայ բարբառագիտության դասընթաց*, Ե., 1957, էջ 187:

ռուցմանը, այսինքն՝ ձևը կա, բայց գործածվում է այլ պարագայում և այլ իմաստով: Ժխտական դերբայը կազմվում է բայի առաջին հիմքից, որին ավելանում են *-ի*, *-ա* վերջավորությունները՝ գրել-*գրի*, կարդալ-*կարդա* (մեզ հետաքրքրում է *գրել-գրի-ն*):

*Գրի* ձևը հանդիպում ենք նաև ըղձական և պայմանական եղանակների ներկա ժամանակաձևերի եզակի 3-րդ դեմքերում՝ *գրի*, *պիտի գրի*, որը նույնպես, հնարավոր է, շփոթման տեղիք է տվել կրկին այն պնդմամբ, որ ձևը լեզվում կա, բայց գործածվում է քերականական այլ իմաստով: Այսպիսով, մի կողմից ունենք *գրի* ժխտական դերբայը, (*չեմ գրի*), մյուս կողմից՝ նշված ժամանակաձևերը, որոնք ճիշտ կիրառումներ են իրենց եղանակաժամանակային ձևերում, սակայն ոչ ճիշտ՝ քերականական այլ դեպքերում, մասնավորապես հրամայական եղանակի եզակի թվի երկրորդ դեմքի պարագայում:

Արգելյական հրամայականում *մի՛ գրիր* ձևը իմաստով մոտ է պայմանական եղանակի ժխտական *չես գրի* ձևին (երկու ձևերում էլ առկա է ժխտման փաստը՝ *մի՛ գրիր-չեմ գրի*), և քանի որ վերջին դեպքում *ր*-ն չկա, ուստի հնարավոր է, որ նմանության սկզբունքով *մի՛ գրիր* ձևում *ր*-ն անկում է ապրում:

Մեր կողմից իրականացված փորձառական հետազոտության նպատակն է պարզել, թե ինչու է տեղի ունեցել այս անկումը: Մեր առաջադրանքն է հաղորդավարների խոսքի միջոցով ապացուցել, որ *ր*-ի անկման պատճառներից մեկը կարող է լինել արտասանության թուլացումը, որը հայտնի փաստ է հրնչյունաբանության մեջ, ինչպես նաև դիտարկել այլ պատճառներ ևս (հրամայական եղանակի հրաման արտահայտող հնչերանգը, առավել շեշտված *ի* ձայնավորը և այլն), որոնք նպաստել են *ր*-ի անկմանը:

Այն փաստը, որ խոսակցականում բայաձևերի մեջ իսպառ բացակայում է *ր*-ն, ակնհայտ է թե՛ լսողությանը և թե՛ փորձառական տվյալներում, այսինքն՝ հնչապատկերի մեջ բոլորովին չկա *ր*-ի պատկերը: Եթե մենք կարողանանք հաղորդավարների գրական արտասանության տարբերակում ապացուցել բառի վերջին *ր*-ի ակնառու թուլացումը, ապա կկարողանանք հաստատել, որ խոսակցական լեզվում *ր*-ի լրիվ անկումը կապված է արտասանության թուլացման հետ, այն աստիճանի թուլացման, որը հանգում է *Օ*-ի, այսինքն՝ հնչյունի բացարձակ անկման:

Փորձառական ճանապարհով հետազոտել ենք հրամայական եղանակի համապատասխան բայաձևերի ֆիզիկական չափերը՝ ուժգնությունը, հաճախականությունը, սևողությունը և ֆորմանտները: Այդ նպատակով ընտրել ենք հրամայականում *հր* վերջավորություն ունեցող բայաձևեր, որոնք արտասանվել են հենց *հր* վերջավորությամբ: Որպես համեմատության եզր՝ ընտրել ենք նաև գոյականներ, որտեղ հնչում է *ր* բաղաձայնը 3 դիրքերում՝ բառակիզբ, բառամեջ, բառավերջ:

Հաղորդավարները<sup>4</sup> ընթերցել են հրամայական եղանակի բայաձևերը, ինչպես նաև միավանկ, երկվանկ, եռավանկ, քառավանկ բառեր, որոնք պարունակում են *ր* ձայնորդը նշված դիրքերում, որտեղ *ր*-ն ոչ թե հրամայականի վերջավորության մասնիկ է, այլ ընդամենը բառի վերջին հնչյուն:

---

<sup>4</sup> Հաղորդավարներն ունեն բարձրագույն կրթություն, ծնվել և մեծացել են Երևանում, տիրապետում են ժամանակակից գրական և խոսակցական արևելահայերենին:

Բառերը ձայնագրվել են, այնուհետև մտցվել «Պռաստ»<sup>5</sup> ծրագրի մեջ: «Պռաստ»-ը ժամանակակից փորձառական հնչյունաբանության մեջ ամենաօգտագործվող համակարգչային ծրագրերից է, որը նախատեսված է հնչամիավորների վերլուծության և համադրության համար: Ծրագիրը հնարավորություն է տալիս ուսումնասիրել հնչամիավորի ուժգնությունը, հաճախականությունը, տևողությունը, ֆորմանտները և սպեկտրը: Փորձառական ուսումնասիրության է ենթարկվել 69 բառ՝ 3 հաղորդավարների ընթերցմամբ, կատարվել է 924 գործողություն: Վերլուծել ենք *p* բաղաձայնի տևողությունը, ուժգնությունը, հաճախականությունը և ֆորմանտները նրա 3 դիրքերում՝ բառակիր, բառամեջ և բառավերջ:

### **Բ-ն բառակիրում**

Հայտնի է, որ *p* բաղաձայնով սկսվող բառերը հայերենում մեծաքանակ չեն (մոտ 2.5 տասնյակ)՝ *բաբբի, բաբբունի, բևանի, բոպե* և այլն: Ուսումնասիրել ենք հենց նշած բառերը:

### **Բ-ն բառավերջում**

Բառավերջի դիրքի համար հատուկ խումբ են կազմել հրամայական եղանակի եզակի թվի երկրորդ դեմքի բայաձևերը՝ *պատմի՛ր, հարգի՛ր, երգի՛ր, մշակի՛ր, ծրագրի՛ր, պատասխանի՛ր, արտասանի՛ր*:

Բառավերջի *p*-ն ուսումնասիրելու համար վերցրել ենք նաև միավանկ, երկվանկ, եռավանկ և քառավանկ՝ *p*-ով վերջացող բառեր՝ գոյականներ: Ընդ որում, բառավերջի *p*-ին նախորդել են հայերենի բոլոր ձայնավորները, այսինքն՝ ունեցել ենք *ար,*

---

<sup>5</sup> «Պռաստ» (Praat, հոլանդերեն՝ խոսք, խոսել) ծրագիրը մշակվել և շարունակում է զարգանալ Ամստերդամի համալսարանի գիտաշխատակիցների՝ Պոլ Բոերսմայի (Paul Boersma) և Դեյվիդ Ուինինկի (David Weenink) կողմից: Ծրագիրը ստեղծվել է 1995թ.:



*որ, էր, իր, ուր, ըր* վերջավորություն ունեցող միավանկ և բազմավանկի բառեր՝

միավանկ՝ *դար, պար, սար, կար, չար, քար, բեր, հեր, գիր, ծիր, փոր, կոր, մուր, սուր, սըր*

երկվանկ՝ *հունվար, պաշար, կամար, նվեր, պատվեր, պանիր, թոնիր, մսուր, ամուր, կլոր, խմոր, սանր, մանր*

եռավանկ՝ *պատահար, հավասար, լուսաբեր, վերնագիր, ուշադիր, ձայնավոր, մեղրաջուր, գերմանր*

քառավանկ՝ *ավանդաբար, ծովանկար, ջութակահար, ազատասեր, ճերմակահեր, հնչունագիր, մանրախնդիր, աշխատավոր, ականավոր, լիմոնաջուր, ոսկեզանգուր, սաղափասանր:*

### **Ռ-ն բառամիջում**

Բառամիջում *ր*-ն ուսումնասիրել ենք միավանկ և բազմավանկ բառերում: Ընդ որում *ր* բաղաձայնը երկկողմանի գտնվել է հայերենի բոլոր ձայնավորների շրջապատում՝

բազմավանկ՝ *ագարակ, երես, հայերեն, շիրիմ, կորով, բուրում, գրորնգ*

միավանկ՝ *կարթ, մարդ, զարդ*

Հաշվարկներ անելու համար օգտվել ենք Microsoft Excel ծրագրից: Կատարվել են տվյալների միջինացումներ, համեմատություններ և եզրահանգումներ:

1. *Ր* բաղաձայնի ընդհանուր բնութագիրը նկարագրելիս կարելի է փաստել հետևյալը. *ր* բաղաձայնի տևողության միջինացված արժեքն է 0.07 միլիվայրկյան, հաճախականության արժեքը՝ 177 հերց, ուժգնությունը՝ 55 դեցիբել և առաջին ֆորմանտը՝ 820(ֆորմանտներն ուսումնասիրելիս բավարարվեցինք միայն առաջին ֆորմանտով, քանի որ դա բավարար էր որոշակի եզրակացությունների հանգելու համար):

2. Բոլոր հաղորդավարների արտասանությամբ ամենաուժեղ դիրքերը բառակազմում ու բառավերջն են, թույլ դիրք է բառամեջը: Ստացել ենք  $2x - 2x - 4y$  բանաձևը, որտեղ  $x$  -ը մեծ լինելու ցուցանիշն է, իսկ  $y$ -ը փոքրի: Սա նշանակում է, որ միջինացված տվյալներում բառակազմը և բառավերջը ամենամեծ տվյալներն ունեն բոլոր չափերերի պարագայում:

Այժմ անդրադառնանք հնչյունի ֆիզիկական չափորոշիչների վերլուծությանը առանձին-առանձին:

3. Տևողություն: Բառակազմում  $p$  բաղաձայնի տևողության միջինացված արժեքն է 0.08 միլիվայրկյան, բառավերջում՝ 0.07, իսկ տևողության ամենակարճ արդյունքները գրանցվել են բառամիջի համար՝ 0.05 միլիվայրկյան:  $L$ -ով վերջացող խմբերն ուսումնասիրելիս համեմատեցինք  $p$ -ի տևողության արժեքները հետևյալ 2 դեպքերում՝ 1. երբ  $p$ -ն գոյականի բառավերջի հրնչյունն է և 2. երբ  $p$ -ն հրամայական եղանակի *հր* վերջավորության հնչյունն է: Պարզվում է, որ հրամայականի վերջավորության  $p$ -ի տևողությունն ավելին է գոյականների բառավերջի  $p$ -ի տևողությունից: Այսինքն՝ այն պնդումը, որ բառավերջում արտասանությունը թուլանում է, այս պարագայում  $p$ -ի համար չի գործում: Պատճառը թերևս հրամայականի վերջին վանկի ձայնավորի շեշտադրումն է, որն իր ազդեցությունն է ունենում բայաձևում *հր* վերջավորության  $p$ -ի տևողության վրա:

4. Հաճախականություն: Հաճախականության պարագայում դրությունը մի փոքր այլ է, բառակազմում գրանցվել է 175 հերց հաճախականություն, բառավերջում՝ 182, բառամիջում կրկին տվյալները ամենից փոքրն են՝ 167 հերց: Գոյականների բառավերջի  $p$ -ի հաճախականության միջինացված տվյալները (185 հերց) հրամայական եղանակի *հր* վերջավորության  $p$  բաղա-

ձայնի տվյալների (170 հերց) հետ համեմատելիս պարզվում է, որ *p*-ի հաճախականությունը 15 հերցով գերազանցում է:

5. Ուժգնություն: *L* բաղաձայնի ուժգնությունն ամենից մեծն է բառասկզբի դիրքում, ամենից փոքրը բառավերջում, միջին դիրք է գրավում բառամեջը: Միայն բառավերջի *p*-ի տվյալները համեմատելիս կարելի է փաստել, որ թե՛ հրամայական եղանակի */hp* վերջավորության *p* բաղաձայնի և թե՛ գոյականների վերջին *p* բաղաձայնի ուժգնության արժեքները հավասար են՝ 51 դեցիբել:

6. Ֆորմանտ: Ֆորմանտների տվյալները համեմատելիս պարզվեց, որ ամենից մեծ տվյալները գրանցվել են բառավերջի համար, ամենից փոքրը՝ բառամիջի: Բառավերջի 2 խմբերի բառերը (հրամայականի *p*-ն և գոյականների *p* վերջնահնչյունը) համեմատելիս հրամայականի *p*-ի առաջին ֆորմանտի տվյալները զիջում են գոյականների *p* վերջնահնչյունի տվյալներին:

Ինչպես տեսնում ենք, բառավերջի *p*-ն բավականին «կայուն» հնչյուն է, և հաստատել այն փաստը, որ *p*-ն անկում է ապրել թուլացման պատճառով, ըստ փորձառական տվյալների՝ չենք կարող:

Այսպիսով, որպես ամփոփում նշենք, որ ըստ մեր դիտարկումների՝ հրամայական եղանակի */hp* վերջավորության *p*-ի անկումը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝ տնտեսման սկզբունքով, հրամայական եղանակի բայաձևի վերջին ձայնավորի առավել ուժգին շեշտադրմամբ, որի կողքին *p*-ն կարող է բացակայել, բարբառների ազդեցությամբ և առանց *p*-ի բայաձևերի (չեմ պարի, պետք է պարի, երանի պարի) առկայությամբ:

Grigoryan Gayane – On the fall of “r” of the suffix “ir” of the imperative mood in the spoken language. - In the modern colloquial language a striking example of falling sounds is the omission of the sound “r” in the ending “ir” of the imperative mood. According to our experimental observations, the sound “r” at the end of a word is a fairly “stable” sound, and we cannot confirm the fact that the omission or the loss occurred due to weak pronunciation. The fall of the sound “r” of the ending “ir” of the imperative mood in the colloquial language is due to several factors: the principle of economy, the strong emphasis of the last vowel in the imperative mood, the influence of dialects and the presence of verb forms without “r”.

Григорян Гаяне - О падении звука «г» окончания «ir» повелительного наклонения в разговорном языке. - В современном разговорном языке ярким примером выпадения звуков является падение звука «г» окончания «ir» повелительного наклонения. Согласно нашим экспериментальным наблюдениям, звук «г» в конце слова является довольно «стабильным» звуком, и мы не можем подтвердить тот факт, что спад произошел из-за слабого произношения. Падение звука «г» окончания «ir» повелительного наклонения в разговорном языке обусловлено рядом нескольких факторов: принцип экономии, сильный акцент последнего гласного в повелительном наклонении, влияние диалектов и наличие форм глаголов без «г».

**ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՎՍԵՍ ՍՅՈՒՆԵՑՈՒ  
ՃԱՌԵՐՈՒՄ**

Մ. Սյունեցին 7-րդ դարի քերական է, մեկնիչ, աստվածաբան, թարգմանիչ, ծիսագետ և երաժիշտ-տեսաբան: Նա ծնվել է 7-րդ դարի 60-70-ական թվականներին: 701 թ. Մ. Սյունեցին եղել է վարդապետ, իսկ 725-731 թվականներին՝ Սյունյաց եպիսկոպոսական աթոռի գահակալը: Նա, բացի վարչական և ուսումնակրթական աշխատանքներից, ծավալել է մատենագրական լայն գործունեություն, հեղինակել է ճառեր, դավանաբանական, մեկնաբանական աշխատություններ: Մովսես Սյունեցու երկերից են «Յաղագս Վարդավառին խորհրդոյ», «Պատասխանի թղթոյն Սահակայ», «Յաղագս կարգաց եկեղեցւոյ բացայայտութիւնք», «Ի յերգս երից մանկանցն» ճառերը, որոնց շարադրանքն ուղեկցվում է աստվածաբանական մեկնաբանություններով: «Յաղագս Վարդավառին խորհրդոյ» ճառում հեղինակը մեկնաբանում է պայծառակերպության խորհուրդը հինկտակարանյան արժեքների համադրումով (Մինա-Թաբոր, Մովսես-Քրիստոս) և նորկտակարանյան արժեքների բացարձակացումով<sup>1</sup>: «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» գործում առաջին անգամ հայ միջնադարյան երաժշտական մտքի պատմության մեջ տրված է հայկական ութձայն համակարգի զուտ եկեղեցական նորովի գեղագիտական մեկնությունը՝ ի տարբերություն հեթանոսական աշխարհիկ երաժշտական մշակույթի:

---

<sup>1</sup> Տե՛ս Մատենագիրք Հայոց, Դ. հատոր, Է. դար, Անթիլիաս- Լիբանան, 2005, էջ 427:

Մովսես Սյունեցու գործերը ձեռագրերում ընդօրինակվել են «Մովսեսի քերթողահայր» կամ «Մովսեսի Քերթողի» շփոթեցնող մակագրություններով: Մ. Չամչյանը գրում է. «Մովսես եպիսկոպոս Սիւնեաց, վարժ յիմաստս հելլենական դպրութեանց, և առաւել եւս ի քերթուածս հռետորական հանդիսից հայկական լեզուի, մինչեւ կոչիլ նմա քերթող քաշ, և յոմանց անուանիլ քերթողահայր՝ իբրեւ երկրորդ զկնի երանելոյն Մովսիսի Խորենացոյ: Մա յօրինեաց զքերականութիւն և զճարտասանական գիրս, գրեաց և բազում ճառս հռետորական ճոխութեամբ... Են ոմանք՝ որք զքանի մի ի շարականաց Խորենացոյն սմա ընծայեն: Եղեն սորա բազում աշակերտք, յորոց մին եղև Ստեփանոս Սիւնեցի երկրորդ»<sup>2</sup>: Հայր Պողոս Անանյանը այս առթիվ նշում է, որ շատերը «...կը ճանչնան Է դարուն ապրող Մովսէս Քերթողահայր անունով հեղինակ մը: Ձեռագրաց մէջ շատ մը քերականական, ճարտասանական գրուածներ ասոր ընծայուած են: Բայց քանի որ իր անունը Մովսէս Խորենացիի հետ շփոթուած է մեր հին պատմիչներու քով, զարմանալի չէ, որ անոր գործերն ալ վերագրուած ըլլան միեւնոյն Խորենացիին: ...Վարդավառի ճառը զլիսավոր բանալի կկազմէ փաստելու, թէ Մովսէս Քերթողահայր եօթներորդ դարու հեղինակ է: Ծիսական հարցերու մասնագէտ երոպացի ուսումնասէրներու համաձայն՝ Այլակերպութեան տօնը վեցերորդ դարուն երեւան եկած է ընդհանուր եկեղեցոյ մէջ, որմէ անցած է նաեւ մեր եկեղեցոյ Տօնացոյցին մէջ: Ասկէ կհետեւի, որ Վարդավառի կամ Այլակերպութեան ճառը չէր կրնար Մովսէս Խորենացիէն գրուած ըլլալ: Մենք կը կարծենք անոր հեղինակութիւնը տալ Է

---

<sup>2</sup> Մ. Չամչեանց, Պատմութիւն հայոց, հ. Բ, Վենետիկ, 1784, էջ 367:

դարու հեղինակ Մովսես Քերթոզահոր, ինչպես վերնագրին մեջ տրուած է ան»<sup>3</sup>:

Սույն հոդվածում մենք անդրադարձել ենք Մովսես Սյունեցու ճառերում տեղ գտած նորակազմություններին: Առանձնացրել ենք հինգ տասնյակից ավելի նոր բառեր՝ ի համեմատություն «Նոր հայկազեան», Առձեռն, Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարանի», Ռ. Ղազարյանի, Հ. Ավետիսյանի «Նորայայտ բառեր գրաբարում», Լ. Հովհաննիսյանի «Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր» բառարաններին<sup>4</sup>:

Ըստ անհրաժեշտության դիմելով հայերենի բառակազմական օրինաչափություններին, օգտագործելով մայրենի լեզվի հնարավորություններն ու իմաստային բազմազանությունը՝ Մովսես Սյունեցին ստեղծել է նոր բառեր ու արտահայտություններ: Հետևապես նրա ճառերը արժեքավոր են և՛ դավանաբանական, և՛ բանասիրական տեսանկյունից: Այս առումով Մովսես Սյունեցու ճառերից քաղված բառերից հեղինակային նորակազմություն ենք համարել այն բառերը, որոնք չկան վերոնշյալ բառարաններում, և նրանք, որոնք թեև վկայված են բառարաններում, սակայն դրանց համար առաջին աղբյուր են եղել Սյունեցու ճառերը: Ներկայացնենք նորաստեղծ բառերից մի քանիսը՝ իրենց բնագրային օրինակներով:

---

<sup>3</sup> Հ. Պողոս Անանեան, Մովսես Քերթոզահայր եւ Մովսես խորենացի, Բազմավեյ, 1991, 1-2, էջ 9-11:

<sup>4</sup> Տե՛ս Գ. Աւետիսեան, Խ. Միրովէեան, Մ. Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ. 1-2, 1836-1837(այսուհետ՝ ՆՀԲ), Մ. Աւգերեան, Գ. Ճէլալեան, *Առձեռն բառարան հայկազեան լեզուի*, Վենետիկ, 1865 (այսուհետ՝ ԱԲ), Ռ. Ղազարեան, *Գրաբարի բառարան*, Անթիլիաս, 2004 (այսուհետ՝ ԳԲ), Ռ. Ղազարեան, Հ. Աւետիսեան, *Նորայայտ բառեր գրաբարում*, Ե., 2007 (այսուհետ՝ ՆԲԳ), Լ. Հովհաննիսյան, *Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր*, Ե., 2010 (այսուհետ՝ ՉԲ):

**Երկրաձգական**, ած. «դեպի երկիր ձգվող». Իսկ կողմն նորին՝ զողոքական մաղթանս ունի, եւ **զերկրաձգական** աղալթան՝ երգ Մովսէսեան յերկրորդում խորանին վկայութեան...(445):

**Երկնածաղիկ**, ած., «երկնային ծաղկի նման». ...Երրորդութեանն պսակեալ լուսով , ծիրանիս արկեալ զհոգւոյն ճառագայթ, եւ **երկնածաղիկ** առաքինութեանն **լուսասաղարթ** ոստովք քաջուղէշ եւ **յարափթիթ** պտղաւետեալք միշտ զփրկութեանն տաւնել զելս ի խորանն լուսոյ նոր Սիովնի...(435): Ըստ ՆՀԲ-ի՝ **լուսասաղարթ** եւ **յարափթիթ** բառերը Սյունեցու ստեղծածն են:

**Լուսանշան**, ած. «լուս արձակող». ... Եւ տիեզերս ի գնացս իրեանց ճառագայթակերպեն **լուսանշան** ընթացիւք (429):

**Յուսահոտ**, ած., «անուշահոտ». ...Աստանաւր ցուցաւ թէ արդ աւար է տաւնս, զոր վարդավառ զսա ձայնէ եկեղեցի, առաքինութեան ի սմա **լուսերանգ** եւ **յուսահոտ** բոցատերեւ վարդիւք **հարսնազգեստ** պսակեալ եւ հրճուեալ(435): Այս նախադասութեան մեջ ունենք նաև **լուսերանգ** և **հարսնազգեստ** բառերը, որոնք, ըստ ՆՀԲ-ի, Սյունեցու գրչին են պատկանում , այսինքն՝ դարձյալ նրա ստեղծած բառերն են:

**Վերաձայնաբար**, մ., «բարձրաձայն». Մա առաջին յեկեղեցուց արինադրեցաւ յառաքելոցն տաւն աւետաբեր , որ ոչ մտանէ ի շրջանս ընթերցուածոցն ընդ այլսն յորս աստուածային տնարեւնութեանն **վերաձայնաբար** տաւնի խորհուրդ մարգարիւք նախապատմեալ, զի ոչ զանցելոցն որպէս զնոսա...(435):

Նորակազմ բառերի մեջ ըստ խոսքիմասային պատկանելութեան գերակշռում են ածականական կազմութիւնները (թրվով 36)՝ *անմուտ*(438), *աշխարհագոչ* (435), *առաքելահրաման* (435), *արժանափայլ* (437), *բացախումբ* (435), *բուրաստանատեսակ* (431), *եզաբուն* (433), *երկնածաղիկ* (435), *երկրաձգական* (445), *թարախածոր* (443), *լուսաթաղանթ* (436), *լուսահրաշ*



(433), լուսանշան (429), լուսասաղարթ (435), հրախաղաց (445), ճառագայթաւէտ (435), մշտանորոգ (435), նոյնահրաշ (432), ուտասաղարթ (435), տիեզերագոչ (432), փայլակնատարած (432), սաղարթագուարճ (431) և այլն: Գոյականները թվաքանակով զիջում են ածականներին (թվով 9 գոյական)՝ *անդերանութին* (433), *անճշմարտութիւն*(435), *աստուածախառնութիւն* (433), *աստուածանմանակերպութիւն* (431), *կռանաձայնք* (443), *յարատելողութիւն*(436) և այլն: Ունենք ութ բայ՝ *աստուածակերպել* (432), *բացածագել* (433), *լուսակերպել* (433), *հրաշարուսել* (433), *պարալնուլ* (430), *սպասահարկել*(430) և այլն:

Նորակազմ բառերի ստեղծման բառակազմական եղանակները բառաբարդումն ու ածանցումն են: Մ. Սյունեցու նորակազմություններում առանձնանում են հոդակապով բարդությունները, ինչպէս՝ (աշխարհ)ա(գոչ), (արժան)ա(փայլ), (եզ)ա(բուն), (երկն)ա(ծաղիկ), (թարախ)ա(ծոր), (լուս)ա(թաղանթ), (լուս)ա(սաղարթ), (կռան)ա(ձայն), (յար)ա(փթիթ), (նոյն)ա(հրրաշ), (պայծառ)ա(լոյս) և այլն: Անհոդակապ ընդամենը երկու բառ կա՝ (լուս)(արշաւ), (լուս)(երանգ): Պետք է առանձնահատուկ ձևով նշել Մ.Սյունեցու ստեղծած եռաբաղադրիչ և նույնիսկ քառաբաղադրիչ կազմությունները, ինչպէս՝ (շրջ)ա(ցան)ա(ական), (աստուած)ա(նման)ա(կերպ)(ութիւն), (յար)ա(տել)(ող)ա(ութիւն), (բուր)ա(ստան)ա(տես)ա(ակ), (առ)ա(աք)(ել)ա(հրաման), (տի)(եզեր)ա(գոչ):

Նորակերտ ածանցավոր բառերը համապատասխանում են հայերենի ածանցման օրենքներին ու օրինաչափություններին: Մ. Սյունեցին գործածում է ինչպէս նախաձանցներ, այնպէս էլ վերջաձանցներ: Քանակով խիստ զիջում են նախաձանցավոր նորակազմությունները, որոնցից է **-ան-ը**՝ *անմուտ*, *անճշմարտութիւն*: Վերջին բառը, բացի նախաձանցից, ունի նաև **-ութիւն**

վերջածանց: Այսինքն՝ սա նաև համածանցավոր բառ է: Վերջածանցավոր նորակազմ բառերի մեջ առանձնանում են հետևյալ ածանցները՝ **-ական** - շրջացանական, **-ակի** - անջատակի, **-եալ-** բոցախմբեցեալ, բարձրածայրեալ, հովանացեալ, **-աւէտ** - ճառագայթաւէտ, **-ապէս** - ծառայապէս, **-ուրիւն** - աղաչողութիւն, անդերանութիւն, աստուածախառնութիւն, աստուածանմանակերպութիւն:

Այսպիսով, Մովսէս Սյունեցին հայերենի բառազանձը հարըստացրել է նոր ու գեղեցիկ կազմութիւններով: Նաև այս է պատճառը, որ նրա ճառերն ու ներբողները բանասերների համար խիստ արժեքավոր են:

Susanna Grigoryan, Naira Paronyan - Neologisms in Movses Syunetsi's Allocutions. Movses Syunetsi carried out a wide literary activity. He composed tirades, odes and theological works. Movses Syunetsi's tirades and odes are of special interest from the linguistic point of view. These works are unique in their theological and artistic merits. The given article is devoted to the study of more than 50 words which are not present in the voluminous dictionaries of Old Armenian. The author used the whole vocabulary of our language masterly, as well as he made use of Armenian word-formation regularities, creating new words and word-combinations and in such a way enriching not only the language of his creations, but also the vocabulary of our literary language. There are few prefixo-suffixal neologisms which are in general euphonic and are formed according to the rules and regulations of Armenian word-formation.

Сусанна Григорян, Наира Паронян - Неологизмы в тирадах Мовсеса Сюнеци. - Мовсес Сюнеци развивал широкую литературную деятельность. Он сочинял тирады, оды, богословские труды. Тирады и оды М. Сюнеци представляют особый интерес в языко-

вом значении. Эти произведения отличаются своими теологическими, художественными достоинствами. Представляемая статья посвящена изучению более 50 слов, которые не имеются в больших толковых словарях древнеармянского языка. Автор мастерски использовал весь богатый лексический состав нашего языка, а также, по мере необходимости, словообразовательные возможности армянского языка, создавая новые слова, обогащая самым язык собственных произведений и состав литературного языка. Очень немногочисленны прификсально – суффиксальные неологизмы, которые в основном, благозвучны и образованы соответственно законам и закономерностям словообразовательной традиции армянского языка.

ՀԱԿԱՆԻՇ ԲԱՌԵՐԻ ՈՃԱԿԱՆ  
ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ  
«ԳԻՐՔ ՔԱՐՈՉՈՒԹԵԱՆ «ՁՄԵՌԱՆ»» ՀԱՏՈՐՈՒՄ

Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզության «Ձմեռան»» հատորում ընդգրկված քարոզները ներառում են Մենդյան տոներից մինչև Հոգեգալուստ ընկած ժամանակաշրջանը: Քանի որ քարոզները հասցեագրված են եղել նախ և առաջ կենդանի ունկնդրին, ուստի նրանք այժի են ընկնում ոճական միջոցների բազմազանությամբ, այդ թվում նաև հականիշների հմուտ գործածությամբ:

Գրիգոր Տաթևացին հականիշներով նշանակվող երևույթները բնութագրում է իբրև «ներհակ» կամ «հակառակ». «**Ներհակ** են կորուստն և գիտն, որպէս լոյս և խաւար»<sup>1</sup>. «Ճշմարտութիւն է պարզաբան, որ ոչ ունի ստութիւն և **հակառակ** իւր, որպէս զխաւար` լոյս...»<sup>2</sup>:

Նա նկատել է, որ հականիշներով նշանակվում են հակադիր բնեռում գտնվող երևույթները. «Բարկութիւն **վերին ծայրքն** է և հեզութիւն **ներքին** և ամենայն ուրեք **ընդդէմ** միմեանց են»<sup>3</sup>, թեպետ, ըստ նրա, ոչ բոլոր երևույթներն են օժտված հակառակ եզրով, ինչպես օրինակ, ճշմարտությունը կամ իմաստությունը. «Ճշմարիտն փոխի երբեմն ի սուտն, որպէս իմաստասիրաց

<sup>1</sup> Գրիգոր Տաթևացի, *Մեկնութիւն Մատթէի*, Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռագիր 1264, էջ 162ա:

<sup>2</sup> Գրիգոր Տաթևացի, *Գիրք Քարոզութեան, Ձմեռան*, Կ.Պոլիս, 1740, էջ 173:

<sup>3</sup> Գրիգոր Տաթևացի, *Մեկնութիւն Մատթէի*, էջ 76բ:

բանքն, իսկ ճշմարտութիւնն ոչ փոխի»<sup>4</sup>. «Եւ դարձեալ զի նոցա ամենեցուն **ներհակ** գոյ, որպէս մեծութեան՝ աղքատութիւն, առողջութեան՝ հիւանդութիւն և կենաց՝ մահ: Իսկ իմաստութեան՝ ոչ ինչ է ներհակ»<sup>5</sup>:

Թվարկված հականիշները՝ մեծութիւն-աղքատութիւն, առողջութիւն-հիւանդութիւն, կեանք-մահ, իսկապէս հակադրվում են հատկանիշի առկայությամբ կամ բացակայությամբ, ինչով որ սովորաբար բնութագրվում է հականիշությունը, այսինքն՝ եթե մեկը հարուստ է, ուրեմն աղքատ չէ, եթե առողջ է, ուրեմն հիվանդ չէ և եթե ողջ է, ուրեմն մեռած չէ: Իսկ ճշմարտությունը, ինչպէս իրավացիորեն նկատում է հեղինակը, կա կամ չկա, այսինքն հականիշությունը ընդհանրացված բնութագրելու դեպքում՝ առարկայի, հատկանիշի, գործողության երկու հակադիր եզրերի գոյությունն է, որոնցից մեկը մյուսի ժրխտումն է կամ բացառումը: Եւ շատ հաճախ հեղինակի գործածած **ներհակ**, **հակառակ**, **ընդդէմ** բառերը և երբեմն նաև «այլ» շաղկապը հուշում են, որ գործ ունենք հականիշության հետ («**ընդդէմ** թշուառութեան երէր զփառս, **ընդդէմ** մեղացն երէր զշնորհս»<sup>6</sup>). «Եւ զինուորութեան մերոյ ոչ է մարմնաւոր **այլ** հոգևոր»<sup>7</sup>:)

Տաթևացու գործածած հականիշները կարելի է խմբավորել ըստ համագործածական կամ անհատական լինելու: Առաջինները բավական մեծ թիվ են կազմում.

գեղեցկութիւն	-	տգեղութիւն	յանդուզն	-	հեզ
ուրախութիւն	-	տրտմութիւն	հաւատ	-	անհաւատութիւն

<sup>4</sup> *Գիրք Բարոգութեան, Չմեռան*, էջ 173:

<sup>5</sup> **Գրիգոր Տաթևացի**, *Գիրք Հարցմանց*, Կ.Պոլիս, 1729, էջ 178:


<sup>6</sup> *Գիրք Բարոգութեան, Չմեռան*, էջ 50:

<sup>7</sup> *Գիրք Բարոգութեան, Չմեռան*, էջ 9:

ուշիմ - ապուշ  
 խորագէտ - պարզամիտ  
 բարեբարոյ - չարաբարոյ  
 հպարտ - խոնարհ  
 կարգաւոր - անկարգ  
 հակակայ - միաբանք  
 և այլն:

երկնաւոր - երկրաւոր  
 հոգևոր - մարմնաւոր  
 աղքատք - մեծամեծք  
 օտարք - ազգականք  
 դիւահաւան - անհաւաստ  
 միջնորդաւ – անընդմիջաբար

Սրանց մեջ Տաթևացիներէն նույն բառի համար բերում է մի քանի հականիշներ, որոնք իրենց հերթին կազմում են հոմանիշների շարք.



Անհատական հականիշները երբեմն անհամասեռ են կառուցվածքային առումով ասենք՝ մեկն արտահայտված բառով, մյուսը՝ բառակապակցությամբ. *լեզուագար-լեզուովն հեզ, բարձրիմաց-երկրաքարշ խորհրդով, որիշ որիշ-միահետ, ջրր-հոր-անջրդի գուր:*

Կան հականիշներ, որոնք հակադրված են նաև բաղադրիչներով և լրացումներով. *դիրամուտ և դժուարել, վաղ առաւօտն և խոր երեկոյն, թշնամիք անհաշտելիք և սիրելիք անքակտելիք:*

Անհատական հականիշների ուրույն կիրառությամբ է ներկայանում հեղինակը «Գիրք քարոզութեան «Ձմեռան»» հատորի հետևյալ հատվածում.

«Բժշկեսցուք զապականեալ մարմինս մեր մեղօք: **Զորովայնամուրութիւն՝ ժուժկալութեամբ** լուծցուք: **Զվաւաշոտ ցանկութիւնն՝ ողջախոհութեամբ և սովով և ծարաւով** տանջեսցուք:

**Զարծաթսիրությունն՝ աղքատութեամբ: Զագա-հուրինն՝ սփռելով եւ տալով աղքատաց: Զսրտմտութիւնն՝ յուսով մխիթարեացուք: Զփառասիրութիւնն՝ գետնախշտութեամբ տանջեացուք... »<sup>8</sup>:**

Տաթևացին երբեմն դիմում է նաև ոճական այնպիսի միջոցի, ինչպիսին **օքսիմորոնն** է, երբ երևույթը բնութագրվում է հակառակ հատկանիշով (բարկություն բարի, հեզություն չար), կամ՝ հակադրության (Եվ վասն խաղաղութեան պատերազմեցաք):

Իմաստային դաշտերով, եթե բաժանելու լինենք, ապա «Գիրք քարոզութեան «Ձմեռան»» հատորում գործածված հականիշները պայմանավորված գրքի բնույթով, հիմնականում կրոնական ոլորտից են, շրջակա աշխարհից և բնությունից, կամ՝ սովորույթների նկարագրության մեջ.

ա. **կրոնական**. «...յորժամ առ նա եկին կենդանիքն գազանք և անասունք և սողունք առեալ ի սրբիցն եօթն եօթն և յանսրբիցն երկու երկու եմոյժ ի տապանն և ապրեցան ի ջուրցն հեղեղէ»<sup>9</sup>: «Զի հուրն ունի լոյս, որ լուսաւորէ **գարդարս** և զուրբս և այրեցոյ, որով պատժէ **զմեղաւորս**»<sup>10</sup>: «...անփոփոխ մնալ ի սովորական մեղս այլ գղջմամբ և ապաշխարութեամբ **շարժեացուք ի բարին**»<sup>11</sup>: «**Տիւն և գիշերն** լինի օր մի և բանն աստուած և մարմինն ծածկոյթ է. մի տէր, մի քրիստոս, մի բնութիւն, մի դէմ, մի ներգործութիւն և այլն՝ աստուած մարդացեալ և մարդկութիւն ընդ բանին աստծոյ միացեալ որ **լոյս է և ճառագայթ հաւատացելոց և խաւար անհաւատիցն** որպէս ասաց

<sup>8</sup> Գիրք Քարոզութեան, Ձմեռ ան, էջ 155:

<sup>9</sup> Գիրք Քարոզութեան, Ձմեռ ան, էջ 8:

<sup>10</sup> Գիրք Քարոզութեան, Ձմեռ ան, էջ 9:

<sup>11</sup> Գիրք Քարոզութեան, Ձմեռ ան, էջ 11:

ծերունին սիմէօն»<sup>12</sup>: «...**թափուր մնացին ի շնորհաց** նորին իսկ հաւատացեալքն **ըշտեմարանեցին զբարութիւնս** նորին յարութեամբն և պարգևօք հոգւոյն սրբոյ»<sup>13</sup>: «Վասն այնորիկ որդին աստծոյ եկն իբրև զբժիշկ և երեք ազգ դեղ եբեր և բժշկեաց զերեք ազգ հիւանդութիւնս. **Ընդդէմ թշառութեան եբեր զփառս, ընդդէմ մեղացն եբեր զշնորհս, ընդդէմ ստութեան և տգիտութեան** եբեր զիմաստութիւն և զճշմարտութիւն»<sup>14</sup>:

բ. շրջակա աշխարհ և բնութիւն . «... որպէս Նոյ էր բաժանեալ ի **հեռու կամ ի մօտաւոր** տեղիս»<sup>15</sup>: «...ընդ վեց կենդանակերպն անցանելով խոնարհի և վեցին բարձրանայ այսինքն ի խեցգետնոյն մինչև ի յայծեղջիւրն **խոնարհի** և յայծեղջերէն մինչև ի խեցգետինն **բարձրանայ**»<sup>16</sup>: «Դարձեալ ի ձմերան եղանակս սկսանի **պակասիլ** զիշերն առաւելով տին զոր մինչև ցայս տին նրւագէր մասն մասն և զիշերն **առաւելոյր**»<sup>17</sup>: «**Տիւն և զիշերն** լինի օր մի»<sup>18</sup>:

գ. սովորութիւնք. «Եւ զիտելի է յորժամ բժշկին **ոչ երթայ անձամբ** առ հիւանդն **այլ միջնորդօք և** աշակերտօք խօսի և իրատէ վասն առողջութեան, յայնժամ տրտմութիւն է հիւանդին և կատարեալ **ոչ առողջանայ** այլ յորժամ ինքն երթայ շուտով **առողջանայ** հիւանդն»<sup>19</sup>:

«Եւ աստ զիտելի է՝ զի յորժամ զօրք երթան ի պատերազմ, և **թագաւորն լինի ի մէջ** նոցա, յո՛յժ ուրախանան և քաջապէս պատերազմին. և **յորժամ ոչ լինիցի ի մէջ նոցա**, սրտաբեկեալք

<sup>12</sup> *Գիրք Զարդուրեան, Չմեռ ան*, էջ 15:

<sup>13</sup> *Գիրք Զարդուրեան, Չմեռ ան*, էջ 15:

<sup>14</sup> *Գիրք Զարդուրեան, Չմեռ ան*, էջ 50:

<sup>15</sup> *Գիրք Զարդուրեան, Չմեռ ան*, էջ 10:

<sup>16</sup> *Գիրք Զարդուրեան, Չմեռ ան*, էջ 11:

<sup>17</sup> *Գիրք Զարդուրեան, Չմեռ ան*, էջ 12:

<sup>18</sup> *Գիրք Զարդուրեան, Չմեռ ան*, էջ 15:

<sup>19</sup> *Գիրք Զարդուրեան, Չմեռ ան*, էջ 50:



յաղթին: Որպէս յայն թագաւորութեանն, որ թագաւորն մեռեալ էր, եկն թշնամիքն և պատերազմեալ յաղթեցին նոցա. զի թագաւորն ոչ էր ի միջի նոցա. և յորժամ դարձեալ եկին ի պատերազմ, և մանուկ մի էր թագաւորին, և տարեալ զօրորոցն եղին ի մէջ զօրացն և սսեն. ահա թագաւորդ ձեր ի միջի ձերում է. թէ կամիք՝ պահեցէք զդա և ամենքն զօրացան և յաղթեցին զթշնամիսն»<sup>20</sup>:

Հայտնի է, որ առաձներում, ասացվածքներում հականիշների գործածությունը սիրված միջոց է, ինչպէս. «Գիտունին գերի եղիր, անգէտին՝ ոչ սիրելի», «Դուրսը քահանայ, ներսը՝ սատանայ», ուստի Տաթևացու թևաւոր խոսքերից, ասույթներից հատկապէս նրանք, որոնք հականիշներ ունեն, մոտ են ժողովրդական բառուբանին. Ոմանք են որպէս մոխիր, որ **շուտով առնուն**, բայց **շուտով կորուսանեն**<sup>21</sup>: Եւ զի՞նչ օգուտ է **մարմնոյն նուազիլ** պահօք, յորժամ **յոզին գիրանայ** մահու չափ մեղօք<sup>22</sup>:

**Հիւանդութիւն** մարդոյն՝ **յուտելոյն** է, ...ապա ուրեմն **առողջութիւն** մարդոյն՝ **ի պահոց լինի**<sup>23</sup>:

Մարդոյ ո՛չ է պարտ **դիրահաւան** լինիլ ամենայն բարի... և ոչ **անհաւան**<sup>24</sup>: **Կեանք** մարդոյն ոչ այլ ինչ է, քան թէ ընթանալ ի **մահ**<sup>25</sup>: **Չափաւոր** գինին բարի է և **անչափն**՝ չար<sup>26</sup>:

Հայտնի փաստ է, որ լեզուները միմյանցից տարբերվում են նախ և առաջ բառապաշարով, սակայն եթե բառապաշարը հիմնական զանազանությունն է մատնանշում, ապա ոճական

---

<sup>20</sup> Գիրք Զարդուրեան, Չմեռ ան, էջ 76:

<sup>21</sup> Գիրք Զարդուրեան, Չմեռ ան, էջ 68:

<sup>22</sup> Գիրք Զարդուրեան, Չմեռ ան, էջ 128:

<sup>23</sup> Գիրք Զարդուրեան, Չմեռ ան, էջ 130:

<sup>24</sup> Գիրք Զարդուրեան, Չմեռ ան, էջ 158:

<sup>25</sup> Գիրք Զարդուրեան, Չմեռ ան, էջ 328:

<sup>26</sup> Գիրք Զարդուրեան, Չմեռ ան, էջ 350:

միջոցները բացահայտում են տվյալ լեզվի առանձնահատկություններն ու անկրկնելիությունը:

Grigoryan Susanna - The use of stylistic antonyms of the “Winter tome” of the “Preaches book” Grigor Tatevatsi.-Gregor Tatevatsi in the “Winter tome” ' he “Preaches book” antonyms are used as a compilation of phenomena, or as extreme points of phenomena. In this work, according to the semantic spectra, antonyms are either from religious, or from the environment, or from customs. The author skillfully uses the antonyms of his idioms.

Григорян Сусанна – Стилистические употребления антонимов в "Зимнем томе" "Книги проповедей" Григора Татеваци.- Григор Татеваци в "Зимнем томе" "Книги проповедей" антонимы употребляет либо как сопоставления явлений, либо же как крайние точки явлений. В этом труде по смысловыми спектрами антонимы или из религиозных, или из окружающей среды, или же из обычаев. Автор очень умело употребляет антонимы созданные им крылатых словах.

**ԻՆՉՈՒՈՐ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՄԻ  
ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ  
ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

Հովհաննեսի Ավետարանը Նոր Կտակարանի Ավետարաններից չորրորդն է կամ վերջինը և հաջորդում է Մաթևոսի, Մարկոսի և Ղուկասի Ավետարաններին: Այն ծավալով երրորդն է՝ բաղկացած 21 գլուխներից: Հովհաննեսի Ավետարանի խորհրդանիշն է արծիվը, գույնը՝ կապույտը: Նշենք, որ ուսումնասիրության համար անհրաժեշտ նյութը քաղված է մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից 1994 թ. հրատարակած արևելահայերեն և արևմտահայերեն Աստվածաշունչերից:

Հովհաննեսի արևելահայերեն Ավետարանում կա 146 հարցական նախադասություն, իսկ արևմտահայերենում՝ 171: Այս տարբերությունը հիմնականում բացատրվում է նրանով, որ արևելահայերեն զգալի պատմողական նախադասություններ արևմտահայերենում արտահայտված են հարցականով: Հովհաննեսի Ավետարանում նույնպես բոլորից շատ հարցեր է տալիս Հիսուս: Բացի Հիսուսից, այստեղ հարցեր են տալիս նաև նրա աշակերտներից Պետրոսը, Փիլիպոսը և Թովմասը, Մամարացի կինը, Նիկողեմոսը, Պիղատոսը, ժողովուրդը, ինչպես նաև հրեա առաջնորդները և այլք:

Այս Ավետարանում նույնպես հիմնականում սկզբից բերվում է Ավետարանչի խոսքը, որից հետո կետ է դրվում և նոր չակերտների մեջ տրվում է համապատասխան հարցումը: Այս-

տեղ դարձյալ Ավետարանչի խոսքը լինում է կարճ՝ բաղկացած երկու, երեք, չորս կամ հինգ բառերից և երկար՝ բաղկացած մեկ և ավելի նախադասություններից:

Դիտարկվող Ավետարանում երկկերպ, ընտրանքային և երկկերպ ընտրանքային հարցումները շատ քիչ են՝ յուրաքանչյուրից մեկական օրինակ, իսկ փոխարենը համեմատաբար ավելի շատ են եղանականիշ հարցումները: Այստեղ միայն մենաբևեռ ինչու-որ հարցումները 68-ն են, իսկ եթե հաշվի առնենք որ ինչու-որ հարցումները հանդես են գալիս նաև այլ հարցումների հետ, ապա ինչու-որ հարցումների թիվը հասնում է 93-ի, հետո գալիս են՝ այո-ոչ-երը՝ ընդհանուր առմամբ՝ 46, հետո՝ եղանականիշերը՝ ընդհանուր առմամբ՝ 26 և վերջում՝ ընտրանքայինները՝ ընդհանուր առմամբ՝ 2:

Հովհաննեսի Ավետարանում կան 9 հարցական դերանուններով կազմված ինչու-որ հարցումներ: Դրանք են՝ ն՞վ, ինչ, ինչո՞ւ, ինչպե՞ս, ն՞ր, որտեղի՞ց, ն՞մ, ե՞րբ և ն՞ր: Մրանք նույնն են նաև արևմտահայերենում, որտեղ սակայն որտեղի՞ց և ն՞մ դերանունների փոխարեն հանդես են գալիս ուրկե՞ և որո՞ւ ձևերը:

Այս Ավետարանում ինչ հարցական դերանունով կազմված մենաբևեռ ինչու-որ հարցումները բոլորից շատ են՝ 15-ը, հետո գալիս են ինչպե՞ս-ով կազմվածները՝ 14-ը՝ հետո՝ ինչո՞ւ-ով կազմվածները՝ 11-ը, հետո ն՞վ-ով կազմվածները՝ 9-ը, հետո՝ ն՞ր-ով կազմվածները՝ 8-ը, հետո՝ որտեղի՞ց-ով կազմվածները՝ 4-ը, այնուհետև գալիս են մյուս երեք հարցական դերանուններով կազմվածները՝ 2-3 անգամ: Նշված քանակությունները զգալի ավելանում են, երբ հաշվի ենք առնում Ավետարանում առկա ամբողջ ինչու-որ հարցումների թվաքանակը:

Այժմ դիտարկենք մենաբնեռ ինչու-որ հարցումները՝ սկզբում ներկայացնելով այն հարցական նախադասությունները, որոնք քանակով ավելի շատ են:

**Մենաբնեռ ինչու-որ հարցումներ.**

Ասացինք, որ այս Ավետարանում բոլորից շատ ինչու-որ հարցումներ են կազմված ի՞նչ, ինչպե՞ս, ինչո՞ւ, ո՞վ և ո՞ւմ հարցական դերանունների միջոցով, ի՞նչ-ով կազմված մենաբնեռ հարցումները 15 են, ինչպե՞ս-ով՝ 14, ինչո՞ւ-ով՝ 11, ո՞վ-ով՝ 9, ո՞ւր-ով՝ 8, իսկ մյուսներով՝ 2-4 անգամներ: Ներկայացնենք հարցումների նմուշներ ի՞նչ, ինչպե՞ս, ինչո՞ւ և ո՞վ հարցական դերանուններով:

**«Ի՞նչ» հարցական դերանունով հարցումներ**

Հովհաննեսի Ավետարանում ի՞նչ հարցական դերանունով կազմված մենաբնեռ հարցումները բոլորից շատ են՝ թվով 15-ը: Այս հարցական նախադասությունները պարզ և բարդ կառուցվածքի են: Բերենք մի շարք հարցական նախադասություններ.

ա) Պարզ կառուցվածք ունեցող հարցումներ.

1. Երբ Յիսուս ետ դարձաւ եւ տեսաւ նրանց, որ գալիս էին իր ետեւից, ասաց նրանց, «Ի՞նչ էք ուզում»- Յիսուս երբ դարձաւ ու տեսաւ զանոնք որ իր ետեւէն կուգային, ըսաւ անոնց. «Ի՞նչ կ'ուզէք» (1,38):

2. Պիղատոսը նրան ասաց. «Ի՞նչ է ճշմարտութիւնը»- Պիղատոս ըսաւ անոր. «Ի՞նչ է ճշմարտութիւնը» (18,38):

3. Պիղատոսն ինքը դուրս ելաւ նրանց մօտ եւ ասաց, «Այս մարդու մասին ի՞նչ ամբաստանութիւն էք ներկայացնում»- Ուստի Պիղատոս դուրս ելաւ անոնց ու ըսաւ. «Ի՞նչ ամբաստանութիւն կը ներկայացնէք այս մարդուն դէմ» (18, 29):

4. Պետրոսը, նրան տեսնելով, ասաց Յիսուսին .«Տէ՛ր, իսկ սա

ի՞նչ կըլինի»- Պետրոս զանիկա տեսնելով՝ ըսաւ Յիսուսին.  
«Տէ՛ր, հապա ասիկա ի՞նչ պիտի ըլլայ» (21,21):

բ) Բարդ ստորադասական հարցումներ.

1. Հրեաները նրան ասացին. «Ի՞նչ նշան ցույց կը տաս մեզ, թէ իրաւունք ունես այդ բանն անելու»-«Այն ատեն Հրեաները եկան ու ըսին անոր. «Ի՞նչ նշան կը ցուցանես մեզի՝ որ այդ բաները ընելու իրաւունք ունիս» (2,18):

2. Նրան ասացին՝ «Ի՞նչ անենք, որ Աստծու ուզած գործերը գործենք» - Այն ատեն ըսին անոր. «Ի՞նչ ընենք որպէսզի Աստուծոյ գործերը կատարենք» (6, 28):

3. Քահանայապետերն ու փարիսեցիները ատեան գումարեցին եւ ասացին. «Ի՞նչ անենք, քանի որ այդ մարդը բազում նշաններ է անում» - Ուստի քահանայապետերն ու փարիսեցիները ժողով գումարեցին ու ըսին. «Ի՞նչ ընենք, քանզի այս մարդը շատ հրաշքներ կընէ» (11,47):

գ) Բարդ համադասական հարցումներ, որոնցից վերջինի երկրորդ բաղադրիչը բարդ ստորադասական նախադասութիւնն է.

1. Եւ Յիսուս նրան ասաց. «Ի՞նչ ես ուզում, ով կին, իմ ժամանակը դեռ չի հասել»-Յիսուս ըսաւ անոր. «Ո՛վ կին, դուն ինծի հետ ի՞նչ բան ունիս. իմ ժամանակս դեռ հասած չէ» (2,4):

2. Եւ Յիսուս նրանց պատասխանեց ու ասաց. «... բայց այժմ հոգիս խռոված է. եւ ի՞նչ անեմ, Հայր, փրկի՛ր ինձ այս ժամից» - Յիսուս ալ պատասխան տուաւ անոնց ու ըսաւ. «...Հիմա իմ հոգիս խռոված է եւ ի՞նչ ըսեմ. Հայ՛ր, զիս ազատէ այս ժամէն» (12,23,27):

3. Եւ ասում էին. «Ի՞նչ է այն «մի քիչ եւս»-ը. չենք հասկանում, թէ ինչ է խօսում»- Ու կըրսէին... «Ի՞նչ պիտի ըլլայ այն 'Քիչ մըն ալը՝ որ կըրսէ. չենք գիտեր ի՞նչ ըսել կուզէ» (16, 18):

դ) Բարդ ստորադասական և համադասական հարաբերությամբ հարցումներ.

1. Յիսուս նրան ասաց. «Եթե ես կամենում եմ, որ դա ապրի, մինչև որ ես գամ, այդ քեզ ի՞նչ հոգ, դու արի իմ ետեւից»- Յիսուս ըսաւ անոր. «Եթե ես ուզեմ որ ատիկա կենայ մինչեւ ես գամ, քու ի՞նչ հոգդ է. դուն իմ ետեւէս եկուր» (21,22):

3. Աշակերտներից ոմանք միմեանց ասում էին. «Ի՞նչ է այս, որ մեզ ասում է, թե մի քիչ եւս, եւ ինձ չէք տեսնի. եւ դարձեալ, թե՛ մի քիչ եւս, եւ ինձ կը տեսնէք եւ թե՛ ես գնում եմ իմ Հօր մօտ»- Ասոր համար աշակերտներէն ոմանք իրարու կըսէին. «Ի՞նչ է աս որ մեզի կըսէ թե՛ Քիչ մը ատենէն ա՛լ զիս պիտի չտեսնէք եւ դարձեալ քիչ մը ատենէն զիս պիտի տեսնէք, քանզի ես Հօրը կ'երթամ» (16,17):

4. Հրեայ առաջնորդներն իրար ասում էին «... Ի՞նչ է այն խօսքը, որ նա ասաց՝ կը փնտռէք ինձ եւ չէք գտնի, եւ ուր ես եմ գնում, դուք չէք կարող գալ»- Այն ատեն Հրեաները ըսին իրարու. «... Ի՞նչ է այն խօսքը որ ըսաւ. Զիս պիտի փնտռէք եւ պիտի չգտնէք եւ իմ եղած տեղս դուք չէք կրնար գալ» (7, 35, 36):

### **«Ինչպէ՞ս» հարցական դերանունով հարցումներ**

Ավետարանում ինչպէ՞ս հարցական դերանունով կա կազմված 14 մենաբնեռ ինչու-որ հարցում: Դրանք պարզ և բարդ կառուցվածքների են: Բերենք որոշակի հարցական նախադասություններ.

ա) Պարզ կառուցվածքի հարցումներ.

1. Նիկողեմոսը հարցրեց նրան. «Այդ ինչպէ՞ս կարող է լինել» - Նիկողեմոս հարցուց անոր. «Այդ ի՞նչպէս կրնայ ըլլալ» (3, 9):

2. Փարիսեցիներն էլ հարցրին նրան. «Ինչպէ՞ս ես տեսնում»- Փարիսեցիներն ալ կը հարցնէին իրեն թե՛ «Ինչպէս կը տեսնե՞ս»

(9,15):

3. Նրան ասացին. «Իսկ ինչպե՞ս բացուեցին քո աչքերը» - Ուստի հարցուցին իրեն. «Հապա ի՞նչպես բացուեցան քու աչքերդ» (9, 10):

4. Հրեաները իրար հետ բուռն կերպով վիճում էին եւ ասում. «Սա ինչպե՞ս կարող է իր մարմինը մեզ տալ՝ ուտելու»- Ասոր վրայ հրեաները իրարու հետ կը վիճէին ու կըսէին. «Ի՞նչպես կրնա ասիկա իր մարմինը մեզի տալ՝ ուտելու» (6,53):

5. Ումանք ասում էին. «Իսկ մեղաւոր մի մարդ ինչպե՞ս կարող է այսպիսի նշաններ կատարել»-Ուրիշներ կըսէին. «Ի՞նչպես կրնայ մեղաւոր մարդ մը այսպիսի հրաշքներ ընել» (9,16):

բ) Բարդ ստորադասական հարցումներ.

1. Սամարացի կինը նրան ասում է. «Դու, որ հրեայ ես, ինչպե՞ս ինձնից՝ սամարացի կնոջից, խմելու ջուր ես ուզում»- Այն ատեն Սամարացի կինը ըսաւ անոր. «Դու որ Հրեայ ես, ինչպե՞ս կուզես ջուր խմել ինձմէ՝ Սամարացի կնոջմէ մը՝ վասն զի Հրեաները Սամարացիներուն հետ չեն հաղորդակցիր» (4,9):

2. Հուդան (ոչ Իսկարիովտացին) ասաց նրան. «Տէ՛ր, ինչպե՞ս եղաւ, որ քեզ պիտի յայտնես մեզ եւ ոչ թէ աշխարհին» - Ըսաւ անոր Յուդա (ոչ Իսկարիովտացին), ի՞նչպես կ'լլայ որ դուն ինքզինքդ մեզի պիտի յայտնես եւ ո՛չ թէ աշխարհի» (14, 22):

3. Հրեաները զարմանում էին ու ասում. «Սա ինչպե՞ս գիտէ գրուածքները, քանի որ բնաւ չի սովորել» - Հրեաները կը զարմանային ու կ'սէին. «Ի՞նչպես ասիկա գրքերը գիտէ, որ սորված չէ» (7,15):

4. Եւ ասում էին. «... Իսկ արդ, ինչպե՞ս է ասում՝ եւ երկնքից իջայ»- Եւ կըսէին. «... ուրեմն ինչպե՞ս կըսէ ասիկա թէ՛ Եւ երկնքէն իջայ» (6, 42):



գ) Համադասական և ստորադասական հարաբերությամբ հարցումներ.

1. Նրան պատասխանեցին ու ասացին. «Աբրահամի որդիներ ենք եւ երբեք ոչ ոքի չենք ծառայել. ինչպէ՞ս ես ասում, թե՛ ազատ կը լինէք»- Պատասխան տուին իրեն. «Մենք Աբրահամի սերունդն ենք ու երբեք մէկուն չծառայեցինք. դուն ի՞նչպէս կ'ըսես թե՛ Ազատ պիտի ըլլաք» (8, 33):

2. Յիսուս պատասխանեց եւ ասաց նրանց. «... Իսկ արդ, եթէ երկրաւոր բաներ ասացի ձեզ, եւ չէք հաւատում, ապա ինչպէ՞ս պիտի հաւատաք, եթէ երկնաւոր բաներ ասեմ»- Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ. «...Եթէ երկրաւոր բաներ ձեզի ըսի ու չէք հաւատար, ի՞նչպէս պիտի հաւատաք եթէ երկնաւոր բաները ձեզի պատմեմ» (3, 10, 12):

3. Յիսուս ասաց նրանց. «... Դուք ինչպէ՞ս կարող եք հաւատալ, քանի որ իրարից եք փառք առնում եւ չէք որոնում այն փառքը, որ միակ Աստծուց է գալիս...»- Իսկ Յիսուս ըսաւ անոնց. «... Դուք ի՞նչպէս կրնաք հաւատալ, երբ իրարմէ փառք կ'ակնկալէք եւ այն փառքը որ որ Աստուծմէն է՝ չէք փնտռեր:...» (5, 19, 44):

4. Թովմասը նրան ասաց. «Տէ՛ր, չգիտենք՝ ուր ես գնում, ուրեմն ինչպէ՞ս կարող ենք գիտենալ ճանապարհը» - Թովմաս ըսաւ անոր. «Տէ՛ր, չենք գիտեր ո՞ւր կ'երթաս եւ ի՞նչպէս կրնանք ճամբան գիտնալ» (14, 5):

**«Ինչո՞ւ» հարցական դերանունով հարցումներ**

Հովհաննէսի Ավետարանում ինչո՞ւ հարցական դերանունով կա 11 մենարևեռ ինչո՞ւ-որ հարցում: Այս հարցումները նույնպէս ըստ կառուցվածքի լինում են պարզ և բարդ: Բերենք մի քանի նախադասություններ.

ա) Պարզ կառուցվածքի հարցումներ.

1. Յիսուս նրանց պատասխան տուեց ու ասաց. «Ինչո՞ւ էք ուզում ինձ սպանել»-Յիսուս պատասխան տուաւ անոնց ու ըսաւ. «... Ինչո՞ւ կ'ուզէք զիս սպանել» (7,16,20):

2. Իսկ սպասաւորները վերադարձան քահանայապետների եւ փարիսեցիների մօտ. եւ սրանք նրանց ասացին. «Ինչո՞ւ նրան այստեղ չբերեցիք»- Սպասաւորները նորէն գացին քահանայապետներուն եւ փարիսեցիներուն, որոնք հարցուցին. «Ինչո՞ւ զանիկատ հոս չբերիք» (7,45):

3. Եւ նրան ասացին. «Ո՛վ կ'ին, ինչո՞ւ ես լալիս» - Անոնք իրեն ըսին. «Ո՛վ կ'ին, ինչո՞ւ կու լաս» (20,13):

բ) Համադասական հարաբերությամբ հարցումներ.

1. Պետրոսը նրան ասաց. «Տէ՛ր, ինչո՞ւ այժմ չեմ կարող քո ետեւից գալ. այժմուանից իսկ իմ կեանքը քեզ համար կը տամ»- Պետրոս ըսաւ անոր. «Տէ՛ր, ինչո՞ւ հիմա չեմ կրնար քու ետեւէդ գալ. ես իմ կեանքս ալ քեզի համար պիտի դնեմ» (13,37):

2. Եւ նրանցից շատերն ասում էին. «Նրա մէջ դեւ կայ եւ մոլեգնում է. ինչո՞ւ էք նրան լսում» - Անոնցմէ շատեր կ'ըսէին. «Դեւ կայ ատոր ներսիդին ու խենդացած է. ինչո՞ւ ատոր մտիկ կ'ընէք» (10, 20):

գ) Ստորադասական և համադասական հարաբերությամբ հարցումներ.

1. Եւ Յիսուս նրան ասաց. «Եթէ վատ խօսեցի, վկայի՛ր վատի մասին, իսկ եթէ լաւ՝ ինձ ինչո՞ւ ես խփում»- Յիսուս անոր պատասխանեց. «Եթէ սխալ խօսեցայ, վկայէ սխալին համար. իսկ եթէ ճիշտ խօսեցայ, ինչո՞ւ կը զարնես ինձի» (18,23):

2. Նրանք հարցրին նրան ու ասացին. «Իսկ դու ինչո՞ւ ես մկրտտում, եթէ դու չես Քրիստոսը, ոչ էլ Եղիան եւ ոչ էլ մարգարէն» Հարցուցին իրեն՝ ըսելով. «Հապա ինչո՞ւ մկրտութիւն կ'ընես,

եթէ դուն Քրիստոսը չես ու չ' եղիան եւ չ' մարգարէն» (1,25):

**«Ով» հարցական դերանունով հարցումներ**

Դիտարկվող Ավետարանում ն<sup>օ</sup>վ հարցական դերանունով կա 9 մենաբնեռ ինչու-որ հարցում: Այս հարցումները նույնպես պարզ և բարդ կառուցվածքների են: Բերենք մի քանի հարցական նախադասություններ.

ա) Պարզ կառուցվածքի հարցում.

1. Եւ սա Յիսուսի կրծքովն ընկաւ ու ասաց նրան. «Տէ՛ր, ո՞վ է»- Ան ալ Յիսուսի կործքին վրայ իյնալով՝ ըսաւ անոր. «Տէ՛ր, ո՞վ է ան» (13,25):

2. Նրան ասացին՝ ո՞վ ես դու – Այն ատեն ըսին անոր. «Դուն ո՞վ ես» (8,25):

բ) Համադասական հարցումներ.

1. Ժողովուրդը պատասխան տուեց ու ասաց. « Քո մեջ դեւ կայ, ո՞վ է ուզում քեզ սպանել»- պատասխան տուաւ ժողովուրդը ու ըսաւ. «Դեւ կայ քու ներսդ. ո՞վ կ'ուզէ քեզ սպանել» (7,20):

2. Եւ աշակերտներից շատերը, երբ լսեցին, ասացին. «Խիստ է այդ խօսքը. ո՞վ կարող է այն լսել». Աշակերտներէն շատեր երբ լսեցին՝ ըսին. «Խիստ է այդ խօսքը, ո՞վ կրնայ ատոր մտիկ ընել» (6,61):

Ghukasyan Sevak - *How - Why* questions in Eastern & Western Armenian Gospels of John - In the East-Armenian Gospel by John there are 146 interrogative questions, while in the West-Armenian their number is 171. In this Gospel the most frequent ones are the questions how-why and yes-no. Here single polar questions number 68, which contain almost all interrogative pronouns. Among those, the majority are with ի՞նչ (what?) formations – 15 items, then with ինչպէ՞ս (how?) formations-14 items, ինչո՞ւ (why?) formations 11 items, then with ո՞վ

(who?) formations-9 items, then with  $\overset{\circ}{n}$   $\overset{\circ}{\text{ը}}$ (where?) formations - 8 items, and then others-2-4 times.

Гукасян Севак - Местоименные вопросы в восточноармянском и западноармянском вариантах Евангелии от Иоанна. - В Евангелии от Иоанна в восточноармянском есть 146 вопросительных предложений, а в западноармянском-171. В этом Евангелии больше всего выступают местоименные вопросы. Здесь однополюсные местоименные вопросы встречаются 68 раз, которые составляются почти всеми вопросительным местоимениями. Среди них больше всего встречается  $\overset{\circ}{h}$   $\overset{\circ}{\text{ի}}$  (что?)-15 раз,  $\overset{\circ}{h}$   $\overset{\circ}{\text{ի}}$   $\overset{\circ}{\text{չ}}$   $\overset{\circ}{\text{ի}}$  (как?) -14 раз,  $\overset{\circ}{h}$   $\overset{\circ}{\text{ի}}$   $\overset{\circ}{\text{չ}}$   $\overset{\circ}{\text{ի}}$  (почему?)-11 раз,  $\overset{\circ}{n}$   $\overset{\circ}{\text{ի}}$  (кто?)-9 раз,  $\overset{\circ}{n}$   $\overset{\circ}{\text{ը}}$  (куда?) - 8 раз, наконец остальные - 2-4 раза.

**Սուքիասյան Հենրիետա (ԵԲՊՀ)**  
**Կատվայան Վիկտոր (ԳԱԱ լեզվի ինստիտուտ)**  
**Չաքարյան Հովհաննես («Տաթև» ԳԿՀ)**

**ԲՈՒՀԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ԽՆԴԻՐ ՇՈՒՐՋ**

**Նախաբան:** ՀՀ բուհերի ոչ բանասիրական բաժիններում, որպես կանոն, դասավանդվում են հայոց լեզու և երկու օտար լեզուներ (ռուսերեն և անգլերեն կամ ֆրանսերեն, գերմաներեն կամ այլ լեզու): Այդ դասընթացների նպատակը դպրոցի թերացման հաղթահարումն է և մասնագիտական ոճի ու եզրույթաբանության, ինչպես նաև խոսքի մշակույթի ուսուցումը: Եթե օտար լեզուների այդ դասընթացների անհրաժեշտությունը երբևէ չի վեճարկվել, ապա հայերենի դասընթացը վերջին 30 տարում մշտապես եղել է քննադատության թիրախ. պահանջվել է դրա վերացում կամ առնվազն ժամաքանակի կրճատում:

Սույն հաղորդման նպատակը հայերենի բուհական դասընթացի անհրաժեշտության հիմնավորումն է, բովանդակության ճշտումը, իրականացման ու վերահսկողության գործակառույցների քննարկումը:

**Իրավիճակ:** Եթե օտար լեզուների դասընթացների անհրաժեշտությունը որոշվում է միայն կրթական գերատեսչական հրահանգներով և ուսումնական ծրագրերով, ապա հայոց լեզվի դեպքում դա սահմանված է օրենսդրությամբ: «Լեզվի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասը պահանջում է. «Հայաստանի Հանրապետության տեխնիկական և բարձրագույն ուսումնական հաստատություններում հայոց լեզվի ըն-

դունելության քննությունը և հայոց լեզվի ուսուցումը պարտադիր են»<sup>1</sup>:

Հակառակ օրենսդրական այս պահանջի՝ ժամանակ առ ժամանակ տարբեր մակարդակներում հնչում են մասնագիտական բավարար հիմնավորումներ չունեցող, կրթական համակարգի նպատակներն ու խնդիրներն անտեսող մակերեսային տեսակետներ պետական բուհերի ոչ բանասիրական բաժիններում մասնագիտական հայոց լեզվի և խոսքի մշակույթի դասընթացի վերացման կամ առնվազն դրան տրամադրվող ժամանակահատվածի ու ժամաքանակի կրճատման վերաբերյալ: Որպես պատճառաբանություն՝ բերվում է պարզամիտ այն պնդումը, թե իբր դպրոցի շրջանավարտները բուհ են գալիս մայրենի լեզվի բավարար իմացությամբ: Այս կարծիքը շատ հեռու է իրականությունից:

Ինչ խոսք, հանրակրթությունը (այն էլ 12-ամյա) մայրենի լեզվի բավարար, եթե չասենք գերազանց իմացություն ապահովելու նպատակ պիտի հետապնդի: Սակայն ներկայիս դպրոցական համակարգը, ցավոք, չի տալիս նույնիսկ մայրենի լեզվի այնպիսի նվազագույն իմացություն, որ բավարար հիմք ծառայի կրթությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում լիարժեքորեն շարունակելու համար: Կրկնուսուցման համակարգը դրան մասնակիորեն է օգնում, որովհետև նախ, ի խախտումն «Լեզվի մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ դրույթի, մասնագիտությունների միայն մի փոքր մասի համար է պահանջվում բուհական ընդունելության միասնական քննություն հայոց լեզվից, երկրորդ՝ այդ քննությունը հիմնականում ենթադրում է դպրոցական ծրագրով նախատեսված ընդամենը

---

<sup>1</sup> Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=90418>

գրագիտության որոշակի մակարդակ ու քերականության իմացություն:

Սակայն հարցն այն է, որ բուհերում իրականացվող «Մասնագիտական հայոց լեզու և խոսքի մշակույթ» դասընթացի նպատակն է յուրաքանչյուր ոլորտի համար մասնագիտական հայերենի հիմունքների ուսուցումը, մասնագիտական լեզվի անթերի իմացության ապահովումը, գրական հայերենի ազատ, գեղեցիկ ու նպատակային գործածության հմտությունների ու կարողությունների ձևավորումը, խոսքի բարձր մշակույթի արմատավորումը: Դա նշանակում է, որ բուհական դասընթացը դպրոցական ծրագրերի շարունակությունն ու բարձրագույն մակարդակով զարգացումն է՝ համապատասխանեցված տվյալ բուհի մասնագիտացումներին: Իսկ դպրոցական համակարգի թույլ տված բացթողումների լրացումը, որ հարկադրաբար տեղի է ունենում բուհական համակարգում, ամենևին էլ նրա հիմնական խնդիրը չէ, այլ ընդամենը պարտադրված լրացուցիչ բեռ է, քանի որ դպրոցական ծրագրի թերի յուրացման պայմաններում անհնար է իրականացնել մասնագիտական լեզվի հիմունքների և խոսքի մշակույթի ուսուցումը: Բուհն այդ հարկադրական բեռը կթոթափի, երբ հանրակրթական դպրոցը սկսի լիարժեք իրականացնել իր խնդիրները և կրթական բավարար որակ ապահովել: Սակայն լեզվիմացության կատարելագործումն ու դրան մասնագիտական թեքում տալը կշարունակեն մնալ բուհական համակարգի կարևորագույն խնդիրներ:

**Հիմնավորում:** Մայրենի լեզվի կատարյալ իմացությունը միայն ու միայն նպաստում է մասնագիտական ունակությունների, գիտելիքների սահմանների ընդլայնմանը: Քննարկման ենթակա չէ այն ճշմարտությունը, որ բարձրակարգ մաս-

նագետ հանդիսացող, կիրթ և բանիմաց յուրաքանչյուր անհատ իրեն լավագույնս դրսևորում է նախ և առաջ մայրենի լեզվի միջոցով և խոսքի բարձր մշակույթով: Մայրենիի անտեսումը, նրա հանդեպ մերժողական վերաբերմունքը վստահաբար կարող են վկայել տվյալ անհատի և տվյալ հասարակության արժեհամակարգերում տեղի ունեցող ավերածությունների մասին:

Խնդրի կարևորությունը հատկապես ընդգծվում է, երբ նկատի ենք ունենում ցավալի այն իրողությունը, որ ներկայումս գրեթե բոլոր բնագավառներում մասնագիտական լեզուն հեղեղված է հայերենի լեզվամտածողությանն անհարիր ոճական, քերականական տարատեսակ ու տարաբնույթ սխալներով, անհաջող պատճենված արտահայտություններով, խոսքի տրամաբանական թերություններով, անհարկի օտարաբանություններով: Այս ամենի հետևանքով բուհական դասընթացներում նախատեսած գիտելիքը շատ դեպքերում լիարժեքորեն չի հասնում սովորողին, տեղիք է տալիս թյուրըմբռումների և հասկանալի դառնալու համար պահանջում է սովորականից մի քանի անգամ ավելի մտավոր լարում ու եռանդ: Անկասկած է, որ հայերենի, նրա մասնագիտական տվյալ ոճի առանձնահատկությունների բավարար իմացությունը այն անհրաժեշտ հիմքն է, որ հնարավորություն է տալիս յուրացնելու տվյալ ոլորտի գիտելիքները, այսինքն՝ մեծապես նպաստում է մասնագետ դառնալուն:

Խնդրին առնչվող յուրաքանչյուր անհատ, հաստատություն կամ պետական մարմին պարտավոր է լրջորեն մոտենալ բուհական համակարգում մայրենի լեզվին վերաբերող դասընթացների ամբողջականության ու լիարժեքության հարցին: Մեր պետության զարգացման, ազգային առաջընթացի ու զարթոնքի ճանապարհին կարևորագույն առաքելություն ունի կրթ-



թական համակարգը, որի անխափան ու նպատակային գործունեության անհրաժեշտ պայման է լեզվական գիտելիքների, ունակությունների ու հմտությունների առկայությունը: Ասվածը, բնականաբար, նախ և առաջ մայրենի լեզվին է վերաբերում: Ուստի անհրաժեշտ է ոչ թե նվազեցնել հայոց լեզվին ու խոսքի մշակույթին հատկացվող ժամաքանակները, այլ մեծացնել դասընթացի նկատմամբ բովանդակային ու որակական պահանջները (օրինակ՝ նշված դասընթացին հավելել բանավոր ու գրավոր ազատ արտահայտվելու հմտությունների, ճարտասանության հիմունքների ուսուցումը) և դրանց կատարման նկատմամբ իրականացնել պատշաճ վերահսկողություն:

Նկատի ունենանք նաև, որ բուհերի ոչ բանասիրական բաժիններում հայոց լեզվի պարտադիր դասավանդման վերաբերյալ «Լեզվի մասին» ՀՀ օրենքի պահանջը սկզբնապես իրականացվում էր երկամյա տևողությամբ դասընթացով, որը, սակայն, տարիներ անց կամայականորեն կրճատվեց և համատարած դարձավ մեկամյա: Մեկ տարին, այն էլ շաբաթական մեկ դասով, ակնհայտորեն անբավարար է վերոհիշյալ բովանդակային ու որակական պահանջների իրականացման համար: Անհրաժեշտ է վերականգնել դասընթացի սկզբնապես սահմանված ծավալը՝ մտածելով նաև դրա հետագա ընդլայնման մասին:

Այդ դասընթացի բովանդակությունն ու ծավալն այստեղ չենք մասնավորեցնում տարբեր բուհերի և մասնագիտությունների համար: Դա անում է ամեն բուհ՝ իր բնույթից ելնելով: Միայն նշենք, որ մի շարք բուհերում (օրինակ՝ ՀՖԿՍՊԻ-ում) հայոց լեզվի դասընթացի շրջանակներում նախատեսված է անդրադարձ նաև հայ գրականությանը: Նույնիսկ դասընթացը, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության

մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2<sup>1</sup>) ենթակետի համաձայն, կոչվում է «Հայոց լեզու և հայ գրականություն» (առնվազն երկու կիսամյակ տևողությամբ)<sup>2</sup>: Իհարկե, որոշ բուհերի ուսանողական համակազմի՝ հայ գրականությանը գրեթե բացարձակ անտեղյակությունը գուցե բավարար հիմնավորում է նման մոտեցման համար: Այնուամենայնիվ, բուհերի ոչ բանասիրական բաժիններում հայ գրականության դասավանդման խնդիրը խիստ խոցելի է և լրացուցիչ հետազոտության կարիք ունի: Կարծում ենք, որ բուհերի ոչ բանասիրական բաժիններում հայ գրականության զարգացման ընթացքի և նշանավոր երկերի ներկայացումը պետք է կատարվի ոչ թե դասընթացի ձևով, այլ որպես լեզվի ուսուցման մեթոդաբանություն՝ գործնական անհրաժեշտության, հետաքրքրաշարժության ու հաճելիության սկզբունքների պահպանմամբ: Մյուս կողմից՝ պետք է նկատի ունենալ նաև, որ բուհերը ոչ միայն պատրաստում են մասնագետներ, այլև միաժամանակ կրթում են հայոց ազգային պետության քաղաքացիներ, որոնց ազգային ինքնության կարևորագույն բաղադրիչներն են պետական լեզուն ու ազգային մշակույթը:

**Առաջարկություններ:** Անհրաժեշտ ենք համարում առաջիկայում հանրապետության տարբեր բուհերի հայոց լեզվի ամբիոնների ներկայացուցիչներից կազմել հատուկ հանձնաժողով, որի ուժերով կմշակվեն բոլոր բուհերի ոչ բանասիրական բաժիններում մասնագիտական հայոց լեզվի և խոսքի մշակույթի դասընթացի հայեցակարգ և ուսումնական ծրագրի միասնական հիմնադրույթներ, որոնք կտեղայնացվեն և առարկայական ծրագրերի կվերաձվեն ամեն մի առանձին բուհում:

---

<sup>2</sup> Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=25820>

Հարկ կլինի, որ կազմվելիք հանձնաժողովը կատարի հետազոտություններ, այդ նպատակով մշակի հատուկ հարցարաններ ու շրջաբերական՝ հասցեագրված Հայաստանի բոլոր բուհերին: Յուրաքանչյուր բուհ կներկայացնի առաջարկություններ և հիմնավորումներ մասնագիտական հայոց լեզվի և խոսքի մշակույթի դասընթացի անհրաժեշտ ծավալի ու բովանդակության վերաբերյալ: Դրանց վերլուծությունների արդյունքում կմշակվեն տարբերակված մոտեցումներ առանձին բուհերի կամ մասնագիտությունների վերաբերյալ: Հայեցակարգի ու ծրագրային հիմնադրույթների նախագծերը անհրաժեշտ քննարկումներից հետո կհաստատվեն ՀՀ կրթական գերատեսչության կողմից և պարտադիր կդառնան կիրառության համար:

Տարբեր բուհերում տարիների ընթացքում մշակվել և գործածվում են իրենց մասնագիտացումներին համապատասխանող դասագրքեր և ձեռնարկներ: Դրանք ևս պիտի արտացոլեն մշակվելիք միասնական հայեցակարգը, ծրագրային սկզբունքներն ու պահանջները: Իբրև գլխավոր խնդիր պետք է առաջադրվի մասնագիտական հայերենի պահանջարկի և մրցունակության բարձրացումը: Այսպես, օրինակ, բժշկության ոլորտում հայերենի գլխավոր մրցակիցն այժմ ռուսերենն է, առաջիկայում կլինի անգլերենը: Այդ իրավիճակն արգելակում է հայերենի զարգացումը, քանի որ հայերենը դեռ հիմնավորապես չի հաստատվել ու տիրապետող դարձել տվյալ ոլորտի բոլոր հաստատություններում: Իսկ պետական լեզվի պահանջարկի բարձրացման համար պետք է կիրառվեն օրենսդրական ու վարչական լծակներ:

Լեզվի պետական տեսչության փակման իրողության պայմաններում նշված գործընթացի վերահսկողությունը պետք է իրականացնի ՀՀ լեզվի կոմիտեն, կամ էլ այդպիսի լիազորու-

թյուն ու պարտականություն պետք է տալ ՀՀ կրթության տեսչական մարմնին:

**Եզրակացություն:** Բուհերի ոչ բանասիրական բաժիններում անհրաժեշտություն է «Մասնագիտական հայոց լեզու և խոսքի մշակույթ» առարկայի դասընթացը՝ որպես հանրակրթական դպրոցի «Հայոց լեզու» առարկայի շարունակություն ու զարգացում՝ մասնագիտական թեքումով: Հրատապ խնդիր են այդ դասընթացի նպատակալացության մեծացումը միջառարկայական կապերի ուժեղացման միջոցով, արդյունավետության բարձրացումը՝ բովանդակային ու որակական ավելի արդիական պահանջներ ու նշաձողեր սահմանելով, դասագրքերը և ուսումնական այլ նյութերը կատարելագործելով, նոր մեթոդներ ու տեխնոլոգիաներ կիրառելով, ժամաքանակն ավելացնելով, կարևոր է նաև դասընթացի որակի վերահսկման հատուկ գործակառույցների (մեխանիզմների) ստեղծումը: Միաժամանակ անհրաժեշտ է միջոցներ մշակել և միջոցառումներ իրականացնել հայերենի, հատկապես՝ մասնագիտական հայերենի պահանջարկը մեծացնելու և մրցունակությունը բարձրացնելու նպատակով:

Sukiasyan Henrieta, Katvalyan Viktor, Zakaryan Hovhannes – On Teaching Professional Armenian at Universities.- The aim of teaching Professional Armenian Language and the Art of Speech course at state universities is to tutor fundamentals of professional Armenia language for each field; to ensure perfect knowledge on the professional language, to form skills and abilities to use literary Armenian freely, purposefully and beautifully; to inculcate high culture of speech.

Сукиасян Генриета, Катвалян Виктор, Закарян Оганес – Об обучении профессионального армянского языка в высших учебных заведениях.- Целью курса «Профессиональный армянский язык и культура речи» в государственных вузах является обучение основам профессионального армянского языка для каждой области, обеспечение безупречного знания профессионального языка, развитие навыков литературного армянского языка, грамотное и целенаправленное использование слов и обогащение лексики, внедрение высокой культуры речи.

<b>Ամիրխանյան Անժելա</b> - <i>Արջ</i> արմատով բուսանուններ .....	5
<b>Բառնասյան Ջենմա</b> - Հ. Թումանյանի «Մուտասանը» հեքիաթի գրառումները հայերենի տարբեր բարբառներով.....	15
<b>Դիլբարյան Նարինե</b> - «Պատմութիւն և խրատը Խիկարայ Իմաստնոյ» երկի հայկական իմբագրության դարձվածքները.....	25
<b>Զաքարյան Հովհաննես</b> - Օ սկզբնահնչյունով մի քանի բառերի ստուգաբանություն.....	35
<b>Թաղևոսյան Հասմիկ</b> - Գրիգորիսի «Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց» բժշկարանի բառապաշարի ընդհանուր բնութագիրը.....	46
<b>Թորոսյան Հռիփսիմե</b> - Հայերենի և պարսկերենի անձի հատկանիշ արտահայտող բայական դարձվածքների կառուցատիպերը.....	56
<b>Խաչատրյան Հասմիկ</b> - Հինհայերենյան բառաշերտի որոշ իրողությունների արտացոլումը Համշենի բարբառում.....	66
<b>Խաչատրյան Վալենտին</b> - Նորահայտ բառեր Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսարանի ձեռագրերի հիշատակարաններում.....	76
<b>Կատվայան Վիկտոր</b> - Խուռնավուլի խոսվածքը.....	86
<b>Հակոբյան Ֆրիդա</b> - Էլեկտրոնային թարգմանության խնդիրներ.....	96
<b>Համբարձումյան Վազգեն</b> - Հայերեն <i>մարգարիտ</i> բառի ծագման մասին.....	106
<b>Հմայակյան Հասմիկ</b> - <i>Սօսի</i> բուսանվան	

---

\* Խմբագրական խորհուրդը պատասխանատու չէ հոդվածներում առկա ոճական և իմաստային վիճելի ձևակերպումների համար:

ստուգաբանության փորձ ... ..	114
<b>Հովհաննիսյան Լավրենտի</b> - Բառաքնական և ստուգաբանական դիտարկումներ.....	122
<b>Հովհաննիսյան Նազիկ</b> - Արդի հայերենում իմաստափոխված մի քանի բառի մասին.....	132
<b>Ղամոյան Լուսինե</b> - «Հագուստ» իմաստային դաշտի արևելահայերեն-արևմտահայերեն գուգադրական քննության փորձ.....	142
<b>Ներսիսյան Վարսիկ</b> - <i>Գիսել</i> և <i>կիսվել</i> բայերի իմաստային դրսևորումները հայերենում.....	152
<b>Միմոնյան Նեկտար</b> - Ստուգաբանական դիտարկումներ.....	162
<b>Վարդանյան Արտակ</b> – Մի շարք անձնանունների բարբառային ձևերի ստուգաբանություն.....	172

## ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

<b>Գրիգորյան Գայանե</b> - Խոսակցական լեզվում հրամայական եղանակի <i>իք</i> վերջավորության <i>ք</i> -ի անկման մասին .....	180
<b>Գրիգորյան Սուսաննա</b> - Հականիշ բառերի ոճական կիրառությունները Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզության «Ձմեռան» » հատորում.....	189
<b>Գրիգորյան Սուսաննա, Պարոնյան Նաիրա</b> - Նորա- կազմությունները Մովսես Մյունեցու ճառերում.....	196
<b>Ղուկասյան Մնակ</b> - <i>Ինչու-որ</i> հարցումները Հովհաննեսի արևելահայերեն և արևմտահայերեն Ավետարաններում.....	203
<b>Սուքիասյան Հենրիետա, Կատվայան Վիկտոր, Զաքարյան Հովհաննես</b> - Բուհերում մասնագիտական հայերենի ուսուցման խնդրի շուրջ.....	213

**ՋԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ**

**ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**

Գիտական հոդվածների ժողովածու

**JAHUKYAN READINGS**

Collection of scientific papers

**ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ**

Сборник научных статей

Հրատ. պատվեր № 971

Ստորագրված է տպագրության՝ 02.10.2019թ.:

Չափսը՝ 60 x 84 <sup>1</sup>/<sub>16</sub>, 14 տպագրական մամուլ:

Տպաքանակը՝ 150 օրինակ:

Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,  
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: